ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

8


ՄԱՍՇՏԱԲ
1:140 000 000
ԱՇԽԱՐՀԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԻՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՑ ՀԵՏՈ (1918-1923 թթ.)
ՀԵՍԻԱՆՈՒԹՅՈՒՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ (1922 թ-ից)
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ
ԱՐԵՎՄՏՅԱՆ ԱՖՐԻԿԱ
ԱՍԻԱ
ՉԻՆԱՍՏԱՆ
ՀՆԴԿԱՍՏԱՆ
ԱՎՍՏՐԱԼԻԱ
ԱՄՆ
ԿԱՆԱԴԱ
ԲՐԱԶԻԼԻԱ
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
ԳԱՂՈՒԹՆԵՐ
ՔԱՐՏԵԶՈՒՄ ԹՎԵՐՈՎ ՆՇՎԱԾ ԵՆ.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏԱՆՔՆԵՐԸ ՔՈՒՐԴԻՍՏԱՆԻ ԱԿՇԻՆԱՄԻՄՈՒՄ (ազգային ժամ) 1918-1923 թթ.
Մասշտաբ 1:10 000 000
ՔՈՒՐԴԻՍՏԱՆ
ՍԻՐԻԱ
ԻՐԱՔ

Հ-84
W36
Հ Պետական գրադ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ԳՈՒՐԳԵՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԱԳԻՐՔ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հ-474

8-ՐԴ

ԴԱՍԱՐԱՆ

ՀՈՒՇ ԳԱ ԱՌԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆ-Ի ԳՐԱԴԱՐԱՆ ԵՐԵՎԱՆ

ԵՐԵՎԱՆ 2001

Հաստատված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից

Դասագիրքը գրել են՝

պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Նիկոլայ Հովհաննիսյանը** (գլուխ 1, 3-10, 12-18),
պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Գուրգեն Գեղամյանը** (գլուխ 2, 11):

Մեթոդական համակարգը կազմել են

պատմ. գիտ. թեկնածու **Արամ Նազարյանը** (ամփոփիչ դասեր, տերմինների բառարան) և **Առաքել Գյուլբուդաղյանը:**

ԳՏՀ 373. 167.1+94/99
ԳՄԴ 63. 3 (0) 6 g 72
Հ 843

Հ 843 **Հովհաննիսյան Ն., Նորագույն պատմություն:**
Դասագիրք 8-րդ դասարանի համար:
- Եր.: «Զանգակ-97», 2001.– 160 էջ:

Հ $\frac{4306020600}{0003(01)-2001}$ 2001 ԳՄԴ 63.3 (0) 6 g 72

ISBN 99930-2-049-4

© Զանգակ-97, 2001
© Հեղինակներ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

XX դարի պատմության համառոտ բնութագիրը 5

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

ԱՇԽԱՐՀԸ ԵՐԿՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՄԻՋԵՎ

ԳԼՈՒԽ 1 ՎԵՐՍԱԼ-ՎԱՇԻՆԳՏՈՆՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Վերսալ-վաշինգտոնյան համակարգի ստեղծումը 7

Ազգերի լիգան 10

ԳԼՈՒԽ 2 ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ: ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ 1922-1939 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Խորհրդային իշխանության հաստատումը Ռուսաստանում:

Քաղաքացիական պատերազմը 13

ԽՍՀՄ-ի կազմավորումը 15

ԽՍՀՄ-ի սոցիալ-տնտեսական վիճակը 17

Հասարակական-քաղաքական և մշակութային կյանքը 19

ԳԼՈՒԽ 3 ԳԵՐՄԱՆԻԱՆ, ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՆ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՆ

Վայմարյան հանրապետությունը 22

Գերմանիան 1933-1939 թվականներին 24

Ներքաղաքական իրադրությունը Մեծ Բրիտանիայում 1920-1930-ական թվականներին 26

Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքականությունը 28

Ֆրանսիան 1920-ական թվականներին 30

Ֆրանսիան 1930-ական թվականներին 32

ԳԼՈՒԽ 4 ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ

ԱՄՆ-ը 1918-1933 թվականներին 34

Ֆրանկլին Ռուզվելտի նոր կուրսը 36

ԱՄՓՈՓՈՒՄ 38

ԳԼՈՒԽ 5 ԹՈՒՐՔԻԱՆ ԵՎ ԻՐԱՆԸ

Թուրքական հանրապետության կազմավորումը 40

Թուրքիայի արտաքին և ներքին դրության ամրապնդումը 42

Իրանը 1918-1939 թվականներին 44

ԳԼՈՒԽ 6 ՉԻՆԱՍՏԱՆԸ ԵՎ ՀՆԴԿԱՍՏԱՆԸ ԵՐԿՈՒ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԵՐԻ ՄԻՋԵՎ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Չինաստանը 1918-1927 թվականներին 47

Չինաստանը և ճապոնիայի ծավալապաշտական քաղաքականությունը 49

Ազգային-ազատագրական շարժման վերելքը Հնդկաստանում 51

ԳԼՈՒԽ 7 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Երկրորդ աշխարհամարտի նախօրեին 54

ԱՄՓՈՓՈՒՄ 57

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ 58

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ (1939-1945 ԹԹ.)

ԳԼՈՒԽ 8 ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ

Երկրորդ աշխարհամարտի սկիզբը 60

Երկրորդ աշխարհամարտի առաջին փուլը (1939թ. սեպտեմբերի 1–1941թ. հունիսի 22) 63

ԳԼՈՒԽ 9 ԽՍՀՄ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԸ (1941-1945 ԹԹ.): ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԱՎԱՐՏԸ

Հայրենական մեծ պատերազմը 65

Հակահիտլերյան կոալիցիան 67

Երկրորդ աշխարհամարտի ավարտը 69

ԱՄՓՈՓՈՒՄ 73

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ 74

ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ

ԱՇԽԱՐՀԸ 1945-2000 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԳԼՈՒԽ 10 ԱՇԽԱՐՀԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ: ԵՐԿՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Ուժերի նոր դասավորությունը: Գերտերությունների պայքարը համաշխարհային տիրապետության համար 76

ԳԼՈՒԽ 11 ԽՍՀՄ-Ը 1945-1991 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ: ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՓՈՒԼՈՒՄ

ԽՍՀՄ-ը հետպատերազմյան առաջին տարիներին 80
ԽՍՀՄ-ը 1953-1980-ական թվականներին 82
Վերակառուցումը և ճգնաժամի խորացումը երկրում 84
ԽՍՀՄ-ի փլուզումը: ԱՊՀ երկրները 1991-2000 թվականներին 86

ԳԼՈՒԽ 12 ԳԵՐՄԱՆԻԱՆ, ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՆ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՆ

Գերմանիայի մասնատումը և Գերմանական երկու պետությունների կազմավորումը 88
ԳՖՀ-ն և ԳԴՀ-ն 1949-1989 թվականներին 90
Գերմանիայի վերամիավորումը 92
Մեծ Բրիտանիայի թուլացումը 94
Մեծ Բրիտանիան 1970-1990-ական թվականներին 96
Ֆրանսիան 1945-1970-ական թվականներին 98
Ֆրանսիան 1980-1990-ական թվականներին 100

ԳԼՈՒԽ 13 ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ

ԱՄՆ-ի ներքին և արտաքին քաղաքականությունը 1945-1960-ական թվականներին 102
ԱՄՆ-ը 1970-1990-ական թվականներին 104
Երկրի արտաքին քաղաքականությունը 1970-1990-ական թվականներին 107
ԱՄՓՈՓՈՒՄ 110

ԳԼՈՒԽ 14 ԹՈՒՐՔԻԱՆ ԵՎ ԻՐԱՆԸ

Թուրքիան 1945-1970-ական թվականներին 112
Թուրքիան 1980-1990-ական թվականներին 113
Իրանը 1945-1970-ական թվականներին 115
Իրանի Իսլամական Հանրապետությունը 117

ԳԼՈՒԽ 15 ՉԻՆԱՍՏԱՆԸ

Չինաստանը 1945-1950-ական թվականներին 120
ՉԺՀ–ն 1960-1990-ական թվականներին 122

ԳԼՈՒԽ 16 ԱՍԻԱՅԻ, ԱՖՐԻԿԱՅԻ ԵՎ ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՐԿՐՆԵՐԸ 1945-2000 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Գաղութային համակարգի փլուզման պատճառները: Ասիայի գաղութային երկրների անկախացումը 125
Հնդկաստանը 1945-2000 թվականներին 127
Արաբական Արևելքի երկրների անկախացումը 130
Գաղութային համակարգի փլուզումն Աֆրիկայում 133
Լատինական Ամերիկայի երկրները 136

ԳԼՈՒԽ 17 ՈՒԺԵՐԻ ՆՈՐ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ 1991-2000 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Նոր քաղաքական իրադրությունն աշխարհում 139
Էթնոքաղաքական հակամարտությունները 141

ԳԼՈՒԽ 18 ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Գիտության զարգացումը XX դարում 144
Հոգևոր մշակույթը XX դարում 146
ԱՄՓՈՓՈՒՄ 150
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ 152
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՄՓՈՓՈՒՄ 154
ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ 155

XX ԴԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1918 թվականին՝ Առաջին աշխարհամարտի ավարտից հետո, նոր փուլ է սկսվում համաշխարհային պատմության մեջ: Այն ընդունված է անվանել **նորագույն շրջան**:

Արմատական տեղաշարժեր կատարվեցին քաղաքական ուժերի հաշվեկշռում: Աշխարհի քաղաքական քարտեզից վերացան Ռուսական, Ավստրոհունգարական և Օսմանյան բազմազգ կայսրությունները, դադարեց գոյություն ունենալուց նաև կայզերական Գերմանիան:1920-30-ական թվականներին մեծացավ Անգլիայի և Ֆրանսիայի դերը, իսկ Իտալիայում և Գերմանիայում ֆաշիստներն անցան իշխանության գլուխ: Բարձրացավ նաև ԱՄՆ-ի քաղաքական կշիռը, և վերջինս Երկրորդ աշխարհամարտից հետո դարձավ աշխարհի ամենահզոր պետությունը: Ռուսական կայսրության փլատակների վրա կազմավորվեց և հզորացավ Խորհրդային Միությունը՝ վերածվելով աշխարհի երկրորդ գերտերության: Համաշխարհային պատմության այս շրջանը նաև Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի գաղութացված երկրների անկախության նվաճման և ազգային ինքնիշխան պետությունների կազմավորման դարաշրջանն է:

Այն գիտատեխնիկական անհնախադեպ հեղափոխության, մշակույթի հետագա վերելքի և համընդհանուր առաջընթացի դարաշրջան է: Այս փուլում մարդն առաջին անգամ դուրս եկավ տիեզերք և առաջին անգամ ոտք դրեց Լուսնի վրա:

Նորագույն շրջանում կյանքի են կոչվել և կիրառվում են հասարակական, քաղաքական–տնտեսական տարբեր կառույցներ, ավելի հաստատակամորեն ուղի են հարթում ժողովրդավարության, իրավահավասարության և ինքնիշխանության սկզբունքները: Մի խոսքով՝ այն հին պատկերացումների ու մոտեցումների կործանման և նոր՝ ավելի առաջադիմական գաղափարների հաստատման ու տարածման դարաշրջան է:

Սակայն նորագույն շրջանը միաժամանակ մարդկության պատմության ամենաողբերգական ժամանակաշրջաններից մեկն է: Հենց այս փուլում տեղի ունեցավ Երկրորդ համաշխարհային պատերազմը, որը վիթխարի աղետ էր համայն մարդկության համար: Նորագույն շրջանում ստեղծվեց և առաջին անգամ կիրառվեց միջուկային զենքը, որով ակնհայտ դարձավ մի պարզ իրողություն՝ եթե մարդկությունը խելամտություն չցուցաբերի, ապա կկանգնի մեր մոլորակի ոչնչացման և ինքնակործանման վտանգի առջև:

Նորագույն շրջանում պետությունները բաժանվեցին երկու հակադիր ռազմաքաղաքական խմբավորումների, և նրանց միջև ծավալվեց, այսպես կոչված, «սառը պատերազմ», որը մշտապես ուղեկցվում էր բազմաթիվ տարածաշրջանային «տաք» պատերազմներով:

Սակայն 1980-ական թվականների վերջերին աշխարհի հզոր պետությունների առաջնորդները որդեգրեցին քաղաքական երկխոսության, համընդհանուր համագործակցության, մարդկության առջև կանգնած քաղաքական, տնտեսական, բնապահպանական և այլ կարգի խնդիրները համատեղ ուժերով լուծելու ուղին:

Այսպիսով՝ համաշխարհային պատմության նորագույն շրջանը դեպքերով և իրադարձություններով հարուստ մի ժամանակաշրջան է:

Իհարկե, հնարավոր չէ մեկ գրքի մեջ ներկայացնել նորագույն շրջանի բոլոր իրադարձությունները իրենց մանրամասներով: Այս դասագրքում շարադրված են այն հիմնախնդիրները, որոնք ունեն սկզբունքային նշանակություն: Լուսաբանված է այն երկրների պատմությունը, որոնք կարևոր դեր են խաղում համաշխարհային պատմության մեջ:

ԱՇԽԱՐՀԸ ԵՐԿՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՄԻՋԵՎ



Եվրոպայի քաղաքական քարտեզը. պետական նոր սահմանները Առաջին աշխարհամարտից հետո

Գլուխ 1 ՎԵՐՍԱԼ-ՎԱՇԻՆԳՏՈՆՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

դաս 2

ՎԵՐՍԱԼ-ՎԱՇԻՆԳՏՈՆՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

ՓԱՐԻԶԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

Առաջին համաշխարհային պատերազմը, ինչպես գիտեք, ավարտվեց **Անտանտի** երկրների հաղթանակով: Անտանտի կորիզը կազմում էին **Անգլիան, Ֆրանսիան** և **Ռուսաստանը**: 1917թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Ռուսաստանը դուրս եկավ նրա կազմից: **Քառյակ դաշինքի** մեջ մտնող երկրները՝ **Գերմանիան, Ավստրոհունգարական կայսրությունը, Օսմանյան կայսրությունը** և **Բուլղարիան**, 1918 թվականի աշնանը մեկը մյուսի հետևից անձնատուր եղան:

Հաղթողներին անհրաժեշտ էր պարտություն կրած երկրների հետ կնքել հաշտության պայմանագիր՝ նրանց հետ հարաբերությունները կարգավորելու համար: Այդ նպատակով **1919թ. հունվարի 18–ին Փարիզում բացվեց հաշտության խորհրդաժողով** (այն ավարտվեց 1920 թվականի հունվարի 21–ին):

Ձախից աջ՝ Դեյվիդ Լլոյդ Ջորջ, Վիտորիո Օռլանդո, Ժորժ Կլեմանսո, Վուդրո Վիլսոն

Խորհրդաժողովում կարևոր դեր էր խաղում «**Չորսի խորհուրդը**» կամ «**Մեծ քառյակը**»: Դրա մեջ մտնում էին Անգլիայի վարչապետ **Դեյվիդ Լլոյդ Ջորջը**, Ֆրանսիայի վարչապետ **Ժորժ Կլեմանսոն**, ԱՄՆ–ի նախագահ **Վուդրո Վիլսոնը** և Իտալիայի վարչապետ **Վիտորիո Օռլանդոն**:

Ֆրանսիան ամեն կերպ ձգտում էր պարտված երկրների և հատկապես Գերմանիայի հետ այնպիսի պայմանագիր կնքել, որն ապահովեր իր *գերիշխանությունը** (հեգեմոնիան) Եվրոպայում: Իսկ Անգլիայի և ԱՄՆ–ի համար դա անընդունելի էր: Նրանք ձգտում էին Գերմանիան օգտագործել մի կողմից՝ ֆրանսիական ազդեցության հետագա ուժեղացման, իսկ մյուս կողմից՝ Խորհրդային Ռուսաստանի դեմ: Ի վերջո, Ֆրանսիան շատ հարցերում հարկադրված էր զիջել:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

1919թ. հունիսի 28–ին ֆրանսիական թագավորների Վերսալյան պալատի Հայելազարդ դահլիճում ստորագրվեց հաշտության պայմանագիր Անտանտի երկրների և Գերմանիայի միջև:

Պայմանագիրն արձանագրեց Գերմանիայի և նրա դաշնակիցների մեղավորությունն Առաջին համաշխարհային պատերազմը սկսելու մեջ: Վերսալի պայմանագրով Գերմանիային պարտադրվում էր լրիվ զինաթափում, իսկ նրա բանակը չէր կարող ունենալ 100 հազարից ավելի զինվոր: Գերմանական գլխավոր շտաբը ցրվում էր, պարտադիր զինվորական ծառայությունը՝ չեղյալ հայտարարվում և արգելվում զենք ներմուծելը: Գերմանիայի վրա դրվեց նաև խոշոր *ռազմատուգանք**:

Ավստրոհունգարական կայսրության փլուզումից հետո **1918թ. նոյեմբերի 12–ին** Ավստրիան հռչակվեց հանրապետություն:

* Աստղանիշով բառերի բացատրությունը տրված է տերմինների բառարանում:

Ավստրիայի ներկայացուցիչները հրավիրվեցին Փարիզ՝ մասնակցելու խորհրդաժողովին: **1919թ. սեպտեմբերի 10–ին** Փարիզի մերձակայքում՝ **Սեն–Ժերմեն ան Լեում,** հաշտության պայմանագիր ստորագրվեց **Անտանտի և Ավստրիայի միջև**: Պայմանագիրն արձանագրեց Ավստրոհունգարական կայսրության կործանումը և ճանաչեց Ավստրիային որպես անկախ հանրապետություն: Ավստրիան իր հերթին ճանաչեց Ավստրոհունգարական կայսրության փլատակների վրա գոյացած Չեխոսլովակիայի և Հարավսլավիայի անկախությունը: Խիստ կրճատվեցին Ավստրիայի ռազմական ուժերը, իսկ ամբողջ նավատորմն անցավ Անտանտի տրամադրության տակ:

1919թ. նոյեմբերի 27–ին Փարիզի մեկ այլ արվարձանում՝ **Նեյ Սյուր–Սենում,** հաշտության պայմանագիր ստորագրվեց **Անտանտի և Բուլղարիայի միջև**: Բուլղարիան ունեցավ զգալի տարածքային կորուստներ՝ հօգուտ Ռումինիայի, Հարավսլավիայի և Հունաստանի: Բուլղարիայի ռազմական ուժերը պետք է ստեղծվեին կամավորության սկզբունքով: Նրա ռազմական նավերը նույնպես անցան Անտանտի երկրներին:

1920թ. հունիսի 4–ին Վերսալի Տրիանոնի Մեծ պալատում Անտանտը հաշտության պայմանագիր ստորագրեց նորանկախ **Հունգարիայի հետ**: Հաշտության պայմանագրով Հունգարիայի վրա նույնպես դրվեցին մի շարք սահմանափակումներ (պարտադիր զինծառայության արգելք և այլն): Նա, ինչպես և պարտված բոլոր երկրները, պարտավորվում էր վճարել ռազմատուգանք:

ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

1920թ. օգոստոսի 10–ին Փարիզից ոչ հեռու գտնվող **Սևր** քաղաքում հաշտության պայմանագիր ստորագրվեց **սուլթանական Թուրքիայի հետ**: Անտանտի կողմից պայմանագիրը ստորագրեցին Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան, Բելգիան, Հայաստանը և այլ պետություններ:

Սևրի պայմանագիրն իրավաբանորեն ձևակերպեց Օսմանյան կայսրության վերացումը և նշեց Թուրքիայի նոր սահմանները:

Սևրի պայմանագիրն ուներ առանձին «**Հայաստան**» բաժին, որը բաղկացած էր վեց հոդվածներից (88–93): Թուրքիան Հայաստանը ճանաչում էր «ազատ և անկախ պետություն»: Թուրքիայի և Հայաստանի միջև պետական սահմանները ճշգրտելու համար ստեղծվեց հանձնաժողով ԱՄՆ–ի նախագահ **Վուդրո Վիլսոնի** գլխավորությամբ, իսկ կողմերը համաձայնվեցին ընդունել նրա առաջարկությունները:

Վիլսոնի գլխավորած հանձնաժողովը 1920թ. նոյեմբերին ներկայացրեց իր առաջարկությունները: Հայաստանին էր տրվում համարյա ամբողջ Էրզրումի վիլայեթը, Տրապիզոնի վիլայեթի մի մասը և Վանի ու Բիթլիսի վիլայեթների երկու երրորդը՝ ընդամենը 90 հազար քառակուսի կմ տարածք: Հայաստանն ունենում էր ելք դեպի Սև ծով: Եթե նկատի ունենանք, որ Արևելյան Հայաստանում ստեղծված Հայաստանի առաջին հանրապետության տարածքն այդ ժամանակ կազմում էր մոտ 70 հազար քառ. կմ, ապա Սևրի պայմանագրից հետո միացյալ Հայաստանը կընդգրկեր 160 հազար քառ. կմ տարածք:

Հայաստանի կողմից Սևրի պայմանագիրը ստորագրեց հայկական պատվիրակության ղեկավար **Ավետիս Ահարոնյանը**:

Սևրի պայմանագրով՝ թուրքական բանակը առավելագույնը կարող էր ունենալ 50 հազար զինվոր և սպա:

Թուրքիայում մեծ դժգոհությամբ ընդունեցին Սևրի պայմանագիրը:Նրա դեմ հանդես եկավ Անկարայի կառավարությունը՝ **Մուսթաֆա Քեմալի** գլխավորությամբ: Քեմալը հենվում էր Խորհրդային Ռուսաստանի քաղաքական և ռազմական օգնության վրա:

Քեմալական զորքերը 1920թ. աշնանն արշավեցին Հայաստանի վրա և գրավեցին նրա մի շարք մարզեր, իսկ 1922թ. պարտության մատնեցին հույներին: Ամրապնդելով իրենց միջազգային դիրքերը՝ քեմալականներին հաջողվեց հասնել Սևրի պայմանագրի վերանայմանը:

1923թ. Լոզանում գումարված խորհրդաժողովը ճանաչեց Մուսթաֆա Քեմալի գլխավորած Անկարայի կառավարությանը: Փաստորեն չեղյալ հայտարարվեց Սևրի պայմանագիրը և հաստատվեցին Թուրքիայի նոր

սահմանները: Թուրքիայի տարածքի մեջ ընդգրկվեցին նաև Արևելյան Թրակիան, Իզմիրը, Կիլիկիան, ամբողջ Արևմտյան Հայաստանը և 1920թ. թուրք–հայկական պատերազմի ընթացքում Հայաստանից նվաճված Կարսի, Արդահանի և Սուրմալուի շրջանները:

Այսպիսով՝ Վերսալի, Սեն–Ժերմենի, Նեյի, Տրիանոնի և Սևրի պայմանագրերով դրվեց **Վերսալյան համակարգի** հիմքը: Այն հանդիսացավ Առաջին համաշխարհային պատերազմից հետո ձևավորված քաղաքական իրողությունների արտացոլումը: Դրանով Եվրոպան բաժանվեց հաղթողների և պարտվողների, ինչը սկզբից նեթ իր մեջ պարունակում էր նոր հակամարտությունների և բախումների իրական վտանգ:

ՎԱՇԻՆԳՏՈՆՅԱՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԵՐԸ

Ամերիկյան դիվանագիտության նախաձեռնությամբ **1921–1922թթ. Վաշինգտոնում գումարվեց խորհրդաժողով**՝ նվիրված հեռավորարևելյան և խաղաղօվկիանոսյան խնդիրներին: Խորհրդաժողովին մասնակցում էին ԱՄՆ–ի, Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Չինաստանի և այլ երկրների պատվիրակությունները: Ստորագրվեց երեք կարևոր պայմանագիր:

Առաջին՝ այսպես կոչված չորսի պայմանագիրը ստորագրեցին ԱՄՆ–ը, Անգլիան, Ճապոնիան և Ֆրանսիան 1921թ. դեկտեմբերի 13–ին: ԱՄՆ–ը հասավ այն բանին, որ կողմերը ստորագրեցին խաղաղօվկիանոսյան տիրույթների և տարածքների համատեղ պաշտպանության իրավունքի մասին պայմանագիր: Դրանով վերանում էր Անգլիայի և Ճապոնիայի մենաշնորհն այդ կարևոր հարցում:

Խորհրդաժողովում ստորագրվեց պայմանագիր Չինաստանի ինքնիշխանության, տարածքային և վարչական անձեռնմխելիության հարգման վերաբերյալ: Պայմանագիրը հաստատեց «**հավասար հնարավորությունների**» սկզբունքը, որը առևտրի և արդյունաբերական գործունեության համար հավասար պայմաններ և հնարավորություններ էր ընձեռում բոլոր պետություններին: Այս պայմանագիրը բարենպաստ հնարավորություններ էր ստեղծում ԱՄՆ–ի համար՝ ներթափանցելու Չինաստան:

Եվ վերջապես՝ խորհրդաժողովում ԱՄՆ–ը, Անգլիան, Ճապոնիան, Ֆրանսիան և Իտալիան 1922թ. փետրվարի 6–ին համաձայնության եկան իրենց ռազմանավերի չափաբաժինների և համամասնության հարցի շուրջ: Անգլիան ԱՄՆ–ի ճնշման ներքո հարկադրված էր զիջել և համաձայնվել, որ ԱՄՆ–ը կարող է ունենալ այնքան գծանավ և հածանավ, որքան Անգլիան:

Վաշինգտոնյան համաժողովը ամերիկյան դիվանագիտության մեծ հաղթանակն էր: Նա խարխլեց Անգլիայի և Ճապոնիայի ռազմաքաղաքական դիրքերը Հեռավոր Արևելքում և Խաղաղ օվկիանոսի ավազանում՝ այդտեղ հաստատելով ուժերի նոր հարաբերակցություն հօգուտ ԱՄՆ–ի: Դրան նպաստեց նաև այն հանգամանքը, որ Խորհրդային Ռուսաստանին թույլ չտրվեց մասնակցելու խորհրդաժողովին:

Այսպիսով, եթե **Վերսալյան համակարգով** ամրագրվեց ուժերի նոր հարաբերակցություն Եվրոպայում, աֆրիկյան մայրցամաքում և Մերձավոր Արևելքում, ապա **Վաշինգտոնյան պայմանագրերով** հաստատվեց ուժերի նոր դասավորություն Խաղաղ օվկիանոսի ավազանում և Հեռավոր Արևելքի տարածաշրջանում: **Իրավաբանորեն հաստատելով նոր քաղաքական իրողություններն աշխարհում՝ դրանք միասին կազմում են Վերսալ–վաշինգտոնյան համակարգը:**

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Վերհիշե՛ք Առաջին աշխարհամարտի պատճառները: Ի՞նչ նպատակով գումարվեց Փարիզի հաշտության խորհրդաժողովը:*
2. *Շահերի ինչպիսի՞ հակադրություններ կային «Չորսի խորհրդի» անդամների միջև:*
3. *Առաջին համաշխարհային պատերազմում պարտված երկրների հետ ե՞րբ և որտե՞ղ կնքվեցին հաշտության պայմանագրերը:*
4. *Սևրի պայմանագրով հայկական ո՞ր տարածքներն էին անցնում Հայաստանի առաջին հանրապետությանը: Ինչո՞ւ չիրագործվեց Սևրի պայմանագիրը, ինչո՞վ փոխարինվեց այն:*
5. *Պարզաբանե՛ք «Վերսալ–վաշինգտոնյան համակարգ» հասկացությունը:*

դաս 3

ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՆ

ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՅԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Միջազգային համապարփակ կազմակերպության ստեղծման գաղափարը ծագել էր Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: ԱՄՆ–ի նախագահ **Վուդրո Վիլսոնն** այն մտցրեց 1918թ. հունվարին հռչակած իր «**տասնչորս կետերի**» մեջ: Այդպիսի կազմակերպություն հանդիսացավ **Ազգերի լիգան**, որի կանոնադրությունը հաստատեց Փարիզի խորհրդաժողովը **1919թ. հունիսի 28–ին**: Ազգերի լիգայի կանոնադրությունն անմիջապես ստորագրեց 44 պետություն:

Ազգերի լիգայի գլխավոր մարմիններն էին **Ասամբլեան, Ազգերի լիգայի Խորհուրդը** և **Քարտուղարությունը**, որոնց **մշտական նստավայրը Ժենև էր**:

Ազգերի լիգան կոչված էր լինելու խաղաղություն պահպանող, ագրեսիաները կանխող և միջազգային համագործակցությունն ապահովող կազմակերպություն: Դրան էին նպատակամղված նրա կանոնադրության գլխավոր հոդվածները: Այսպես, օրինակ, կանոնադրության 10–րդ հոդվածը հաստատում էր Ազգերի լիգայի անդամ պետությունների տարածքային ամբողջականության փոխադարձ երաշխավորման սկզբունքը: Այն պահանջում էր անդամ–երկրների ջանքերի միավորում ընդդեմ *ագրեսիայի**: Իսկ 16–րդ հոդվածը նախատեսում էր պատժամիջոցների կիրառում ագրեսոր պետության նկատմամբ: Ընդ որում, կանոնադրությամբ թույլատրվում էր Ազգերի լիգայի միջամտությունը նաև ոչ անդամ պետությունների վեճերին: Սակայն Ազգերի լիգան չարդարացրեց իր վրա դրված հույսերը և դարձավ պայքարի թատերաբեմ Անգլիայի և Ֆրանսիայի, իսկ ապա նաև՝ Գերմանիայի, Իտալիայի, Ճապոնիայի և ԽՍՀՄ–ի համար:

ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Հայաստանի Հանրապետությունը ակնկալում էր Ազգերի լիգայի օգնությունն իր կենսական խնդիրների լուծման գործում: **1920թ. մայիսին** Հայաստանի կառավարությունը պաշտոնապես դիմեց Ազգերի լիգայի խորհրդին՝ նրան անդամակցելու խնդրանքով: Սակայն Ազգերի լիգան մերժեց Հայաստանի խնդրանքը. բուն պատճառը Անգլիայի և Ֆրանսիայի կողմից Թուրքիային սիրաշահելու քաղաքականությունն էր:

Ազգերի լիգան Հայկական հարցին անդրադարձել էր նաև Հայաստանի մանդատի կապակցությամբ, որը քննարկվում էր 1919–1920 թվականների ընթացքում: **Մանդատը** որպես կառավարման ձև հանդես եկավ Ազգերի լիգայի ստեղծման հետ: Ազգերի լիգան կառավարման մանդատ կարող էր տալ արևմտյան որևէ զարգացած երկրի՝ Օսմանյան կայսրության և Գերմանիայի նախկին *գաղութները** կամ ենթակա երկրները կառավարելու համար:

Հայաստանի մանդատի գլխավոր հավակնորդն Ամերիկայի Միացյալ Նահանգներն էր: Սակայն այս հարցում ԱՄՆ–ի նախագահ Վիլսոնը չցուցաբերեց հետևողականություն և ճկունություն: Հայաստանի մանդատի ընդունումը կապակցվեց Անատոլիայի և Կոստանդնուպոլսի մանդատի ընդունման հետ, որը նոր բարդություններ ու խոչընդոտներ առաջացրեց: Հարցի լուծումը ձգձգվեց, իսկ այդ ընթացքում փոխվեց քաղաքական իրադրությունը: Եվ երբ Վիլսոնը Հայաստանի մանդատի հարցը ներկայացրեց ԱՄՆ–ի Սենատի քննարկմանը, վերջինս 1920թ. հունիսի 1–ին մերժեց նրա խնդրանքը:

Հայկական հարցն Ազգերի լիգայի քննարկման առարկա դարձավ նաև **1920թ. աշնանը**, երբ թեմալական Թուրքիան հարձակվեց Հայաստանի Հանրապետության վրա: Հայաստանի կառավարությունը դիմեց Ազգերի լիգային՝ խնդրելով համապատասխան օգնություն ընդդեմ թուրքական ագրեսիայի: Սակայն վերջինս ոչ մի գործնական քայլ չարեց:

Հայկական թեման Ազգերի լիգայում մեկ անգամ ևս հնչեց, այսպես կոչված, «**հայկա-**

կան օջախ» ստեղծելու կապակցությամբ: Այդ հարցը երևան եկավ այն ժամանակ, երբ պարզ դարձավ, որ Սևրի պայմանագիրը չի իրագործվելու: Հայերին ինչ-որ ձևով «սիրաշահելու» նպատակով Մեծ Բրիտանիան հրապարակ նետեց «հայկական օջախի» հարցը: Նախատեսվում էր այդպիսի օջախ ստեղծել Թուրքիայի տարածքում՝ Կիլիկիայի և Սիրիայի սահմանահատվածում: Այստեղ պետք է տեղափոխվեր հայ գաղթականների մի ստվար խումբ:

Սակայն Թուրքիան Ազգերի լիգայի հետ «մենամարտում» դարձյալ «հաղթող» դուրս եկավ: Ազգերի լիգան ձևականորեն չհրաժարվեց «հայկական օջախի» գաղափարից, այլ մտցրեց մի «փոքրիկ» ուղղում՝ առաջարկվեց «հայկական օջախ» ստեղծել Խորհրդային Հայաստանի տարածքում:

Այս շրջանում սուր բնույթ էր ընդունել հայ գաղթականների հարցը: Մեծ եղեռնի, ինչպես նաև 1918թ. և 1920թ. Հայաստանի վրա կատարված թուրքական արշավանքների հետևանքով առաջացած հայ գաղթականների հոծ զանգվածը գտնվում էր նյութական և սոցիալ-տնտեսական ծանր վիճակում: Ազգերի լիգան 1920-ական թվականներին փորձեց զբաղվել նրանց տեղավորման և նյութական ապահովման հարցերով, բայց ապարդյուն:

Այդ խնդրի կարգավորման գործում մեծ դեր ունեցավ **Ֆրիտյոֆ Նանսենը (1861–1930)**: Նա նորվեգացի հայտնի բնեռախույզ-գիտնական էր, որոշ ժամանակ եղել էր Ազգերի լիգայի գերագույն կոմիսար, զբաղվել գաղթականների և ռազմագերիների հարցերով: Նանսենը քաջածանոթ էր հայ ժողովրդի պատմությանը, մասնավորապես՝ սուլթան Աբդուլ Համիդի և երիտթուրքերի հայաջինջ քաղաքականությանը:

1925թ. նրա գլխավորած պատվիրակությունն այցելեց Հայաստան և ծանոթացավ Հայաստանում հայ գաղթականներին տեղավորելու հնարավորությունների հետ: Նանսենը, տեսնելով, որ Ազգերի լիգան առանձնակի եռանդ չի ցուցաբերում հայ գաղթականներին Հայաստանում տեղավորելու համար, իր անձնական նախաձեռնությամբ

Հայ ժողովրդի մեծ բարեկամ Ֆրիտյոֆ Նանսենը

ձեռք բերեց անհրաժեշտ միջոցներ և կազմակերպեց 7000 հայ գաղթականների հայրենադարձությունը Խորհրդային Հայաստան:

Նրա անվան հետ է կապված, այսպես կոչված, *«Նանսենյան անձնագիրը»**, որը մտցվեց 1922 թվականին՝ Ազգերի լիգայի որոշմամբ: Այն տրվում էր տարբեր ազգությունների պատկանող գաղթականներին: «Նանսենյան անձնագիր» ունեցող գաղթականը կարող էր բնակություն հաստատել Ազգերի լիգայի 1922թ. Ժենևի խորհրդաժողովի մասնակից որևէ երկրում և ազատորեն տեղաշարժվել: Ազգերի լիգայի 1924թ. հուլիսի 12-ի որոշմամբ՝ մոտ 320 հազար հայ գաղթականներ ստացել են այդ վկայականից:

ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՆ 1920-30-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Ազգերի լիգայի ուշադրությունը 1920-ական թվականներին հիմնականում կենտրոնացած էր Եվրոպայում, Ասիայում և Լատինական Ամերիկայում պետությունների միջև սահմանային և տարածքային վեճերի լուծման, ագրեսիայի կանխման և այլ սուր հարցերի վրա:

Նա կարևոր դեր խաղաց Շվեդիայի և Ֆինլանդիայի միջև ծագած վեճը կարգավորելու խնդրում: Ազգերի լիգայի Խորհրդի 1921թ. հունիսի որոշմամբ Ֆինլանդիան պահպանեց իր *ինքնիշխանությունը** Ալանդյան կղզիների վրա, սակայն կղզիներին տրվեց ինքնավարության յուրահատուկ կարգավիճակ:

Ազգերի լիգան ակտիվ դեր խաղաց նաև Ալբանիայի, Հարավսլավիայի և Հունաստանի միջև սահմանների հստակեցման գործում:

1923թ. օգոստոս–սեպտեմբեր ամիսներին Իտալիան և Հունաստանը հայտնվեցին պատերազմական վիճակում: Ցանկանալով ուժեղացնել իր դիրքերը Ադրիատիկ ծովում և այն վերածել իտալական ծովի՝ Իտալիան գրավեց ռազմավարական մեծ նշանակություն ունեցող Կորֆու կղզին: Հունաստանը դիմեց Ազգերի լիգայի Խորհրդին, և վերջինիս ճնշման ներքո Իտալիան ստիպված էր իր զորքերը դուրս բերել կղզուց:

1926թ. Գերմանիան ընդունվեց Ազգերի լիգայի անդամ: Այդ քայլով Անգլիան և Ֆրանսիան ձգտում էին մի կողմից՝ Գերմանիային օգտագործել իրենց նպատակների համար, իսկ մյուս կողմից՝ ընդդեմ Խորհրդային Միության:

1930–ական թվականներին Ազգերի լիգան բախվեց ավելի լուրջ խնդիրների:

1931թ. Ճապոնիան ներխուժեց Չինաստան և գրավեց զգալի տարածքներ: Մոտ երկու տարի ձգձգելուց հետո միայն Ազգերի լիգան, առանց պատժամիջոցների կիրառման, կոչ արեց ագրեսորին իր զորքերը դուրս բերել Չինաստանից: Համաձայն չլինելով անգամ նման մեղմ որոշման հետ՝ Ճապոնիան 1933թ. մարտին դուրս եկավ Ազգերի լիգայի կազմից: Ճապոնիայի օրինակին հետևեց նաև Գերմանիան, որը ձգտում էր Ազգերի լիգայի օգնությամբ ձերբազատվել վերսալյան կապանքներից, մասնավորապես՝ Վերսալի պայմանագրի ռազմական հոդվածներից: Չհասնելով իր նպատակին՝ Գերմանիան 1933թ. հոկտեմբերի 14–ին նույնպես լքեց Ազգերի լիգան:

Ստեղծված պայմաններում Ազգերի լիգան **1934թ. սեպտեմբերի 18–ին**, Ֆրանսիայի նախաձեռնությամբ, **Խորհրդային Միությանն ընդունեց իր շարքերը**, որը տեղ գրավեց Խորհրդի մշտական անդամների կազմում: Ֆրանսիայի նախաձեռնությունը բացատրվում է հզորացող Գերմանիայի հանդեպ նրա աճող վախով և Խորհրդային Միությանը ապագայում հնարավոր դաշնակից տեսնելու միտումով:

1930–ական թվականների կեսերից ավելի ցայտունորեն դրսևորվեց Անգլիայի և Ֆրանսիայի այն քաղաքականությունը, որը ստացավ **ագրեսիայի թողտվության, չմիջամտելու, «խաղաղարարության» քաղաքականություն** անվանումը:

Ազգերի լիգան, հետևելով այդ քաղաքականությանը, ի վերջո հեղինակազրկվեց և փաստորեն դադարեցրեց իր գործունեությունը:

1946թ. ապրիլին այն պաշտոնապես լուծարվեց:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ո՞վ էր Ազգերի լիգայի ստեղծման գաղափարի հեղինակը: Ե՞րբ հիմնադրվեց լիգան:*
2. *Ինչո՞ւ Ազգերի լիգան Հայաստանին չընդունեց իր կազմի մեջ: Տվե՛ք «Հայաստանի մանդատ» և «հայկական օջախ» հասկացությունների բացատրությունը:*
3. *Պատմե՛ք Ֆ. Նանսենի և նրա հայանպաստ գործունեության մասին:*
4. *Ազգերի լիգան, ձեր կարծիքով, արդյոք կատարե՞ց իր վրա դրված միջազգային անվտանգության և խաղաղության պահպանման պարտականությունը: Փաստերով հիմնավորե՛ք պատասխանը:*

Գլուխ 2 ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ: ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ 1922-1939 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

դաս 4

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ: ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

1917 թ. փետրվարի 27–ին Ռուսաստանում հաղթանակեց բուրժուադեմոկրատական *հեղափոխությունը**: Մարտի 2–ին Նիկոլայ II թագավորը հրաժարվեց գահից և Ռոմանովների 300–ամյա տիրապետությունը տապալվեց: Ռուսաստանում հաստատվեց երկիշխանություն՝ Ժամանակավոր կառավարություն և բանվորների ու զինվորների Պետրոգրադի խորհուրդ:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ

Հեղափոխությունից հետո երկրի առջև ծառացած տնտեսական ու քաղաքական խնդիրները Ժամանակավոր կառավարության օրոք չլուծվեցին: Պատերազմը շարունակվում էր, օրըստօրե խորանում էր ճգնաժամը, դժգոհությունը համակել էր բոլորին: Այս ծանր աղետալի վիճակից օգտվեցին բոլշևիկները և **1917 թ. հոկտեմբերի 25–ին** (նոյեմբերի 7–ին) տապալեցին Ժամանակավոր կառավարությունը: Նույն օրը երեկոյան խորհուրդների համառուսաստանյան II համագումարը հայտարարեց Ռուսաստանում **խորհրդային իշխանության** հաղթանակը և կազմեց կառավարություն՝ **Ժողովրդական կոմիսարների խորհուրդ** (ժողկոմխորհ)՝ **Վ. Լենինի** գլխավորությամբ: Պետրոգրադից հետո նոյեմբերի 2–ին խորհրդային կարգեր հաստատվեցին Մոսկվայում, ապա նաև Դոնբասում, Ուրալում, Պովոլժիեում ու Ռուսաստանի մյուս տարածքներում:

Իշխանությունը վերցնելուց հետո խորհուրդների համառուսաստանյան համագումարները, Ռուսաստանի խորհուրդների Կենտգործկոմը և Ժողկոմխորհը մի շարք կարևոր որոշումներ ընդունեցին երկրի տնտեսական ու հասարակական կյանքը կարգավորելու մասին:

Հաշտության մասին *դեկրետով** Ռուսաստանը դիմեց պատերազմող երկրներին՝ հաշտության բանակցություններ սկսելու համար: 1918 թ. մարտի 3–ին հաշտության պայմանագիր կնքվեց Ռուսաստանի և Գերմանիայի միջև: Հողի մասին դեկրետով բազմամիլիոն գյուղացիությունը անհատույց 150 միլիոն հեկտար հողատարածություն ստացավ: Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիան հռչակեց Ռուսաստանի ժողովուրդների **իրավահավասարությունն** ու ***սուվերենությունը****, նրանց **ինքնորոշման իրավունքը**: Շուտով խորհրդային իշխանությունը *ազգայնացրեց** արդյունաբերական ձեռնարկությունները, բանկերը, տրանսպորտը, ջրային ռեսուրսները, ընդերքի հարստությունները և այլն:

1918 թ. հուլիսին խորհուրդների համառուսաստանյան V համագումարն ընդունեց ՌԽՖՍՀ–ի առաջին Սահմանադրությունը, որով վավերացվում էր *պրոլետարիատի դիկտատուրայի** հաստատումը ամբողջ երկրում: Սահմանադրությունը ընդգծված դասակարգային բնույթ ուներ: Մասնավոր առևտրով զբաղվողները, հոգևորականները, վարձու աշխատանք օգտագործողները և նրանց ընտանիքների անդամները զրկվում էին ընտրական իրավունքից: Այնուհանդերձ, փորձ էր արվում իրավական դաշտ ստեղծել՝ երկիրը ծանր, բայբայված վիճակից դուրս բերելու համար:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԻՆՏԵՐՎԵՆՑԻԱՆ

Ռուսաստանի տապալված դասակարգերը չհաշտվեցին երկրում խորհրդային կարգերի և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման հետ: Երկրում սկսվեց *քաղաքացիական պատերազմ**, որի հետևանքով ավերվեց ու արյունաքամ եղավ առանց այդ էլ ծանր վիճակում գտնվող Ռուսաստանը: 1918թ. ամռանը ՌԽՖՍՀ–ն շրջապատվեց թշնամական ռազմաճակատների օղակով: Ցարական գեներալներ Ա. Կոլչակը, Ա. Դենիկինը, Պ. Վրանգելը, հենվելով հակահեղափոխական ուժերի և Անտանտի ֆինանսական ու ռազմական ուժերի վրա, կազմակերպեցին բանակներ և գրավեցին Սիբիրի, Դոնի, Ուրալի, Պովոլժիեի, Հյուսիսային Կովկասի տարածքները: Հեռավոր Արևելք ներխուժեցին ամերիկյան և ճապոնական զորքերը:

Գերմանացիները օկուպացրին Ուկրաինան, Բելոռուսիան, Ղրիմը: Օգտվելով խառը իրադրությունից՝ անգլիացիները մտան Անդրկովկաս ու Թուրքեստան: Ամբողջ երկիրը բաժանվեց *կարմիրների** և *սպիտակների**, որոնց անհաշտ պայքարին զոհ գնացին միլիոնավոր մարդիկ: Չնայած Անտանտի երկրների *ինտերվենցիային** և բազմակողմանի օգնությանը՝ խորհրդային իշխանությունը կարողացավ կազմակերպել ժողովրդական զանգվածներին ու Կարմիր բանակի հերոսական պայքարով ջախջախել սպիտակգվարդիական ուժերին և 1918–1920թթ. երկրում վերահաստատել խորհրդային կարգերը:

Կարմիր բանակի առաջին հեծելազորը

«ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻԶՄԻ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքացիական կռիվների եռուն շրջանում Ռուսաստանի կենտրոնական մարզերը կտրվեցին սննդամթերքի, վառելիքի և հումքի հիմնական կենտրոններից: Պետերբուրգում, Մոսկվայում և մյուս կենտրոնական արդյունաբերական նահանգներում սով սկսվեց: Ռուսաստանի Ժողկոմխորհը երկրում պարենային դիկտատուրա մտցրեց: Հացի ավելցուկը ունևորներից բռնագրավելու համար խոշոր քաղաքներում ստեղծվեցին բանվորական զինված ջոկատներ, իսկ գյուղերում՝ չքավորական կոմիտեներ, որոնք խուզարկումներ և բռնագրավումներ էին կատարում: Դա *«ռազմական կոմունիզմի»** քաղաքականությունն էր, որի կենսագործմամբ նախատեսվում էր գյուղացիներից բռնագրավել հացի ավելցուկը և բաժանել զինվորներին ու ծառայողներին: Միաժամանակ վերացվեցին առևտուրը, ապրանքադրամական հարաբերությունները, ամենուր մտցվեց պարտադիր աշխատանք և բնամթերային վճարում: Անշուշտ, այդ հարկադրական միջոցառումները պայմանավորված էին քաղաքացիական կռիվների ծանր իրավիճակով: Սակայն գյուղացիությունը դժգոհում էր և անընդհատ կրճատում մթերքների արտադրությունը, որն ավելի էր խորացնում ճգնաժամային վիճակը: Ուստի, երբ ամբողջ երկրում վերահաստատվեցին խորհրդային կարգերը, 1921թ. գարնանը «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը վերացվեց:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ձեր կարծիքով ինչո՞ւ բոլշևիկներին հաջողվեց գրավել իշխանությունը Ռուսաստանում:*
2. *Որո՞նք էին խորհրդային իշխանության առաջին ձեռնարկումները Ռուսաստանում:*
3. *Ինչո՞ւ Ռուսաստանում սկսվեց քաղաքացիական պատերազմ: Որո՞նք էին դրա պատճառները:*
4. *Բնութագրեք «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը:*

դաս 5

ԽՍՀՄ-Ի ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

ՈՒԿՐԱԻՆԱՅԻ, ԲԵԼՈՌՈՒՍԻԱՅԻ, ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, չնայած բորբոքված քաղաքացիական կռիվներին, երկրի տարբեր մարզերում հաստատվում էր **խորհրդային իշխանությունը**: Այն **հաղթական երթով հաստատվեց** Ուկրաինայի արդյունաբերական կենտրոններում: Սակայն Ուկրաինական ռադան զավթեց կենտրոնական իշխանությունը: Պայքար սկսվեց ռադայի և Ուկրաինայի կարմիր-գվարդիական ջոկատների միջև: Վերջիններիս օգնություն էին ցույց տալիս Խորհրդային Ռուսաստանի զորքերը: 1919թ. Կարմիր բանակը Ուկրաինան ազատեց դենիկինյան զորքերից և մաս առ մաս վերականգնեց խորհրդային իշխանությունը: Շուտով խորհուրդների համաուկրաինական համագումարը ընտրեց **Կենտգործկոմ՝ ակադեմիկոս բոլշևիկ Գ. Պետրովսկու** գլխավորությամբ:

Բելոռուսիայում ևս խորհրդային կարգերի հաստատումը տեղի էր ունենում Բելոռուսական ռադայի և անջատողականների դեմ մղվող պայքարով: **1919թ. սկզբին** այն հիմնականում խորհրդային էր, և տեղի ունեցավ բելոռուսական խորհուրդների համագումարը, որն **ընտրեց Կենտգործկոմ՝ Ալ. Մյասնիկյանի գլխավորությամբ**: Սակայն օգտվելով քաղաքացիական կռիվներից՝ 1919թ. Լեհաստանը հարձակվեց Բելոռուսիայի վրա և նվաճեց նրա տարածքի մեծ մասը: 1920թ. հուլիսին Կարմիր բանակը ազատագրեց Մինսկը:

Խորհրդային իշխանության հաղթական երթը շարունակվեց նաև հետագայում: Կարմիր բանակի զորամասերը խորհրդային կարգեր հաստատեցին Թուրքեստանում (այժմյան Միջին Ասիայի մեծ մասում) և Կիրգիզիայում:

Ռուսաստանում քաղաքացիական կռիվների եռուն շրջանում Անդրկովկասում իրենց տիրապետությունը հաստատեցին ազգայնական կամ ազգային կուսակցությունները՝ Ադրբեջանում՝ մուսավաթը, Հայաստանում՝ դաշնակցությունը, Վրաստանում՝ սոցիալ-դեմոկրատ մենշևիկները: Բավականին լարված վիճակ էր ստեղծվել այս գոտում: Հանրապետություններն իրարից տարածքային պահանջներ ունեին, որի լուծման համար հաճախ զինված ընդհարումներ էին տեղի ունենում: Հատկապես ծանր էր Հայաստանի վիճակը. նա հարկադրված էր միայնակ պայքարելու վրացական և թուրք-ադրբեջանական զավթիչների դեմ:

Քաղաքացիական կռիվները Հյուսիսային Կովկասում ավարտելուց հետո XI կարմիր բանակը շարժվեց դեպի Անդրկովկաս: **1920 թ. ապրիլին Բաքվի** բոլշևիկների գլխավորությամբ ապստամբություն տեղի ունեցավ, որին օգնության հասած Կարմիր բանակը այստեղ հաստատեց խորհրդային կարգեր: **Նույն թվականի դեկտեմբերի սկզբին Հայաստանի Հանրապետության կառավարությունը**, թուրքական նոր արշավանքից խուսափելու համար, **իշխանությունը հանձնեց բոլշևիկներին**: Հայաստանում ևս հաստատվեցին խորհրդային կարգեր: **1921թ. փետրվարին Վրաստանը** նույնպես XI բանակի օգնությամբ **հռչակվեց խորհրդային**: Անդրկովկասի խորհրդային հանրապետությունները բարիդրացիական հարաբերություններ հաստատեցին միմյանց հետ և ռազմաքաղաքական դաշինք կնքեցին Ռուսաստանի հետ:

ԽՍՀՄ-Ի ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Խորհրդային Ռուսաստանի սահմանամերձ շրջաններում ձևավորվեցին միութենական հանրապետություններ: Դրանք, չնայած Ռուսաստանի ազդեցության գոտում էին գտնվում, որոշակի ինքնուրույնություն ունեին և նույնիսկ կարող էին դիվանագիտական հարաբերություններ հաստատել այլ երկրների հետ:

Առանձին խորհրդային հանրապետությունների ձևավորումից հետո նրանց և Ռուսաստանի միջև միջպետական փոխհարա-

բերությունների հարցը հատուկ ուշադրության առարկա դարձավ: Առաջին հերթին կնքվեցին ռազմական պայմանագրեր, որոնք նախատեսում էին թշնամու դեմ համատեղ պայքարելու անհրաժեշտությունը: Կային նաև տնտեսական փոխհարաբերություններին վերաբերող պայմանագրեր: Քանի որ հիմնական օգնողն ու մատակարարողը Ռուսաստանն էր, նրա հետ պետք է համաձայնեցվեին տեղական միջոցառումները:

1922թ. փաստորեն վերացվեցին առանձին հանրապետությունների արտաքին ինքնուրույն հարաբերությունները, և Ռուսաստանը սկսեց հանդես գալ նրանց բոլորի անունից: Հանրապետությունները հաշտվեցին այդ վիճակի հետ, չնայած ձևականորեն շարունակում էին անկախ մնալ:

Ռուսաստանը բազմազգ պետություն էր, և *ազգային հարցի** լուծումը էական նշանակություն ուներ: Կոմունիստների մեծ մասը հարցի լուծումը կապում էր համաշխարհային հեղափոխության հաղթանակի ուտոպիական պլանների հետ: Կային նաև այլ մոտեցումներ: Այսպես, ազգային հարցերով զբաղվող **Ի. Ստալինը** առաջ էր քաշում ազգային–պետական շինարարությունը կատարել **«ավտոնոմիզացիայի» տեսությամբ**: Դա նշանակում էր, որ բոլոր ազգային–պետական միավորները (նաև անկախ հանրապետությունները) պետք է մտնեին Ռուսաստանի կազմի մեջ՝ որպես ինքնավար միավորներ: Դրան ընդդիմացավ **Վ. Լենինը**: «Ավտոնոմիզացիայի» տեսությունը սխալ և վնասակար համարելով՝ նա գտնում էր, որ պետք է ստեղծել **ինքնուրույն իրավահավասար ազգային պետությունների ֆեդերացիա՝ միություն**:

Այս տեսակետների շուրջ 1921–1922թթ. բավականին սուր բանավեճեր տեղի ունեցան: Վրաստանի կոմունիստներն, օրինակ, դատապարտելով ստալինյան տեսակետը, գտնում էին, որ Անդրկովկասի հանրապետությունները, չնայած 1922 թ. միավորվել էին Անդրֆեդերացիայի մեջ, նոր կազմակերպվող բազմազգ պետական միավորման մեջ պիտի մտնեն որպես ինքնուրույն միավորներ: Դա կպահպաներ նրանց ինքնուրույնությունը: Ազգային հանրապետությունների որոշ ինքնուրույնությունը պաշտպանող վրաց կոմունիստներին, ինչպես նաև նրանց հետ համակարծիք ուկրաինացիներին ու բելոռուսնե-

րին Ի. Ստալինը մեղադրեց որպես անջատողականների և տեղական ազգայնականների (նացիոնալիստների): Այդ հարցերը վերջնականապես քննարկվեցին 1922թ. դեկտեմբերին Մոսկվայում բացված խորհուրդների համամիութենական առաջին համագումարում:

Համագումարը մերժեց «ավտոնոմիզացիայի» ստալինյան պլանը և որոշեց ստեղծել **Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն (ԽՍՀՄ)**: Չնայած դրան՝ Ստալինի պահանջով Անդրֆեդերացիան ԽՍՀՄ-ի մեջ ընդգրկվեց որպես մեկ միավոր: 1922թ. դեկտեմբերի 30-ին ստեղծվեց ԽՍՀՄ-ը, որի կազմի մեջ մտան ՌՍՖՍՀ-ն, ՈՒԽՍՀ-ն, ԲԽՍՀ-ն, Անդրֆեդերացիան: Դա նոր բազմազգ պետություն էր, որը գոյատևեց շուրջ 70 տարի:

Համագումարը ստեղծեց հատուկ հանձնաժողով, որին հանձնարարվեց մշակել **ԽՍՀՄ-ի առաջին Սահմանադրությունը**: Այն **ընդունվեց 1924թ.**: Սահմանադրությունը համամիութենական միասնական պետության ստեղծումը հռչակում էր որպես ինքնուրույն խորհրդային հանրապետությունների ֆեդերացիա: **Միության մեջ կամավոր մտնելու հետ մեկտեղ ընդգծվում էր նաև նրանից դուրս գալու իրավունքի մասին**: Միաժամանակ Սահմանադրության մեջ նշվում էր, որ նոր ստեղծված պետության կազմի մեջ կարող են մտնել բոլոր այն երկրները, որտեղ կիաստատվեն խորհրդային կարգեր: Ինչպես ցույց տվեց կյանքը, համաշխարհային խորհրդային հանրապետությունների միության ստեղծումը ուտոպիա էր, իսկ ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու իրավունքը սովորական խաբկանք էր:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ե՞րբ և ինչպե՞ս հաստատվեցին խորհրդային կարգերը՝ ա) Ուկրաինայում, Բելոռուսիայում, բ) Անդրկովկասում:*
2. *Պարզաբանե՛ք, թե ինչ տարբերություն կար խորհրդային հանրապետությունների միավորման վերաբերյալ Լենինյան և ստալինյան տեսակետների միջև:*
3. *Ի՞նչ սկզբունքներով կազմավորվեց ԽՍՀՄ-ը: ԽՍՀՄ առաջին Սահմանադրության մեջ ինչպե՞ս էր դա արտացոլված:*

ԴԱՍ 6

ԽՍՀՄ-Ի ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքական բարեփոխումներին զուգահեռ՝ իշխանության գլուխ կանգնած բոլշևիկները որոշ վերափոխումներ կատարեցին հին տնտեսակարգը վերացնելու և նորը հաստատելու ուղղությամբ:

«Ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը բռնապետական-վարչարարական քաղաքականություն էր, որից բնակչությունը խիստ դժգոհ էր: Տարբեր վայրերում գյուղացիական խռովություններ տեղի ունեցան, որոնք ճնշվեցին ռազմական ուժով: Տնտեսությունը խոր ճգնաժամի մեջ էր:

1921թ. մարտին Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության **(ՌԿ(բ)Կ) X** համագումարն անհրաժեշտ համարեց վերացնել «ռազմական կոմունիզմը» և անցնել **նոր տնտեսական քաղաքականության (*ՆԷՊ***): Վերացվեց *պարենամատակարարումը** և սահմանվեց *պարենային հարկ**: Նոր տնտեսական քաղաքականությունը խրախուսում էր մանր սեփականատերերի գործունեությունը, թույլատրում առևտուրը և այլն: Դա հնարավորություն տվեց սեղմ ժամկետում բարձրացնել արտադրողների անձնական շահագրգռվածությունը և երկիրը դուրս բերել ծանր վիճակից: Նէպի կենսագործմամբ 1920-ական թվականների կեսերին տնտեսությունը հիմնականում վերականգնվեց: Կառուցվեցին նոր գործարաններ ու ֆաբրիկաներ, հիդրոկայաններ ու ջրանցքներ: Սակայն վիթխարի ջանքերով վերականգնվող տնտեսության մակարդակը մյուս երկրների համեմատությամբ բավականին ցածր էր: Զգացվում էր ինդուստրացման անհրաժեշտությունը, որի համար պահանջվում էին մեծ թվով գործիմաց մասնագետներ և խոշոր կապիտալ ներդրումներ:

4773

ԵՐԿՐԻ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՈՒՄԸ

Լենինի մահից (1924թ. հունվարի 21) հետո իշխանությունն իր ձեռքում կենտրոնացրեց կոմունիստական կուսակցության Կենտկոմի գլխավոր քարտուղար **Իոսիֆ Ստալինը (Ջուղաշվիլի)**: **1925թ.** ընդունվեց ***ԽՍՀՄ-ի ինդուստրացման**** ծրագիրը, և երկրի տարբեր մասերում ծավալվեց արդյունաբերական ձեռնարկությունների շինարարությունը: Այն տեղի էր ունենում քաղաքական ասպարեզում անընդհատ խորացող պայքարի պայմաններում, երբ անհաջողությունները բարդվում էին ընդդիմադիր ուժերի վրա և դաժան հաշվեհարդար տեսնում նրանց հետ: Մարդկային ու նյութական վիթխարի զոհողությունների միջոցով ինդուստրացման բնագավառում որոշակի հաջողություններ ձեռք բերվեցին:

Կառուցվեցին **Ստալինգրադի տրակտորաշինական գործարանը, Դնեպրահիդկը, Թուրքսիբիրյան երկաթուղին, Մագնիտոգորսկը** և այլն: Զգալիորեն կրճատվեց արտասահմանյան հաստոցների ներմուծումը:

ԽՍՀՄ ծայրամասերի հետամնաց գյուղատնտեսական շրջաններում կառուցվում էին արդյունաբերական ձեռնարկություններ: Զգալիորեն բարելավվեց գյուղատնտեսության տեխնիկական սպասարկումը:

Արդյունաբերության ոլորտից արտամղվեց **մասնավոր ձեռնարկատիրությունը** և **հաստատվեց պետական սեփականության համապարփակ տիրապետությունը**: Վերացավ գործազրկությունը, սկսվեց քաղաքների և ավանների կառուցումը: Սակայն վերացվեցին նաև նեպի հիմնական սկզբունքները:

Փաստորեն 1930-ական թվականներին վերացվեց մարդու կողմից մարդու շահագործումը, բայց այն փոխարինվեց պետության կողմից մարդու շահագործմամբ: Այդ պայմաններում վիթխարի չափերով աճեց բյուրոկրատական ապարատը, և ամրապնդվեց կենտրոնացված վարչահրամայական համակարգը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՈՒՄԸ

ԽՍՀՄ-ում ծավալված ինդուստրացման կարիքները հոգալու համար անհրաժեշտ էր միջոցներ հայթայթել տնտեսության մյուս ճյուղերից: Ստալինյան ղեկավարությունը փորձեց ճնշում գործադրել ունևորների վրա, բռնագրավել նրանց միջոցները: Հատուկ որոշումներով գյուղական ունևոր խավի (կուլակների) վրա դրվեցին բարձր հարկեր, արգելվեց հողի առևտուրը, սկսվեցին բռնագրավումները: Փաստորեն ինդուստրացման գրոհային մեթոդները փոխադրվեցին նաև գյուղատնտեսության բնագավառ: Սակայն դա չէր բավարարում:

Սկսվեց գյուղատնտեսության կոլեկտիվացման քաղաքականությունը, որը բռնությունների և անօրինական գործողությունների տեղիք տվեց: Համատարած *կոլեկտիվացումից** առաջացած դժգոհությունը քողարկելու նպատակով 1929 թվականը հայտարարվեց **մեծ բեկման տարի**: Գյուղացիներին ստիպում էին «կամավոր» մասնակցել կոլեկտիվացմանը: Ունևորները, համարվելով այդ գործընթացին խանգարողներ, դիտվում էին որպես դասակարգային թշնամիներ: Ամենուր սկսվեց **«կուլակների որս»** և կարճ ժամանակամիջոցում վերացվեց գյուղական բնակչության գործունյա մասը: Բոլոր միջոցներով արագացվեց համատարած կոլեկտիվացումը: Կոլտնտեսություններից խուսափող գյուղացիների ունեցվածքը բռնագրավում էին, իսկ նրանց, որպես թշնամիներ, աքսորում: Այս բոլորը գյուղացիության զանգվածային դժգոհության տեղիք տվեց: 1929թ. տեղի ունեցան ավելի քան 1300 գյուղացիական ելույթներ:

Հարկադրական կոլեկտիվացումն ընդգրկեց ԽՍՀՄ-ի բոլոր հանրապետությունները, մարզերն ու շրջանները: Այն առաջացրեց գյուղացիական տնտեսությունների քայքայում և բնակչության զգալի մասի արտահոսք դեպի քաղաք: 1931թ. նոր թափով շարունակվեց կոլեկտիվացումը, և ամենափոքր դժգոհություն արտահայտողները ոչնչացվում կամ աքսորվում էին համակենտրոնացման ճամբարներ: Միայն 1932թ. առաջին հինգ ամիսներին դատապարտվեց ավելի քան 58 հազար մարդ: 1932–33թթ. գյուղատնտեսության անկման հետևանքով ամբողջ երկրում սով բռնկվեց, որը միլիոնավոր զոհեր տարավ:

Հարկադրանքի, բռնությունների և սովի պայմաններում 1930-ական թվականների կեսերից ԽՍՀՄ-ում հաստատվեցին կոլտնտեսային կարգեր:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Բնորոշեք նոր տնտեսական քաղաքականությունը (նեպ):*
2. *Ի՞նչ եք հասկանում ԽՍՀՄ ինդուստրացում ասելով: Ե՞րբ է այն սկսվել և ի՞նչ արդյունքներ է ունեցել:*
3. *Գյուղատնտեսության համատարած կոլեկտիվացումն ի՞նչ հետևանքներ ունեցավ:*

դաս 7

ՀԱՍՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ

ՎԱՐՉԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ: ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1920-ական թվականների վերջերին ԽՍՀՄ-ում հաստատվեց **վարչահրամայական** համակարգ: Աստիճանաբար այն վերածեց Ստալինի անսահմանափակ իշխանության և անձի պաշտամունքի: Կուսակցական կազմակերպությունները դարձել էին դիկտատուրայի հիմնական օղակներ: Իրենց որոշումներով նրանք պարտադրում էին պետական և տնտեսական մարմինների կատարելու այս կամ այն գործողությունը:

Վերացել էր օրենսդիր, գործադիր և դատական մարմինների ինքնուրույնությունը: Նրանց ղեկավարումը կենտրոնացված էր կուսակցական նեղ վերնախավի ձեռքում:

Անհատը զրկված էր սեփականությունից և հեռացված իշխանությունից: Նա միայն պարտականություններ կատարող էր: Բնակչության զգալի մասը՝ գյուղացիությունը, նույնիսկ իր քաղաքացիությունը հաստատող փաստաթուղթ՝ անձնագիր, չուներ:

1930-ական թվականների կեսերին ԽՍՀՄ-ում սկսվեցին **զանգվածային ձերբակալություններ**: Ստալինյան այն հորինվածքը, թե իբր որքան մոտենում է սոցիալիզմի կառուցման ավարտը, այնքան ուժեղանում է դասակարգային պայքարը, տեսական հիմք հանդիսացավ քաղաքական անօրինականությունների համար: Դրան զգալիորեն նպաստեց **1934թ. դեկտեմբերին** կազմակերպված՝ ականավոր բոլշևիկ, կուսակցության Լենինգրադի մարզկոմի քարտուղար **Ս. Կիրովի** սպանությունը:

Քաղաքական սպանության մեղքը բարդվեց ընդդիմության վրա և սանձազերծվեց անցանկալի գործիչների զանգվածային ահաբեկչություն: Երկրում չէր պահպանվում օրինականությունը: Ձերբակալվածներից շատերի ճակատագիրը քմահաճորեն տնօրինում էին հատուկ հանձնաժողովները՝ եռյակները, որոնք մի քանի րոպեի ընթացքում դատավճիռ էին կայացնում և անմիջապես իրագործում:

Քաղաքական բռնությունների պայմաններում երկրում անընդհատ ուժեղանում էր կուսակցական բյուրոկրատիայի անսահմանափակ իշխանությունը: Անհատի ազատության մասին խոսք անգամ չկար: Նրան դպրոցական տարիներից դաստիարակում էին դասակարգային անհաշտության, «**թշնամիներ**» որսալու և հրամաններն անմռունչ ու բարեխիղճ կատարելու պատրաստակամության ոգով: Իսկ եթե որևէ մեկը շեղվում էր դրանից, դաժան պատժի էր ենթարկվում:

1930-ական թվականներին մահվան դատապարտվեց 1917-1934թթ. կոմունիստական կուսակցության Քաղբյուրոյի անդամների 75 տոկոսը: Դրանց թվում էին ականավոր կուսակցական գործիչներ **Զինովևը, Կամենևը, Պյատակովը, Ռիկովը, Բուխարինը** և ուրիշներ, իսկ **Տոմսկին** ու **Օրջոնիկիձեն** ինքնասպան եղան: Բռնությունների ենթարկվեցին նաև հանրապետությունների կուսակցական ու պետական աշխատողները, մտավորականությունը: Այսպես՝ բռնադատվեց և ոչնչացվեց Հայաստանի կուսակցական և պետական գործիչների մեծ մասը, վերացվեց մտավորականության սերուցքը, գնդակահարվեց ու աքսորվեց տասնյակ հազարավոր մարդ:

Հետագայում զանգվածային ձերբակալությունների միջոցով երկրի խոշոր կառույցներն ապահովվում էին ձրի բանվորական ուժով: Այն նույնիսկ պլանավորվում էր:

Շուտով արտակարգ միջոցառումներն այնքան սովորական դարձան, որ այն համարվում էր կարևոր նվաճում: Չնայած այս հանգամանքին՝ ամենուր փառաբանվում էր «ժողովուրդների հայր» Ստալինը: *Անհապի* (այսինքն՝ Ստալինի) *պաշտամունքը** քարոզվում էր բոլոր միջոցներով՝ հենվելով վախի և կույր հավատի վրա:

ՍՏԱԼԻՆՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Համատարած անօրինականությունների պայմաններում **1936թ.** ընդունվեց ԽՍՀՄ-ի Հիմնական օրենքը՝ «հաղթանակած սոցիալիզմի Սահմանադրությունը»: Այդտեղ խոսվում էր Խորհրդային Միությունում դեմոկրատիայի ու օրինականության, անհատի, միությունների, խղճի և այլ ազատությունների մասին: Սակայն իրական կյանքում վարչահրամայական համակարգի կողմից դրանք վաղուց մերժվել էին:

Ստալինյան վարչակարգը հարկադրանքի, բռնության ու վախի օգնությամբ «լուծեց» նաև ԽՍՀՄ-ի նման բազմազգ երկրի համար շատ կարևոր նշանակություն ունեցող ազգային հարցը: Ֆեդերացիայի անվան տակ, որին ի սկզբանե դեմ էր Ստալինը, երկրում հաստատվել էր խիստ կենտրոնացված պետական-բյուրոկրատական մեքենա: Այն բոլորովին հաշվի չէր առնում տարբեր ազգությունների անցած ուղին, զարգացման մակարդակները, ապրելակերպն ու սովորույթները: Խիստ կամայականորեն, «բաժանի՛ր, որ տիրես» սկզբունքով, հաստատվեցին ազգային պետական միավորների սահմանները: Դրա փայլուն օրինակն է Լեռնային Ղարաբաղի ու Նախիջևանի անջատումը Հայաստանից և բռնակցումը Ադրբեջանին:

Ազգային հարցում այն սխալ տեսությունն էր քարոզվում, որ շուտով **բոլոր ազգերը պետք է ձուլվեն մեկ ընդհանուր ազգի մեջ**: Պրոլետարիատի դիկտատուրան բոլոր միջոցներով նպաստում էր այդ գործընթացին: Կարևոր նվաճում էր համարվում այն, որ 1926թ. մարդահամարի տվյալներով ԽՍՀՄ-ում կար 193 ազգություն, իսկ 1939թ.՝ 100: Մոսկվայի կողմից ընդունված որոշումները կիրառվում էին առանց հաշվի առնելու տեղական և ազգային առանձնահատկությունները:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Խորհրդային իշխանության հիմնական խնդիրներից մեկը *կուլտուրական հեղափոխության** կենսագործումն էր: Դրա համար անհրաժեշտ էր առաջին հերթին վերացնել բնակչության համատարած անգրագիտությունը: 1919 թ. հատուկ որոշում ընդունվեց անգրագիտության վերացման մասին, իսկ **1923 թ. ստեղծվեց «Կորչի անգրագիտությունը» ընկերությունը**: Ամենուր բացվեցին անգրագիտության վերացման կետեր ու կայաններ (լիկկայաններ): 1930-ական թվականների սկզբներին երկրում մտցվեց պարտադիր տարրական կրթություն, իսկ 1937թ. անցում կատարվեց պարտադիր յոթնամյա կրթության:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո զգալի թվով բարձրորակ կադրեր ու մասնագետներ հեռացան երկրից: Ուստի, հատուկ ուշադրություն դարձվեց մասնագետներ պատրաստելու վրա: Խնդիր դրվեց տարբեր դասընթացներով, ուսուցման տարբեր միջոցներով բանվորներից ու գյուղացիներից զանգվածաբար մտավորական կադրեր պատրաստել: Անշուշտ, նրանց մակարդակը բարձր չէր, սակայն անգնահատելի է նրանց խաղացած դերը երկրի հասարակական ու տնտեսական կյանքում: 1930-ական թվականներին երկրի դպրոցներն ու բուհերը հիմնականում բավարարեցին երկրի պահանջները: Համաշխարհային նվաճումների հասան ԽՍՀՄ գիտնականները:

1920-ական թվականներից սկսած երկրում գործում էին բազում ստեղծագործական կազմակերպություններ: Դրանց շարքում ազդեցիկ դեր էին խաղում *պրոլետկուլտական** կազմակերպությունները, որոնք իրենց հիմնական խնդիրն էին համարում ձևավորել մաքուր պրոլետարական կուլտուրա: Պրո-

լետկուլտականների դեմ հանդես էին գալիս այլ ստեղծագործական միություններ, որոնք պաշտպանում էին ռուսական և համաշխարհային մշակութային ժառանգությունը յուրացնելու անհրաժեշտությունը: Նրանց միջև ծավալված բանավեճերին հաճախ կոպտորեն միջամտում էին իշխանությունները: Այդ տարիներին ԽՍՀՄ–ում առաջին անգամ ցուցադրվեցին հայրենական կինոնկարները՝ «**Ճապան**», «**Կյանքի ուղեգիր**» և այլն: Սակայն գրականության մեջ և արվեստում նկատվում էր Լենինի կերպարի աստվածացումը, իսկ հետո՝ Ստալինի պաշտամունքի ձևավորումը:

1930–ական թվականների ստալինյան բռնադատումները բացասաբար անդրադարձան նաև մշակույթի զարգացման վրա: Թշնամիներ հայտնաբերելու մրցավազքին զոհ գնացին ականավոր գիտնականներ, գրողներ և արվեստագետներ: Այդ ամենով հանդերձ, խորհրդային մշակույթը նախապատերազմյան տարիներին, մարքս–լենինյան գաղափարախոսության սահմանափակման պայմաններում անգամ, որոշակի հաջողությունների հասավ և դրեց երկրի հետագա առաջընթացի հիմքերը:

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՍՏԱԼԻՆՅԱՆ ՄՈԴԵԼԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՐԿՐՈՒՄ

1920թ. վերջերին հրաժարվելով համոզման և խաղաղ մրցակցության մեթոդից՝ կոմունիստական կուսակցությունը որդեգրեց հարկադրանքի կոշտ քաղաքականություն: Տարբեր պատրվակներով իր հաշիվները մաքրելով ընդդիմության հիմնական ուժերի հետ՝ ստալինյան վերնախավն անցավ սոցիալիզմի լայնածավալ կառուցման քաղաքականությանը: **Սոցիալիզմի ստալինյան մոդելը, որը ենթադրում էր տնտեսության լիովին պետականացում, վարչաբյուրոկրատական համակարգի ուժեղացում և կոմկուսի համապարփակ տիրապետության հաստատում, իրականացվում էր միջոցների ու ուղիների մեջ խտրություն չդնելով:**

Ժողովուրդը գիտակցաբար կամ հարկադրանքի միջոցով հերոսաբար կատարում էր սոցիալիստական շինարարության առաջադրանքները: Միլիոնների կյանքի գնով կառուցվում էին ստալինյան սոցիալիզմի հիմքերը:

Համատարած և անսահմանափակ իշխանություն հաստատելու ճանապարհին կոմկուսի ստալինյան վերնախավը չէր հանդուրժում տեղական առանձնահատկությունների հիշատակումն անգամ: Այն որակվում էր որպես ազգայնականության դրսևորում: Ուստի պատահական չէր, որ 30–ական թվականներին, սոցիալիզմի հաղթական կառուցման շրջանում, ոչնչացվեց հանրապետությունների կուսակցական և պետական վերնախավը, այն հիմնականում փոխարինվեց երիտասարդ կամակատարներով: 1930–ական թվականներին **ԽՍՀՄ–ում կառուցված սոցիալիզմը**, ըստ էության, **միակուսակցական դիկտատուրայի տիրապետություն էր**, որը հենվում էր հարկադրանքի և բռնությունների վրա: Ամբողջատիրական համակարգը ոտնահարում էր անհատի իրավունքները և վաղ թե ուշ դատապարտված էր կործանման:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ի՞նչ էր իրենից ներկայացնում կառավարման վարչահրամայական համակարգը:*
2. *Ձեր կարծիքով ինչո՞ւ Ստալինը հաշվեհարդար տեսավ իր քաղաքական մրցակիցների հետ: Ի՞նչ է անհատի պաշտամունքը:*
3. *Նշե՛ք Ստալինի վարած ազգային քաղաքականության բնորոշ կողմերը:*
4. *Մշակութային ի՞նչ վերափոխումներ իրականացվեցին ԽՍՀՄ–ում 1920–30–ական թվականներին: Փորձե՛ք պարզաբանել «կուլտուրական հեղափոխություն» հասկացությունը:*
5. *Ի՞նչ էր իրենից ներկայացնում սոցիալիզմի ստալինյան մոդելը, տվե՛ք դրա բացատրությունը: Իրավական ի՞նչ ձևակերպում ստացավ ԽՍՀՄ–ում 1920-1930-ական թվականներին ստեղծված հասարակարգը:*

Գլուխ 3 ԳԵՐՄԱՆԻԱՆ, ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՆ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՆ

դաս 8

ՎԱՅՄԱՐՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՊԱԼՈՒՄԸ

1918թ. վերջերին իրադրությունը Գերմանիայում խիստ սրվել էր: Դրա պատճառներն էին՝ ռազմաճակատում ունեցած անհաջողությունները, տնտեսության քայքայվածությունը, ժողովրդի ծանր վիճակը, պարենի պակասը, տարածված հիվանդությունները և այլն: Երկրում խոր ատելություն էր կուտակվել Վիլհելմ II կայզեր նկատմամբ: Նրան համարում էին ստեղծված անելանելի վիճակի գլխավոր մեղավորը: Գերմանիայի բաղաքական ուժերը և ժողովրդական զանգվածները ստեղծված ծանր վիճակից դուրս գալու ելքը տեսնում էին միապետության տապալման մեջ:

Քիլի ռազմական նավաստիները **1918թ. նոյեմբերի 3–ին** ապստամբեցին: Այդ ապստամբությունը դարձավ հեղափոխության սկիզբ: Նրա ալիքը տարածվեց երկրով մեկ: 1918թ. նոյեմբերի 9–ին զինված ապստամբություն սկսվեց Բեռլինում և պսակվեց հաջողությամբ: Միապետությունը տապալվեց, իսկ միապետ Վիլհելմ II–ը, որը գահակալում էր 1888 թվականից, լքեց Գերմանիան և ապաստանեց Հոլանդիայում: **1918թ. նոյեմբերի 9–ին** Գերմանիան պաշտոնապես հռչակվեց **հանրապետություն**:

Նոյեմբերյան հեղափոխությունը բուրժուադեմոկրատական հեղափոխություն էր: Իշխանությունն իր ձեռքը վերցրեց ժողովրդական լիազորների խորհուրդը, որտեղ գլխավոր դերը պատկանում էր սոցիալ–դեմոկրատներին և նրանց ղեկավարներ Էբերտին ու Շայդեմանին:

Սակայն նրանց չհաջողվեց երկրում անդորր հաստատել և բարելավել ժողովրդի վիճակը: Կրկին ծայր առան գործադուլներ և հեղափոխական ելույթներ: Իշխանությունների կողմից դաժանորեն ճնշվեց Բեռլինի աշխատավորների ապստամբությունը: 1919թ. մայիսին ընկավ Բավարիայի խորհրդային հանրապետությունը, որը հռչակվել էր նույն տարվա ապրիլին:

ՎԱՅՄԱՐՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

1919թ. հունվարին կայացած Սահմանադիր ժողովի ընտրություններում առավել ձայներ հավաքեց **Գերմանիայի սոցիալ–դեմոկրատական կուսակցությունը**: Սահմանադիր ժողովի առաջին նիստը բացվեց **1919թ. փետրվարին՝ Վայմարում**: Գերմանիայի նախագահ ընտրվեց **Ֆ. Էբերտը**, իսկ կառավարությունը կազմեց **Ֆ. Շայդեմանը**: Սահմանադիր ժողովն ընդունեց հանրապետական Գերմանիայի առաջին Սահմանադրությունը: Երկրում հաստատվեց պառլամենտական կարգ:

Պառլամենտը բաղկացած էր երկու պալատներից՝ ռայխստագից և ռայխսրատից: Մեծ լիազորություններով էր օժտված նախագահը, որն ընտրվում էր յոթ տարի ժամանակով: Նա էր նշանակում կանցլերին, կարող էր ցրել պառլամենտը, նշանակել նոր ընտրություններ և այլն: Վայմարյան Սահմանադրությունը երաշխավորում էր դեմոկրատական ազատություններ՝ խոսքի, մամուլի, միությունների և այլն:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

Վայմարյան հանրապետությանը բնորոշ էր ներքաղաքական անկայունությունը: *Ծայրահեղական** աջ և ձախ ուժերը հաճախակի խռովություններ էին կազմակերպում, փորձում գրավել իշխանությունը և փոխել հանրապետության զարգացման ուղին: Նման մի

փորձ էր Ադոլֆ Հիտլերի գլխավորած **1923թ. նոյեմբերի խռովությունը Մյունխենում**, որն ավարտվեց անհաջողությամբ:

Հանրապետությունում ստեղծված ծանր իրավիճակից փորձեցին օգտվել նաև կոմունիստները: Նրանք գտնում էին, որ Գերմանիան հասունացել է սոցիալիստական հեղափոխության և բանվորագյուղացիական կառավարություն ունենալու համար: Սխալ հաշվարկների վրա հիմնված, կոմունիստների կազմակերպած զինված ապստամբությունը **Սաքսոնիայում, Թյուրինգիայում և Համբուրգում 1923թ. աշնանը** պարտություն կրեց:

Գերմանիայի առջև կանգնած ամենաբարդ խնդիրներից մեկը ռազմական տուգանքների վճարումն էր հաղթող պետություններին, որը սահմանվել էր Վերսալյան պայմանագրով: Դա շատ ծանր բեռ էր, և շուտով գերմանական կառավարությունը հրաժարվեց վճարումներից: Ի պատասխան դրա՝ Ֆրանսիան և Բելգիան 1923թ. հունվարին գրավեցին Ռուրի մարզը: Դա ավելի վատթարացրեց երկրի տնտեսական վիճակը, անգործության մատնվեցին շատ ձեռնարկություններ, մեծ չափերի հասավ *սղաճը** և այլն:

Նոր կանցլեր, Ժողովրդական կուսակցության ղեկավար Գ. Շտրեզեմանի կառավարությունը սկսեց վարել ավելի սթափ ու հեռատես քաղաքականություն: Սահմանվեցին ռազմատուգանքների վճարման կայուն չափեր, բարենպաստ պայմաններ ստեղծվեցին օտարերկրյա, գլխավորապես՝ ամերիկյան կապիտալի ներդրման համար Գերմանիայի տնտեսության մեջ: Այդ և այլ միջոցառումների շնորհիվ դրությունը սկսեց կայունանալ:

Սակայն 1929–1933թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամն ուժեղ հարված հասցրեց Գերմանիայի տնտեսությանը: Արդյունաբերական արտադրանքը կրճատվեց 40 տոկոսով, իսկ գործազրկությունն ընդգրկեց աշխատավորների 45 տոկոսին:

ՖԱՇԻԶՄԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Առաջին համաշխարհային պատերազմի պատճառած վիթխարի մարդկային զոհերը, ավերածությունները, տնտեսական ծանր վիճակը մի շարք երկրներում, մասնավորապես Գերմանիայում, Իտալիայում և այլուր, խորը հուսահատություն էին առաջացրել հասարակության տարբեր խավերի մոտ: Առանձնապես ծանր էր աշխատավորական զանգվածների, մանր և միջին խավերի սոցիալ–տնտեսական վիճակը: Երիտասարդությունն իրեն համարում էր ապագայից և հեռանկարից զուրկ կորուսյալ սերունդ: Հարյուրամյակներ շարունակ գոյություն ունեցած ճշմարտությունները արժեզրկվել էին: Ամբոխները գազազած էին: Այս բոլորը պարարտ հող էր հանդիսանում զանազան ծայրահեղական՝ թե՛ ձախ, թե՛ աջ ուժերի և հոսանքների ձևավորման ու հրապարակ իջնելու համար: Բարոյալքված և հուսահատ մարդիկ հրաշքի էին սպասում, սպասում էին փրկչի՝ պատրաստ հետևելու և ենթարկվելու նրան: Հենց այս հիմքի վրա բարձրացավ ֆաշիզմը, որի ալիքը XXդ. 20–30–ական թվականներին անցավ Եվրոպայով մեկ:

Ֆաշիզմը քաղաքական հոսանք է, որին **բնորոշ են հակակոմունիզմը, բռնությունը, անսանձ շովինիզմը** (*ազգայնամոլությունը**), **ռասիզմը, *ամբողջատիրությունը**** (տոտալիտարիզմ), **առաջնորդի պաշտամունքը, հասարակական կյանքի բոլոր բնագավառների ռազմականացումը** և այլն:

Դա ամենածայրահեղ հետադիմական շարժումն էր, որ երբևիցե տեսել էր մարդկությունը: Ֆաշիստական գաղափարախոսները մարդկությունը բաժանում էին բարձր և ցածր ռասաների: Գերմանական ֆաշիստները գերմանացիներին համարում էին ամենաբարձր՝ արիական ռասայի ժողովուրդ, որը կոչված է տիրապետելու ցածր, ոչ արիական ժողովուրդների վրա: Դրանց շարքին դասում էին հրեաներին, սլավոնականներին, ասիական և աֆրիկյան ժողովուրդների ճնշող մեծամասնությանը: Զանգվածներին իրենց կողմը գրավելու համար նրանք չէին խորշում սոցիալիստական որոշ գաղափարներ և տերմիններ շահարկելուց, խոսում էին «դասակարգային ներդաշնակցությունից», «ժողովրդական ընկերակցությունից» և այլն: Ֆաշիզմը **հետադիմական ուժերի, խոշոր կապիտալի և մոնոպոլիստական միություն-**

ներին ծառայող, մարդկության դեմ ուղղված զենք էր: Այն բոլոր առաջադիմական ուժերի ոխերիմ թշնամին էր:

Ֆաշիստական **առաջին կազմակերպությունները հայտնվել են Իտալիայում 1919թ.**: Երեք տարի անց Իտալիայում ֆաշիստներն անցան իշխանության գլուխ և նրանց ղեկավար **Բենիտո Մուսսոլինին** դուչեն, դարձավ վարչապետ: Երկրում վերացվեցին դեմոկրատական ազատությունները և հաստատվեց ֆաշիստական օլիգարխիայի դիկտատուրա:

Գերմանիայում ֆաշիզմի դրոշակակիրը հանդիսացավ **1919թ. հիմնված Գերմանական նացիոնալ-սոցիալիստական բանվորական կուսակցությունը**: Ի դեմս գերմանական նացիոնալ-սոցիալիզմի՝ դրսևորվեց ֆաշիզմի դաժան, գազանային և հակամարդկային էությունը:

Գերմանական ֆաշիստները, օգտվելով երկրի ճգնաժամային վիճակից և ժողովրդի մոտ կուտակված խորը դժգոհությունից, առաջադիմական ուժերի, այդ թվում բանվոր դասակարգի ու նրա կուսակցությունների պառակտվածությունից, քայլ առ քայլ ամրապնդում էին իրենց դիրքերը Գերմանիայի քաղաքական դաշտում: Եվ 1933թ. հունվարի 30-ին Գերմանիայի զառամյալ նախագահ ֆելդմարշալ Հինդենբուրգը ֆյուրերին՝ գերմանական ֆաշիստների առաջնորդ **Ադոլֆ Հիտլերին (Շիկլգրուբեր)**, նշանակեց Գերմանիայի ռայխսկանցլեր՝ վարչապետ:

Ֆաշիզմը հաղթանակի հասավ նաև մի շարք այլ երկրներում: Ֆաշիստական դիկտատուրա հաստատվեց Հունգարիայում, որի առաջնորդն էր Հորթին, Ռումինիայում՝ Անտոնեսկուի գլխավորությամբ, Պորտուգալիայում՝ Սալազարի առաջնորդությամբ:

Ադոլֆ Հիտլեր
(1889-1945)

Գերմանական նացիոնալ-սոցիալիստական բանվորական կուսակցության առաջնորդը: 1933-1945 թթ. Գերմանիայի կանցլեր, ֆյուրեր և բռնապետ

Իսկ 1939թ., իսպանական հեղափոխության պարտությունից հետո, Իսպանիայում հաստատվեց գեներալ Ֆրանկոյի ֆաշիստական վարչակարգը: Ֆաշիստական ուժեր և կազմակերպություններ ի հայտ եկան և ակտիվ գործունեություն ծավալեցին նաև Ֆրանսիայում, Ավստրիայում, Մեծ Բրիտանիայում, Լատինական Ամերիկայի երկրներում և այլն: Եվ պայքարը ֆաշիստական ու հակաֆաշիստական ուժերի միջև 30-ական թվականներին հանդիսացավ գաղափարական և քաղաքական պայքարի հիմնական ուղղությունը ամբողջ աշխարհում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԳՐԱՆՔՆԵՐ

1. *Նոյեմբերյան հեղափոխությունն անվանում ենք բուրժուադեմոկրատական. հիմնավորե՛ք դա:*
2. *Ե՞րբ հռչակվեց հանրապետությունը Գերմանիայում. ինչո՞ւ այն կոչվեց Վայմարյան:*
3. *Նկարագրե՛ք Գերմանիայի ներքաղաքական դրությունը 1920-1932 թվականներին: Նշե՛ք դրա անկայունության մի քանի պատճառներ:*
4. *Ի՞նչ է ֆաշիզմը: Եվրոպական ո՞ր երկրներում հաստատվեցին ֆաշիստական վարչակարգեր:*

դաս 9

ԳԵՐՄԱՆԻԱՆ 1933-1939 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԵՐԿԻՐԸ ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ՆԵՐՔՈ

Ֆաշիստական վարչակարգը, որը գոյատևեց 1933-1945թթ., Գերմանիայի նորագույն պատմության ամենամռայլ էջն է: Այն աղետաբեր եղավ ինչպես բուն Գերմանիայի, այնպես էլ համայն Եվրոպայի և աշխարհի համար:

Հիտլերի և նրա զինակիցների՝ **Գյորինգի, Գեբելսի, Հիմլերի** ղեկավարած կուսակցության իշխանության գլուխ անցնելուց անմիջապես հետո վերացվեցին Վայմարյան հանրապետության ժամանակ գործող դեմոկրատական ազատությունները: 1933թ. ընթացքում արգելվեց սոցիալ-դեմոկրատական և կոմունիստական կուսակցությունների, ինչպես նաև արհմիությունների գործունեությունը, իսկ մնացած կուսակցություններ-

ը հարկադրված «ինքնալուծարման» ենթարկվեցին: Քաղաքական ասպարեզում մնաց միայն ֆաշիստական կուսակցությունը: Ընդունվեցին մի շարք օրենքներ, որոնցով **ֆաշիստական կառավարությունը** ստացավ արտակարգ լիազորություններ:

Հիտլերի լիազորություններն ավելի ընդլայնվեցին **1934թ.՝ Հինդենբուրգի մահից հետո**: Նա իր ձեռքում կենտրոնացրեց **նախագահի և ռայխսկանցլերի պաշտոնները**:

Երկրում մոլեգնում էր ահաբեկչությունը: Հալածում, ձերբակալում և բանտերն էին նետում առաջադեմ հայացքների տեր մարդկանց և հակաֆաշիստների: Ստեղծվեցին **համակենտրոնացման ճամբարներ**, որտեղ տանջանքների և ստորացումների էին ենթարկվում բոլոր նրանք, ովքեր չէին կիսում ֆաշիստական *գաղափարախոսությունը**: Այդ դաժան քաղաքականության իրականացման գլխավոր գործիքները դարձան **պահնորդական ջոկատները (ՍՍ)** և **քաղաքական ոստիկանությունը՝ գեստապոն**, որոնք ահ ու սարսափ էին տարածում մարդկանց մեջ:

Բազմաթիվ մտավորականներ և առաջադեմ գործիչներ լքեցին Գերմանիան: Վայրագությունն այն աստիճանի հասավ, որ կազմակերպված հրապարակային խարույկների վրա հրկիզվում էին գերմանական և համաշխարհային դասական գրականության, փիլիսոփայության և պատմագիտական մտքի լավագույն նմուշներ հանդիսացող գրքերը:

Հալածանքի և հետապնդման էր ենթակա այն ամենը, ինչը չէր համապատասխանում ֆաշիստական գաղափարախոսությանը: Այդ գաղափարախոսության անբաժանելի մասն էին կազմում հակասեմիտիզմը և դրա հետ կապված բռնությունները հրեաների նկատմամբ: Հրեաները համարվում էին Գերմանիայի ծանր տնտեսական վիճակի մեղավորներ:

Ֆաշիստներին հաջողվեց իշխանության գլուխ գալ գերմանական հասարակության երկփեղկվածության, աշխատավորների և նրանց արհմիությունների, քաղաքական կուսակցությունների՝ սոցիալ-դեմոկրատների և կոմունիստների պառակտվածության պատճառով: Հիտլերը և նրա կողմնակիցները փայլուն կերպով օգտագործեցին գերմանացիների մեջ կուտակված դժգոհությունը Վերսալյան համակարգի նկատմամբ: Նրանց կարծիքով դա էր Գերմանիայի դժբախտությունների գլխավոր պատճառներից մեկը: Նրանք գերմանական ոչ գիտակից զանգվածների մեջ սերմանում էին **ռևանշի** գաղափարը: Եվ վերջապես՝ գերմանական խոշոր բուրժուազիան և ազդեցիկ զինվորական շրջանները Հիտլերի գլխավորած կուսակցության մեջ էին տեսնում այն ուժը, որն ի վիճակի էր կենսագործելու իրենց ծրագիրը: Դա էր պատճառը, որ նրանք լայն ֆինանսական-քաղաքական աջակցություն ցույց տվեցին հիտլերյան կուսակցությանը:

Հրանոթային փողերի արտադրությունը Ռուրի ռազմական գործարանում

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գերմանիայի արտաքին քաղաքականության հիմքում դրվեցին ***ռևանշիզմի****, **կենսական տարածքի նվաճման** և, ի վերջո, **համաշխարհային տիրապետության** հասնելու ցնորամիտ սկզբունքները:

Հիտլերյան ղեկավարությունը հետևողականորեն, քայլ առ քայլ ձեռնամուխ եղավ այդ ագրեսիվ ծրագրերի իրականացմանը: Սկսվեց Գերմանիայի վերառազմականացումը և ժամանակակից հզոր զինված ուժերի ստեղծումը: Սակայն դրա իրականացման համար պետք էր խախտել Վերսալյան հաշտության պայմանագրով սահմանված արգելքները: Եվ Հիտլերը 1935թ. վերականգնեց ընդհանուր զինապարտությունը՝ որպես առաջին և անհրաժեշտ քայլ հզոր բանակ ստեղծելու ճանապարհին:

Շուտով Գերմանիան կարևոր և ռազմական նշանակություն ունեցող արդյունաբերական արտադրության ցուցանիշներով առաջ անցավ Անգլիայից և Ֆրանսիայից:

Գերմանիայի միջազգային դիրքերի ամրապնդման համար մեծ նշանակություն ունեցավ 1936–1937թթ. ձևավորված **գերմանա–իտալա–ճապոնական խմբավորումը**, որի բոլոր անդամներն ագրեսիվ նպատակներ էին հետապնդում: Անգլիայի և Ֆրանսիայի կողմից լուրջ դիմադրության չհանդիպելով՝ հիտլերյան Գերմանիան դիմեց ագրեսիվ գործողությունների:

1938թ. Հիտլերն իրագործեց **Ավստրիայի անշլյուսը (միացումը)** Գերմանիային՝ դիտարկելով այն իբրև «գերմանական» բոլոր հողերի միավորման առաջին քայլ:

Շուտով հերթը հասավ Չեխոսլովակիային: **1938թ. Մյունխենի** գործարքով՝ Սուդետի մարզը, հակառակ Չեխոսլովակիայի կամքին, բռնակցվեց Գերմանիային: Գերմանիան, չբավարարվելով ձեռք բերածով, 1939թ. բռնակցեց ամբողջ Չեխոսլովակիան:

1939թ. օգոստոսի 23–ին Մոսկվայում ստորագրվեց գերմանա–խորհրդային չհարձակման պայմանագիրը:

Այսպիսով՝ Գերմանիային հաջողվեց 1939թ. դրությամբ վերականգնել իր ռազմական ներուժը, դուրս գալ քաղաքական մեկուսացումից և ամրապնդել իր միջազգային դիրքերը՝ աջակից ունենալով ֆաշիստական Իտալիային և ռազմամոլական Ճապոնիային:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ձեր կարծիքով ի՞նչ հանգամանքներ նպաստեցին ֆաշիստական վարչակարգի հաստատմանը Գերմանիայում: Բնորոշեք ֆաշիստական վարչակարգը:*
2. *Ի՞նչ գաղափարներ դրվեցին հիտլերյան վարչակարգի արտաքին քաղաքականության հիմքում:*
3. *Փորձե՛ք բացատրել, թե ինչու և ինչպես Գերմանիան կարողացավ դուրս գալ Վերսալյան համակարգի արգելափակումներից:*

դաս 10

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅՈՒՄ 1920-1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԴԻՐՔԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

Մեծ Բրիտանիայի համար Առաջին համաշխարհային պատերազմը շահավետ եղավ: Նա հիմնականում կարողացավ հասնել իր առջև դրված ռազմաքաղաքական խնդիրների լուծմանը: Նրան հաջողվեց ծնկի բերել Եվրոպայում իր գլխավոր մրցակից Գերմանիային, իսկ պատերազմում արյունաքամ եղած Ֆրանսիայի դիրքերը թուլացան:

Մեծ Բրիտանիայի դիրքերի ամրապնդմանը նպաստեց նաև այն հանգամանքը, որ ԱՄՆ–ն Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո որոշ ժամանակ կրկին որդեգրեց մեկուսացման և Եվրոպայի գործերին չմիջամտելու քաղաքականություն: Դա գործողությունների լայն ազատություն էր ընձեռում Մեծ Բրիտանիային:

Թուլացած Ռուսաստանը ևս լուրջ մրցակից չէր Մեծ Բրիտանիայի համար:

Մեծ Բրիտանիան իր համաշխարհային դիրքերի ամրապնդման համար փայլուն կերպով օգտագործում էր Ազգերի լիգան:

Մեծ Բրիտանիային հաջողվեց ոչ միայն պահպանել իր աշխարհածավալ գաղութային կայսրությունը, այլև ընդարձակել այն: Գերմանիան Վերսալյան պայմանագրով կորցրեց իր գաղութներն Աֆրիկայում: Նրանց մեծ մասը, ինչպես Տոգոն, Կամերունը և այլն, անցան Մեծ Բրիտանիայի տիրապետության տակ: Իսկ Օսմանյան կայսրության փլուզումից հետո Մեծ Բրիտանիան Ազգերի լիգայի մանդատի ներքո իր տիրապետությունը հաստատեց Իրաքում, Պաղեստինում և Անդրհորդանանում:

Մեծ Բրիտանիայի կառավարողներն իրավամբ կարող էին ասել. «**Արևը երբեք մայր չի մտնում Բրիտանական կայսրությունում**»:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԿՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ

Պատերազմի ավարտից հետո աշխուժացավ երկրի հասարակական–քաղաքական կյանքը: 1918թ. վերջերին տեղի ունեցան պառլամենտական ընտրություններ, որի ընթացքում հաղթեց **պահպանողական** և **լիբերալ** կուսակցությունների դաշինքը: Լիբերալների ղեկավար, հայտնի պետական և քաղաքական գործիչ Լլոյդ Ջորջը 1919թ. հունվարին կազմեց ***կոալիցիոն կառավարություն****: Ընտրությունները տեղի ունեցան ըստ նոր ընտրական օրենքի, որն ընտրելու իրավունք էր տալիս հասուն տարիքի տղամարդկանց և 30 տարին լրացած կանանց:

Տեղաշարժեր կատարվեցին երկրի կուսակցական կյանքում: Երկար ժամանակ Մեծ Բրիտանիայի քաղաքական կյանքում տիրապետող էին պահպանողականների (թորիների) և լիբերալների (վիգերի) կուսակցությունները: Սակայն 1920–ական թվականների սկզբներից լիբերալների դիրքերն աստիճանաբար թուլացան: Երկրի քաղաքական կյանքում աշխուժացավ **լեյբորիստական** (աշխատավորական) կուսակցությունը: Դրա ղեկավարը՝ **Ռամսեյ Մակդոնալդը,** 1924թ. կազմեց լեյբորիստական առաջին կառավարությունը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՀԱԿԱՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

1920–ական թվականներին Մեծ Բրիտանիայում իրականացվեց արդյունաբերության վերակառուցում: Դրա շնորհիվ աճեց արդյունաբերական արտադրանքի քանակը և մեծացավ առևտրի ծավալը: Այդ գործընթացը դանդաղեց 1929–33թթ. տնտեսական ճգնաժամի պատճառով: Սակայն **ճգնաժամից Մեծ Բրիտանիան ավելի քիչ տուժեց,** քան աշխարհի մյուս երկրները: Նրան հաջողվեց ավելի կարճ ժամանակամիջոցում հաղթահարել ճգնաժամի բացասական հետևանքները:

1930–ական թվականների կեսերին նա կրկին գրավեց **առաջին տեղը համաշխարհային առևտրի մեջ** և **երկրորդ տեղը՝ աշխարհի արդյունաբերական արտադրության մեջ՝** զիջելով միայն ԱՄՆ–ին:

Բրիտանական կառավարող վերնախավը երկրի առջև ծառացած սոցիալ–տնտեսական խնդիրները շատ հաճախ փորձում էր լուծել ի հաշիվ աշխատավորների: Սահմանափակվեցին նրանց իրավունքները: Ընդունվեցին մի շարք օրենքներ, որոնք արգելում էին համընդհանուր և համերաշխության գործադուլները, սահմանափակում արհմիությունների իրավունքները, ուժեղացնում վերահսկողությունը նրանց գործունեության վրա և այլն:

Աշխատավորները, չհաշտվելով նման իրավիճակի հետ, պայքարում էին իրենց իրավունքների և տնտեսական վիճակի բարելավման համար: Դրա ցայտուն դրսևորումը հանդիսացավ **1926թ.** համընդհանուր ***գործադուլը****, որը կազմալուծեց երկրի տնտեսությունը:

Լայն ծավալ ստացավ հակապատերազմական շարժումը: 1933թ. գումարվեց **Ազգային հակապատերազմական կոնգրես,** իսկ 1935թ. անցկացվեց **«խաղաղության հանրաքվե»**: 11,5 միլիոն անգլիացիներ քվեարկեցին հօգուտ զինաթափման, կոլեկտիվ անվտանգության և ագրեսորի նկատմամբ արգելամիջոցների կիրառման:

Քաղաքական կյանքի համար բնորոշ էր լեյբորիստների և պահպանողականների կոալիցիոն «ազգային» կառավարությունների կազմավորումը (1931–35թթ.) և նրանց՝ միմյանց հաջորդող կառավարությունների իշխանության գալուն անցնելը: Նախապատերազմյան վերջին տարիներին պահպանողական կառավարությունը կազմեց **Նեհլ**

Գործադուլավորների միտինգը. 1926 թ.

Չեմբեռլենը, որն իշխանության գլուխ մնաց մինչև 1940 թվականը:

ԻՌԼԱՆԴԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Մեծ Բրիտանիայի ներքաղաքական կյանքի ամենասուր հարցերից մեկը իռլանդական հարցն էր: Իռլանդիան մտնում էր Բրիտանական կայսրության մեջ: Նրա բնակչությունը տարիներ շարունակ պայքարում էր իր երկրի անկախության համար: 1916 թվականին իռլանդացիներն ապստամբական դրոշ էին պարզել՝ պահանջելով բրիտանական կառավարությունից ճանաչել Իռլանդիայի անկախությունը: Այդ ապստամբության պարտությունից հետո էլ իռլանդացիները չհրաժարվեցին անկախության գաղափարից և շարունակեցին իրենց պայքարը:

Բրիտանական իշխանությունները, համոզվելով, որ հնարավոր չէ ճնշել իռլանդացիների ազգային–ազատագրական պայքարը, **1921թ.** ստորագրեցին անգլո–իռլանդական պայմանագիր, որով Իռլանդիային տրվում էր *դոմինիոնի** կարգավիճակ: Սակայն դա չէր տարածվում **Հյուսիսային Իռլանդիայի**՝ Օլսթերի վրա, որը **ցայսօր մնում է Մեծ Բրիտանիայի կազմում**: 1937թ. Իռլանդիան իրեն հայտարարեց անկախ պետություն: Մեծ Բրիտանիան մի քանի ամիս անց ճանաչեց Իռլանդիայի անկախությունը:



Տեսարան Իռլանդիայի մայրաքաղաք Դուբլինի փողոցներից. 1921թ. պայմանագրից հետո այստեղ քաղաքացիական կռիվների մարտեր էին ընթանում (մինչև 1923 թվականը):

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Փաստերով հիմնավորե՛ք, որ աշխարհում Մեծ Բրիտանիայի դիրքերը Առաջին աշխարհամարտից հետո ամրապնդվեցին: Ինչպե՞ս կմեկնաբանեք «Արևը երբեք մայր չի մտնում Բրիտանական կայսրությունում» արտահայտությունը:*
2. *Ի՞նչ տեղաշարժեր կատարվեցին երկրի քաղաքական կյանքում:*
3. *Ինչպե՞ս դրսևորվեց հակապատերազմական շարժումն Անգլիայում:*
4. *Ի՞նչ արդյունք ունեցավ Իռլանդիայի ազատագրական պայքարը: Ձեր կարծիքով ամբողջական լուծում գտա՞վ Իռլանդական հարցը, թե՞ ոչ:*

դաս 11

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքականության **առաջնային խնդիրներից մեկը Եվրոպայում ուժերի հավասարակշռության պահպանումն էր**: Դա իրականացվում էր նախ՝ Եվրոպայում՝ **Ֆրանսիայի գերիշխանությունը** հաստատելու դեմ ուղղված արգելակիչ քայլերով: Մյուս կողմից՝ **Գերմանիայի վերականգնումը և վերազինումը** լոկ այն սահմաններում էր թույլատրվում, որը, չսպառնալով Անգլիայի շահերին, կարող էր հակակշռել Ֆրանսիայի նկրտումներին, ինչպես նաև՝ ուղղվել Խորհրդային Միության դեմ:

Մեծ Բրիտանիայի և նրա գաղութային համակարգի համար մեծ սպառնալիք էր Խորհրդային Միությունը: Վերջինս այդ տարիներին կանգնած էր հեղափոխության արտահանման և համաշխարհային հեղափոխության բոցավառման տեսակետի վրա: Այդ հարցում մեծ տեղ էր հատկացվում գաղութ-

ներին, որոնք խորհրդային ղեկավարության կողմից համարվում էին համաշխարհային սոցիալիստական հեղափոխության պահեստային ուժեր: Դա խիստ անհանգստացնում էր բրիտանական կառավարությանը, որը թշնամական դիրք էր գրավել խորհուրդների երկրի նկատմամբ, իսկ 1918–1920թթ. իրականացրեց ռազմական միջամտություն: Քաղաքացիական պատերազմի ավարտը և ռազմական միջամտության ձախողումը Ռուսաստանում զգալիորեն փոխեցին քաղաքական մթնոլորտը. Մեծ Բրիտանիան **1924թ.** ճանաչեց Խորհրդային Միությանը: Սակայն լարվածությունը պահպանվում էր, և 1927թ. պահպանողականների կուսակցությունը խզեց դիվանագիտական հարաբերությունները ԽՍՀՄ-ի հետ (այն վերականգնվեց միայն երկու տարի անց):

Մեծ Բրիտանիայի համար խիստ կարևոր էին հարաբերությունները ԱՄՆ-ի հետ, որն ըստ էության դարձել էր կապիտալիստական աշխարհի ամենահզոր պետությունը: Նրանք մշտապես մրցակցում էին առևտրի շուկաների և հումքի աղբյուրների նկատմամբ գերազդեցություն ունենալու համար: Մեծ Բրիտանիան մտահոգ էր աշխարհում իր դիրքերի պահպանման համար, իսկ գլխավոր սպառնալիքը գալիս էր ԱՄՆ-ից:

Այնուհանդերձ, **1921–1922թթ. Վաշինգտոնի** խորհրդաժողովում Անգլիան համաձայնվեց, որ գծային նավատորմի հարցում ԱՄՆ-ը կարող է հավասար լինել Մեծ Բրիտանիային: Դրանով խախտվեց բրիտանական մենաշնորհը ռազմածովային նավատորմի հարցում: Սակայն անգլո-ամերիկյան մրցակցությունը դեռևս բացահայտ բնույթ չէր կրում: Անգլո-ամերիկյան հարաբերություններն արտաքուստ բարեկամական էին:

«ՉՄԻՋԱՄՏԵԼՈՒ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1930-ական թվականներին Գերմանիայի, Իտալիայի և Ճապոնիայի ագրեսիվ գործողությունների հետևանքով խիստ սրվեց միջազգային իրադրությունը:

Անգլիան Ֆրանսիայի և մյուս պետությունների հետ միասին այդ ժամանակ դեռ կարող էր կանխել նշված երկրների ագրեսիվ ձգտումները կամ ստիպել ագրեսորներին դադարեցնելու ռազմական գործողությունները և ենթարկվելու միջազգային նորմերին:

Սակայն անգլիական արտաքին քաղաքականությունը գնաց ոչ թե ագրեսորներին դիմադրելու, այլ **«չմիջամտելու»** և նրանց **«խաղաղեցնելու»** ուղիով: Բրիտանական արտաքին գործերի նախարարությունը հույս ուներ, ի վերջո, ագրեսիան ուղղել Խորհրդային Միության դեմ, իսկ ֆաշիստական բռունցքն օգտագործել հեղափոխական ընդվզումները ճնշելու համար: Դա Մեծ Բրիտանիայի և այդ հարցում նրան հետևող Ֆրանսիայի արտաքին քաղաքականության ամենակոպիտ սխալներից մեկն էր:

Դեպքերը զարգացան միանգամայն այլ սցենարով: Բրիտանական վարչապետ Նևիլ Չեմբեռլենը, Լոնդոնի օդանավակայանում թափահարելով Չեխոսլովակիան Գերմանիային զոհաբերելու խայտառակ փաստաթուղթը, հայտարարեց. **«Ես ձեզ խաղաղություն եմ բերել»**: Այդ պահին շատ քչերը կարող էին մտածել, որ մի տարի էլ չանցած՝ Անգլիան պատերազմ է հայտարարելու Գերմանիային:

Անգլիայում, թեև ուշացումով, բայց սկսեցին հասկանալ, որ ֆաշիստական պետություններին արվող զիջումները և «չմիջամտելու» քաղաքականությունը սպասված արդյունքները չեն տալիս: Ելնելով դրանից՝ Անգլիան և Ֆրանսիան 1939թ. գարնանը և աշնանը բանակցություններ սկսեցին Խորհրդային Միության հետ՝ հնարավոր ագրեսիայի դեմ համատեղ գործողությունների վերաբերյալ: Սակայն շուտով պարզվեց, որ նրանք լուրջ նշանակություն չեն տալիս այդ բանակցու-

Նևիլ Չեմբեռլեն. «Ես ձեզ խաղաղություն եմ բերել»:

թյուններին և պատրաստ չեն դաշնակցային պայմանագիր ստորագրելու Խորհրդային Միության հետ: Դեռ ավելին, հայտնի դարձավ, որ Խորհրդային Միության հետ բանակցություններին զուգահեռ՝ 1939թ. ամռանը Լոնդոնում գաղտնի բանակցություններ էին ընթանում Մեծ Բրիտանիայի և Գերմանիայի միջև: Գերմանիայի պահանջներն անգլիական գաղութների նկատմամբ և ազդեցության նոր գոտիներ սահմանելու վերաբերյալ արդեն անընդունելի էին Մեծ Բրիտանիայի համար: Ուստի, գաղտնի բանակցություններն ավարտվեցին անհաջողությամբ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ո՞րն էր Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքականության գլխավոր նպատակը 1918-1939 թվականներին:*
2. *Ի՞նչ ընթացք ունեցան խորհրդա–բրիտանական հարաբերությունները 1918–1929թթ.:*
3. *Անգլիայի միջազգային դիրքերը որոշ չափով թուլացան. ինչո՞վ կարող եք դա հիմնավորել:*
4. *1930–ական թվականներին Մեծ Բրիտանիան վարում էր ագրեսորներին «խաղաղեցնելու» և «չմիջամտելու» քաղաքականություն: Փաստերով բացատրե՛ք դրա էությունը:*

դաս 12

ՖՐԱՆՍԻԱՆ 1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՐՈՒԹՅՈՒՆԸ

Ֆրանսիան պատերազմից առավել տուժած պետություններից էր: Պատերազմի տարիներին կրած մարդկային և նյութական մեծ կորուստներն իրենց կնիքը դրեցին երկրի հետպատերազմյան քաղաքական և տնտեսական կյանքի վրա: Մյուս կողմից, Ֆրանսիան արբեցած էր հատկապես իր գլխավոր և վտանգավոր ախոյանի՝ Գերմանիայի դեմ տարած հաղթանակով: Երկրի կառավարող ուժերը չէին կասկածում, որ **Ֆրանսիան հնարավորություն ունի իր գերիշխանությունը հաստատելու Եվրոպայում**: Նրա արտաքին քաղաքականությունը 1920–ական թվականներին կառուցված էր այդ գերխնդրի իրականացման վրա:

1919թ. տեղի ունեցան հետպատերազմյան առաջին պառլամենտական ընտրությունները: Հաղթանակ տարան, այսպես կոչված, **Ազգային դաշինքը** և նրա մեջ միավորված աջակողմյան կուսակցությունները: Դաշինքի ղեկավարներն էին Ժ. Կլեմանսոն, Ռ. Պուանկարեն, Ա. Միլյերանը և Լ. Բարթուն, որոնք պետական և քաղաքական ազդեցիկ գործիչներ էին:

Եվրոպայում Ֆրանսիայի տիրապետող դիրքեր հաստատելու ճանապարհին կատարվեցին մի շարք կարևոր քայլեր: Վերսալի պայմանագրով Ֆրանսիան հետ ստացավ **Էլզասը և Լոթարինգիան**, որոնք Գերմանիան խլել էր նրանից 1870թ. ֆրանս–պրուսական պատերազմի ժամանակ: Նա իրավունք ստացավ 15 տարի ժամանակով օգտագործել Սաարի մարզի ածխահանքերը: Նրան հատկացվեց Գերմանիայից գանձվող ռազմատուգանքի 50 տոկոսը: Այս բոլորը մեծ հնարավորություններ ստեղծեցին ֆրանսիական տնտեսության վերականգնման և զարգացման համար:

Հետպատերազմյան տարիներին բավականին ակտիվ էր ներքաղաքական կյանքը Ֆրանսիայում: Աշխատավորները մեծ կազմակերպվածությամբ պայքարում էին իրենց քաղաքական և սոցիալ–տնտեսական իրավունքների համար: **1919թ. ապրիլին ֆրանսիական պառլամենտը սահմանեց 8–ժամյա աշխատանքային օր**: Գործադուլային պայքարի շնորհիվ աշխատավորները հասան իրենց մի շարք պահանջների բավարարմանը

Պետական և քաղաքական գործիչ, Ֆրանսիայի վարչապետ 1906–1909թթ. և 1917–1920թթ., Փարիզի հաշտության խորհրդաժողովի նախագահը 1919–1920թթ.

Ժորժ Կլեմանսո
(1841-1929)

(աշխատավարձի բարձրացում և այլն): Կազմավորվեցին **Ֆրանսիական կոմունիստական կուսակցությունը (1920թ.)** և բազմաթիվ արհմիություններ, ուժեղացան սոցիալիստական կուսակցության դիրքերը:

1924թ. տեղի ունեցան նոր պառլամենտական ընտրություններ, որն **ավարտվեց Ձախ ուժերի դաշինքի** հաղթանակով: Այդ դաշինքի ճանաչված ղեկավարներն էին Ա. Բրիանը, Պ. Պենլևեն, Է. Էրրիոն: Հենց վերջինս էլ կազմեց նոր կառավարություն, որը ներում շնորհեց քաղաքական բանտարկյալներին, իրենց գործատեղերում վերականգնեց աշխատանքից հեռացված գործադուլավորներին և այլն: Ֆրանսիական նոր կառավարությունը լուծեց **«Ռուրի ճգնաժամը»**՝ դուրս բերելով ֆրանսիական զորքերը Ռուրի մարզից, իսկ **1924թ. դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Խորհրդային Միության հետ**:

Սակայն աջ ուժերին և ֆրանսիական խոշոր բուրժուազիային դուր չէր գալիս ձախ ուժերի կառավարության քաղաքականությունը: Նրանց հաջողվեց սրել ներքաղաքական իրադրությունը երկրում: Ձախերի կառավարությունը հրաժարական տվեց: 1926թ. իշխանությունն իր ձեռքը վերցրեց Ռ. Պուանկարեի, այսպես կոչված, **«ուժեղ ձեռքի»** կառավարությունը: Նա կանգնեց Ֆրանսիայի ռազմականացման ուղու վրա, բարձրացրեց հարկերը և այլն: Դա առաջ բերեց գործադուլային հզոր ալիք: 1929թ. գործադուլը համակել էր Ֆրանսիայի արդյունաբերության բոլոր առաջատար ճյուղերը:

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Շարունակելով Եվրոպայում իր դիրքերի ամրապնդման քաղաքականությունը՝ Ֆրանսիան 1922թ. ձևավորեց **Փոքր Անտանտը**: Դրա մեջ էին մտնում Հարավսլավիան, Չեխոսլովակիան և Ռումինիան: Իսկ դրանից մեկ տարի առաջ Ֆրանսիան ռազմական դաշինք էր կնքել Լեհաստանի հետ: Ֆրանսիայի միջազգային դիրքերի ամրապնդմանը նպաստեց նրա գաղութային տարածքների ընդարձակումը գերմանական գաղութների և Օսմանյան կայսրության նախկին արաբական տիրույթների՝ Սիրիայի և Լիբանանի հաշվին:

Սակայն Անգլիան և ԱՄՆ-ը հաշտ աչքով չէին նայում Եվրոպայում գերիշխանության հասնելու Ֆրանսիայի նկրտումներին: Նրանք ամեն կերպ խոչընդոտում էին այդ քաղաքականության իրականացմանը՝ այդ նպատակի համար օգտագործելով նաև գերմանական խաղաքարտը: Նրանց ձեռնտու չէր Գերմանիայի չափից ավելի թուլացումը և Ֆրանսիայի հզորացումը: Օգտվելով նրանց բացահայտ աջակցությունից՝ Գերմանիան բարդություններ էր ստեղծում ռազմատուգանքների վճարման հարցում և դիմադրում էր Ռուրի մարզի բարածուխն օգտագործելու՝ ֆրանսիացիների ցանկությանը: Ի պատասխան դրա՝ **ֆրանսիական զորքերը, բելգիական զորքերի հետ միասին, 1923թ. օկուպացրին Ռուրը**: Դա առաջ բերեց **քաղաքական ճգնաժամ Եվրոպայում**: 1924թ. ֆրանս-բելգիական ռազմական ուժերը հարկադրված էին հետ քաշվել Ռուրի մարզից: Դա, թերևս, Ֆրանսիայի առաջին լուրջ պարտությունն էր՝ Եվրոպայում իր գերակայությունը հաստատելու ճանապարհին: Եվրոպայում Ֆրանսիայի շահերին լուրջ հարված հասցրեց նաև **1925թ. հոկտեմբերին** Լոկարնոյում (Շվեյցարիա) ստորագրված Գերմանիայի արևմտյան սահմանների երաշխավորման վերաբերյալ համաձայնագիրը: Գերմանիան, Ֆրանսիան և Բելգիան պարտավորվեցին պահպանել Գերմանիայի և Ֆրանսիայի, Գերմանիայի և Բելգիայի միջև տարածքային *ստատուս-քվո**, այսինքն՝ չխախտել այդ սահմանները: Իսկ Անգլիան և Իտալիան հանդես եկան որպես երաշխավորներ: Ստատուս-քվոն խախտելու դեպքում նրանք պետք է օգնեին ագրեսիայի ենթարկված կողմին: Լոկարնոյի համաձայնագրով Ֆրանսիայի անվտանգությունը կախման մեջ դրվեց երաշխավորներից:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ներկայացրե՛ք Ֆրանսիայի ներքին և արտաքին դրությունը 1919–1929 թվականներին:*
2. *Ինչո՞վ ավարտվեց Ռուրի ճգնաժամը:*
3. *Հաջողվե՞ց արդյոք Ֆրանսիային հաստատել իր գերիշխանությունը Եվրոպայում: Պատասխանը հիմնավորե՛ք փաստերով:*

դաս 13

ՖՐԱՆՍԻԱՆ 1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՃԱԿԱՏԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Ֆրանսիան հետպատերազմյան տարիներին զգալի հաջողության հասավ տնտեսության վերականգնման, վերակառուցման և զարգացման ուղղությամբ: Դրան նպաստեցին գերմանական ռազմատուգանքները և օտարերկրյա վարկերը: Ֆրանսիայում առաջացան արդյունաբերական նոր կենտրոններ, վերելք ապրեցին արդյունաբերության կարևոր ճյուղերը, ինչպես, օրինակ, **ավտոմոբիլային** («Ռենո», «Պեժո», «Սիտրոեն»), **մետալուրգիական** («Կոմիտե դը Ֆորժ»), **ավիացիոն, էլեկտրատեխնիկական** և այլն: Ֆրանսիայի տնտեսական զարգացումն ընդհատվեց 1929–1933թթ. համաշխարհային ճգնաժամի պատճառով: Մեծ չափերի հասավ գործազրկությունը. գործազուրկների թիվը 1935թ. կազմում էր 500 հազար մարդ:

Ճգնաժամը բացասաբար անդրադարձավ նաև Ֆրանսիայի ներքաղաքական կյանքի վրա՝ սրելով հակասությունները հասարակության ներսում: Մի կողմից՝ աշխուժացավ բանվորական, դեմոկրատական և առաջադիմական, իսկ մյուս կողմից՝ հետադիմական, մասնավորապես՝ ֆաշիստական ուժերի և կազմակերպությունների գործունեությունը: Դա հատկապես զգալի էր այն բանից հետո, երբ 1933թ. Գերմանիայում հաստատվեց ֆաշիստական վարչակարգ:

Այս երկու հակադիր ուժերը փոխադարձ անվստահություն և վախ էին տածում միմյանց հանդեպ: Ֆաշիստական ուժերը և նրանց կազմակերպությունները, ինչպես, օրինակ, «**Մարտական խաչերը**», բացահայտ անվստահություն էին դրսևորում պառլամենտարիզմի նկատմամբ: Նրանք կանգնած էին պառլամենտական կարգերը բռնի ուժով վերացնելու և ուժեղ՝ ամբողջատիրական վարչակարգ հաստատելու տեսակետի վրա:

Երկրում քաղաքական անկայունությունը խորացնելու և ձախակողմյան ուժերին հարվածելու նպատակով ֆաշիստական ուժերի ձեռքով սպանվեց Ֆրանսիայի նախագահ **Դումերը**: Ալեկոծվեց ողջ Ֆրանսիան: Ոտքի կանգնեցին ձախ, դեմոկրատական ուժերը՝ ի պաշտպանություն պառլամենտարիզմի և դեմոկրատիայի, ընդդեմ ֆաշիզմի:

Սկիզբ դրվեց ձախակողմյան ուժերի միասնական գործողությունների շարժմանը, որը լայն թափ ստացավ 1932–1934թթ.: Դրանում մեծ դեր խաղացին ֆրանսիական բանվոր դասակարգի երկու՝ **սոցիալիստական և կոմունիստական կուսակցությունները**: Նրանք **1934թ. հուլիսին համաձայնագիր ստորագրեցին** գործողությունների միասնության վերաբերյալ: Ֆրանսիայում ձևավորվեց **Ժողովրդական ճակատը**:

Լ. ԲԼՅՈՒՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

1936թ. գարնանը տեղի ունեցած պառլամենտական ընտրություններում հաղթեց Ժողովրդական ճակատը: Սոցիալիստների առաջնորդ **Լեոն Բլյումը** կազմեց Ժողովրդական ճակատի առաջին կառավարությունը՝ սոցիալիստներից և *ռադիկալներից**: Կոմունիստները չմտան կառավարության մեջ, բայց պաշտպանում և աջակցում էին նրան:

Նոր կառավարությունը կիրառեց մի շարք առաջադիմական միջոցառումներ: Սահմանվեց **40-ժամյա աշխատանքային շաբաթ, աշխատավարձը բարձրացվեց 7–15 տոկոսով**, իսկ ցածր վարձատրվողներինը՝ մինչև 50 տոկոս: Աշխատավորները ստացան կոլեկտիվ պայմանագրեր կնքելու, վճարովի արձակուրդների իրավունք և այլն:

Ընդունվեցին մի շարք օրենքներ, որոնք բարելավում էին նաև ծառայողների և գյուղացիների սոցիալ-տնտեսական վիճակը:

Կառավարության 1936թ. հունիսի դեկրետով լուծարվեցին ֆաշիստական կազմակերպությունները: Իսկ նույն թվականի հուլիսին ընդունվեց մեկ այլ կարևոր դեկրետ՝ ռազմական արդյունաբերության մասնակի ազգայնացման վերաբերյալ:

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ժողովրդական ճակատի կառավարությունը գործում էր խոշոր բուրժուազիայի, ինչպես նաև բոլոր աջ ուժերի կողմից կիրառվող ճնշման պայմաններում: Այն միշտ չէ, որ կարողանում էր դիմակայել այդ ճնշմանը: Լեոն Բլյումը սկսեց զիջումների քաղաքականությունը, իսկ 1937թ. փետրվարին **«դադար»** հայտարարեց իր ծրագրի իրականացման գործում: Մի քանի ամիս անց, այլևս իր մեջ ուժ չգտնելով դիմակայելու և պայքարը շարունակելու, նա հրաժարական տվեց: Նրան փոխարինած ռադիկալներ Կ. Շոթանի և **Է. Դալադիեի** կառավարություններն ավելի ու ավելի հեռացան ժողովրդական ճակատի ծրագրից: Իսկ երբ Դալադիեն ստորագրեց Մյունիխենյան համաձայնագիրը, ապա դա հանգեցրեց ժողովրդական ճակատի վերջնական քայքայմանը:

Ֆրանսիան **1935թ. ԽՍՀՄ-ի հետ կնքեց փոխադարձ օգնության պայմանագիր:** Դրանով նա արտահայտեց իր համաձայնությունը կոլեկտիվ անվտանգության համակարգ ստեղծելու ԽՍՀՄ-ի առաջարկին: Սակայն Ֆրանսիան աստիճանաբար հեռացավ այդ սկզբունքից և նույնպես որդեգրեց ագրեսորին զիջելու և «խաղաղեցնելու» քաղաքականություն, ինչը կործանարար եղավ հենց իր համար:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ինչպիսի՞ն էր Ֆրանսիայի վիճակը 1929–1933թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամի նախօրեին և նրա ընթացքում:*
2. *Ինչո՞ւ Ֆրանսիայում հաջողություն չունեցան ֆաշիստական ուժերը: Ո՞ր կուսակցությունների ջանքերով կազմվեց ժողովրդական ճակատը:*
3. *Ո՞վ էր ժողովրդական ճակատի առաջին կառավարության վարչապետը՝ ա) Է. Էրրիոն, բ) Լ. Բլյումը, գ) Ռ. Պուանկարեն:*
4. *Փաստերով հիմնավորե՛ք, որ Ֆրանսիան 1937–39թթ. վարում էր ագրեսորներին «խաղաղեցնելու» քաղաքականություն: Հիշե՛ք, թե նաև որ երկիրն էր նման արտաքին քաղաքականություն վարում:*

Գլուխ 4 ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ

դաս 14

ԱՄՆ-Ը 1918-1933 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

ԱՄՆ–ը թեև ուշ մտավ պատերազմի մեջ, սակայն կարևոր դեր խաղաց Առաջին աշխարհամարտում Անտանտի հաղթանակի գործում: Անգլիան, Ֆրանսիան և Անտանտի մյուս երկրները մեծապես կախված էին ԱՄՆ–ի ռազմաքաղաքական աջակցությունից, ռազմամթերքի մատակարարումներից, տնտեսական և ֆինանսական օգնությունից:

Պատերազմի ավարտից հետո ԱՄՆ–ը ձգտում էր իր **ռազմատնտեսական գերակայությունը** վերածել նաև **քաղաքական գերակայության**: Այդ նպատակով ԱՄՆ–ի նախագահը և մյուս բարձրաստիճան գործիչներն ակտիվորեն մասնակցում էին Փարիզի խաղաղության խորհրդաժողովին: Այդ նպատակն էր հետապնդում նաև նոր միջազգային մարմին ստեղծելու՝ Վիլսոնի գաղափարը, որը կյանքի կոչվեց Ազգերի լիգայի կազմակերպմամբ:

Սակայն քնած չէին նաև Անգլիան և Ֆրանսիան, որոնք նույնպես ձգտում էին տիրապետող դիրքեր հաստատել Եվրոպայում և նրա սահմաններից դուրս: Վուդրո Վիլսոնի յուրաքանչյուր քայլը հանդիպում էր Անգլիայի և Ֆրանսիայի դիմադրությանը: Դա մեծ հարված էր ամերիկյան նախագահի հեղինակությանը: ԱՄՆ–ի Սենատը, դժգոհ լինելով Վիլսոնի քաղաքականության անհաջողություններից և Փարիզի խորհրդաժողովի արդյունքներից, 1920թ. մարտին չվավերացրեց Վերսալյան պայմանագիրը և Ազգերի լիգայի կանոնադրությունը: Այսպիսով՝ ԱՄՆ–ը չդարձավ Ազգերի լիգայի անդամ և նորից անցավ **մեկուսացման** քաղաքականությանը:

1920թ. տեղի ունեցած նախագահական ընտրություններում Վիլսոնի **դեմոկրատական** կուսակցությունը պարտություն կրեց: Հաղթեցին **հանրապետականները**, որոնք անընդմեջ իշխանության գլուխ մնացին տասներկու տարի:

Պատերազմի ավարտից հետո ԱՄՆ–ի առջև ծառացել էին սոցիալ–տնտեսական բազմաթիվ բարդ խնդիրներ: Ուռճացած ռազմական արդյունաբերությունն այլևս պահանջարկ չուներ: Դա հանգեցրեց ռազմական արդյունաբերության խիստ կրճատմանը և այն խաղաղ ռելսերի վրա տեղափոխելու անհրաժեշտությանը: Իսկ դա որոշ ժամանակ էր պահանջում և 1920–1921թթ. հանգեցրեց աշխատատեղերի կրճատմանը և գործազրկության աճին: Գործազուրկների թիվը հասավ 5,5 միլիոնի: Բնականաբար, իջավ նաև ժողովրդի *կենսամակարդակը**: Դա առաջ բերեց գործադուլային շարժման հզոր ալիք:

ԱՄՆ–ի կառավարությունը ձեռնարկեց մի շարք քայլեր՝ տնտեսական վիճակը կայունացնելու և գործադուլային շարժումը կանխելու համար: Վերացվեց տնտեսության պետական կարգավորումը, որը մտցրել էր Վիլսոնի կառավարությունը, խրախուսվեց բանկային գործունեությունը, արդյունաբերական տարբեր ճյուղերի մեջ կապիտալ ներդրումները և այլն: Այդ քայլերի շնորհիվ 1920–ական թվականների կեսերից երկրի տնտեսությունը կայունացավ, ապա սկսվեց բարգավաճման շրջանը:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾԳՆԱԺԱՄԸ ՅՆՅՈՒՄ Է ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՄԻԶՆԱԲԵՐԴԸ

1928թ. կայացած նախագահական հերթական ընտրությունների արդյունքում նախագահ ընտրվեց հանրապետական **Հուվերը**: Հուվերի կառավարման շրջանը ժամանա-

կի առումով համընկավ **1929թ. սկսված համաշխարհային տնտեսական ճգնաժամի** հետ, որն առանձնահատուկ ուժով հարվածեց կապիտալիզմի միջնաբերդ ԱՄՆ–ին: Այդ ճգնաժամը ոչ թե մասնակի էր, այլ՝ **համընդհանուր**: Այն ընդգրկեց ԱՄՆ–ի տնտեսությունն ամբողջությամբ՝ արդյունաբերությունը, շինարարությունը, գյուղատնտեսությունը, ներքին և արտաքին առևտուրը, ֆինանսաբանկային համակարգը:

1932 թվականին արդյունաբերությունը 1929 թվականի համեմատությամբ կրճատվեց մոտ 60 տոկոսով, **գործազուրկների թիվը հասավ 13 միլիոնի**: Զանգվածային բնույթ կրեց ֆերմերային տնտեսությունների բայքայումը, արդյունաբերական ձեռնարկությունների և բանկերի սնանկացումը: Ֆինանսական աշխարհում խուճապ ու հուսահատություն էր տիրում: Ճգնաժամի տարիներին **սնանկացավ ավելի քան 5 հազար բանկ**: Սովորական երևույթ էր դարձել սնանկացած ձեռնարկատերերի, բանկիրների և առևտրականների ինքնասպանությունը:

Խիստ կրճատվեցին աշխատավարձերը. այն չէր բավարարում նույնիսկ աշխատավորների նվազագույն պահանջները: Աղքատացումը համընդհանուր բնույթ կրեց:

Այդ հողի վրա ծավալվեցին բողոքի գործադուլներ: **1930թ. մարտին** տեղի ունեցած գործադուլին մասնակցում էր 1 միլիոն 250 հազար մարդ: Աշխատավորների վիճակը ծանրանում էր նրանով, որ չկար սոցիալական ապահովագրության համակարգ: Հուսահատված, գործազուրկ և քաղցած բանվորները, ֆերմերները և մանր առևտրականները կազմակերպում էին **սովյալների երթ** դեպի Վաշինգտոն: Այն հատկապես մեծ ծավալներ ընդունեց 1930–1932թթ.: Բողոքի իրենց երթերն էին կազմակերպում նաև հուսահատության դուռը հասած պատերազմի վետերանները: Նրանք կառավարությունից պահանջում էին կտրուկ միջոցներ ձեռնարկել տնտեսական ճգնաժամը հաղթահարելու և իրենց շահերը պաշտպանելու համար:

Հուվերի կառավարությունը դիմեց որոշ քայլերի, սակայն ոչ թե աշխատավորների վիճակը թեթևացնելու, այլ խոշոր մոնոպոլիստական ընկերություններին օգնելու համար: Կառավարությունը 1930թ. մտցրեց բարձր **հովանավորչական (պրոտեկցիոնիստական) տարիֆներ**, 1932թ. ստեղծեց **Վերակառուցման ֆինանսական կորպորացիա**, իրականացրեց որոշ «կայունացնող գործողություններ»: Սակայն դրանք բավարար չէին ճգնաժամը հաղթահարելու համար: Ակնհայտ էր, որ Հուվերի կառավարությունը չուներ հստակ ծրագիր և ի վիճակի չէր երկիրը տնտեսական ճգնաժամից դուրս բերելու:

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: ԴԱՈՒԵՍԻ ՊԼԱՆԸ

1920–ական թվականների կեսերին ԱՄՆ–ը սկսեց որոշակի հետաքրքրություն ցուցաբերել եվրոպական գործերի նկատմամբ: **1924թ. օգոստոսին** հաղթող պետությունները Լոնդոնի խորհրդաժողովում ընդունեցին **ամերիկյան բանկիր Դաուեսի պլանը**՝ գերմանական ռազմատուգանքների վճարումները կարգավորելու հարցում: Դա կանոնավորեց վճարումները, կայունացրեց գերմանական մարկը և նպաստեց կապիտալի հոսքին Գերմանիայի տնտեսության մեջ: Մինչև 1930թ. օտարերկրյա կապիտալ ներդրումները Գերմանիայի տնտեսության մեջ կազմեցին 27 մլրդ մարկ, որի առյուծի բաժինը ներկայացնում էր ամերիկյան կապիտալը: Դա, անշուշտ, ամրապնդում էր ԱՄՆ–ի դիրքերը Գերմանիայում:

Սակայն կար մի բնագավառ, որտեղ փոփոխություններ տեղի չունեցան: Խոսքն ամե-



Պետական և քաղաքական գործիչ, խոշոր արդյունաբերող, ԱՄՆ–ի 31–րդ նախագահը (1929–1932թթ.)

Հուվեր (1874-1964)

ռիկա–խորհրդային հարաբերությունների մասին է: ԱՄՆ–ը, որ 1918–1920թթ. Խորհրդային Ռուսաստանի դեմ ուղղված ռազմական միջամտության մասնակից էր, չէր շտապում ճանաչել ԽՍՀՄ–ը և դիվանագիտական հարաբերություններ հաստատել նրա հետ:

Արտաքին քաղաքականության բնագավառում Հուվերի կառավարությունը չունեցավ ակնառու հաջողություններ: Թերևս ամենամեծ հաջողությունը 1930թ. Լոնդոնում կայացած խորհրդաժողովում ընդունված որոշումն էր, որով ԱՄՆ–ն իրավունք ստացավ Անգլիային հավասար հածանավեր, սուզանավեր և էսկադրային ականակիրներ ունենալ: Դրանով փաստորեն վերջ տրվեց ռազմածովային ուժերի բնագավառում Անգլիայի մենաշնորհին:

Ճգնաժամի տարիներին սրվեցին ԱՄՆ–ի հարաբերությունները Ճապոնիայի հետ հատկապես այն բանից հետո, երբ վերջինս նորանոր տարածքներ գրավեց Չինաստանում: ԱՄՆ–ի կառավարությունը, սակայն, չդատապարտեց ճապոնական ռազմամոլներին: Ակներևաբար Հուվերը հույս ուներ, որ ճապոնական ագրեսիայի խորացումը կարող է նրան պատերազմի մեջ ներքաշել Խորհրդային Միության հետ: Դա համապատասխանում էր ԱՄՆ–ի ստրատեգիական շահերին Հեռավոր Արևելքում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ձեր կարծիքով ինչո՞ւ ԱՄՆ–ի Սենատը չվավերացրեց Վերսալյան պայմանագիրը: Ինչո՞ւ ենք ասում՝ ԱՄՆ–ը նորից անցավ «մեկուսացման» քաղաքականությանը: Հիշե՛ք, թե երբ էր ԱՄՆ–ը նման արտաքին քաղաքական կուրս վարել:*
2. *Փաստերով և թվերով հիմնավորե՛ք, որ համաշխարհային տնտեսական ճգնաժամից ամենից շատ տուժեց ԱՄՆ–ը:*
3. *Ի՞նչ միջոցառումներ իրականացրեց նախագահ Հուվերը երկրի ներքին վիճակը կայունացնելու համար:*
4. *Ի՞նչ նպատակ էր հետապնդում Դաուեսի պլանը:*
5. *ԱՄՆ–ին ե՞րբ հաջողվեց վերջ տալ ռազմածովային ուժերի բնագավառում Անգլիայի մենաշնորհին:*

դաս 15

ՖՐԱՆԿԼԻՆ ՌՈՒԶՎԵԼՏԻ ՆՈՐ ԿՈՒՐՍԸ

ՆՈՐ ԿՈՒՐՍԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հուվերը սկզբունքորեն դեմ էր պետության միջամտությանը տնտեսական հարաբերություններին՝ ընդհանրապես և տնտեսական ճգնաժամի կարգավորմանը՝ մասնավորապես: Նա համոզված էր, որ ազատ շուկայական հարաբերություններն ինքնաբերաբար կհաղթահարեն տնտեսական դժվարությունները: Դեռ ավելին՝ Հուվերը ժխտում էր ճգնաժամի փաստն իսկ և խուլ էր ամերիկացիների սոցիալական արդար պահանջների հանդեպ: Նա 1932թ. Վաշինգտոն ժամանած պատերազմի վետերաններին ոչ միայն չընդունեց և չլսեց նրանց գանգատները, այլև վետերաններին, որոնք ավանդաբար մեծ հարգանք են վայելում ԱՄՆ–ում, «դիմավորեց» տանկերով ու ռումբերով՝ նրանց դեմ նետելով բանակային զորամասեր և զինված ոստիկանությանը: Դա մեծապես գցեց նրա և հանրապետական կուսակցության վարկը, ինչը վճռական նշանակություն ունեցավ նախագահական հաջորդ ընտրությունների ժամանակ:

1932թ. նոյեմբերին, ճգնաժամի սուր պայմաններում, կայացան նախագահական նոր ընտրություններ: ԱՄՆ–ի նոր նախագահ ընտրվեց դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչ **Ֆրանկլին Ռուզվելտը**: Նա XX դարի ԱՄՆ–ի ամենաականավոր պետական գործիչն էր, ճկուն և հեռատես քաղաքագետը: **Ռուզվելտը միակն է ԱՄՆ–ի պատմության մեջ, որ չորս անգամ անընդմեջ ընտրվել է երկրի նախագահ**:

Ռուզվելտը մշակեց ճգնաժամից դուրս գալու իրատեսական մի ծրագիր, որն ստացավ «**Նոր կուրս**» անվանումը: Այն ընդգրկում էր արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, սոցիալական ոլորտը և բանկային համակարգը: **1933թ. հունիսի**

16–ին ընդունվեց արդյունաբերության վերականգնման մասին օրենք: Դրանով բարձրանում էր պետության կարգավորիչ դերը տնտեսության կազմակերպման մեջ, սահմանափակվում էր մրցակցությունը և այլն: Որոշվեց նաև ապրանքների արտադրության և վաճառքի քանակը: Այդ օրենքով սահմանվում էին ապրանքների վաճառման գների առավելագույն մակարդակը, աշխատավարձերի չափը, աշխատանքային ժամանակը և այլն: Աշխատավորները ստացան արհմիությունների մեջ միավորվելու և ձեռնարկատերերի հետ կոլեկտիվ պայմանագրեր կնքելու իրավունք:

«Նոր կուրսով» կտրուկ միջոցներ ձեռնարկվեցին գործազրկությունը կրճատելու ուղղությամբ: Մեծ ծավալների հասան ճանապարհների, կամուրջների, օդանավակայանների և հասարակական այլ շինությունների կառուցումը, որը ֆինանսավորվում էր պետական բյուջեից: Դրա շնորհիվ երկու տարվա ընթացքում ստեղծվեց մոտ 3 միլիոն նոր աշխատատեղ:

Ընդունվեցին ֆերմերների վիճակը բարելավող օրենքներ: Կառավարությունն սկսեց ցանքատարածությունները կրճատել՝ գյուղատնտեսական ապրանքների գները բարձրացնելու նպատակով: Դրա դիմաց պետությունը դրամական փոխհատուցում էր տալիս ֆերմերներին:

Ընդունվեցին օրենքներ նաև ֆինանսական համակարգի վերաբերյալ: Փոխառության իրավունք տրվեց միայն խոշոր ու կենսունակ բանկերին: Դրա հետևանքով ասպարեզից անհետացան թույլ և փոքր բանկերը: Ռուզվելտը ֆինանսական պաշարները կենտրոնացրեց պետության ձեռքում:

Շատ կարևոր էին բարեփոխումները սոցիալական ոլորտում: **1935թ. ընդունվեց օրենք՝ սոցիալական ապահովության և պետության սոցիալական պատասխանատվության մասին**: Նպաստներ սահմանվեցին գործազուրկների, ծերերի և այլ կարիքավոր խավերի համար:

«Նոր կուրսի» շնորհիվ ԱՄՆ–ն աստիճանաբար դուրս եկավ տնտեսության քառասային վիճակից: Արդեն 1936թ. նկատվեց տնտեսության որոշ աշխուժացում: ԱՄՆ–ի տնտեսությունն աստիճանաբար մոտենում էր նախաճգնաժամային մակարդակին:

Այդ կուրսը մեծ պաշտպանություն գտավ երկրի ներսում և սոցիալ–տնտեսական տպավորիչ նվաճումների ալիքի վրա Ֆրանկլին Դելանո Ռուզվելտը 1936թ. կրկին ընտրվեց ԱՄՆ–ի նախագահ:

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒԶՎԵԼՏԻ ՕՐՈՔ

Լայնախոհությունը և իրատեսական մոտեցումները բնորոշ էին նաև Ռուզվելտի արտաքին քաղաքականությանը:

ԱՄՆ–ի նախագահը 1933թ. նոյեմբերի 10–ին դիմեց ԽՍՀՄ խորհուրդների Կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահ Միխայիլ Կալինինին՝ ԱՄՆ–ի և ԽՍՀՄ–ի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու առաջարկությամբ, որը դրականորեն ընդունվեց խորհրդային կառավարության կողմից: **1933թ. նոյեմբերի 16–ին** պաշտոնապես դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին երկու երկրների միջև:

Փոփոխություններ տեղի ունեցան ԱՄՆ–ի քաղաքականության մեջ՝ կապված Լատինական Ամերիկայի երկրների հետ: Ռուզվելտը հրաժարվեց նրանց նկատմամբ կիրառվող կոշտ քաղաքականությունից և հռչակեց «բարի դրացու» սկզբունքների վրա հիմնված քաղաքականություն: ԱՄՆ–ն ինքնավարություն շնորհեց իր գաղութ Ֆիլիպիններին (1934թ.):

Ռուզվելտը մեծ նշանակություն էր տալիս

Ռուզվելտը ներկայացնում է իր «Նոր կուրսը»:

եվրոպական և հեռավորարևելյան հարցերին ու **ագրեսորներին զսպելու քաղաքականությանը**: ԱՄՆ–ի Կոնգրեսը **1935թ. օգոստոսին** ընդունեց օրենք **չեզոքության** մասին, որն արգելում էր զենք մատակարարել պատերազմող կողմերին: Դա հարվածում էր Գերմանիայի, Իտալիայի և Ճապոնիայի շահերին: Սակայն դա միաժամանակ հարվածում էր նաև ագրեսիայի զոհերին՝ Չինաստանին, Իսպանիային և Եթովպիային, որոնք նույնպես չէին կարող ինքնապաշտպանության համար զենք գնել ԱՄՆ–ից: Հասկանալով այդ օրենքի անկատար լինելը՝ Ռուզվելտը 1939թ. Կոնգրեսին առաջարկեց վերացնել այն, սակայն հաջողության չհասավ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Պարզաբանե՛ք, թե ինչու Ֆ. Ռուզվելտի ծրագիրը ստացավ «Նոր կուրս» անվանումը: Ի՞նչ միջոցառումներ իրականացվեցին երկրում համաշխարհային տնտեսական ճգնաժամից դուրս գալու համար:*
2. *Դիվանագիտական հարաբերություններ ե՞րբ հաստատվեցին ԱՄՆ–ի և ԽՍՀՄ–ի միջև:*
3. *Ի՞նչ նոր սկզբունքներ ի հայտ եկան ԱՄՆ–ի արտաքին քաղաքականության մեջ 1930–ական թվականներին:*

դաս 16

ԱՄՓՈՓՈՒՄ

- **Առաջին համաշխարհային պատերազմում հաղթանակած տերությունները՝ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, ԱՄՆ-ը և Իտալիան պարտված երկրներին պարտադրեցին հաշտության իրենց պայմանները:**

Ի՞նչ պայմանագրերով ամրագրվեց ուժերի հարաբերակցությունն Առաջին աշխարհամարտի ավարտից հետո: Ի՞նչ էր իրենից ներկայացնում Վերսալ-Վաշինգտոնյան համակարգը:

Վերհիշե՛ք, թե ինչո՞ւ ԱՄՆ-ը չընդունեց Վերսալյան համակարգի այն ծնը, որը թելադրեցին Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան: Ի՞նչ պատասխան քայլ ձեռնարկեց ԱՄՆ-ը:

- **1919 թվականին, պատմության մեջ առաջին անգամ, միջազգային մի կազմակերպություն ստեղծվեց, որի գլխավոր խնդիրն էր ապահովել անվտանգությունն ու խաղաղությունը ողջ երկրագնդի վրա:**

Ինչպե՞ս էր կոչվում այդ կազմակերպությունը: Տվե՛ք նրա գործունեության գնահատականը:

- **1917թ. հոկտեմբերի 25-ին (նոյեմբերի 7) Ռուսաստանում պետական կառավարման ղեկը վերցրեցին բոլշևիկները, երկրում հաստատվեց խորհուրդների իշխանությունը: Պետական կարգի փոփոխությանը հետևեց երկրի ներքին կյանքի վերափոխումը՝ սոցիալիստական հասարակարգի ստեղծումը:**

Նախկին ցարական կայսրության ո՞ր մասերում հաստատվեց խորհրդային իշխանությունը 1917-1922թթ.:

Ո՞ր հանրապետություններից կազմավորվեց ԽՍՀՄ-ը:

- **1921թ. խորհրդային կառավարությունն անցում կատարեց «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունից նեպին:**

Բնութագրե՛ք «ռազմական կոմունիզմը» և նեպը:

Հիմնավորե՛ք ԽՍՀՄ-ի ինդուստրացման և կոլեկտիվացման կուրսերի անհրաժեշտությունը: Ի՞նչ տվեց այն երկրին:

- **ԽՍՀՄ-ում 1930-ական թվականներին հաստատվեց Ստալինի անձի պաշտամունքը: Քաղաքական բռնություններն ընդունեցին համատարած բնույթ:**

Ի՞նչ հետևանքներ ունեցավ անհատի պաշտամունքը ԽՍՀՄ-ի քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքում:

Բնութագրե՛ք սոցիալիզմի ստալինյան մոդելը:

- **Գերմանիան հետպատերազմյան ժամանակաշրջանում մշտապես ձգտում էր վերականգնել իր հզորությունը և խարխլված միջազգային հեղինակությունն ու վարկը: Այդ գործում նրան որոշակի աջակցություն**

ցույց տվեցին Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ը:

Ինչո՞վ կբացատրեք վերջիններիս նման քաղաքականությունը. ու՞մ դեմ էր այն ուղղված: Ի՞նչ դեր խաղաց այդ գործում Դաուեսի պլանը:

- **1933 թվականի սկզբին Գերմանիայում իշխանության գլուխ եկավ ֆաշիստական կուսակցությունը՝ Ա. Հիտլերի գլխավորությամբ:**

Պարզաբանեք «ֆաշիզմ» հասկացությունը: Որո՞նք էին Գերմանիայի ֆաշիստական վարչակարգի ներքին և արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքները:

- **Առաջին աշխարհամարտից հետո Մեծ Բրիտանիան ամրապնդեց իր համաշխարհային տիրապետող դիրքերը:**

Ի՞նչ փաստերով կարող եք դա հիմնավորել:

- **1930-ական թվականներին Մեծ Բրիտանիան վարում էր ագրեսորներին «խաղաղեցնելու» և չմիջամտելու արտաքին քաղաքականություն:**

Ձեր կարծիքով ի՞նչ դեր խաղաց այդ քաղաքականությունը երկրորդ աշխարհամարտի սանձազերծման գործում:

- **Ֆրանսիան Առաջին աշխարհամարտից հետո ձգտում էր իր հեգեմոնիան հաստատել Եվրոպայում:**

Ինչո՞ւ Ֆրանսիային դա չհաջողվեց:

- **ԱՄՆ-ը 1918-1939թթ. մրցակցում էր Մեծ Բրիտանիայի հետ՝ համաշխարհային ասպարեզում գերակայություն հաստատելու նպատակով:**

Ձեր կարծիքով ԱՄՆ-ը հասա՞վ իր նպատակին: Ինչո՞ւ:

- **Նախագահ Ֆ. Ռուզվելտն իր երկիրը տնտեսական ճգնաժամից հանելու համար իրականացրեց, այսպես կոչված, «նոր կուրսի» քաղաքականությունը:**

Ի՞նչ արդյունքներ տվեց այդ քաղաքականությունը:

Գլուխ 5 ԹՈՒՐՔԻԱՆ ԵՎ ԻՐԱՆԸ

դաս 17

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Օսմանյան կայսրությունն Առաջին համաշխարհային պատերազմում խայտառակ պարտություն կրեց: Նրա ներկայացուցիչները **1918թ. հոկտեմբերի 30–ին** զինադադարի պայմանագիր ստորագրեցին Լեմնոս կղզու **Մուդրոս** նավահանգստում՝ անգլիական «Ագամեմնոն» ռազմանավի վրա:

Օսմանյան կայսրությունն իրեն պարտված ճանաչեց և պարտավորվեց խզել բոլոր տեսակի հարաբերություններն իր նախկին դաշնակիցների՝ Գերմանիայի, Ավստրո–Հունգարիայի և Բուլղարիայի հետ:

Զինադադարի մի շարք հոդվածներ վերաբերում էին ռազմական հարցերին: Թուրքիան պարտավորվում էր անհապաղ զորացրել իր բանակը, զորքերը դուրս բերել Իրանից, Անդրկովկասում գրաված տարածքներից և Կիլիկիայից, ինչպես նաև թուրքական ռազմական նավերը հանձնել Անտանտին: Անտանտն իր հսկողությունն էր սահմանում Թուրքիայի երկաթուղիների, հեռագրի և ռադիոյի վրա, իրավունք էր ձեռք բերում գրավել Բոսֆորի և Դարդանելի ռազմածովային ամրությունները, Բաքուն, Բաթումը և այլն:

Մուդրոսի զինադադարի մի շարք հոդվածներում շոշափվում էր Հայկական հարցը: Թուրքիան համաձայնվում էր, որպեսզի Անտանտը գրավի հայկական վեց վիլայեթները՝ դրանցից որևէ մեկում «անկարգություններ առաջանալու դեպքում»: Թուրքիան պարտավորվում էր հայ ռազմագերիներին և ձերբակալվածներին կենտրոնացնել Կ. Պոլսում և նրանց հանձնել Անտանտին:

ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ՀԱՆՅԱՎՈՐ ՊԱՐԱԳԼՈՒԽՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Երիտթուրքերի ղեկավարներին հաջողվեց նախքան զինադադարը ճողոպրել երկրից և ապաստան գտնել տարբեր երկրներում: Սակայն դա չազատեց նրանց պատասխանատվությունից: Համաշխարհային հասարակայնությունը պահանջում էր պատժել նրանց: Եվ թուրքական նոր կառավարությունը դատական հետաքննություն սկսեց: Ստեղծվեցին քննիչ հանձնաժողովներ՝ հայերի կոտորածների վերաբերյալ մեղադրական ապացույցներ հավաքելու համար:

1919թ. հունվարին հիմնված ռազմական ատյանները դատական հետաքննության ենթարկեցին նախկին կառավարության ղեկավարներին, «Միություն և առաջադիմություն» կուսակցության Կենտրոնական կոմիտեի անդամներին, Հատուկ կազմակերպության ղեկավարներին: Նրանք բոլորը հայկական ջարդերի անմիջական իրականացնողներն էին:

Դատավարությունը տեղի ունեցավ 1919թ. ապրիլից մինչև հունիսը և իր վճիռն արձակեց 1919թ. հուլիսի 5–ին: Անգամ թուրքական դատարանը հարկադրված էր ընդունել երիտթուրքերի ծանր հանցանքները: Նախկին կառավարության չորս ղեկավարները՝ **Թալեաթը, Էնվերը, Ջեմալը և Նազիմը**, հեռակա դատապարտվեցին մահվան: Հետագայում նման պատժի արժանացան նաև **Բեհաէդդին Շաքիրը, Ջեմալ Ազմի** և **Նայիմ բեյերը**, իսկ շատ–շատերն էլ դատապարտվեցին տարբեր ժամկետներով ազատազրկման:

ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՆՅԱԳՈՐԾՆԵՐԻ ՊԱՏԻԺԸ ՀԱՅ ՎՐԻԺԱՌՈՒՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Դատավճիռը հնաբավոր չեղավ իրականացնել թուրքական դատարանի կողմից, քանի որ հանցագործները երկրից դուրս էին գտնվում: Այդ դատավճռի իրականացմանը ձեռնամուխ եղան անձնազոհ հայ վրիժառու-

ները, որոնք գործում էին «**Նեմեսիս**» (Նեմեսիս՝ հինհունական դիցաբանության մեջ հատուցման աստվածուհի, որը պատժում էր ոճրագործությունների համար) ծրագրի շրջանակներում:

1921թ. մարտի 15–ին Բեռլինում Սողոմոն Թեհլերյանի ձեռքով սպանվեց Թալեաթ փաշան: Գերմանական դատարանը, հանգամանորեն և անաչառորեն քննելով հարցը, դրա հետ կապված նաև Հայոց ցեղասպանության հանգամանքները, անպարտ ճանաչեց Ս. Թեհլերյանին և նրան ազատ արձակեց:

1921թ. դեկտեմբերի 6–ին Հռոմում Արշավիր Շիրակյանի գնդակից սպանվեց Օսմանյան կայսրության նախկին վարչապետ Սաիդ Հալիմը:

1922թ. ապրիլի 7–ին, դարձյալ **Բեռլինում, Արամ Երկանյանը և Արշավիր Շիրակյանն** իրականացրեցին Շաքիր Բեհաէդդինի և Ջեմալ Ազմիի սպանությունը:

1922թ. հուլիսի 21–ին Պետրոս Տեր–Պողոսյանը, Արտաշես Գևորգյանը և Ստեփան Ծաղիկյանը Թբիլիսիում ի կատար ածեցին Ջեմալ փաշայի մահապատիժը: Հետագայում՝ Միջին Ասիայում **Հակոբ Մելքումովի** գլխավորած զորամասերի դեմ մղված մարտերում, զոհվեց Էնվեր փաշան: Դոկտոր Նազիմը ավելի ուշ կախաղան բարձրացվեց Մուս[illegible]աֆա Քեմալի դեմ կազմակերպված դավադրությանը մասնակցելու համար:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

Մուդրոսում ստորագրված զինադադարից հետո Անտանտի երկրները՝ Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան և Հունաստանը, իրենց զորքերը մտցրեցին Թուրքիա: Ստամբուլում գտնվող սուլթանական կառավարությունը համագործակցում էր Անտանտի հետ, կատարում վերջինիս կամքը:

Սակայն թուրքական մի շարք ռազմական և քաղաքական գործիչներ, ազգային բուրժուազիան և սոցիալական այլ խավեր Անտանտի երկրների այդ քայլն ընկալեցին որպես սպառնալիք թուրքական պետության գոյությանը: Թուրքիայում սկիզբ առավ «երկիրն օտարերկրյա նվաճողներից» ազատագրելու շարժում, որը ղեկավարեց **Մուստաֆա Քեմալը**: Նրա անունով այդ շարժումը կոչվեց **քեմալական**:

Քեմալականների գլխավոր պահանջներն էին՝ նախ՝ Անատոլիան, Արևելյան Թրակիան ու նեղուցների գոտին միավորել ու ստեղծել թուրքական ազգային պետություն և երկրորդ՝ արգելել օտարերկրյա վերահսկողությունն այդ տարածքներում:

Քեմալը 1920թ. ապրիլին Անկարայում գումարեց **Թուրքիայի Ազգային մեծ ժողով** (ԹԱՄԺ), որն իր վրա վերցրեց սահմանադիր ժողովի գործառույթներ: Քեմալն ընտրվեց նախագահ և կազմեց իր առաջին կառավարությունը: Այսպիսով՝ Թուրքիայում գործում էր երկու կառավարություն, մեկը՝ Ստամբուլում, իսկ մյուսը՝ Անկարայում:

1920թ. օգոստոսի 10–ին սուլթանական կառավարությունը Սևրում Անտանտի հետ ստորագրեց հաշտության պայմանագիր: Ինչպես արդեն գիտեք, այդ պայմանագրով զգալի տարածքներ անցան Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Հունաստանի տիրապետության տակ: Թուրքիան ճանաչեց Հայաստանի անկախությունը և քրդական պետության ստեղծումը:

Սակայն Անկարայի կառավարությունը չճանաչեց Սևրի պայմանագիրը: Քեմալականները նույն թվականի աշնանը պատերազմական գործողություններ սկսեցին Հայաստանի Հանրապետության դեմ և գրավեցին նրա մի շարք տարածքներ:

Մուստաֆա Քեմալը և նրա համախոհները 1923թ. ապրիլին հիմնեցին **Ժողովրդական կուսակցությունը**: Այնուհետև անցկացվեցին Թուրքիայի Ազգային մեծ ժողովի ընտրություններ: Հաղթանակ տարավ Ժողովրդական կուսակցությունը: ԹԱՄԺ–ը **1923թ. հոկտեմբերի 29–ին ընդունեց օրենք Թուրքիան հանրապետություն** հռչակելու մասին: Նրա առաջին նախագահը դարձավ Մուստաֆա Քեմալը, որը հորջորջվեց **Աթաթուրք**՝ թուրքերի հայր:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Պարզաբանե՛ք Մուդրոսի զինադադարի պայմանները: Վերհիշե՛ք, թե ինչ էր նախատեսում Սևրի հաշտության պայմանագիրը:*
2. *Ե՞րբ տեղի ունեցավ երիտթուրքերի ղեկավարների դատավարությունը:*
3. *Ձեր կարծիքով ճի՞շտ էր հայ վրիժառուների կողմից երիտթուրք հանցագործների մահապատժի իրականացումը: Ինչո՞ւ:*
4. *Բնութագրե՛ք քեմալական շարժումը: Թուրքիան ե՞րբ հռչակվեց հանրապետություն:*

դաս 18

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

1921Թ. ՄԱՐՏԻ 16-Ի ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Քեմալականների դիրքերի ամրապնդմանը մեծապես նպաստեց Խորհրդային Ռուսաստանը: Վերջինս, տարված լինելով համաշխարհային հեղափոխության գաղափարներով, Թուրքիային համարում էր այդ հեղափոխության առաջապահը Արևելքում: Ռուսաստանը, ձգտելով օգտագործել նրան ընդդեմ Անտանտի, քաղաքական, տնտեսական և ռազմական օգնություն ցույց տվեց քեմալականներին:

1921թ. մարտի 16–ին Մոսկվայում քեմալական Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև ստորագրվեց բարեկամության և եղբայրության պայմանագիր: Այդ պայմանագրով Խորհրդային Ռուսաստանը Թուրքիային զիջեց Հայաստանի տարածքները՝ Կարսը, Սուրմալուն, Արդահանը և Արդվինը: Իսկ Նախիջևանն անցավ Ադրբեջանին՝ որպես ենթահովանավորյալ տարածք. Ադրբեջանը չէր կարող զիջել այն որևէ երրորդ պետության, այսինքն՝ Հայաստանին:

1921թ. հոկտեմբերի 13–ին Կարսում մի կողմից՝ Թուրքիայի, իսկ մյուս կողմից՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միջև ստորագրվեց պայմանագիր: Այն հիմնականում վերարտադրում էր Մոսկվայի 1921 թվականի մարտի 16–ի պայմանագրի դրույթները: Դրանով հաստատվեցին պետական նոր սահմաններ Թուրքիայի և անդրկովկասյան հանրապետությունների միջև, որը պահպանվում է մինչև օրս:

ԼՈԶԱՆԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Քեմալականները հրաժարվում էին ճանաչել և իրագործել Սևրի հաշտության պայմանները:

Վիճելի հարցերը կարգավորելու համար **1922թ. նոյեմբերին** շվեյցարական **Լոզան** քաղաքում սկսվեց մի խորհրդաժողով, որին մասնակցում էին մի կողմից՝ Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան, Հունաստանը, Ճապոնիան, Ռումինիան և Հարավսլավիան, իսկ մյուս կողմից՝ Թուրքիան: Խորհրդաժողովը ընդմիջումներով ձգվեց մինչև **1923թ. հուլիսը**: Լոզանի հաշտության պայմանագիրը հաստատեց Թուրքիայի՝ Անդրկովկասում ունեցած տարածքային ձեռքբերումները, այդ

թվում՝ Հայաստանի հաշվին կատարվածը:

Լոզանում քննարկվեց նաև Հայկական հարցը: Հայկական պատվիրակությանը՝ ի դեմս **Ա. Ահարոնյանի** և **Ա. Խատիսյանի**, չթույլատրվեց մասնակցել խորհրդաժողովի աշխատանքներին (Հայաստանում արդեն հաստատվել էին խորհրդային կարգեր, և հիշյալ պատվիրակությունը չէր ներկայացնում Խորհրդային Հայաստանը): Բայց նրանք՝ Ազգային պատվիրակության անդամներ **Գ. Նորատունկյանի և Լ. Բաշալյանի** հետ համատեղ, խորհրդաժողովի քննարկմանը ներկայացրեցին մի հուշագիր՝ բաղկացած երեք *այլընտրանքային** առաջարկություններից: Առաջին՝ «Հայկական օջախ» ստեղծել Էրզրումի, Տրապիզոնի, Բիթլիսի և Վանի վիլայեթների տարածքում: Երկրորդ՝ Խորհրդային Հայաստանի տարածքային ընդարձակում՝ ի հաշիվ Արևմտյան Հայաստանի տարածքների: Երրորդ՝ այդ երկու տարբերակների չընդունման դեպքում առաջարկվում էր «Հայկական օջախ» ստեղծել Կիլիկիայում:

Թուրքական պատվիրակության ղեկավար Իսմեթ փաշան կտրականապես մերժեց այդ տարբերակներից որևէ մեկը: Հայկական հարցը Լոզանում չունեցավ իր պաշտպանը, և հարցը «փակվեց»:

ԷՏԱՏԻԶՄԻ ԵՎ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Քեմալականներն իրենց տնտեսական քաղաքականության հիմքում դրեցին ***էտատիզմի**** սկզբունքը: Այսինքն՝ դա նշանակում էր մեծ չափերով պետական միջոցներ ներդնել արդյունաբերության, երկաթուղիների և տնտեսության այլ բնագավառներում: Թուրքական կառավարությունը չեղյալ հայտարարեց **կապիտուլյացիաների ռեժիմը*** և զրկեց օտարերկրյա ընկերություններին մեզրկեց օտարերկրյա ընկերություններին մեզրկեց օտարնաշնորհային կարգավիճակից: Օտարերկրյա ընկերություններից պետությունը հետ գնեց արդյունաբերական ձեռնարկությունները և երկաթուղային ճանապարհները: Հիմնվեց կենտրոնական բանկ, որն ուներ դրամահատման բացառիկ իրավունք և այլն:

Էտատիզմի քաղաքականության արդյունքը եղավ Թուրքիայի տնտեսության որոշակի զարգացումը, հատկապես՝ արդյունաբերության բնագավառում: Մուստաֆա Քեմալն այնուհետև ձեռնամուխ եղավ մի շարք բարեփոխումների կիրառմանը:

1923թ. հոկտեմբերին մայրաքաղաքը Ստամբուլից տեղափոխվեց Անկարա, իսկ հաջորդ տարի վերացվեց խալիֆայությունը: Հոգևորականությունը զրկվեց իր գույքից, դատավարությունը հանվեց նրա տնօրինությունից: Կրթական գործի կազմակերպումը հանձնվեց լուսավորության նախարարությանը:

1924թ. ընդունվեց Թուրքական Հանրապետության առաջին Սահմանադրությունը: Դրանով վերջնականապես ձևակերպվեց միապետության և խալիֆայության վերացումը, ապահովվեց ազգային բուրժուազիայի ու նրա հետ կապված հողատերերի տիրապետությունը:

Սակայն Սահմանադրությունը պարունակում էր մի շարք հակադեմոկրատական հոդվածներ, մասնավորապես՝ աշխատավորների և ոչ թուրք ազգերի հարցում: Սահմանադրությունը Թուրքիայի բոլոր ազգություններին և ժողովուրդներին համարում էր թուրք և, փաստորեն, չէր ընդունում քրդերի, հայերի, հույների, լազերի, սլավոնների և այլ ազգային փոքրամասնությունների գոյությունը:

1925–1928թթ. սկսվեց բարենորոգումների նոր փուլ: Ընդունվեցին քրեական և քաղաքացիական օրենսգրքերը, արգելվեց բազմակնությունը, չադրա կրելը, մտցվեց լատինական այբուբեն՝ արաբականի փոխարեն: Սահմանադրությունից հանվեց իսլամը պետական կրոն ճանաչելու մասին հոդվածը, որով Թուրքիան մտավ աշխարհիկ պետությունների շարքը:

1938թ. մահացավ Քեմալ Աթաթուրքը: Թուրքիայի նոր նախագահ ընտրվեց Իսմեթ Ինյոնյուն:

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Թուրքիան արտաքուստ ԽՍՀՄ-ի հետ պահպանում էր բարեկամական հարաբերություններ, սակայն նա արդեն սկսել էր մերձենալ արևմտյան տերություններին:

Կարգավորվեցին Թուրքիայի հարաբերությունները Անգլիայի և Ֆրանսիայի հետ: 1933թ. թուրքական կառավարությունը վերսկսեց օսմանյան պարտքի վճարումը:

1932թ. Թուրքիան դարձավ Ազգերի լիգայի, իսկ **1934թ.՝ Բալկանյան Անտանտի** անդամ: Դրա կազմի մեջ մտնում էին նաև **Հարավսլավիան, Հունաստանը և Ռումինիան**: Բալկանյան Անտանտը կախման մեջ էր գտնվում Անգլիայից և Ֆրանսիայից:

Թուրքիայի նկատմամբ մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում ֆաշիստական Գերմանիան, որը ձգտում էր նրան ներգրավել իր ազդեցության ոլորտը:

Մոտալուտ համաշխարհային պատերազմում Թուրքիային իրենց կողմը պահելու և Գերմանիայից անջատելու նպատակով Անգլիան ու Ֆրանսիան 1939թ. նրան հանձնեցին Սիրիայի տարածքի անբաժան մասը կազմող Ալեքսանդրետի սանջակը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԳՐԱՆՔՆԵՐ

1. *Ձեր կարծիքով ինչո՞ւ տեղի ունեցավ բոլշևիկ-քեմալական մերձեցումը:*
2. *Լոզանի պայմանագիրն ի՞նչ դեր խաղաց՝ ա) Թուրքիայի, բ) Հայկական հարցի հետագա ճակատագրի գործում:*
3. *Պարզաբանեք Մ. Քեմալի ներքին քաղաքականության էությունը: Ի՞նչ է էտատիզմը:*
4. *Ինչպիսի՞ն էր Թուրքիայի արտաքին դրությունը 1930-ական թվականներին:*

դաս 19

ԻՐԱՆԸ 1918-1939 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԻՐԱՆՈՒՄ

Առաջին աշխարհամարտի ժամանակ Իրանը թեև պաշտոնապես չեզոքություն էր պահպանել, սակայն նրա տարածքը դարձել էր պատերազմող երկու խմբավորումների միջև կռվի ռազմաթեմ: Պատերազմի հետևանքով երկիրը հայտնվել էր ծանր իրավիճակում: Տնտեսությունը լրիվ քայքայվել էր, ժողովուրդը գտնվում էր աղքատության մեջ: Կենտրոնական կառավարության թուլության պայմաններում տեղերում գլուխ էին բարձրացրել խաներն ու խոշոր ֆեոդալները: **Ղաջարիների դինաստիայի** կառավարումն օրեցօր ձևական էր դառնում:

Ստեղծված պայմաններից փորձեց օգտվել Անգլիան, որպեսզի վերջնականապես իր տիրապետությունը հաստատի Իրանում:

Անգլիական զորքերը 1918թ. գրավեցին Իրանի հյուսիսարևմտյան մասը: Անգլիացիների օգնությամբ իշխանության գլուխ եկավ **Վոսուղ էդ-Դոուլեի** կառավարությունը: Նա 1918թ. օգոստոսի 9-ին Անգլիայի հետ ստորագրեց մի պայմանագիր, որով անգլիացիներն իրենց վերահսկողությունը հաստատեցին Իրանի ֆինանսների, բանակի, արտաքին առևտրի և կենսականորեն անհրաժեշտ այլ ոլորտների վրա:

Իրանի նոր կառավարությունը գործիք էր անգլիացիների ձեռքում և ծառայում էր բրիտանական իմպերիալիզմի դիրքերի ամրապնդմանը ոչ միայն Իրանում, այլև մերձավորարևելյան ամբողջ տարածաշրջանում: Նրա քաղաքականության մեջ ցայտունորեն դրսևորվեց թշնամական դիրքորոշումը Խորհրդային Ռուսաստանի նկատմամբ: Ռուսաստանը, թեկուզ խորհրդային, շարունակում էր մնալ Մեծ Բրիտանիայի ավանդական մրցակիցը տարածաշրջանում: Վոսուղ էդ-Դոուլեի կառավարության թողտվությամբ, 1918թ. նոյեմբերին, մոլագար ամբոխը հիմնահատակ արեց խորհրդային դիվանագիտական ներկայացուցչության շենքը, իսկ 1919թ. հուլիսին սպանվեց ներկայացուցչության ղեկավար Ի. Կոլոմիյցևը:

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՎԵՐԵԼԲԸ

Այսպիսի պայմաններում ազատագրական պայքարի նոր ալիք բարձրացավ Իրանում:

Առաջինն ապստամբեց **Թավրիզը**, 1920թ. ապրիլին: Ապստամբները պահանջում էին չեղյալ հայտարարել 1918թ. անգլո-իրանական անիրավահավասար պայմա-

նագիրը, ամրապնդել երկրի անկախությունը, Իրանը հռչակել հանրապետություն: Նրանք Թավրիզից արտաքսեցին շահի կողմից նշանակված նահանգապետին և իշխանությունը վերցրին իրենց ձեռքը: 1920թ. սեպտեմբերին շահական զորքերը և անգլիացիները կարողացան ճնշել ապստամբությունը:

Ազատագրական շարժում էր սկսվել նաև Իրանի հյուսիսային մեկ այլ նահանգում՝ **Գիլանում**: Ապստամբները կազմեցին ժամանակավոր կառավարություն՝ **Քուչիկ** խանի գլխավորությամբ: Վերջինս 1920թ. հունիսի 5-ին Գիլանը հռչակեց հանրապետություն:

Հաջորդ տարի ապստամբությունը տարածվեց նաև Խորասանում:

Միաժամանակ Թեհրանում և երկրի այլ վայրերում ակտիվացած դեմոկրատական ուժերի պայքարը հանգեցրեց անգլիական դրածո Վոսուղ էդ-Դոուլեի կառավարության անկմանը:

Պարսկական կազակային զորքերի մի խումբ սպաներ, փոխգնդապետ **Ռեզա խանի** գլխավորությամբ, **1921թ. փետրվարի 21-ին** կատարեցին պետական հեղաշրջում: Նոր կառավարության մեջ Ռեզա խանը զբաղեցրեց զինվորական նախարարի պաշտոնը: Այդ կառավարությունը, ժողովրդի աջակցությունը շահելու համար, չեղյալ հայտարարեց անգլո-իրանական պայմանագիրը:

1921 Թ. ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ԻՐԱՆԻ ՄԻՋԵՎ

1921թ. փետրվարի 26-ին Մոսկվայում ստորագրվեց ռուս-իրանական պայմանագիր: Կառավարությունը դիմեց այդ քայլին, որովհետև դրանում շահագրգռված էին իրանական առևտրաարդյունաբերական ամենալայն շրջանակները: Խորհրդային Ռուսաստանի հետ հարաբերությունների խզման հետևանքով նրանք զրկվել էին վաճառահանման շուկաներից, հումքի և արդյունաբերական ապրանքների կարևոր աղբյուրից:

Ըստ այդ պայմանագրի՝ խորհրդային կառավարությունը հրաժարվում էր ցարիզմի կնքած բոլոր անիրավահավասար պայմանագրերից և Իրանի ինքնիշխանությունը ոտնահարող քաղաքական գործողություններից: Իրանը պարտավորվում էր թույլ չտալ որևէ երրորդ պետության իր տարածքն օգտագործելու ընդդեմ Ռուսաստանի: **Պայմանագրի 6-րդ հոդվածով** Խորհրդային Ռուսաստանն իրավունք էր ձեռք բերում իր զորքերը մտցնել Իրան, եթե նրա տարածքը վերածվեր «Ռուսաստանի դեմ ռազմական ելույթների հենակայանի» և եթե Իրանն ի վիճակի չլիներ կանխելու այդ վտանգը:

ՓԱՀԼԱՎԻՆԵՐԻ ԴԻՆԱՍՏԻԱՅԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Ռեզա խանը ձեռնարկեց մի շարք քայլեր իր դիրքերն ամրապնդելու ուղղությամբ: Ստեղծվեց միասնական կենտրոնացված բանակ, զինաթափվեցին խոշոր ֆեոդալների և խաների զինված խմբերը:

Ռեզա խանի հետ մեծ հույսեր էին կապում Իրանի կալվածատերերի, խոշոր վաճառականների և բուրժուազիայի ամենահետադիմական խավերը, որոնք «ուժեղ ձեռքի» կարիք էին զգում: Իր վճռական գործողությունների շնորհիվ Ռեզա խանը ձեռք բերեց նման մարդու համբավ: 1923թ. հոկտեմբերին նա արդեն Իրանի վարչապետն էր՝ օժտված ամենալայն լիազորություններով: Շուտով նա նշանակվեց Իրանի ռազմական ուժերի գլխավոր հրամանատար և դարձավ երկրի փաստական տիրակալը:

1925թ. հոկտեմբերի 31-ին Իրանի մեջլիսը՝ պառլամենտը, Ղաջարիների դինաստիան հայտարարեց տապալված: Իրանի Սահմանադիր ժողովը կատարեց վերջին ձևական գործողությունը՝ Ռեզա խանին հռչակեց **Իրանի շահնշահ**: Նա ստացավ **Ռեզա շահ Փահլավի** անվանումը: Իրանում հաստատվեց **Փահլավիների դինաստիան**:

ՌԵԶԱ ՇԱՀԻ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ռեզա շահն ընդունեց մի շարք օրենքներ, որոնցով ամրապնդվեցին նրա իշխանությունը և նորահաստատ դինաստիան: Դրանցից են՝ քրեական և քաղաքացիական օրենսգրքերը, հողերի բռնագրավման, գյուղացիական շարժումների դեմ ուղղված և պետական հողերի վաճառքի վերաբերյալ օրենքները:

Մուհամմադ Ռեզա Փահլավի
(1919-1980)
Իրանի շահ 1941-1979թթ.

Նա հողի մեծ մասը թողեց կալվածատերերի ձեռքում և դրանով իր համար հուսալի սոցիալական հենարան ապահովեց: Շահն ինքը դարձավ Իրանի ամենախոշոր հողատերը. նրան էր պատկանում մի քանի հազար գյուղ:

Ռեզա շահը 1928թ. չեղյալ համարեց կապիտուլյացիաների ռեժիմը, հիմնեց Իրանի Ազգային բանկը, որն ստացավ նաև դրամահատման իրավունք:

Ռեզա շահի կիրառած նորամուծությունների մեջ հիշատակության են արժանի մշակույթի և, մասնավորապես, կրթության բնագավառում 1920–30-ական թվականներին կատարված բարեփոխումները: Դրանց մեջ պետք է առանձնացնել աշխարհիկ և իգական դպրոցների հիմնումը, չադրաների պարտադիր վերացման մասին որոշումը և այլն: Մտցվեց եվրոպական հագուստ, արևային տոմար, վերացվեցին ֆեոդալական տիտղոսները և շրջանառության մեջ դրվեցին ազգանունները: Սահմանափակվեց մուսուլման հոգևորականության միջամտությունը երկրի հասարակական-քաղաքական կյանքին:

Այդուհանդերձ, **շահական վարչակարգը բռնապետական բնույթ ուներ**: Այն խստորեն պատժում էր անհնազանդության ամեն մի դրսևորում:

Ծանր էր Իրանի բանվոր դասակարգի դրությունը: Չկար աշխատանքի պահպանման և սոցիալական ապահովագրության օրենսդրություն, չափազանց ցածր էր աշխատավարձը: Արգելվեցին արհմիություններն ու ընդդիմադիր կուսակցությունները, սահմանափակվեցին քաղաքական և այլ ազատություններ:

Տեղաշարժեր կատարվեցին նաև Իրանի արտաքին քաղաքականության բնագավառում: Բարելավվեցին հարաբերությունները Անգլիայի հետ. դա արտահայտվեց Անգլո-իրանական նավթային ընկերության հետ նոր պայմանագրի կնքմամբ (1933թ.):

Ակնհայտորեն վատացան իրանա-խորհրդային հարաբերությունները: Ռեզա շահը 1938թ. նույնիսկ հրաժարվեց վերանայել իրանա-խորհրդային առևտրական համաձայնագիրը:

Դրա փոխարեն շահը սկսեց բացահայտորեն մերձենալ ֆաշիստական Գերմանիայի հետ: Գերմանական ֆիրմաները վերահսկողություն սահմանեցին Իրանի ռազմական գործարանների վրա, իրավունք ստացան Իրանում կառուցել օդանավակայաններ և իրանական բանակին մատակարարել զենք ու զինամթերք:

Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբում Իրանը պաշտոնապես չեզոք դիրք գրավեց: Նրա կառավարությունն իր չեզոքության մասին կրկին հայտարարեց, երբ 1941թ. հունիսի 22-ին Գերմանիան հարձակվեց ԽՍՀՄ-ի վրա: Սակայն գերմանական ֆաշիստները կարողացան պահպանել իրենց դիրքերն Իրանում:

Խորհրդային կառավարությունը համարեց, որ ֆաշիստական վտանգ է ստեղծվել Իրանի և իր երկրի հարավային սահմանների համար: 1921թ. իրանա-խորհրդային պայմանագրի 6-րդ հոդվածի համաձայն՝ 1941թ. օգոստոսի 25-ին իր զորքերը մտցրեց Հյուսիսային Իրան: Նույն օրն Անգլիան իր զորքերը մտցրեց Հարավային Իրան:

Իրանի շահ Ռեզան հարկադրված էր հրաժարվել գահից և հեռանալ երկրից: Նրան փոխարինեց որդին՝ Մուհամմադ Ռեզա Փահլավին:

Իրանը դարձավ կարևոր հենակայան՝ պատերազմի տարիներին դաշնակիցների կողմից ԽՍՀՄ-ին ռազմական և տնտեսական օգնություն ցույց տալու գործում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ինչո՞ւ տապալվեց անգլիական դրածո Վոսուղ էդ-Դոուլեի կառավարությունը:*
2. *Ի՞նչ դեր խաղաց ազատագրական պայքարը Իրանի ներքաղաքական կյանքում:*
3. *Ձեր կարծիքով դրակա՞ն, թե՞ բացասական նշանակություն ունեցավ Իրանի համար խորհրդային Ռուսաստանի հետ պայմանագրի կնքումը:*
4. *Ներկայացրե՛ք Փահլավիների դինաստիայի առաջին շահի վարած ներքին և արտաքին քաղաքականությունը:*

Գլուխ 6 ՉԻՆԱՍՏԱՆԸ ԵՎ ՀՆԴԿԱՍՏԱՆԸ ԵՐԿՈՒ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԵՐԻ ՄԻՋԵՎ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

դաս 20

ՉԻՆԱՍՏԱՆԸ 1918-1927 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ՄԱՅԻՍԻ 4-Ի ՇԱՐԺՈՒՄԸ: ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ

Չինաստանի պետական–քաղաքական կյանքի բնորոշ գիծը կենտրոնական իշխանության թուլացումն էր և տեղերում զանազան ռազմական խմբավորումների ուժեղացումը: Նրանց միջև պայքար էր ընթանում իշխանության համար: Դրությունը բարդանում էր նրանով, որ Չինաստանի ներքին գործերին միջամտում էին օտարերկրյա պետությունները՝ Անգլիան, Ճապոնիան և ԱՄՆ–ը: Հիշյալ տերությունները օժանդակում էին չինական տեղական այս կամ այն խմբավորմանը:

Ժողովրդի վիճակը շատ ծանր էր: Գյուղացիությունը տառապում էր հողազրկությունից և հողի վարձակալման դաժան պայմաններից: Սակավաթիվ և նոր ձևավորվող բանվոր դասակարգը գտնվում էր սոցիալ–տնտեսական ծանր վիճակում:

Սոցիալ–տնտեսական ծանր դրությունը և օտարերկրյա միջամտությունը պատճառ հանդիսացան չինական աշխատավորության լայն խավերի քաղաքական և հակաիմպերիալիստական ելույթների համար: Հատկապես նշանավոր էր **1919թ. մայիսի 4–ին** Պեկինում սկսված **հակաիմպերիալիստական շարժումը**: Այն ուղղված էր գերմանական նախկին գաղութ Շանդունի նահանգը Ճապոնիային հանձնելու վերաբերյալ Փարիզի խորհրդաժողովի որոշման դեմ: «Մայիսի 4–ի» շարժումն ուղղված էր նաև Պեկինի կառավարության դեմ, որն ապազգային քաղաքականություն էր վարում: Շարժումը տարածվեց դեպի Շանհայ և Չինաստանի այլ քաղաքներ ու նահանգներ: **Չինաստանի կառավարությունը ստիպված էր հրաժարվել Վերսալի հաշտության պայմանագիրը ստորագրելուց:**

Դեմոկրատական և ազգային–ազատագրական ելույթները շարունակվեցին նաև 1920–ական թվականներին: Հաճախակի այդ ելույթներն ընդունում էին գործադուլների ձև:

Չինաստանում ձևավորվեց երկու կարևոր քաղաքական կենտրոն: **Մեկը հյուսիսում՝ Պեկինում գտնվող կառավարությունը,** որը մեծապես կախված էր օտարերկրյա ուժերից և վարում էր կոշտ քաղաքականություն իր հսկողության տակ գտնվող տարածքներում: **Մյուսը հարավում՝ Գուանչժոուում գտնվող կառավարությունը,** որը 1923թ. գլխավորեց **չին մեծ դեմոկրատ Սուն Յաթսենը**:

Դեռևս 1912թ. Սուն Յաթսենը Չինաստանը հռչակել էր հանրապետություն: Այնուհետև նա հիմնեց **Գոմինդան ազգայնական կուսակցությունը**, որը հետագայում մեծ դեր խաղաց Չինաստանի պետական և քաղաքական կյանքում: Հարկադրված հեռանալով Չինաստանից՝ Սուն Յաթսենը 1917թ. կրկին վերադարձավ հայրենիք: Նա փորձեց Չինաստանում հաստատել ուժեղ կենտրոնական կառավարություն, վերակառուցել Գոմինդանը և Չինաստանը տանել

Չին նշանավոր հեղափոխական-դեմոկրատ, 1912թ. ստեղծված Գոմինդան կուսակցության ղեկավարը: 1923-1925թթ. գլխավորել է Հարավային Չինաստանի կառավարությունը:

Սուն Յաթսեն
(1866-1925)

դեմոկրատիայի ու տնտեսական բարգավաճման ուղիով:

Նա առաջ քաշեց **երեք սկզբունքներ**, որոնք մեծ ներգործություն ունեցան Չինաստանի քաղաքական կյանքի վրա: Առաջին՝ **«նացիոնալիզմ»**, որ ենթադրում էր Չինաստանում բնակվող բոլոր ազգությունների ազատություն և իրավահավասարություն: Երկրորդ՝ **«ժողովրդապետություն»**, որի տակ հասկացվում էր պայքար դեմոկրատական հանրապետության ստեղծման համար: Երրորդ՝ **«ժողովրդական բարօրություն»**: Սուն Յաթսենը ձգտում էր ժողովրդական բարօրության հասնել խոշոր ձեռնարկությունների, բանկերի և տրանսպորտի ազգայնացման, հողի նկատմամբ չինացիների իրավունքների հավասարեցման և սոցիալական արդարության հաստատման ուղիով:

Հետագայում արդիականացնելով իր «երեք սկզբունքները»՝ Սուն Յաթսենը շեշտում էր ԽՍՀՄ-ի և Չինաստանի կոմունիստական կուսակցության հետ դաշինքի հաստատման և բանվորների ու գյուղացիների շահերի պաշտպանության անհրաժեշտությունը: Ելնելով այդ սկզբունքից՝ Սուն Յաթսենի կառավարությունը բարեկամական կապեր հաստատեց ԽՍՀՄ-ի հետ՝ ստանալով նրանից բազմակողմանի օժանդակություն: Իսկ 1924թ. ստեղծվեց **միասնական ճակատ** ՉԿԿ-ի և Գոմինդանի միջև:

Սակայն հարաբերությունները մնում էին լարված ԽՍՀՄ-ի և Պեկինի կառավարության միջև: Վերջինս փաստորեն Չինաստանի կենտրոնական կառավարությունն էր: Ի վերջո, Պեկինի կառավարությունը նույնպես փոխեց իր դիրքորոշումը և 1924թ. մայիսի 31-ին խորհրդային կառավարության հետ համաձայնագիր ստորագրեց: Դրանով երկու պետությունների միջև հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ:

1925-1927 թթ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Շանհայի բնակիչները **1925թ. մայիսի 30-ին** ցույց կազմակերպեցին քաղաքի օտարերկրացիներով բնակեցված հատվածում՝ Սեթլմենթում: Սեթլմենթը վերահսկող անգլիական ոստիկանությունը ցրեց այդ ցույցը, որի ընթացքում եղան բազմաթիվ զոհեր ու վիրավորներ:

Մայիսյան դեպքերը ալեկոծեցին ողջ Չինաստանը և **նշանավորեցին հեղափոխության սկիզբը երկրում**: Իր բնույթով այն **հակաիմպերիալիստական, ազգային-ազատագրական, բուրժուադեմոկրատական հեղափոխություն էր**:

Հեղափոխության կենտրոնը Գուանչժոուում հաստատված ազգային-հայրենասիրական կառավարությունն էր: Այն 1925թ. հուլիսի 1-ին իրեն հայտարարեց **Ազգային կառավարություն**: Նա հենվում էր Գոմինդանի հայրենասիրական թևի, կոմունիստական կուսակցության և հեղափոխական արհմիությունների միացյալ ճակատի վրա:

Դեռ հեղափոխությունից առաջ կազմավորված Ժողովրդահեղափոխական բանակը (ԺՀԲ) 1926 թվականին ազատագրեց Գուանսի, Գուիչժոու և Հունան նահանգները: Նույն թվականին սկսվեց ԺՀԲ-ի հայտնի Հյուսիսային արշավանքը: Նրա նպատակն էր գրավել նորանոր նահանգներ և ամբողջ Չինաստանում հաստատել Ազգային կառավարության իշխանությունը: Շատ վայրերում ժողովրդական զանգվածները, չսպասելով ԺՀԲ-ի զորամասերի մոտենալուն, ապստամբում էին և հաստատում հեղափոխական իշխանություն: Այսպես, օրինակ, 1927թ. մարտին նրանք ապստամբեցին և ազատագրեցին Շանհայը: Հեղափոխության ալիքը տարածվեց ամենուր, և 1927թ. ազատագրվեց Չինաստանի ամենակարևոր կենտրոններից մեկը՝ **Նանկինը:**

Այս հաջողությունները խորապես անհանգստացրեցին օտարերկրյա պետություններին և ներքին հետադիմական ուժերին, որոնք դիմեցին ակտիվ հակազդեցությունների:

1927թ. մարտին ամերիկյան և անգլիական ռազմանավերը ռմբակոծեցին Նանկինը: Հեղափոխության ալիքից սարսափած՝ ազգային բուրժուազիան դադարեց պաշտպանել Ազգային կառավարությանը: Այս բոլորի տրամաբանական շարունակությունը եղավ Գոմինդանի աջ թևի հակահեղափոխական հեղաշրջումը Շանհայում և Նանկինում՝

1927թ. ապրիլին: Հեղաշրջումն իրականացրեց **ԺՀԲ–ի գլխավոր հրամանատար Չան Կայշին**: Նա հենվում էր օտարերկրյա իմպերիալիստական ուժերի աջակցության վրա:

1927թ. հուլիսին ընկավ նաև **հեղափոխության վերջին օջախը՝ Ուհանը**:

Չան Կայշին սկզբնական շրջանում որոշ քայլեր ձեռնարկեց երկրի տնտեսական զարգացումը խթանելու համար: Կառուցվեցին նոր ճանապարհներ, երկաթուղիներ, դպրոցներ և այլն: Բայց դրանք էական փոփոխություն չմտցրեցին ժողովրդի սոցիալ–տնտեսական դրության մեջ: Հատկապես ծանր էր գյուղացիության վիճակը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ո՞ւմ դեմ էր ուղղված «Մայիսի 4–ի» շարժումը:*
2. *Պարզաբանե՛ք Սուն Յաթսենի հռչակած երեք սկզբունքների էությունը:*
3. *Տվե՛ք 1920–ական թվականների Չինաստանի ներքաղաքական պայքարի ընդհանուր բնութագիրը:*
4. *Ի՞նչ բնույթ ուներ 1925-1927թթ. չինական հեղափոխությունը:*
5. *Ինչպիսի՞ ավարտ ունեցավ չինական հեղափոխությունը: Ինչո՞ւ Չան Կայշին հաջողվեց գալ իշխանության գլուխ:*

դաս 21

ՉԻՆԱՍՏԱՆԸ ԵՎ ՃԱՊՈՆԻԱՅԻ ԾԱՎԱԼԱՊԱՇՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՔԱՂԱՔԱՅԻՍԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ

Չան Կայշին աստիճանաբար իր իշխանությունը տարածեց ամբողջ Չինաստանի վրա: Նրա զորքերը գրավեցին Պեկինը, Շանհայը և Չինաստանի այլ կարևոր կենտրոններ: **1928թ.** ԱՄՆ–ը և արևմտյան մյուս տերությունները պաշտոնապես **ճանաչեցին Չան Կայշիի գլխավորած Գոմինդանի կառավարությունը**: Սակայն նա չկարողացավ ստեղծել կայուն վարչակարգ: Անընդհատ ռազմական ընդհարումներ էին տեղի ունենում Չան Կայշիի և նրա իշխանությունը ձևականորեն «ճանաչած» տեղական իշխանավորների միջև:

Այդպիսի ընդհարումներ էին տեղի ունենում նաև կոմունիստների կողմից կառավարվող խորհրդային շրջանների հետ, որոնք ստեղծվել էին Չինաստանի տարբեր նահանգներում: Չինաստանի բնակչության զգալի մասը, հատկապես գյուղացիները և մտավորականները, պաշտպանում էին կոմունիստական կուսակցությանը: Այն իրենից մեծ ուժ էր ներկայացնում: Նրա ղեկավարն էր **Մաո Ցզեդունը**: Սկզբնական շրջանում կոմունիստներն աջակցում էին Չան Կայշիին՝ տեղական ռազմական իշխանավորների դեմ մղվող պայքարում: Նրանք դրական էին համարում Չինաստանում կենտրոնական ուժեղ իշխանության ստեղծումը:

Սակայն Չան Կայշին 1927թ. իր հարվածն ուղղեց կոմունիստների և նրանց ռազմական ուժերի դեմ: Գոմինդանականները Շանհայում, Գուանչժոուում և այլ վայրերում սպանեցին տասնյակ հազարավոր կոմունիստների ու նրանց համակիրների: Կոմունիստական ուժերը հարկադրված տեղափոխվեցին երկրի հարավի լեռնային շրջանները, որտեղ ստեղծեցին **Կարմիր բանակ**: Իրենց հսկողության տակ գտնվող վայրերում նրանք հարուստների հողերը բաժանեցին գյուղացիներին, բարելավեցին ժողովրդի կենսամակարդակը: Այդ քայլերը զգալի չափով բարձրացրեցին կոմունիստների հեղինակությունը:

Չան Կայշին որոշեց գրավել չինական Կարմիր բանակի հսկողության տակ գտնվող շրջանները: Նա 1930–ական թվականների սկզբներին հարձակողական գործողություններ իրականացրեց նրանց դեմ: Չինական Կարմիր բանակը, Մաո Ցզեդունի գլխավորությամբ, 1934թ. կտրելով մոտ 10 հազար կմ, տեղափոխվեց երկրի հյուսիս: Դա հայտնի է **«Մեծ երթ»** անունով: Երթին մասնակցած 100 հազար զինվորներից 1935թ. Չինաստանի հյուսիսային շրջաններ հասավ միայն 8 հազար մարդ:

Այսպիսով՝ Չինաստանում 1920–ական թվականների կեսերից ընթանում էր յուրա-

տեսակ **քաղաքացիական պատերազմ:** Նման իրադրությունից օգտվեցին ճապոնական զավթիչները:

ՃԱՊՈՆԻԱՅԻ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ՉԻՆԱՍՏԱՆ: ՊԱՅՔԱՐ ՃԱՊՈՆԱԿԱՆ ԶԱՎԹԻՉՆԵՐԻ ԴԵՄ

Ճապոնական զորքերը **1931թ. սեպտեմբերին ներխուժեցին Չինաստան**, գրավեցին նրա հյուսիսարևելյան հատվածը և ստեղծեցին Մանչժոու-գո խամաճիկ պետությունը: Այն ամբողջապես կախման մեջ էր գտնվում Ճապոնիայից: Չինաստանում լայն շարժում սկսվեց ճապոնական ագրեսորների դեմ: Հաճախակի դարձան գործադուլները, միտինգները և ցույցերը:

Չինաստանի ժողովուրդը պահանջում էր կառավարությունից վճռական քայլերի դիմել և կազմակերպել համաժողովրդական դիմադրություն: Սակայն Չան Կայշին որդեգրեց ագրեսորին չդիմակայելու քաղաքականություն՝ հույսը դնելով Ազգերի լիգայի վրա: Բայց լիգան ոչինչ չձեռնարկեց Չինաստանին օգնելու համար, և ճապոնական զորքերը 1932–33թթ. նոր տարածքներ գրավեցին: **1933թ. մայիսին Տանգուում** ստորագրված պայմանագրով չինական կառավարությունը ճանաչեց Հյուսիսարևելյան Չինաստանի բռնակցումը Ճապոնիային:

Տարածքային նոր կորուստները պատճառ հանդիսացան 1935թ. զանգվածային շարժման համար: Այդ շարժումը, որը դրսևորվում էր ցույցերի, քաղաքական գործադուլների, բողոքի միտինգների ձևով, մի կողմից՝ ուղղված էր ճապոնական ագրեսորների, իսկ մյուս կողմից՝ Չան Կայշիի պարտվողական քաղաքականության դեմ:

Ուսանողները, բանվորները, հայրենասիրական բոլոր խավերը ձեռնամուխ եղան **«Հայրենիքի փրկության միությունների»** կազմավորմանը: Դրանց հիման վրա **1936թ.** ձևավորվեց **«Ազգային փրկության համաչինական ասոցիացիա»**:

Դժգոհությունը համակել էր նաև Գոմինդան կուսակցության շարքերը: Հայրենասիրաբար տրամադրված գոմինդանական զինվորականները 1936թ. դեկտեմբերի 12-ին ձերբակալեցին Չան Կայշիին: Սկիզբ առավ

Ճապոնական զինվորները Չինաստանում, 1931 թ. դեկտեմբեր

լուրջ քաղաքական ճգնաժամ:

Ճգնաժամից դուրս գալու համար իր միջնորդությունն առաջարկեց Չինաստանի կոմունիստական կուսակցությունը, գիտակցելով այն փաստը, որ քաղաքացիական նոր պատերազմի բռնկումն օգուտ կբերի միայն Ճապոնիային: Կողմերը համաձայնության եկան, որ Չան Կայշին վերջ կտա Չինաստանի Կարմիր բանակի դեմ մղվող պատերազմին և կոմունիստական կուսակցության հետ միասին կկազմակերպի չին ժողովրդի համազգային պայքարն ընդդեմ ճապոնական ագրեսորների: Այս պայմանների հիման վրա Չան Կայշին ազատ արձակվեց:

1937թ. Ճապոնիան վերսկսեց իր ագրեսիվ գործողությունները: Եթե 1931թվականի պատերազմական գործողությունների նպատակը Հյուսիսարևելյան Չինաստանի զավթումն էր, ապա նոր ագրեսիայի նպատակը ամբողջ Չինաստանի գրավումն էր: Գոմինդանական զորքերն ի վիճակի չեղան լուրջ դիմադրություն ցույց տալու: Ճապոնացիները մինչև 1939թ. գրավեցին հսկայական տարածքներ, այդ թվում՝ Չինաստանի կարևոր կենտրոններ Պեկինը, Շանհայը, Տյանցզինը և այլն: Չան Կայշին ստիպված էր նահանջել երկրի խորքը:

Ճապոնիան գործում էր անպատիժ կերպով՝ վայելելով ֆաշիստական Գերմանիայի և Իտալիայի աջակցությունը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Կարո՞ղ եք հիմնավորել, որ Չինաստանում 1920-ական թվականների վերջից կոմունիստական կուսակցությունը հզոր ուժ էր իրենից ներկայացնում: Ո՞վ էր ղեկավարում կոմկուսը:*
2. *Վերհիշե՛ք, թե ինչ է քաղաքացիական պատերազմը: Ինչպիսի՞ ազդեցություն ունեցավ այն Չինաստանի ներքին կյանքում:*
3. *Հիմնավորե՛ք, որ Ճապոնիան հանդիսանում էր ագրեսոր: Ճապոնիան ներխուժեց Չինաստան՝ ա) 1928թ., բ) 1930թ., գ) 1933թ., դ) 1931թ.: Նշե՛ք ճիշտ պատասխանը:*
4. *Ձեր կարծիքով ինչո՞ւ հնարավոր եղավ Չինաստանի ներքին հակադիր ուժերի միջև միասնական ճակատի ձևավորումը:*

դաս 22

ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՎԵՐԵԼԸ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ

ԵՐԿՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

Առաջին համաշխարհային պատերազմում նշանակալի էր Հնդկաստանի ներդրումը Մեծ Բրիտանիայի և, ընդհանրապես, Անտանտի հաղթանակի գործում: Մոտ մեկ միլիոն հնդիկ զինվորներ մասնակցեցին ռազմական գործողություններին: Ինչպես այդ ժամանակ ընդունված էր ասել՝ «հնդկական ցորենը կերակրեց դաշնակիցների զորքերին, իսկ հնդկական բամբակն ապահովեց նրանց հագուստով»:

Մեծ Բրիտանիան խոստացավ Հնդկաստանին, նրա մեծ ծառայությունների դիմաց, տրամադրել **ինքնակառավարման կարգավիճակ**: Սակայն պատերազմի ավարտից հետո Հնդկաստանը շարունակեց մնալ որպես գաղութային երկիր: Նախկինի պես Հնդկաստանը կառավարվում էր անգլիական գաղութարարների կողմից, որոնց ձեռքում էր կենտրոնացված ամբողջ իշխանությունը:

Պատերազմը ծանր հարված հասցրեց երկրի տնտեսությանը, որն ավելի խորացավ 1919–1921թթ. երաշտի պատճառով: Խիստ կրճատվեց սննդամթերքի արտադրությունը, ընկավ բնակչության կենսամակարդակը, իսկ առանձին նահանգներում սով սկսվեց: Իրենց վիճակի բարելավմանն ուղղված ժողովրդական զանգվածների պայքարը միաձուլվեց անգլիական գաղութարարների դեմ մղվող ազատագրական պայքարին:

ՄԱՀԱԹՄԱ ԳԱՆԴԻՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Իր գործունեությունն ակտիվացրեց դեռևս 1885թ. հիմնված **Ազգային Կոնգրես կուսակցությունը:** Այն երկրի ամենաազդեցիկ քաղաքական կազմակերպությունն էր: Պատերազմից հետո նրա ղեկավարը դարձավ **Մահաթմա Գանդին**: Նա մեծ հեղինակություն էր վայելում Հնդկաստանում և Արևելքի բազմաթիվ երկրներում:

Ազգային Կոնգրեսի գործունեության հիմքում դրվեց Գանդիի կողմից ձևակերպված **«սաթյագրահայի»**՝ ոչ բռնի դիմադրության սկզբունքը: Այն կազմում է **գանդիզմի** էությունը: Այդ տեսությունը մերժում է **ուժային,** այդ թվում նաև՝ **զինված պայքարի մեթոդները** և ընդունում պայքարի միայն **խաղաղ ձևեր՝ քաղաքացիական անհնազանդություն, ցույցեր, գործադուլներ, հացադուլներ** և այլն:

Ակտիվացան նաև իսլամ դավանող հնդիկները և նրանց առաջատար կազմակերպությունը՝ **Մուսուլմանական լիգան**:

Հնդկաստանի երկու կարևոր ուժերը՝ Ազգային Կոնգրեսը և Մուսուլմանական լիգան, չէին վստահում միմյանց: Դրանք գործում էին անջատ-անջատ, որը ձեռնտու էր բրիտանական գաղութարարներին: Վերջիններս, ղեկավարվելով «բաժանի՛ր, որ տի՛ր» սկզբունքով, թշնամություն էին հրահրում հինդուսների և մուսուլմանների միջև՝ ջլատելով հակաիմպերիալիստական ուժերի շարքերը:

Այդուհանդերձ, անգլիացիները հարկադրված էին կիրառել որոշ «բարեփոխումներ»: Սակայն դա ոչնչով չփոխեց Հնդկաստանի գաղութային կարգավիճակը և առաջացրեց հնդիկների զայրույթը առավել ևս այն բանից հետո, երբ 1919թ. ընդունվեց

«Ռոուլետի օրենքը»: Ըստ այդ օրենքի՝ բրիտանական իշխանությունները կարող էին առանց պատճառի ձերբակալել ընդդիմադիրներին և առանց դատի բանտարկել: Ազգային Կոնգրեսը, Մ. Գանդիի գլխավորությամբ, ղեկավարեց Ռոուլետի օրենքի դեմ ուղղված հնդիկների հզոր ցույցերը, որոնք տեղի ունեցան 1919թ.: Հետագա տարիներին նման ցույցերը շարունակվեցին Բենգալիայում, Փենջաբում, Մադրասում և այլ շրջաններում:

Ամբողջ Հնդկաստանը ցնցվեց **1919թ. ապրիլին** Փենջաբի նահանգի **Ամրիտսար** քաղաքում տեղի ունեցած արյունալի դեպքերից: Մոտ 10 հազար հնդիկներ հավաքվել էին քաղաքական միտինգի: Բրիտանական զորքերը շրջապատեցին նրանց և կրակ բացեցին. արդյունքում՝ զոհվեց 400 ու վիրավորվեց 1200 մարդ: Ամրիտսարում տեղի ունեցած արյունալի դեպքերից հետո, անկախության լոզունգի ներքո, Գանդին որոշեց դիմել **քաղաքացիական անհնազանդության**:

Հուզումները համակել էին նաև Հնդկաստանի գյուղացիությանը և սոցիալական այլ խավերին: Հնդիկների հակաանգլիական ելույթները դաժանորեն ճնշվում էին գաղութարարների կողմից: Շատ հայրենասերներ ձերբակալվում և բանտ էին նետվում:

Սակայն պայքարը չէր դադարում: Կազմակերպվեցին բանվորական արհմիություններ, իսկ **1925թ. հիմնվեց Հնդկաստանի կոմունիստական կուսակցությունը**: Զգալի տեղաշարժեր կատարվեցին նաև Ազգային Կոնգրեսի ներսում այն բանից հետո, երբ 1922թ. ձերբակալվեց Մահաթմա Գանդին: Բրիտանական իշխանությունները նրան բանտում պահեցին մինչև 1930թ.: Այդ ընթացքում Ազգային Կոնգրեսում ձևավորվեց, այսպես կոչված, ձախ թևը՝ **Ջավահարլալ Ներուի** գլխավորությամբ: Ներուն կողմնակից էր ավելի ակտիվ գործողությունների՝ ընդդեմ անգլիական գաղութային տիրապետության:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ 1935Թ. ՕՐԵՆՔԸ

1929–1933թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամը մի կողմից՝ հարվածեց Հնդկաստանի տնտեսությանը, իսկ մյուս կողմից՝ խթանեց հակաիմպերիալիստական պայքարը: Կրկին աշխուժացան բանվորական և արհմիութենական շարժումները: **1930թ. Մահաթմա Գանդին քաղաքացիական անհնազանդության կոչ արեց**, որը լայն պաշտպանություն գտավ միլիոնավոր հնդիկների կողմից: Քաղաքացիական անհնազանդության այս նոր փուլը, որ փոքր ընդմիջումներով **տևեց մինչև 1934թ.**, շատ վայրերում ուղեկցվում էր զինված ելույթներով: Շարժման ակտիվ մասնակից դարձավ նաև գյուղացիությունը:

Համահնդկական հզոր շարժումը ստիպեց անգլիական իշխանություններին կրկին գնալ որոշ զիջումների: **1935թ.** Մեծ Բրիտանիայի պառլամենտն ընդունեց **օրենք Հնդկաստանի կառավարման մասին**: Նոր օրենքով Հնդկաստանի նահանգներում ստեղծվում էին տեղական կառավարություններ, որոնք պատասխանատու էին նահանգային օրենսդիր ժողովների առջև: Նրանց իրավասության տակ անցան գյուղատնտեսության, կրթության, բժշկության և հանրային աշխատանքների հետ կապված հարցերը: Ստեղծվեցին ընտրական **կուրիաներ**: Սակայն դրանք կազմավորվում էին ոչ թե տեղաբնակության քաղաքացիական սկզբունքի, այլ կրոնական սկզբունքի հիման վրա, ինչը անխուսափելիորեն լարվածություն և անջատողականություն էր ստեղծում:

Մահաթմա Գանդի (1969-1948)

Հնդկական ազատագրական շարժման նշանավոր գործիչ. Սկզբ գաղութարարական առաջնորդը և դեկավարներից մեկը, անկախ Հնդկաստանի առաջին վարչապետը

Նոր օրենքը թեև առաջին հայացքից ինչ–որ չափով ընդլայնում էր նահանգների իրավունքները, սակայն, իրականում **փաստացի կառավարումը շարունակում էր մնալ անգլիական իշխանությունների ձեռքին**, այդ պատճառով այն կոչվեց «ստրկական սահմանադրություն»:

Հնդկաստանի ընդդիմադիր քաղաքական ուժերը մերժողական դիրքորոշում հանդես բերեցին այդ օրենքի նկատմամբ: Բացասական դիրք գրավեց նաև Ազգային Կոնգրեսը:

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՃԱԿԱՏԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Ազգային Կոնգրես կուսակցությունը 1936թ. առաջադրեց բոլոր ընդդիմադիր, հակաբրիտանական ուժերը միավորելու և միասնական ճակատ ստեղծելու քաղաքական կարևոր խնդիրը: Դա մի առաջընթաց քայլ էր ազգային–ազատագրական պայքարի գործում: Այն զուգորդվեց նաև արհմիությունների միավորմամբ: Այս բոլորի շնորհիվ ամրապնդվեց **Հակաբրիտանական ազգային–ազատագրական ճակատը** Հնդկաստանում:

Հակաբրիտանական պայքարի առաջատար ուժը շարունակում էր մնալ Ազգային Կոնգրեսը՝ Մահաթմա Գանդիի գլխավորությամբ: Ժողովուրդը շարունակում էր վստահել նրան: Դրա փայլուն վկայությունը հանդիսացան 1937թ. կայացած նահանգային օրենսդրական ժողովների ընտրությունները: Ազգային Կոնգրեսը հաղթեց տասնմեկ նահանգներից ութում:

Սակայն այս շրջանում սրվեցին հարաբերությունները մուսուլմանների և հինդուսների միջև: Մուսուլմանական լիգան պահանջում էր հնդիկ–մուսուլմաններին ճանաչել որպես առանձին ազգ: Մինչդեռ Ջավահարլալ Ներուն և նրա համախոհները միասնական Հնդկաստանի կողմնակից էին, որի իրավահավասար քաղաքացիներ էին լինելու բոլորը: Սակայն շուտով ակնհայտ դարձավ, որ Ներուի այդ դիրքորոշումը պաշտպանություն չի գտնում թե՛ հինդուսների, թե՛ մուսուլմանների լայն խավերի կողմից:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ի՞նչ է «սաթյագրահան»: Ո՞ւմ կողմից այն ձևակերպվեց:*
2. *Ինչո՞ւ հնդիկ ժողովուրդը և Ազգային Կոնգրես կուսակցությունը չընդունեցին 1919 թ. «բարեփոխումները»:*
3. *Բացատրե՛ք «քաղաքացիական անհնազանդություն» հասկացությունը:*
4. *Կարելի՞ է 1935 թ. օրենքը որակել որպես Հնդկաստանի սահմանադրություն: Ինչո՞ւ:*
5. *Ե՞րբ ստեղծվեց Հակաբրիտանական միասնական ճակատը Հնդկաստանում: Ի՞նչ ուժեր մտան նրա մեջ:*
6. *Ձեր կարծիքով ինչո՞ւ Ջ. Ներուի՝ միասնական Հնդկաստանի մասին դիրքորոշումը պաշտպանություն չգտավ և՛ հինդուսների, և՛ մուսուլմանների կողմից:*

Գլուխ 7 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

դաս 23

ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՆԱԽՕՐԵԻՆ

ՎԵՐՍԱԼ-ՎԱՇԻՆԳՏՈՆՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓԼՈՒԶՈՒՄԸ

Գերմանիան երբեք չհաշտվեց Վերսալյան հաշտության պայմանագրով նրան պարտադրված սահմանափակումների հետ և բոլոր միջոցներով ձգտում էր ազատվել դրա կապանքներից: Այդ հարցի լուծումը դարձավ ֆաշիստական Գերմանիայի արտաքին քաղաքականության հիմնական խնդիրներից մեկը:

Գերմանիան **1932թ.** միակողմանիորեն **դադարեցրեց ռազմատուգանքների վճարումը**: Այնուհետև ֆաշիստական կառավարությունը ձեռնամուխ եղավ երկրի ռազմական ներուժի վերականգնմանը: Նա խիստ մեծացրեց ֆինանսական հատկացումները գերմանական բանակի վերականգնման և զինման համար:

Անգլիան և Ֆրանսիան վճռական միջոցների չդիմեցին կանխելու Գերմանիայի վերազինումը և Վերսալյան պայմանագրի ոտնահարումը:

Գերմանիան, որպեսզի ստանա գործողությունների ազատություն և որևէ կերպ կաշկանդված չլինի Վերսալյան պայմանագրով, **1933թ. դուրս եկավ Ազգերի լիգայի կազմից**:

Այնուհետև Հիտլերը դիմեց ավելի վճռական քայլի: **1936թ.** նա իր զորքերը մտցրեց ***Հռենոսի ապառազմականացված գոտի****: Անգլիան և Ֆրանսիան այս անգամ ևս գործնական հակահարված չտվեցին Գերմանիային: Դա բախտորոշ նշանակություն ունեցավ. հետագայում այլևս հնարավոր չեղավ կանգնեցնել Գերմանիային:

Նույն կերպ էր գործում Ճապոնիան Հեռավոր Արևելքում: Ճապոնիան, հաշվի չնստելով վաշինգտոնյան պայմանագրերով մտցված սահմանափակումների հետ, զարկ տվեց իր ռազմածովային նավատորմի զարգացմանը: Միաժամանակ նա նոր քայլերի դիմեց իր ազդեցությունը և դիրքերը Չինաստանում ամրապնդելու ուղղությամբ: Ճապոնական այդ քաղաքականությունը ևս արժանի հակահարվածի չհանդիպեց ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի կողմից:

Այսպիսով՝ **Անգլիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի բողոքության և անվճռական քաղաքականության հետևանքով Վերսալ-վաշինգտոնյան համակարգն ի վերջո փլուզվեց**:

ՀԱԿԱԴԻՐ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1930-ական թվականների կեսերին ակնհայտ դարձավ երկու հակադիր խմբավորումների ձևավորումը: Դրա հիմքը դրեց **1936թ. հոկտեմբերին** ֆաշիստական երկու պետությունների՝ Գերմանիայի և Իտալիայի միջև կնքված պայմանագիրը, որն ստացավ «Բեռլին–Հռոմ առանցք» հորջորջումը (այստեղից էլ՝ Գերմանիայի, Իտալիայի և նրանց դաշնակիցների «առանցքի երկրներ» անվանումը):

Գերմանիայի և Ճապոնիայի միջև **1936թ. նոյեմբերի 25-ին** Բեռլինում ստորագրվեց ***Հակակոմինտերնական պակտը****: Դրա գլխավոր նպատակն էր համատեղ պայքարը ***Կոմունիստական ինտերնացիոնալի**** և միջազգային կոմունիստական շարժման դեմ: Հակակոմինտերնական պակտին 1937թ. միացավ Իտալիան, իսկ հետագայում նաև Հունգարիան, Իսպանիան, Բուլղարիան, Ֆինլանդիան, Ռումինիան, Սլովակիան, Խորվաթիան և այլ երկրներ:

Գերմանիայի, Իտալիայի և Ճապոնիայի միջև ձևավորվեց ռազմական դաշինք: **1939թ. մայիսի 22-ին** ստորագրված գերմանա-իտա-

լական համաձայնագրով կողմերը պարտավորվում էին չկնքել մյուս կողմի դեմ ուղղված ոչ մի պայմանագիր և միմյանց օգնություն ցույց տալ երրորդ պետության դեմ պատերազմի դեպքում: **1940թ. գերմանա–իտալական դաշինքին միացավ Ճապոնիան**, որով **ավարտվեց ագրեսիվ պետությունների** ռազմաքաղաքական եռյակ դաշինքի ձևավորումը:

Այս խմբավորման **գլխավոր** ռազմաքաղաքական **նպատակը աշխարհի նոր վերաբաժանումն էր** և **համաշխարհային տիրապետության** հասնելը:

Այդ նույն ժամանակահատվածում ձևավորվեց նաև մյուս, հակառակ խմբավորումը, որի կորիզը կազմում էին Անգլիան և Ֆրանսիան: Նրանց հետ դաշնակցում էին և սերտ ռազմաքաղաքական համագործակցության մեջ էին Եվրոպայի մի շարք երկրներ՝ Բելգիան, Հոլանդիան, Լեհաստանը, Չեխոսլովակիան, Հարավսլավիան, Հունաստանը և այլն:

Երկու այս հակադիր խմբավորումներից ոչ մեկին չէին հարում ԱՄՆ–ը և Խորհրդային Միությունը, թեև նրանք ուշադիր հետևում էին իրադարձությունների զարգացմանը:

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ, ԻՏԱԼԻԱՅԻ ԵՎ ՃԱՊՈՆԻԱՅԻ ԱԳՐԵՍԻՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գերմանիան, Իտալիան և Ճապոնիան իրենց քաղաքական նպատակների կենսագործման լավագույն միջոցը համարում էին ագրեսիան:

Գերմանիան, Իտալիայի հետ միասին, 1936–1939թթ. իրականացրեց ռազմական ինտերվենցիա Իսպանիայի Հանրապետության դեմ: Այդ երկու ֆաշիստական պետությունների զինված ուժերի օգնությունը վճռական դեր խաղաց **Իսպանիայում** հանրապետական վարչակարգի տապալման և **գեներալ Ֆրանկոյի ֆաշիստական դիկտատուրայի հաստատման գործում**: Գերմանիայի ագրեսիայի հաջորդ զոհերը դարձան Ավստրիան և Չեխոսլովակիան:

Ագրեսիայի հարցում Գերմանիայից հետ չէր մնում Իտալիան: **1935թ.** իտալական ֆաշիստները հարձակվեցին **Եթովպիայի վրա** և 1936թ. ավարտեցին նրա գրավումը: 1939թ. Իտալիան գրավեց Ալբանիան: Գերմանիայի և Իտալիայի ագրեսիվ գործողությունների հետևանքով Եվրոպայում հաստատվել էր ահի և սարսափի մթնոլորտ:

Հեռավոր Արևելքում 1937թ. Չինաստանի դեմ իր ագրեսիան վերսկսեց Ճապոնիան: Ճապոնացիները, չնայած չինացիների ուժեղ դիմադրությանը, 1938թ. կարողացան գրավել Արևելյան Չինաստանի մեծ մասը:

Ճապոնիան ագրեսիվ քայլերի դիմեց նաև Խորհրդային Միության նկատմամբ: 1938թ. հուլիսի վերջերին ճապոնական զորքերը ներխուժեցին Խորհրդային Միության տարածքը՝ Խասան լճի շրջանում: Խորհրդային բանակը ծանր հարվածներ հասցրեց ճապոնական զավթիչներին և օգոստոսի կեսերին նրանց դուրս շպրտեց երկրից:

1939թ. մայիսին Ճապոնիան սանձազերծեց նոր ագրեսիվ գործողություններ՝ այս անգամ Մոնղոլական Ժողովրդական Հանրապետության դեմ: Խորհրդային Միությունը, որը ՄԺՀ–ի հետ կնքել էր փոխադարձ օգնության պայմանագիր, անհրաժեշտ ռազմական օգնություն ցույց տվեց նրան: Խորհրդային և մոնղոլական զորքերը ջախջախիչ հակահարված տվեցին ճապոնական ռազմամոլներին:

ԱԳՐԵՍՈՐՆԵՐԻՆ «ԽԱՂԱՂԵՑՆԵԼՈՒ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Անգլիան, Ֆրանսիան, ինչպես նաև ԱՄՆ–ը, ագրեսորների նկատմամբ որդեգրել էին թողտվության, զիջումների և չմիջամտելու քաղաքականություն, որը ստացավ «**խաղաղեցնելու քաղաքականություն**» ծաղրական անվանումը: Նրանք ուրիշ պետությունների և ազգերի կենսական շահերի հաշվին Գերմանիային, Իտալիային և Ճապոնիային կատարվող քաղաքական, ռազմական և տարածքային զիջումները փորձում էին «արդարացնել» խաղաղությունը պահպանելու մտահոգությամբ: Իրականում **նրանք ձգտում էին ագրեսորների քաղաքականությունն ուղղել** իրենց ձեռնտու հունով՝ **առաջին հերթին ընդդեմ Խորհրդային Միության**:

Այդ քաղաքականության բարձրակետը հանդիսացավ **Մյունխենյան գործարքը**: Չեխոսլովակիայի Սուդետական մարզի բնակ-

չության կեսից ավելին գերմանացիներ էին: Օգտագործելով այդ հանգամանքը, Հիտլերը պահանջեց Սուդեթական մարզը հանձնել Գերմանիային: Առաջացավ նոր քաղաքական ճգնաժամ Եվրոպայում: 1938թ. սեպտեմբերի վերջերին **Մյունխենում** կայացավ Անգլիայի վարչապետ **Չեմբեռլենի**, Ֆրանսիայի վարչապետ **Դալադիեի**, Իտալիայի առաջնորդ (դուչե) **Մուսսոլինիի** և Գերմանիայի կանցլեր **Հիտլերի** հանդիպումը: Սեպտեմբերի 30-ին նրանք ստորագրեցին համաձայնագիր Սուդեթական մարզն ամենակարճ ժամկետում Գերմանիային հանձնելու վերաբերյալ: Նույն օրը Չեխոսլովակիայի կառավարությունը հայտարարեց, որ «**ինքը ենթարկվում է Մյունխենում առանց մեզ և ընդդեմ մեզ ընդունված որոշումներին**»: Սակայն չեխոսլովակյան դրաման դրանով չավարտվեց: 1939թ. Գերմանիան գրավեց նաև Չեխոսլովակիայի մնացած տարածքները, և այդ երկիրն անհայտացավ Եվրոպայի քաղաքական քարտեզից:

1939 Թ. ԽՈՐՀՐԴԱ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐԸ

1930-ական թվականների վերջերին տեղի ունեցավ քաղաքական ուժերի նոր վերադասավորում Եվրոպայում: Գերմանիան որոշեց հաջորդ հարվածը հասցնել ոչ թե Խորհրդային Միությանը, այլ Անգլիային և Ֆրանսիային: Հիտլերյան ղեկավարությունը գտնում էր, որ դրա համար պետք է հարաբերությունները բարելավել ԽՍՀՄ-ի հետ՝ Գերմանիայի թիկունքն ամրապնդելու և երկու ճակատներում պատերազմելուց խուսափելու համար: Գերմանիան պաշտոնապես դիմեց խորհրդային կառավարությանը՝ երկու երկրների միջև չհարձակման համաձայնագիր կնքելու առաջարկությամբ: Խորհրդային ղեկավարությունը հաշվի էր առնում, որ ԽՍՀՄ-ը գտնվում է մեկուսացման մեջ: Եվ այդ մեկուսացումից դուրս գալու, ինչպես նաև գերմանական հզոր ռազմական մեքենան Խորհրդային Միության դեմ ուղղելու՝ արևմտյան տերությունների ծրագրերը ձախողելու նպատակով դրականորեն արձագանքեց գերմանական առաջարկությանը:

1939թ. օգոստոսին Մոսկվա ժամանեց Գերմանիայի արտաքին գործերի նախարար **Ի. Ռիբենտրոպը**, որը հանդիպումներ ունեցավ **Ի. Ստալինի** և արտաքին գործերի ժողովրդական կոմիսար **Վ. Մոլոտովի** հետ: **1939թ. օգոստոսի 23-ին** երկու երկրների արտաքին գործերի նախարարները ստորագրեցին չհարձակման պայմանագիր՝ տասը տարի ժամանակով:

Պայմանագիրը, ինչպես հետագայում հայտնի դարձավ, ուներ նաև **գաղտնի Արձա-**

Չեմբեռլենը, Մուսսոլինին, Հիտլերը, Դալադիեն. Մյունխեն, 1938 թ. սեպտեմբերի 30

Գերմանիայի և Խորհրդային Միության միջև համաձայնագրի կնքումը. Մոսկվա, 1939 թ. օգոստոսի 23

Այդ պայմանագրով կողմերը պարտավորվում էին ծեռնպահ մնալ միմյանց դեմ ագրեսիվ գործողություններից և հարձակումից, կողմերից մեկի հարձակման ենթարկվելու դեպքում մյուս կողմը պարտավորվում էր չօգնել հարձակվող կողմին, չմասնակցել մյուս կողմի դեմ ուղղված պետությունների խմբավորումներին և բոլոր վիճելի հարցերը միմյանց միջև լուծել խաղաղ ճանապարհով:

նագրություն՝ Արևելյան Եվրոպան ազդեցության գոտիների բաժանելու վերաբերյալ: Ըստ այդմ, խորհրդային ազդեցության գոտու մեջ էին մտնում Արևելյան Լեհաստանը, մերձբալթյան երկրները և Արևելյան Եվրոպայի այլ մասեր:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ի՞նչ փաստերով կարող եք հիմնավորել, որ Վերսալ–Վաշինգտոնյան համակարգը 1930–ական թվականներին փլուզվեց:*
2. *Հակադիր ի՞նչ խմբավորումներ ձևավորվեցին երկրորդ աշխարհամարտի նախօրեին:*
3. *Ինչո՞ւ Գերմանիան, Իտալիան և Ճապոնիան ագրեսիվ գործողություններ ձեռնարկեցին 1930–ական թվականներին:*
4. *Ի՞նչ հետևանք ունեցավ ագրեսորներին «խաղաղեցնելու» կուրսը: Գնահատե՛ք «Մյունխենյան գործարքը»:*
5. *Արդյո՞ք ճիշտ վարվեց Ստալինը՝ ընդունելով Գերմանիայի առաջարկած չհարձակման պայմանագիրը:*

դաս 24

ԱՄՓՈՓՈՒՄ

- **Առաջին աշխարհամարտից հետո Օսմանյան կայսրությունը դադարեց գոյություն ունենալուց, ստեղծվեց Թուրքական Հանրապետությունը քեմալականների ազգայնական շարժման շնորհիվ:**

Վերհիշե՛ք, թե ինչպես Մ. Քեմալի գլխավորած Անկարայի կառավարությանը հաջողվեց կարգավորել Թուրքիայի հարաբերություններն Անտանտի երկրների և խորհրդային հանրապետությունների հետ: Ձեր կարծիքով ի՞նչ հանգամանքներ նպաստեցին Թուրքիայի որոշակի հաջողությանն այդ ուղղությամբ:

Հայկական հարցն արդյո՞ք Լոզանի պայմանագրով «փակվեց»:

- **Երկու աշխարհամարտերի ընթացքում Իրանը չմասնակցեց պատերազմական գործողություններին, թեև երկու դեպքում էլ նրա կառավարությունը գերմանական խմբավորումներին հակադիր դիրքորոշում բռնեց:**

Ի՞նչը նպաստեց Անգլիայի ազդեցության ուժեղացմանը Իրանում 1918-1939 թվականներին:

Դինաստիական փոփոխությունն ինչպիսի՞ ազդեցություն ունեցավ Իրանի ներքին և արտաքին կյանքում:

- **Առաջին աշխարհամարտին հաջորդած տասնամյակը Չինաստանում աչքի ընկավ հակաիմպերիալիստական և հեղափոխական շարժումներով:**

Ո՞ր ուժերն էին գլխավորում այդ շարժումները:

Նշե՛ք չին դեմոկրատական և հեղափոխական հայտնի գործիչներին:

- **1925-1927թթ. հեղափոխությունից հետո ութ տարի շարունակ Չինաստանում բաղաքացիական պատերազմ էր ընթանում գոմինդանականների և կոմունիստական ուժերի միջև: Օգտվելով նման իրավիճակից՝ Ճապոնիան ներխուժեց Չինաստան:**

Ինչո՞ւ Ճապոնիային հաջողվեց իրականացնել իր ծավալապաշտական նկրտումները Չինաստանում: Նշե՛ք դրա պատճառները:

- **Հնդկաստանը 1918-1939 թվականներին շարունակում էր մնալ գաղութային կախվածության վիճակում, թեև Մեծ Բրիտանիան փորձեց որոշ բարեփոխումներ մտցնել Հնդկաստանի կառավարման գործում:**

Ովքե՞ր էին գլխավորում հնդիկ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը:

Ներքին քաղաքական-կրոնական ի՞նչ հակասություն կար Հնդկաստանում:

- **1930-ական թվականներին փլուզվեց միջազգային հարաբերությունների Վերսալ–Վաշինգտոնյան համակարգը: Գերմանիան, Իտալիան և Ճապոնիան դիմեցին բացահայտ ագրեսիվ քայլերի:**

Որո՞նք էին Վերսալ-Վաշինգտոնյան համակարգի փլուզման պատճառները:

Ձեր կարծիքով ինչո՞ւ Առաջին աշխարհամարտում հաղթած Իտալիան և Ճապոնիան դարձան ագրեսորներ:

Ինչպիսի՞ արտաքին քաղաքականություն էր վարում ԽՍՀՄ-ը 1930-ական թվականներին:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1914թ. օգոստ. 1 – 1918թ. նոյեմբ.11	Առաջին համաշխարհային պատերազմը
1917թ. նոյ. 7 (հոկտ. 25)	Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը Ռուսաստանում
1918-1920	Քաղաքացիական պատերազմը Ռուսաստանում
1918թ. նոյեմբեր	Հանրապետության հռչակումը Գերմանիայում
1919	Երիտթուրքերի հանցագործ պարագլուխների դատավարությունը
1919	Մայիսի 4-ի շարժումը Չինաստանում
1919թ. հունիսի 28	Վերսալի պայմանագրի ստորագրումը
1919-1946	Ազգերի լիգայի գործունեությունը
1920թ. օգոստոսի 10	Սևրի պայմանագրի ստորագրումը
1921թ. փետրվարի 26	Ռուս-իրանական պայմանագրի կնքումը Մոսկվայում
1921թ. մարտի 16	Ռուս-թուրքական պայմանագրի ստորագրումը Մոսկվայում
1921-1928	Նեպի շրջանը խորհրդային հանրապետություններում, ապա՝ ԽՍՀՄ-ում
1922թ. փետրվար	Վաշինգտոնյան համաձայնագրերի ստորագրումը
1922թ. նոյեմբեր – 1923թ. հուլիս	Լոզանի խորհրդաժողովը
1922թ. դեկտեմբերի 30	ԽՍՀՄ կազմավորումը
1923	Հանրապետության հռչակումը Թուրքիայում
1924	Դիվանագիտական հարաբերությունների հաստատումը ԽՍՀՄ-ի և Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Չինաստանի միջև
1924	Դաուեսի պլանի ընդունումը
1925-1927	Բուրժուադեմոկրատական հեղափոխությունը Չինաստանում
1925	Փահլավիների դինաստիայի հաստատումն Իրանում
1926	Համընդհանուր գործադուլը Անգլիայում
1928-1935	Քաղաքացիական պատերազմը Չինաստանում
1929-1933	Համաշխարհային տնտեսական ճգնաժամը
1933-1945	Ֆ. Ռուզվելտը ԱՄՆ-ի նախագահ
1933-1935	«Նոր կուրսի» կենսագործումը ԱՄՆ-ում
1933	Դիվանագիտական հարաբերությունների հաստատումը ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև
1934թ. սեպտեմբեր	ԽՍՀՄ-ի ընտրվելը Ազգերի լիգայի անդամ
1934-1935	Չինական Կարմիր բանակի «Մեծ երթը»
1936-1937	«Բեռլին-Հռոմ-Տոկիո առանցքի» ձևավորումը
1936	Հակաբրիտանական միասնական ճակատի ստեղծումը Հնդկաստանում
1938	Իռլանդիայի անկախության ճանաչումը Անգլիայի կողմից
1938թ. սեպտեմբերի 30	Մյունխենի «գործարքը»
1939թ. օգոստոսի 23	Չհարձակման պայմանագրի ստորագրումը ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ (1939-1945 ԹԹ.)



Ցամաքային Եվրոպայի նվաճումը հիտլերյան Գերմանիայի կողմից. Խորհրդա–գերմանական ճակատը 1941–1942 թվականներին

Գլուխ 8 ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ

դաս 25

ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՍԿԻԶԲԸ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Երկրորդ համաշխարհային պատերազմը արդյունք էր իմպերիալիստական պետությունների միջև քաղաքական, տնտեսական և գաղափարական խոր ու անհաշտ հակասությունների: **Գերմանիան, Իտալիան** և **Ճապոնիան**, գտնելով, որ ուժերի հարաբերակցությունը փոխվել է հօգուտ իրենց, պայքար ծավալեցին աշխարհում **Անգլիայի, Ֆրանսիայի** և **ԱՄՆ-ի** քաղաքական տիրապետող դիրքերը վերացնելու և աշխարհի նոր վերաբաժանման նպատակով:

Նրանց համար կարևոր խնդիր էր նաև Խորհրդային Միության տապալումը և կոմունիստական վտանգի վերացումը:

Անգլիայի և Ֆրանսիայի հիմնական նպատակն էր պահպանել իրենց տիրապետող քաղաքական և տնտեսական դիրքերը, ձախողել «Բեռլին–Հռոմ–Տոկիո առանցքի» համաշխարհային տիրապետության հասնելու ծրագրերը:

ԱՄՆ-ը թեև պատերազմի առաջին փուլում պաշտոնապես չեզոք դիրք էր գրավում, սակայն ավելի համակիր էր անգլո-ֆրանսիական խմբավորմանը:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԻԶԲԸ ԵՎ ԼԵՀԱՍՏԱՆԻ ԳՐԱՎՈՒՄԸ

Ֆաշիստական Գերմանիայի հաջորդ զոհը եղավ Լեհաստանը: Պատրաստվելով պատերազմական գործողությունների ընդդեմ Լեհաստանի՝ Հիտլերը դեռ 1939թ. ապրիլին նշել էր, որ անհրաժեշտ է «հարձակվել Լեհաստանի վրա առաջին իսկ հնարավորության դեպքում»: Նա և նրա զինակիցները վստահ էին, որ Անգլիան ու Ֆրանսիան այս անգամ ևս ագրեսիայի զոհին գործնական օգնություն ցույց չեն տա և Լեհաստանի պատճառով մեծ պատերազմ չի առաջանա:

Պատերազմի սկզբում Գերմանիան ուներ 100-ից ավել դիվիզիա, 4400 ինքնաթիռ և մոտ 100 խոշոր նավեր և սուզանավեր:

Հիտլերը 1939թ. օգոստոսի 22-ին Օբերզալցբուրգում գերմանական բարձրագույն զինվորական հրամանատարության հետ ունեցած հանդիպման ժամանակ հայտարարել էր. **«Ես այժմ Արևելք եմ ուղարկում իմ «մահվան ջոկատները», որոնց հրամայված է առանց խղճահարության ու ներողամտության սպանել լեհ ցեղին պատկանող և լեհերեն խոսող բոլոր տղամարդկանց, կանանց ու երեխաներին: Միայն այս ճանապարհով մենք կշահենք այն կենսական տարածքը, որ մեզ անհրաժեշտ է... Ո՞վ է այսօր դեռ խոսում հայերի ոչնչացման մասին...»:** Հիտլերն ակնարկում էր երիտթուրքերի կողմից 1915թ. Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության մյուս տարածքներում իրակա-

1939 թ. սեպտեմբերի 1. գերմանացի զինվորները բացում են գերմանա-լեհական սահմանի արգելափակոցը:

նացված հայերի ցեղասպանությունը, որը մնացել էր անպատիժ:

1939թ. սեպտեմբերի 1–ի առավոտյան գերմանական զորքերը ներխուժեցին Լեհաստան: Այդ տարեթիվը պաշտոնապես ընդունված է որպես **Երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբ**:

Նույն օրը երեկոյան Գերմանիային հանձնվեց Անգլիայի և Ֆրանսիայի բողոքի նոտան: Վերջիններս սպառնացին, որ եթե Գերմանիան չդադարեցնի պատերազմական գործողությունները և իր զորքերը դուրս չբերի Լեհաստանի տարածքից, ապա նրանք կկատարեն Լեհաստանի հանդեպ իրենց պարտավորությունները: Խոսքն այստեղ այն մասին էր, որ 1939թ. օգոստոսի 25–ին Անգլիայի և Լեհաստանի միջև ստորագրվել էր փոխադարձ օգնության պայմանագիր: Համանման պայմանագիր էր կնքվել նաև Ֆրանսիայի և Լեհաստանի միջև: Սակայն Գերմանիան հաշվի չառավ վերջնագրի բնույթ կրող անգլո–ֆրանսիական նոտան և շարունակեց իր հարձակողական գործողությունները:

1939թ. սեպտեմբերի 3–ին Անգլիան և Ֆրանսիան պատերազմ հայտարարեցին Գերմանիային: Նրան պատերազմ հայտարարեցին նաև Մեծ Բրիտանիայի դոմինիոններ Ավստրալիան, Նոր Զելանդիան, Կանադան և Հարավ–Աֆրիկյան Միությունը:

1939 թ. հոկտեմբերի 5. հիտլերականների շքերթը Վարշավայում

Թվում էր, թե վրա հասավ ագրեսորին վճռական հակահարված հասցնելու պահը: Սակայն Հիտլերը վստահ էր, որ Անգլիան և Ֆրանսիան լուրջ քայլերի չեն դիմի Լեհաստանը փրկելու համար, և նա չսխալվեց: Անգլիայի և Ֆրանսիայի սպառնալիքները խոսքից այն կողմ չանցան: Նրանք ոչինչ չձեռնարկեցին գերմանական ագրեսիան սանձելու և իրենց դաշնակցին իրական օգնություն ցույց տալու համար: Լեհաստանը մնաց միայնակ գերմանական հզոր ռազմական մեքենայի առջև: Նա չէր կարող ակնկալել օգնություն նաև այլ պետություններից: Գերմանիայի հարձակումից անմիջապես հետո ԽՍՀՄ–ը և ԱՄՆ–ը հայտարարեցին իրենց չեզոքության մասին:

Սեպտեմբերի կեսերին Գերմանիան արդեն գրավել էր Լեհաստանի տարածքի համարյա կեսը, վերջինիս ռազմաքաղաքական պարտությունն այլևս ոչ մի կասկած չէր հարուցում: Հենց այդ պահին խաղի մեջ մտավ Խորհրդային Միությունը:

ԽՍՀՄ-Ի ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄԸ

Խորհրդային Միությունը Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբնական փուլն օգտագործեց իր տարածքն ընդարձակելու և միջազգային դիրքերն ուժեղացնելու համար:

1939թ. սեպտեմբերի 17–ին խորհրդային զորքերը մտան Լեհաստան: 12 օր տևած պատերազմական գործողությունների ընթացքում խորհրդային զորքերը առաջ շարժվեցին 250–350 կիլոմետր, գրավեցին Արևմտյան Ուկրաինան և Արևմտյան Բելոռուսիան, որոնք Լեհաստանին էին անցել 1920թ.: Անցկացված ընտրությունների արդյունքում այդ երկու շրջաններում էլ հայտարարվեց խորհրդային իշխանություն: Նրանք դիմեցին ԽՍՀՄ Գերագույն Խորհրդին՝ ԽՍՀՄ–ի կազմի մեջ մտնելու խնդրանքով: 1939թ. նոյեմբերի 1–ին բավարարվեց ուկրաինացիների, իսկ նոյեմբերի 2–ին՝ բելոռուսների պահանջը: Այդ շրջանները համապատասխանաբար մտան Ուկրաինական և Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների կազմի մեջ:



Լեհ ռազմագերիների շարասյուն

Այսպիսով՝ գերմանական և խորհրդային զորքերի հարվածների տակ ընկավ լեհական պետությունը:

Խորհրդային Միությունը 1939թ. աշնանը Էստոնիային, Լատվիային և Լիտվային պարտադրեց փոխադարձ օգնության համաձայնագիր: Նա, ըստ այդ համաձայնագրի, «Խորհրդային Միության և մերձբալթյան երկրների անվտանգությունն ամրապնդելու նպատակով» իրավունք ստացավ այդ երկրներում ունենալ ռազմածովային և ռազմաօդային հենակայաններ:

Խորհրդային Միությունը, իր հյուսիսային սահմանների և Լենինգրադի անվտանգությունն ապահովելու պատրվակով, **1939թ. նոյեմբերի 30–ին** պատերազմ սկսեց Ֆինլանդիայի դեմ: Ֆիննական պատերազմը ցույց տվեց Խորհրդային Միության անբավարար պատրաստվածությունը ռազմական տեսակետից: Հարձակումը Ֆինլանդիայի վրա բողոքի մեծ ալիք առաջացրեց աշխարհում: 1939թ. դեկտեմբերի 14–ին Ազգերի լիգան ԽՍՀՄ–ին, որպես ագրեսորի, վտարեց իր շարքերից: ԽՍՀՄ –ին մեծ զոհողությունների գնով հաջողվեց հասնել որոշ հաջողությունների, և **1940թ. մարտի 12–ին** ստորագրվեց խորհրդա–ֆիննական հաշտության պայմանագիր: Խորհրդային Միությանն անցավ Կարելական պարանոցը՝ հարակից տարածքներով: Բացի այդ, Խորհրդային Միությունը 30 տարի ժամկետով վարձակալելու էր Խանկո թերակղզին և հարակից կղզիները՝ ռազմածովային հենակայան կառուցելու համար:

Հաջորդ տարվա ամռանը Խորհրդային Միության մաս դարձան Բեսարաբիան և Հյուսիսային Բուկովինան: Այդ տարածքները, որ պատկանում էին Ռումինիային, նա հարկադրված եղավ զիջել ԽՍՀՄ–ին՝ վերջինիս ճնշման ներքո:

1940թ. ամռանը սրվեցին Խորհրդային Միության հարաբերությունները մերձբալթյան պետությունների հետ: ԽՍՀՄ–ը անհանգստանում էր, որ նրանք կարող են Գերմանիայի, ինչպես նաև Անգլիայի և Ֆրանսիայի հակախորհրդային քաղաքականության հենակետեր դառնալ: Հունիս ամսվա ընթացքում Լատվիայում, Լիտվայում և Էստոնիայում, ոչ առանց Խորհրդային Միության միջամտության, տեղի ունեցան պետական հեղաշրջումներ, և այդ երկրներում հաստատվեցին խորհրդային կարգեր: Նրանք դիմեցին ԽՍՀՄ Գերագույն Խորհրդին՝ ԽՍՀՄ–ի կազմի մեջ մտնելու խնդրանքով: 1940թ. օգոստոսին նրանց այդ խնդրանքը բավարարվեց:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Որո՞նք էին Երկրորդ աշխարհամարտի գլխավոր պատճառները:*
2. *Վերհիշե՛ք և համեմատե՛ք համաշխարհային երկու պատերազմների հակադիր խմբավորումների կազմը:*
3. *Ինչպե՞ս սկսվեց Երկրորդ աշհարհամարտը: Ո՞ւմ միջև բաժանվեց Լեհաստանի տարածքը:*
4. *Տարածքային ի՞նչ փոխբերումներ ունեցավ ԽՍՀՄ–ը 1939–1940 թվականներին:*

դաս 26

ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ (1939 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1 - 1941 Թ. ՀՈՒՆԻՍԻ 22)

ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

Թեև Անգլիան ու Ֆրանսիան գտնվում էին պատերազմական վիճակում Գերմանիայի հետ, սակայն որևէ ռազմական գործողություն չէին մղում նրա դեմ: Խրամատավորված զորքերը «ձանձրանում էին» անգործությունից: Այս յուրահատուկ իրավիճակի պատճառով այդ պատերազմափուլը կոչվեց ***«տարօրինակ պատերազմ»****:

Գերմանիան, բթացնելով իր հակառակորդների զգոնությունը, նախապատրաստվում էր վճռական գործողություններ իրականացնել Եվրոպայի արևմուտքում:

Գերմանական զորքերը ընդամենը երկու օրվա ընթացքում՝ **1940թ. ապրիլի 9–10–ը**, գրավեցին **Դանիան** և **Նորվեգիան**:

Դրա հետևանքով սրվեց քաղաքական իրադրությունն Անգլիայում: Ընդդիմության ճնշման տակ Անգլիայի վարչապետ Ննիլ Չեմբեռլենը 1940թ. մայիսի 8–ին հրաժարական տվեց: **Մայիսի 10–ին Ուինսթոն Չերչիլը**, որ գերմանաֆաշիստական ագրեսորներին վճռական հարված տալու կողմնակիցներից էր, կազմեց կոալիցիոն կառավարություն:

Գերմանիան 1940թ. մայիսին Արևմտյան ռազմաճակատում կենտրոնացրեց իր գլխավոր ռազմական ուժերը՝ 136 դիվիզիա (3,3 մլն զինվոր), 2600 տանկ, 3600 ինքնաթիռ և ռազմական այլ տեխնիկա:

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱՆՁՆԱՏՈՒՐ ԼԻՆԵԼԸ

Գերմանիան շուտով ձեռնամուխ եղավ այսպես կոչված **«Դեղին պլանի»** կենսագործմանը:

1940թ. մայիսի 10–ին գերմանական զորքերն անցան Բելգիայի, Հոլանդիայի, Լյուքսեմբուրգի սահմանները և ներխուժեցին Ֆրանսիա: Շուտով գերմանացիները հարձակում սկսեցին Փարիզի ուղղությամբ: Ֆրանսիական բանակն ի վիճակի չեղավ որևէ լուրջ դիմադրություն ցույց տալ և **հունիսի 14–ին Փարիզն անձնատուր եղավ**: Ֆրանսիայի նոր կառավարության ղեկավար մարշալ Պետենը դիմեց Գերմանիային՝ հաշտության խնդրանքով:

Ֆրանսիայի անձնատուր լինելու ակտը ստորագրվեց **1940թ. հունիսի 22–ին**: Ֆրանսիան բաժանվեց երկու գոտիների՝ Հյուսիսային և Հարավային: Հյուսիսային գոտին օկուպացրեց Գերմանիան, իսկ Հարավային Ֆրանսիայում ստեղծվեց մի կառավարություն, որը ենթարկվում էր «նախագահ» Պետենին: Պետենը համագործակցում էր գերմանացիների հետ, ուստի դասվեց ազգային դավաճանների շարքը:

Սակայն ֆրանսիական մի խումբ հայրենասերներ, գեներալ **Շարլ դը Գոլի** գլխավորությամբ, չընդունեցին անձնատուր լինելու ակտը: Գեներալ դը Գոլը Լոնդոնի ռադիոյով կոչ արեց բոլոր հայրենասեր ֆրանսիացիներին շարունակել պայքարը հիտլերյան զավթիչների դեմ և միավորվել **«Ազատ Ֆրանսիա»** շարժման մեջ: **«Ֆրանսիան տանուլ է տվել ճակատամարտը, բայց ոչ պատերազմն ամբողջությամբ»**,– հայտարարեց նա: Անգլիական կառավարությունը 1940թ. հունիսի 28–ին դը Գոլին պաշտոնապես ճանաչեց «Ազատ Ֆրանսիայի» ղեկավար: **1942թ.** «Ազատ Ֆրանսիան» **վերանվանվեց «Մարտնչող Ֆրանսիա»**:

1940 թ. ապրիլի 9. գերմանական դեսանտը Դանիայում

Ռոտերդամի փլատակները գերմանական ռմբակոծումից հետո, 1940թ.

ՃԱԿԱՏԱՄԱՐՏ ԱՆԳԼԻԱՅԻ ՀԱՄԱՐ

Ֆրանսիայի անձնատուր լինելուց հետո Հիտլերը կարծում էր, որ Անգլիան Գերմանիային կդիմի հաշտության խնդրանքով: Սակայն Ուինսթոն Չերչիլը ոչ միայն չէր դիմում նման խնդրանքով, այլև արագորեն ամրացնում էր իր երկրի պաշտպանունակությունը:

Գերմանական գլխավոր շտաբը մշակեց Անգլիա ներխուժելու պլանը, որն ստացավ **«Ծովային առյուծ»** ծածկանունը: Անգլիայի ռմբակոծումը սկսվեց 1940թ. օգոստոսին: Ամիսներ շարունակ գերմանական ռազմական ավիացիան ռմբակոծում էր Լոնդոնը և բրիտանական մյուս քաղաքները: Բայց նրանց չհաջողվեց կոտրել անգլիացիների կամքը: Անգլիայի համար մղված ճակատամարտում Գերմանիային չհաջողվեց հասնել գերակայության օդում, ինչը պետք է հանդիսանար Անգլիա ներխուժելու գրավականը:

ՅԱՄԱՔԱՅԻՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՆՎԱՃՈՒՄԸ

Գերմանական զորքերը 1940թ. հոկտեմբերի 12-ին մտան Ռումինիա, որը նոյեմբերի 23-ին միացավ ֆաշիստական խմբավորմանը: Մինչ այդ՝ նոյեմբերի 20-ին, ֆաշիստական խմբավորմանն էր միացել Հունգարիան: 1941թ. մարտին նրան միացավ նաև Բուլղարիան: Գերմանիան ապրիլի 6-ին հարձակման անցավ Հարավսլավիայի և Հունաստանի վրա: Ապրիլի 17-ին հարավսլավական բանակն անձնատուր եղավ, իսկ ապրիլի 29-ին գերմանական զորքերը մտան Աթենք:

1941թ. առաջին կեսին համարյա ամբողջ ցամաքային Եվրոպան նվաճված կամ կախման մեջ էր գտնվում ֆաշիստական խմբավորումից:

1940–1941թթ. պատերազմական գործողությունները երկու հակադիր խմբավորումների միջև ծավալվեցին նաև Աֆրիկայի հյուսիսային և արևելյան շրջաններում:

Այդպիսով պատերազմն աստիճանաբար ընդունեց համաշխարհային բնույթ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ի՞նչ եք հասկանում «տարօրինակ պատերազմ» ասելով:*
2. *Ինչպե՞ս էր կոչվում Ֆրանսիայի գրավման գերմանական ռազմական պլանը: Ե՞րբ կապիտուլյացվեց Ֆրանսիան: Ո՞վ գլխավորեց «Ազատ Ֆրանսիա» դիմադրական շարժումը:*
3. *1940–1941 թթ. Գերմանիան ո՞ր երկրները գավթեց Եվրոպայում: Ի՞նչ նոր երկրներ մտան ֆաշիստական խմբավորման մեջ:*
4. *Քարտեզի վրա ցուցադրեք պատերազմի առաջին փուլի արդյունքները:*

Գլուխ 9 ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԸ (1941-1945ԹԹ.): ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԱՎԱՐՏԸ

դաս 27

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Դեռևս 1940թ. վերջերին Հիտլերը հաստատել էր ԽՍՀՄ-ի վրա հարձակվելու իր պլանը՝ **«Բարբարոսա»** ծածկանվան տակ: Նախատեսվում էր կայծակնային հարձակմամբ գրավել ԽՍՀՄ-ը և 1941թ. աշնանն ավարտել պատերազմը:

Ստալինը համոզված էր, որ Գերմանիան 1941թ. ընթացքում չի հարձակվի ԽՍՀՄ-ի վրա: Ուստի, Գերմանիայի հետ պատերազմի մասին բոլոր խոսակցությունները նրա կողմից դիտվում էին որպես սադրանք:

Սակայն **1941թ. հունիսի 22-ին**, վաղ առավոտյան, **Գերմանիան առանց պատերազմ հայտարարելու հարձակվեց Խորհրդային Միության վրա**: Միայն դրանից հետո, առավոտյան ժամը 3.30 րոպեին, Մոսկվայում Գերմանիայի դեսպան կոմս Շուլենբուրգը Կրեմլում հանդիպեց ԽՍՀՄ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Վ.Մոլոտովին: Դեսպանը հայտարարեց, որ «խորհրդային զորքերի կենտրոնացումը գերմանական սահմանի մոտ հասել է այնպիսի չափերի, որ գերմանական կառավարությունն այլևս չի կարող

Ֆաշիստական զորքերը խորհրդային գյուղում. 1941թ.

համբերել: Այդ պատճառով էլ նա որոշեց ձեռնարկել համապատասխան հակամիջոցառումներ»: Կոմս Շուլենբուրգը պատերազմ բառը չօգտագործեց, թեև այն արդեն սկսվել էր: Այդ պատճառով էլ Վ. Մոլոտովը հարցրեց նրան. «Դա ի՞նչ է, պատերազմի հայտարարությո՞ն է»: Շուլենբուրգը ոչինչ չպատասխանեց: Նա միայն հուսահատորեն թափահարեց ձեռքը և հեռացավ Կրեմլից:

Գերմանիայի հետ միասին Խորհրդային Միության վրա հարձակվեցին **Ռումինիան** և **Ֆինլանդիան**: ԽՍՀՄ-ին պատերազմ հայտարարեցին **Իտալիան** և **Սլովակիան**, իսկ հունիսի 27-ին՝ **Հունգարիան**: Իսպանիան թեև հայտարարեց իր չեզոքության մասին, սակայն **գեներալ Ֆրանկոն**, որպես օգնություն Գերմանիային, խորհրդա-գերմանական ճակատ ուղարկեց «Երկնագույն դիվիզիան»: Գերմանիայի դաշնակիցն էր նաև **Բուլղարիան**:

Գերմանիան և նրա դաշնակիցները խորհրդային երկրի դեմ կենտրոնացրել էին **190 դիվիզիա**, հսկայական քանակությամբ ժամանակակից ռազմական տեխնիկա՝ հրետանի, տանկեր, ինքնաթիռներ: Գերմանիայի տնօրինության տակ էր նրա կողմից նվաճված եվրոպական երկրների ամբողջ ռազմական և տնտեսական ներուժը:

Պատերազմական գործողությունները ծավալվեցին **Բալթիկ ծովից մինչև Սև ծով** ընկած հսկայական տարածքի վրա:

Պատերազմ սկսելով ԽՍՀՄ-ի դեմ՝ Գերմանիայի նպատակն էր մահացու հարված հասցնել իր գլխավոր գաղափարական հակառակորդին՝ կոմունիզմին, վերացնել Խորհրդային Միությունը որպես պետություն և այդ ուղիով լուծել իր համար կենսական տարածք ապահովելու խնդիրը:

Պատերազմի հենց սկզբից ԽՍՀՄ-ը հայտնվեց շատ ծանր վիճակում: Ռազմական առավելությունը և նախաձեռնությունը Գերմանիայի կողմն էր: Խորհրդային երկրի

վրա կախվել էր մահացու վտանգ:

1941թ. հունիսի 30–ին ստեղծվեց **Պաշտպանության պետական կոմիտե**՝ Ստալինի նախագահությամբ: Այդ կոմիտեի ձեռքում կենտրոնացվեց երկրի ռազմական, քաղաքական և տնտեսական ամբողջ կառավարումը: Արագ տեմպերով սկսվեց թիկունքի աշխատանքների վերակառուցումը:

Ամբողջ ժողովուրդը ոտքի էր կանգնել ֆաշիստական զավթիչների դեմ կենաց և մահու պայքարի: Դա **Հայրենական մեծ պատերազմ** էր:

Գերմանիան Խորհրդային Միության դեմ հարձակողական գործողությունները զարգացրեց երեք ուղղությամբ՝ **Հյուսիսային**, նպատակ ունենալով գրավել Մերձբալթիկան և Լենինգրադը, **Կենտրոնական**, որի գլխավոր նպատակը Մոսկվայի գրավումն էր, և **Հարավային**՝ ձգտելով տիրանալ Կիևին, Խարկովին և Դոնբասին: Հիտլերականները ծրագրել էին պատերազմը հաղթանակով ավարտել մինչև 1941թ. դեկտեմբերը: Սկզբնական փուլում գերմանական զորքերը հասան տպավորիչ հաղթանակների: Նրանք գրավեցին Մերձբալթիկան և շրջափակման օղակի մեջ վերցրին Լենինգրադը, տիրեցին Կիևին, Խարկովին և Դոնբասի մեծ մասին: Իսկ 1941թ. սեպտեմբեր ամսին հայտնվեցին Մոսկվայի մատույցներում, որտեղ ընթանում էին կատաղի մարտեր:

Խորհրդային հրամանատարությանը հաջողվեց մոբիլիզացնել բոլոր հնարավոր ուժերը և հակահարձակման անցնել սկզբում Ռոստովի, Տիխվինի և Ղրիմի շրջաններում, իսկ **1941թ. դեկտեմբերի 6–ին՝ Մոսկվայի** տակ: Խորհրդային զորքերը ծանր հարված հասցրին գերմանական զորքերին և մինչև **1942թ. մարտ ամիսը** նրանց հետ շպրտեցին մոտ 400 կիլոմետր: Դա **առաջին լուրջ պարտությունն էր**, որ Գերմանիան կրեց Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում: Դա ցույց տվեց գերմանական բանակի անպարտելիության մասին տարածված տեսակետի սնանկ լինելը: **Շնորհիվ Մոսկվայի տակ տարած հաղթանակի՝ ձախողվեց հիտլերականների «Կայծակնային պատերազմի»** («Բլիցկրիգի») ծրագիրը:

ԲԵԿՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1942թ. վերջերին Վոլգայի ափերին՝ Ստալինգրադի տակ, ծավալվեց Երկրորդ համաշխարհային պատերազմի ամենակարևոր և արյունալի ճակատամարտերից մեկը: Մինչ այդ գերմանացիներին հաջողվել էր ուշքի գալ Մոսկվայի տակ կրած ծանր պարտությունից, հակահարձակման անցնել հարավային ուղղությամբ ու դուրս գալ Ստալինգրադի մատույցները:

Ստալինգրադի ճակատամարտի ելքը կարևոր էր ինչպես ընդհանուր պատերազմի ճակատագրի, այնպես էլ Անդրկովկասի, մասնավորապես Հայաստանի համար: Թուրքիան իր ռազմական ուժերը կենտրոնացրել էր Անդրկովկասի սահմանների մոտ, պատրաստ էր Ստալինգրադի անկման դեպքում ներխուժել Հայաստան և Անդրկովկաս, որը կարող էր ողբերգական հետևանքներ ունենալ հայ ժողովրդի համար: Բարեբախտաբար դա տեղի չունեցավ: Խորհրդային զորքերը **1942թ. նոյեմբերի 19–ին** անցան հակահարձակման և շրջապատեցին գերմանացիների ստալինգրադյան խմբավորումը, որը բաղկացած էր **22 դիվիզիայից՝ մոտ 330 հազար զինվոր և սպա: 1943թ. փետրվարի 2–ին**, ծանր կորուստներից հետո, այդ խմբավորումն անձնատուր եղավ:

Խորհրդային զորքերի հաղթանակը Ստալինգրադի մոտ Երկրորդ համաշխարհային պատերազմում արմատական բեկման սկիզբը դրեց:

Ստալինգրադից հետո խորհրդային բանակը խոշոր հաջողություններ ձեռք բերեց նաև հյուսիսում: 1943թ. հունվարին խորհրդային զորքերին հաջողվեց ճեղքել Լենինգրադի

Տանկային ճակատամարտ. Կուրսկ, 1943թ. հուլիս

շրջափակման օղակը, իսկ **հուլիս–օգոստոսին**՝ կարևոր հաղթանակ տանել **Կուրսկի ճակատամարտում:** 1943թ. վերջերին Կարմիր բանակի զորամիավորումները անցան Դնեպրը և ազատագրեցին Կիևը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ի՞նչ նպատակ էր հետապնդում ֆաշիստական Գերմանիան՝ ԽՍՀՄ–ի վրա հարձակվելով:*
2. *Ինչպե՞ս էր կոչվում ԽՍՀՄ–ի վրա հարձակվելու գերմանական ռազմական պլանը: Ե՞րբ սկսվեց Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմը:*
3. *Ի՞նչ նշանակություն ունեցավ Մոսկվայի ճակատամարտը:*
4. *Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում արմատական բեկման սկիզբը ո՞ր ճակատամարտի հետ է կապված:*

դաս 28

ՀԱԿԱՀԻՏԼԵՐՅԱՆ ԿՈԱԼԻՑԻԱՆ

ԱՄՆ-Ի՝ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

1941թ. դեկտեմբերի 7–ի առավոտյան ճապոնական ռազմանավերը և ավիացիան հանկարծակի հարձակվեցին Հավայան կղզիներում գտնվող ամերիկյան **Պիրլ Հարբոր ռազմածովային հենակայանի** վրա: **Հաջորդ օրը ԱՄՆ–ը պատերազմ հայտարարեց Ճապոնիային:** Դեկտեմբերի 11–ին ԱՄՆ–ին պատերազմ հայտարարեցին Ճապոնիայի դաշնակիցներ Գերմանիան և Իտալիան: ԱՄՆ–ն իր հերթին պատերազմ հայտարարեց նրանց:

Զարգացնելով իրենց հաջողությունները՝ ճապոնացիները մինչ 1942թ. գարունը գրավեցին Թաիլանդը, Ֆիլիպինները, Մալայան, Բիրման, Ինդոնեզիան, Սինգապուրը, Հոնկոնգը և ներխուժեցին Հարավարևմտյան Չինաստան ու Արևելյան Հնդկաստան:

Այսպիսով՝ 1941թ. վերջին պատերազմի մեջ էին ներգրավվել աշխարհի բոլոր խոշոր պետությունները:

ՀԱԿԱՀԻՏԼԵՐՅԱՆ ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Գերմանիայի և նրա դաշնակիցների դեմ պատերազմի մեջ ներգրավված պետությունները միավորվեցին *հակահիտլերյան կոալիցիայի** մեջ: Այդ կոալիցիան ձևավորվեց 1941թ. վերջերից մինչև 1942թ. կեսերն ընկած ժամանակաշրջանում: Նրա առաջատար ուժերն էին **ԽՍՀՄ–ը, ԱՄՆ–ը և Անգլիան:**

Ռուզվելտը և Չերչիլը **1941թ. օգոստոսի 14–ին** հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որն ավելի շատ հայտնի է **Ատլանտյան խարտիա** անվանումով: Այդ հայտարարությամբ նրանք հավաստում էին իրենց վճռականությունը՝ անհրաժեշտ զենքով և զինամթերքով օգնել Խորհրդային Միությանը: Խորհրդային Միությունը **1941թ. սեպտեմբերի 24–ին** միացավ Ատլանտյան խարտիային:

Այդ փաստաթղթում նշվում էր, որ ԱՄՆ–ը և Անգլիան տարածքային նվաճումների չեն ձգտում: Նրանք ընդունում են բոլոր ժողովուրդների իրավունքները՝ կամովին ընտրելու կառավարման իրենց ձևը, և օգնելու են, որպեսզի բռնի միջոցներով ինքնուրույնությունից զրկված ժողովուրդները վերստանան իրենց իրավունքները:

Կարևոր քաղաքական իրադարձություն էր **1942թ. հունվարի 1–ին Վաշինգտոնում՝** հակահիտլերյան կոալիցիայի անդամ 26 պետությունների, այդ թվում՝ ԱՄՆ–ի, ԽՍՀՄ–ի և Անգլիայի կողմից **Միացյալ ազգերի հռչակագրի ստորագրումը:** Նրանք ստանձնեցին ագրեսորների դեմ համագործակցելու և նրանց հետ անջատ հաշտություն չկնքելու պարտավորություններ:

1942թ. մայիսի 26–ին Խորհրդային Միության և Անգլիայի միջև համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագիր ստորագրվեց Լոնդոնում՝ քսան տարի ժամանակով: Իսկ Վաշինգտոնում 1942թ. հունիսի 11–ին ստորագրվեց խորհրդա–ամերիկյան համաձայնագիր: Կողմերը պարտավորություն էին ստանձնում աջակցելու միմյանց պաշտպանունակության ամրապնդմանը:

Հակահիտլերյան կոալիցիայի մեջ միավորվեցին միմյանց հակադիր հասարակա-

կան–քաղաքական կառուցվածք ունեցող երկրներ. մի կողմից՝ կապիտալիստական ԱՄՆ–ը, Անգլիան և այլ երկրներ, մյուս կողմից՝ սոցիալիստական ԽՍՀՄ–ը: Սակայն այդ միավորումը հնարավոր եղավ այն պատճառով, որ, ինչպես Չերչիլն է դիպուկ բնութագրել, պատերազմը Գերմանիայի դեմ «**դասակարգային պատերազմ չէր**»: Ազգային անկախության և ազատության հարցերը գերադաս էին նեղ դասակարգային խնդիրներից:

ԹԵՀՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

1943թ. պատերազմի այլ թատերաբեմերում հաջողության հասան հակաֆաշիստական կոալիցիայի մյուս երկրները: Անգլո–ամերիկյան զորքերը մտան Իտալիա, սակայն նրանք չէին շտապում Ֆրանսիա դուրս գալ և բացել երկրորդ ճակատը: Այս հանգամանքը նյարդայնացնում էր խորհրդային կառավարությանը:

Դաշնակիցների միջև կուտակվել էին բազմաթիվ հարցեր, որոնց լուծումը հնարավոր էր միայն երեք պետությունների ղեկավարների հանդիպման դեպքում:

Այդ նպատակով **1943թ. նոյեմբերի 28–ից մինչև դեկտեմբերի 1–ը Թեհրանում տեղի ունեցավ խորհրդաժողով՝ ԱՄՆ–ի, ԽՍՀՄ–ի և Անգլիայի ղեկավարներ Ֆ. Ռուզվելտի, Ի. Ստալինի և Ու. Չերչիլի** մասնակցությամբ:

Թեհրանի խորհրդաժողովում քննարկման **կենտրոնական հարցը** դարձավ Եվրոպայում Գերմանիայի դեմ **երկրորդ ճակատի** բացման խնդիրը: Այդ խնդրի շուրջը տարաձայնություններ կային դաշնակիցների միջև: Սկզբնական շրջանում Անգլիան և ԱՄՆ–ը ԽՍՀՄ–ին խոստացել էին երկրորդ ճակատ բացել Եվրոպայում 1942թ., իսկ այնուհետև՝ 1943թ.: Սակայն երկրորդ ճակատը այդպես էլ չէր բացվում:

«Մեծ եռյակը» Թեհրանի խորհրդաժողովում

Թեհրանում որոշվեց, որ ԱՄՆ–ը և Անգլիան երկրորդ ճակատ կբացեն Ֆրանսիա ներխուժելով, և դա կարվի 1944թ. մայիսից ոչ ուշ: Երեք մեծ տերությունները համաձայնվեցին նաև, որ պատերազմից հետո պետք է վերականգնվի Լեհաստանի անկախությունը՝ ավելի ընդարձակ սահմաններով:

Ընդունվեց հռչակագիր Իրանի մասին, որտեղ ասված էր, որ երեք մեծ տերությունները միահամուռ են Իրանի լրիվ անկախության, ինքնիշխանության և տարածքային անձեռնմխելիության պահպանման հարցում:

Չերչիլին շատ էր մտահոգում նաև Թուրքիայի ճակատագիրը: Նա փորձում էր Ստալինից Թուրքիայի նկատմամբ ագրեսիվ քայլեր չձեռնարկելու խոստում կորզել: Ստալինը կարող էր նման քայլ անել՝ որպես պատրվակ օգտագործելով ԽՍՀՄ–ի անվտանգության ապահովումը և նկատի առնելով Թուրքիայի գերմանամետ քաղաքականությունը: Չերչիլը ձգտում էր Թուրքիային զերծ պահել ԽՍՀՄ–ի վրեժխնդրությունից և պահպանել այն իբրև պատնեշ՝ դեպի Մերձավոր Արևելք և Միջերկրական ռուսների առաջխաղացման դեմ: Այդտեղով էր անցնում Բրիտանական կայսրությունը մայր երկրին կապող զարկերակը: Ըստ էության, Անգլիան փորձում էր կանխել դեպքերի այնպիսի զարգացումը, որը կարող էր տանել դեպի Հայկական հարցի ամբողջական կամ մասնակի լուծում:

ԵՐԿՐՈՐԴ ՃԱԿԱՏԻ ԲԱՑՈՒՄԸ: ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 1944 ԹՎԱԿԱՆԻՆ

1944թ. հունիսի 6–ին անգլիական և ամերիկյան զորքերը ամերիկյան գեներալ Էյզենհաուերի հրամանատարությամբ հաջողությամբ անցան Լա Մանշ նեղուցը և դուրս եկան ֆրանսիական ափ: **Երկրորդ ճակատը** բացվեց, և Գերմանիան պատերազմի հինգերորդ տարում հարկադրված եղավ կռվելու երկու ճակատով:

Սկսվեց Ֆրանսիայի ազատագրումը: 1944թ. օգոստոսի 19–ին Փարիզում ապստամբություն սկսվեց, որը մի քանի օր անց պսակվեց հաղթանակով: Հոկտեմբերի 23–ին ԱՄՆ–ը, Անգլիան և Խորհրդային Միությունը ճանաչեցին Ֆրանսիայի ժամանակավոր կառավարությունը՝ գեներալ դը Գոլի գլխավորությամբ:

Դաշնակիցները նոր հաջողություններ արձանագրեցին 1944թ. երկրորդ կեսին:

Խորհրդային զորքերին հաջողվեց ազատագրել ԽՍՀՄ ամբողջ տարածքը և պատերազմը տեղափոխել ֆաշիստական զորքերի կողմից գրավված երկրներ: Խորհրդային զորքերի գործողությունները ղեկավարում էին տաղանդավոր զորահրամանատարներ **Գ. Ժուկովը, Ա. Վասիլևսկին, Ի. Կոնևը, Կ. Ռոկոսովսկին, Հ. Բաղրամյանը** և ուրիշներ: Խորհրդային զորքերի հաղթանակներն ավելի խորացրին ֆաշիստական խմբավորման ճգնաժամը և արագացրեցին նրա քայքայումը:

Գերմանիայի հետ հարաբերությունները խզեցին ու պատերազմից դուրս եկան Ռումինիան, Բուլղարիան և Հունգարիան: Տեղաշարժեր կատարվեցին նաև Խաղաղօվկիանոսյան ճակատում: 1944թ. հոկտեմբերին ամերիկյան զորքերն սկսեցին Ֆիլիպինների ազատագրումը ճապոնացիներից:

ՅԱԼԹԱՅԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

1945թ. սկզբներին ակնառու դարձավ, որ Գերմանիայի պարտությունը մոտակա ամիսների հարց է: Ստեղծված իրադրությունն անհրաժեշտ դարձրեց հակահիտլերյան կոալիցիայի առաջատար երեք պետությունների՝ ԽՍՀՄ–ի, ԱՄՆ–ի և Անգլիայի ղեկավարների նոր հանդիպումը: Այն կայացավ **1945թ. փետրվարի 4–11–ը Ղրիմում Յալթայում**: Խորհրդաժողովին մասնակցում էին ԱՄՆ–ի նախագահ **Ֆ. Ռուզվելտը**, ԽՍՀՄ–ի Ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ **Ի. Ստալինը** և Անգլիայի վարչապետ **Ու. Չերչիլը**:

Դաշնակից երեք երկրների ղեկավարները պայմանավորվեցին շարունակել համաձայնեցված գործողությունները և հիտլերյան Գերմանիային միաժամանակ հարված հասցնել արևելքից, արևմուտքից, հյուսիսից ու հարավից: **Կողմերը համաձայնվեցին, որ իրենք պատերազմը կդադարեցնեն միայն Գերմանիայի անվերապահ կապիտուլյացիայից** հետո: Որոշում ընդունվեց նաև **Միավորված ազգերի կազմակերպություն ստեղծելու վերաբերյալ**: Այդ նպատակով հանձնարարվեց 1945թ. ապրիլի 25–ին Սան Ֆրանցիսկոյում գումարել հիմնադիր ժողով:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ի՞նչ դեպքերի հետ էր կապված ԱՄՆ–ի՝ պատերազմի մեջ պաշտոնապես մտնելը:*
2. *Ե՞րբ ձևավորվեց հակահիտլերյան կոալիցիան: Ի՞նչ կարևոր փաստաթուղթ ընդունեցին կոալիցիայի մասնակիցները:*
3. *Ինչո՞ւ հնարավոր եղավ կապիտալիստական երկրների և սոցիալիստական խորհրդային Միության միավորումը մեկ խմբավորման մեջ: Հիշե՛ք Չերչիլի բնութագրումը:*
4. *Ո՞վքեր էին մասնակցում Թեհրանի խորհրդաժողովին: Ի՞նչ կարևոր որոշում կայացվեց Թեհրանում: Ինչո՞ւ էր Չերչիլը մտահոգություն ցուցաբերում Թուրքիայի հանդեպ:*
5. *Ի՞նչ դեր խաղաց երկրորդ ճակատի բացումը Եվրոպայում:*
6. *Պարզաբանե՛ք Յալթայի խորհրդաժողովի նշանակությունը:*

դաս 29

ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԱՎԱՐՏԸ

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱՆՁՆԱՏՈՒՐ ԼԻՆԵԼԸ

Շարունակելով զարգացնել ռազմական հաջողությունները՝ դաշնակիցներն արևելքից և արևմուտքից շարժվում էին դեպի Գերմանիա: Մեկը մյուսի հետևից ազատագրվեցին ֆաշիստական լծի տակ գտնվող եվրոպական պետությունները: Խորհրդային զորքերն ընդհուպ մոտեցան Բեռլինին:

1945թ. ապրիլի 16–ին սկսվեց Բեռլինի գրոհը: Այն ծանր և համառ պայքար էր: Հիտ-

Ամերիկյան և խորհրդային զորքերի հանդիպումը Էլբա գետի վրա. Տորգաու, 1945թ. ապրիլի 25

լերյան Գերմանիան վերջին ջանքերն էր գործադրում ֆաշիզմի որջը փրկելու համար: **Ապրիլի 25–ին Էլբայի** ափերին հանդիպեցին խորհրդային և ամերիկյան զորամիավորումները: Իսկ մարտերը դեռ շարունակվում էին Բեռլինի փողոցներում: Ապրիլի 30–ին հայտնի դարձավ, որ Հիտլերը ինքնասպանություն է գործել: Երկու օր անց Բեռլինը հանձնվեց: **Մայիսի 8–ից 9–ի** գիշերը ստորագրվեց Գերմանիայի **անվերապահ կապիտուլյացիայի*** ակտը:

Խորհրդային կառավարության որոշմամբ՝ **մայիսի 9–ը** ԽՍՀՄ–ում հայտարարվեց տոն՝ **Մեծ հաղթանակի օր**:

Պատերազմը Եվրոպայում ավարտվեց:

ՊՈՏՍԴԱՄԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

Եվրոպայում պատերազմի ավարտից հետո դաշնակիցների առջև կանգնեց նրա արդյունքները հանրագումարի բերելու և հետպատերազմյան զարգացման հիմնական ուղղությունները որոշելու խնդիրը: Այս նպատակով **1945թ. հուլիսի 17–ից մինչև օգոստոսի 2–ը Պոտսդամում** (Բեռլինի մոտ) գումարվեց հակահիտլերյան կոալիցիայի երեք մեծ տերությունների ղեկավարների հանդիպումը:

Խորհրդաժողովին մասնակցում էին ԱՄՆ–ի նոր նախագահ **Հարրի Տրումենը** (նա այդ պաշտոնում փոխարինել էր 1945թ. ապրիլի 12–ին հանկարծամահ եղած Ֆ. Ռուզվելտին), **Ի. Ստալինը**: Անգլիան հուլիսի 17–25–ը ներկայացնում էր վարչապետ Ու. Չերչիլը: Իսկ պառլամենտական ընտրություններում պահպանողականների պարտությունից հետո նրա տեղը զբաղեցրեց հաղթանակ տարած լեյբորիստական կուսակցության ղեկավար, նոր վարչապետ **Կլեմենտ Էտլին**:

Երեք մեծ տերությունները հաստատեցին Գերմանիայի նկատմամբ քաղաքականության **գլխավոր սկզբունքները՝ ապառազմականացում, նացիզմի վերացում և դեմոկրատացում**:

Մասնակիցները համաձայնության եկան Լեհաստանի նոր սահմանների խնդրի շուրջը՝ նրան հանձնելով նախկինում Գերմանիայի տիրապետության տակ գտնվող որոշ տարածքներ: Խորհրդային Միությանը հանձնվեց Քյոնիգսբերգը (այժմ՝ Կալինինգրադ):

Իտալիայի, Ֆինլանդիայի, Ռումինիայի, Հունգարիայի և Բուլղարիայի հետ հաշտության պայմանագրեր պատրաստելու համար խորհրդաժողովը ստեղծեց ԱՄՆ–ի, ԽՍՀՄ–ի, Անգլիայի, Ֆրանսիայի և Չինաստանի արտաքին գործերի նախարարների խորհուրդ: Խորհրդային Միությունը հավաստեց իր պատրաստակամությունը՝ մտնել պատերազմի մեջ ընդդեմ Ճապոնիայի: Պոտսդամում խորհրդային պատվիրակությունը բարձրացրեց Թուրքիայի կողմից Առաջին համաշխարհային պատերազմի

Պոտսդամի խորհրդաժողովը. 1945թ.

ժամանակ զավթված հայկական տարածքները հետ վերադարձնելու իարցը: Սակայն դա չպաշտպանեցին Անգլիան և ԱՄՆ–ը:

ՃԱՊՈՆԻԱՅԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ: ՊԱՏԵՐԱԶՄԻ ՌԱԶՄԱԲԱՂԱԲԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Իտալիայի և Գերմանիայի պարտությունից հետո հերթը հասավ Ճապոնիային:

1945թ. օգոստոսի 6–ի առավոտյան ամերիկյան ռմբակոծիչները, մարդկության պատմության մեջ առաջին անգամ, ատոմային ռումբ նետեցին **Հիրոսիմա**, իսկ **օգոստոսի 9–ին՝ Նագասակի** քաղաքների վրա՝ մոխրի ու ավերակների կույտի վերածելով դրանք:

1945թ. օգոստոսի 8–ին խորհրդային կառավարությունը հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ նշվում էր, որ ԽՍՀՄ–ն օգոստոսի 9–ից իրեն համարում է պատերազմի մեջ ընդդեմ Ճապոնիայի:

Խորհրդային զորքերն անցան հարձակման Հեռավոր Արևելքում կենտրոնացված մեկ միլիոնանոց **Կվանտունյան** բանակի դեմ: Դաշնակիցների ռազմական գործողությունները թե՛ ցամաքում և թե՛ ծովում ընթանում էին հաջողությամբ:

Ճապոնիան **1945թ. սեպտեմբերի 2–ին** անձնատուր եղավ: Դրանով **Երկրորդ աշխարհամարտն ավարտվեց**:



Հիրոսիմա քաղաքը ատոմային ռմբակոծությունից հետո. 1945թ. օգոստոսի 6

Երկրորդ համաշխարհային պատերազմը շատ ծանր հարված հասցրեց մարդկությանը: Պատերազմի մեջ էին ներգրավվել 61 երկրներ՝ 1,7 մլրդ բնակչությամբ, որոնց ռազմական ուժերում ծառայում էր 110 մլն մարդ: Պատերազմական գործողություններն ընթանում էին մոտ 22 մլն քառ. կմ տարածքի վրա: Վեց տարի տևած պատերազմի ընթացքում **զոհվեց ավելի քան 50 մլն** և հաշմանդամ դարձավ 95 մլն մարդ: Վիթխարի էին նյութական կորուստները: Պատերազմից հետո, 1945–1946թթ. Նյուրնբերգում կայացած դատավարությունը մահվան դատապարտեց հիտլերյան հանցագործներին:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՆ

Ֆաշիզմի դեմ մղվող պայքարին ակտիվ մասնակցություն ցույց տվեց նաև հայ ժողովուրդը:

Ռազմաճակատում մարտնչող հայ մարտիկն ու թիկունքի ծանր պայմաններում աշխատող բանվորն ու գյուղացին քաջ գիտակցում էին, որ միայն գերմանական ֆաշիզմի ջախջախումը կարող է կանխել նրա դաշնակից Թուրքիայի ներխուժումն Անդրկովկաս: Անդրկովկասի սահմանների մոտ Թուրքիան կենտրոնացրել էր 26 դիվիզիա՝ նպաստավոր պահի սպասելով տարածաշրջան ներխուժելու համար:

Պատերազմի տարիներին բանակ զորակոչվեցին **մոտ 600 հազար հայորդիներ**: Հայաստանից, որի բնակչությունն այդ ժամանակ կազմում էր 1 միլիոն 300 հազար մարդ, զորակոչվեց 250 հազար մարդ: Նրանցից կազմավորվեցին 76, 89, 261, 390, 408 և 409–րդ դիվիզիաները: Հայկական դիվիզիաները և խորհրդային բանակի այլ զորամիավորումներում գտնվող հայերը մարտնչում էին բոլոր ռազմաճակատներում և զորատեսակներում՝ ցամաքային, տանկային, ռազմածովային, ռազմաօդային և այլն: Նրանք Կարմիր բանակի մյուս զորամիավորումների հետ միասին կռվեցին Կովկասի պաշտպանության համար, իսկ հետագայում մասնակցեցին Ռուսաստանի տարածքների, Ուկ-

ռաինայի, Բելոռուսիայի, Մերձբալթիկայի, Բալկանների, Լեհաստանի, Կենտրոնական Եվրոպայի և Գերմանիայի ազատագրմանը: Առանձնահատուկ բարձր գնահատականի է արժանի **89-րդ հայկական Թամանյան դիվիզիան** իր փառապանծ հրամանատար, **գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանի** հետ: Այդ դիվիզիան միակ ազգային դիվիզիան էր, որ մասնակցեց Բեռլինի գրոհին: Պատերազմում զոհվեցին մոտ 250 հազար հայորդիներ:

Հայ ժողովրդի **104 անձնուրաց զավակներ արժանացան** ամենաբարձր՝ **Խորհրդային Միության հերոսի կոչման**, իսկ մարշալ Հովհաննես Բաղրամյանը և օդաչու Նելսոն Ստեփանյանը դարձան կրկնակի հերոսներ: **63 հայ գեներալներ** ղեկավարում էին խոշոր զորամասավորումներ՝ դիվիզիաներ, կորպուսներ, բանակներ, իսկ Հ. Բաղրամյանը Մերձբալթյան Առաջին ռազմաճակատի հրամանատարն էր: Հայ զորահրամանատարներից չորսը արժանացան ռազմական ամենաբարձր՝ **մարշալի** կոչմանը: Նրանք էին՝ Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանը, ավիացիայի մարշալ Ա. Խադյակովը (Արմենակ Խանփերյանց), զրահատանկային զորքերի մարշալ Համազասպ Բաբաջանյանը և ԽՍՀՄ նավատորմի ծովակալ Հովհաննես Իսակովը (Տեր-Իսահակյան): Ընդ որում, Խորհրդային Միության մեջ առաջինը Հ. Իսակովին շնորհվեց ռազմածովային ուժերում եղած ամենաբարձր կոչումը:

Պատերազմին եռանդուն մասնակցություն ունեցավ նաև սփյուռքահայությունը՝ անվերապահորեն կանգնելով առաջադիմական ուժերի կողքին՝ ընդդեմ ֆաշիզմի: Հայության հայրենիքը խորհրդանշող Խորհրդային Հայաստանը մտնում էր ԽՍՀՄ-ի կազմի մեջ, որը պատերազմում էր հիտլերյան Գերմանիայի դեմ: Այս հանգամանքն ինքնին կանխորոշում էր սփյուռքահայության քաղաքական կողմնորոշումը:

Սփյուռքահայերը ԽՍՀՄ դաշնակիցների բանակում մարտնչում էին գերմանա-իտալական ֆաշիստների և ճապոնական ռազմամոլների դեմ՝ պատերազմի բոլոր թատերաբեմերում: Միայն ամերիկյան բանակի շարքերում պատերազմին մասնակցեց 18,5 հազար հայ: Բազմաթիվ հայեր մասնակցում էին *Դիմադրության շարժմանը**: Սփյուռքահայությունն ակտիվորեն մասնակցեց **«Սասունցի Դավիթ»** տանկային շարասյան ստեղծման համար միջոցների հանգանակմանը և բազմաթիվ այլ միջոցառումների:

Հայ ժողովուրդը իր սուրը պատվով դրեց պատյան:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ի՞նչ դեր խաղաց խորհրդային բանակը ֆաշիստական Գերմանիայի ջախջախման գործում: Ե՞րբ ավարտվեց Հայրենական մեծ պատերազմը:*
2. *Պոտսդամի խորհրդաժողովում ի՞նչ կարևոր որոշումներ ընդունվեցին:*
3. *Ձեր կարծիքով արդարացի՞ էր, արդյոք, ատոմային զենքի գործածումը Ճապոնիայի դեմ. ռազմական նշանակություն ունեցա՞վ այն, թե՞ ոչ:*
4. *Ինչպիսի՞ մասնակցություն ունեցավ հայ ժողովուրդը Երկրորդ աշխարհամարտում: Հայկական հարցն ինչո՞ւ ընթացք չստացավ Պոտսդամի խորհրդաժողովում:*
5. *Հանրագումարի բերե՛ք Երկրորդ աշխարհամարտի ռազմաքաղաքական արդյունքները:*

դաս 30

ԱՄՓՈՓՈՒՄ

- **Երկրորդ համաշխարհային պատերազմն իր չափերով ու պատճառած վնասներով աննախադեպ երևույթ էր մարդկության պատմության մեջ: Դա մեր մոլորակի բոլոր ազգերի ու ժողովուրդների մեծագույն ողբերգությունն էր:**

Որո՞նք էին Երկրորդ աշխարհամարտի պատճառները:
Ներկայացրե՛ք երկու քշնամական խմբավորումները: Պարզաբանե՛ք նրանց նպատակները պատերազմի առաջին փուլում (1939-1941թթ.):

- **Խորհրդային Միությունը պատերազմի առաջին փուլն օգտագործեց իր տարածքներն ընդարձակելու և դիրքերն ուժեղացնելու համար:**

Նախկին ցարական կայսրության ի՞նչ տարածքներ միացվեցին ԽՍՀՄ-ին 1939-1940թթ.: Գնահատե՛ք խորհրդային կառավարության այդ ուղղությամբ կատարած քայլերը (արդարացի՞, դրակա՞ն, թե՞ ոչ):

- **Ֆաշիստական Գերմանիան պատերազմի սկզբնական փուլում գրավեց գրեթե ամբողջ ցամաքային Եվրոպան: Սպասվածին հակառակ՝ Մեծ Բրիտանիան նվաճելու փոխարեն գերմանական հրամանատարությունն իր գլխավոր ուժերով հարձակվեց Խորհրդային Միության վրա:**

Որքա՞ն տևեց ԽՍՀՄ ժողովուրդների Հայրենական մեծ պատերազմը:
Ի՞նչ դեր խաղաց խորհրդային բանակը ֆաշիստական Գերմանիայի ջախջախման գործում:
Թվարկե՛ք խորհրդային զորքերի տարած կարևորագույն հաղթանակներն ըստ տարեթվերի և վայրերի:

- **Հակաֆաշիստական խմբավորման երկրները 1941-1942թթ. միավորվեցին մեկ կոալիցիայի մեջ: ԱՄՆ-ի՝ պատերազմի մեջ մտնելուց հետո հակահիտլերյան կոալիցիան ավելի ամրապնդվեց, սակայն պատերազմի գլխավոր ծանրությունն իր վրա էր կրում Խորհրդային Միությունը: Հասարակական տարբեր համակարգերի պատկանող ԽՍՀՄ-ը, ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան ռազմաքաղաքական սերտ համագործակցություն հաստատեցին 1942-1945 թվականներին:**

Ե՞րբ ձևավորվեց հակահիտլերյան կոալիցիան:
Երկրորդ ճակատի բացումն արդյո՞ք արագացրեց Երկրորդ աշխարհամարտի ավարտը:

- **Պատերազմի ընթացքում ԽՍՀՄ-ը, ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան իրենց ռազմաքաղաքական պլանները համաձայնեցնելու նպատակով կազմակերպեցին ամենաբարձր մակարդակի երեք խորհրդաժողովներ:**

Ո՞ր խորհրդաժողովում վճռվեց Եվրոպայում երկրորդ ճակատ բացելու խնդիրը:
Ի՞նչ որոշումներ կայացրեցին Յալթայի և Պոտսդամի խորհրդաժողովները:

- **«Առանցքի» երկրներից առաջինը Իտալիան դուրս եկավ պատերազմից՝ 1943 թվականին:**

Ե՞րբ ստորագրվեցին Գերմանիայի և Ճապոնիայի անվերապահ կապիտուլյացիայի ակտերը:
Ո՞րն է Երկրորդ աշխարհամարտում ֆաշիզմի դեմ ԽՍՀՄ-ի և նրա դաշնակից երկրների տարած հաղթանակի պատմական նշանակությունը:

- **Հայ ժողովրդի զավակներն ամենաակտիվ մասնակցությունն ունեցան Հայրենական մեծ պատերազմում, համաշխարհային պատերազմի տարբեր ճակատներում ու հակաֆաշիստական պայքարում:**

Փաստերով և թվերով ապացուցե՛ք, որ հայերը որոշակի ներդրում ունեցան ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի գործում:
Ո՞ր խորհրդաժողովում արծարծվեց Հայկական հարցը:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1939թ. սեպտեմբերի 1	Երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը
1940թ. մայիս-հունիս	Ֆրանսիայի գրավումը Գերմանիայի կողմից
1941թ. հունիսի 22	Ֆաշիստական Գերմանիայի հարձակումը ԽՍՀՄ-ի վրա. Հայրենական մեծ պատերազմի սկիզբը
1941թ. դեկտեմբեր - 1942թ. մարտ	Խորհրդային բանակի հակահարձակումը Մոսկվայի մատույցներում. գերմանական զորքերի առաջին խոշոր պարտությունը պատերազմում
1942թ. հունվարի 1	Միացյալ ազգերի հռչակագրի ստորագրումը Վաշինգտոնում. հակահիտլերյան կոալիցիայի պաշտոնական ձևակերպումը
1942թ. նոյեմբերի 19 - 1943թ. փետրվարի 2	Ստալինգրադի հաղթական ճակատամարտը. արմատական բեկման սկիզբը պատերազմի ընթացքում
1943թ. հուլիս-օգոստոս	Կուրսկի ճակատամարտը. արմատական բեկման ավարտը
1944թ. հունիսի 6	Երկրորդ ճակատի բացումը Եվրոպայում
1945թ. փետրվարի 4-11	Յալթայի խորհրդաժողովը
1945թ. մայիսի 8	Ֆաշիստական Գերմանիայի անվերապահ կապիտուլյացիան. Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմի ավարտը
1945թ. մայիսի 9	Մեծ հաղթանակի օրվա հայտարարումը ԽՍՀՄ-ում
1945թ. հուլիսի 17 - օգոստոսի 2	Պոտսդամի խորհրդաժողովը
1945թ. սեպտեմբերի 2	Երկրորդ աշխարհամարտի ավարտը

ԱՇԽԱՐՀԸ 1945-2000 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ



Քաղաքական փոփոխությունները Եվրոպայում 1990–ական թվականներին. Անկախ Պետությունների Համագործակցության և Եվրամիության ստեղծումը

Գլուխ 10 ԱՇԽԱՐՀԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ: ԵՐԿՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

դաս 31-32

ՈՒԺԵՐԻ ՆՈՐ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ: ԳԵՐՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱԿ-Ը ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՍԿԻԶԲԸ

Չնայած Ազգերի լիգայի անփառունակ վախճանին՝ համաշխարհային հանրությունը անհրաժեշտ էր համարում նոր միջազգային կազմակերպության ստեղծումը: Դա պայմանավորված էր խաղաղության պահպանման և անվտանգության ապահովման խնդիրներով: Առանձին վերցրած որևէ պետություն, անգամ պետությունների խումբ, ի վիճակի չէր լուծելու այդ դժվարագույն խնդիրները: Այդ բանը կարող էր անել միջազգային համապարփակ կազմակերպությունը: Հենց այդպիսին հանդիսացավ **Միավորված ազգերի կազմակերպությունը** (ՄԱԿ):

ՄԱԿ-ի հիմնադիր համագումարը

ՄԱԿ-ի Կանոնադրության ստորագրումը

բացվեց 1945թ. ապրիլի 25-ին, ամերիկյան Սան Ֆրանցիսկո քաղաքում: Նրա աշխատանքներին մասնակցում էին 50 պետությունների ներկայացուցիչներ: Համաժողովն ավարտվեց 1945թ. հունիսի 26-ին, երբ ընդունվեց ՄԱԿ-ի Կանոնադրությունը: Այն ուժի մեջ մտավ 1945թ. հոկտեմբերի 24-ին՝ ԱՄՆ-ի, ԽՍՀՄ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Չինաստանի և անդամ պետությունների մեծ մասի կողմից նրա վավերացումից հետո: **Հոկտեմբերի 24-ը յուրաքանչյուր տարի նշվում է որպես ՄԱԿ-ի օր:**

ՄԱԿ-ի հիմնական մարմիններն են՝ **Գլխավոր ասամբլեան, Անվտանգության խորհուրդը, Տնտեսական և սոցիալական խորհուրդը, Խնամակալության խորհուրդը, Միջազգային դատարանը և Քարտուղարությունը:**

Գլխավոր ասամբլեայի նիստերը գումարվում են ամեն տարվա սեպտեմբեր ամսին: Այդ մարմինն օժտված է լայն լիազորություններով քննարկելու այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են՝ նոր անդամների ընդունումը, պետությունների համագործակցությունը քաղաքական, տնտեսական, սոցիալական, հումանիտար, մշակութային և այլ մարզերում, խաղաղության և պատերազմի հարցեր և այլն:

ՄԱԿ-ի կարևորագույն մարմինը Անվտանգության խորհուրդն է, որը, համաձայն ՄԱԿ-ի Կանոնադրության, «կրում է միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման գլխավոր պատասխանատվությունը»: Այն կազմված է 5 մշտական և 10 ոչ մշտական անդամներից: Մշտական անդամներն են՝ ԱՄՆ-ը, Ռուսաստանը (նախկին ԽՍՀՄ-ի փոխարեն), Չինաստանը, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան: Հարցերի ընդունումը հիմնված է հինգ մշտական անդամների միաձայնության սկզբունքի վրա: Եթե նրանցից մեկը դեմ է քվեարկում, օգտվելով վետոյի իր իրավունքից, ապա հարցը չի ընդունվում:

Քարտուղարությունը բաղկացած է Գլխավոր քարտուղարից և նրա աշխատակազմից: **Գլխավոր քարտուղարը ՄԱԿ-ի գլխավոր վարչական պաշտոնյան է**, որը նշանակվում է Գլխավոր ասամբլեայի կողմից՝ Անվտանգության խորհրդի երաշխավորությամբ: **ՄԱԿ-ի առաջին գլխավոր քարտուղար ընտրվեց** Նորվեգիայի ներկայացուցիչ **Տրյուգվե Լին**, իսկ այժմ այդ պաշտոնը զբաղեցնում է **Քոֆի Անանը**:

ՄԱԿ-ի պաշտոնական լեզուներն են՝ անգլերենը, իսպաներենը, չինարենը, ռուսերենը և ֆրանսերենը:

ՄԱԿ-ի գլխավոր սկզբունքներն են՝ ինքնորոշումը, միջազգային համագործակցությունը, պետությունների ներքին գործերին չմիջամտելը, միջազգային վեճերը խաղաղ միջոցներով լուծելը, միջազգային գործերում ուժի և ուժի սպառնալիքի գործադրումից ձեռնպահ մնալը: ՄԱԿ-ի կարևոր խնդիրներից է մարդու իրավունքների և հիմնական ազատությունների իրականացումը բոլորի համար՝ առանց ռասայի, լեզվի, սեռի և կրոնի տարբերության: Սրանք առաջադիմական և դեմոկրատական սկզբունքներ են, համամարդկային իդեալներ, որ հնարավոր եղավ հաստատել Երկրորդ համաշխարհային պատերազմում հակահիտլերյան կոալիցիայի տարած հաղթանակի արդյունքում:

Յուրաքանչյուր պետություն, ընդունվելով ՄԱԿ-ի անդամ, պարտավոր է ընդունել նրա Կանոնադրությունը և նրանում ամրագրված այս սկզբունքները, որոնք ընկած են միջազգային հարաբերությունների նոր համակարգի ձևավորման հիմքում:

ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐՈՒՄԸ ՆԱԽԿԻՆ ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԻՋԵՎ: «ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ» ՍԿԻԶԲԸ

Պատերազմի ավարտից հետո հակահիտլերյան կոալիցիայի մեջ մտնող դաշնակիցների ուղիները բաժանվեցին: ԽՍՀՄ-ը և նրա արևմտյան դաշնակիցները ոչ միայն հեռացան միմյանցից, այլև հայտնվեցին հակադիր ռազմաքաղաքական ճամբարներում: Նրանք սկսեցին հետապնդել տարբեր քաղաքական նպատակներ: **Հաստատվեց ուժերի նոր փոխհարաբերակցություն**: Գերմանիան, Իտալիան և Ճապոնիան կորցրեցին իրենց նախկին ռազմաքաղաքական ազդեցությունը: Խիստ տկարացավ Ֆրանսիան, զգալի չափով թուլացավ նաև Անգլիան, որն այդպես էլ չկարողացավ վերականգնել իր նախկին դերը միջազգային հարաբերություններում: Արևմտյան կամ կապիտալիստական աշխարհի անվիճելի առաջատար ուժը դարձավ ԱՄՆ-ը:

Չնայած ծանր կորուստներին՝ իր դիրքերն ուժեղացրեց Խորհրդային Միությունը: Դեռ ավելին՝ **1946–1949 թթ. Արևելյան Եվրոպայի** մի շարք երկրներում՝ Ալբանիայում, Բուլղարիայում, Գերմանական Դեմոկրատական Հանրապետությունում, Լեհաստանում, Ռումինիայում, Հարավսլավիայում, Հունգարիայում, Չեխոսլովակիայում, Խորհրդային Միության ակտիվ օժանդակությամբ հաստատվեցին սոցիալիստական կարգեր: **Ձևավորվեց սոցիալիզմի համաշխարհային համակարգը**: Հետագայում այն համալրեցին Չինաստանը, Հյուսիսային Կորեան, Մոնղոլիան, Վիետնամը, Կուբան ու Լաոսը:

Պայքարը հետպատերազմյան տարիներին հիմնականում ընթանում էր ԱՄՆ-ի ու ԽՍՀՄ-ի և նրանց կողմից ղեկավարվող խմբավորումների միջև: Նրանք միմյանց մեղադրում էին, ոչ առանց հիմքի, **համաշխարհային տիրապետություն հաստատելու ձգտման մեջ**: Խորհրդային Միությունը մեղադրում էր ԱՄՆ-ին, որ նա ձգտում է աշխարհում հաստատել իր իմպերիալիստական տիրապետությունը և թելադրել նրան իր կամքը: Այդ հանգամանքի հետ ԽՍՀՄ-ը չէր կարող հաշտվել: Իսկ ԱՄՆ-ը գտնում էր, որ Խորհրդային Միության նպատակն է կոմունիստական տիրապետության հաստատումը ամբողջ աշխարհում: Ելնելով այդ հիմնադրույթից՝ ԱՄՆ-ի կառավարող շրջանները առաջ քաշեցին «կոմունիզմի զսպման» կարգախոսը: Նրանց կարծիքով դրան կարելի էր հասնել, եթե ԽՍՀՄ-ի հանդեպ իրականացվի «ուժի դիրքերից» քաղաքականություն:

Այսպիսով՝ աշխարհի երկու ամենահզոր տերություններն անցան առճակատման և միմյանց նկատմամբ սպառնալիքների բա-

ղաքականության, որը ստացավ «**սառը պատերազմ**» անվանումը:

Ընդունված է, որ «**սառը պատերազմի**» **ահազանգը հանդիսացավ ամերիկյան Ֆուլտոն քաղաքում** Անգլիայի նախկին վարչապետ **Ու. Չերչիլի՝ 1946թ. մարտի 5-ի ելույթը**, որին ներկա էր ԱՄՆ-ի նախագահ Հ. Տրումենը: Չերչիլը հայտարարեց, որ աշխարհին սպառնում է նոր՝ երրորդ համաշխարհային պատերազմի վտանգը, իսկ դրա աղբյուրը Խորհրդային Միությունը և միջազգային կոմունիզմն են: Նա առաջարկում էր ԽՍՀՄ-ի դեմ ստեղծել արևմտյան պետությունների դաշինք, նրա նկատմամբ վարել կոշտ քաղաքականություն և եթե հարկ լինի, կիրառել ամերիկյան միջուկային զենքը: Ամերիկյան ղեկավարները համերաշխ էին Չերչիլի հիմնադրույթների հետ:

Խորհրդային պետությունը, դրանից համապատասխան հետևություններ անելով, սկսեց զարկ տալ իր ռազմական արդյունաբերությանը և ստեղծել զենքի նոր, ավելի ժամանակակից, այդ թվում և միջուկային տեսակներ: Սկսվեց **սպառազինությունների կատաղի մրցավազքը**, որն իր ոլորտը ներգրավեց նաև աշխարհի մյուս պետություններին: Դա շատ ծանր նստեց մարդկության վրա, կասեցրեց համաշխարհային տնտեսական առաջընթացը և երկար տարիներ թունավորեց միջազգային մթնոլորտը:

Սառը պատերազմի բնորոշ գծերն էին՝ առճակատումը, սպառազինությունների մրցավազքը, միջուկային զենքի օգտագործման սպառնալիքը, ահաբեկման դիվանագիտությունը, հետախուզության և լրտեսության աննախընթաց ծավալումը, տնտեսական գործոնի օգտագործումը որպես հակառակորդին հյուծելու միջոց, ինչպես նաև գաղափարախոսական, մշակութային և կրոնական գործոնները:

ՆԱՏՕ-Ի ԵՎ ՎԱՐՇԱՎԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

«Սառը պատերազմի» տրամաբանությունը պահանջում էր կազմակերպչորեն ձևավորել աշխարհի բաժանումը երկու հակադիր խմբավորումների: Այդ ուղղությամբ առաջինը նախաձեռնություն ցուցաբերեցին արևմտյան պետությունները՝ ԱՄՆ-ի գլխավորությամբ: Նրանք գտնում էին, որ հասունացել է իրենց ռազմական, տնտեսական և քաղաքական հնարավորությունները մեկ միասնական դաշինքի մեջ միավորելու պահը:

1949թ. ապրիլի 4-ին արևմտյան տասներկու պետություններ՝ ԱՄՆ-ը, Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան, Կանադան, Բելգիան, Հոլանդիան, Լյուքսեմբուրգը, Դանիան, Նորվեգիան, Պորտուգալիան և Իսլանդիան **Վաշինգտոնում ստորագրեցին Հյուսիսատլանտյան պայմանագիրը**, որով ստեղծվեց Հյուսիսատլանտյան դաշինքը՝ ՆԱՏՕ-ն (North Atlantic Treaty Organization): 1952թ. ՆԱՏՕ-ի անդամ դարձան Թուրքիան և Հունաստանը, իսկ 1955թ.՝ Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունը:

Այդ կազմակերպության հիմնական նպատակներն էին՝ սերտ համագործակցություն անդամ պետությունների միջև, միմյանց նկատմամբ փոխադարձ օգնության ցուցաբերում՝ ներառյալ զինված ուժերի կիրառումը, անդամ յուրաքանչյուր պետության ռազմական հզորության ամրապնդում, դաշինքի մասնակից պետությունների համատեղ գործողություններ նրանց քաղաքական անկախությանը և անվտանգությանը սպառնացող վտանգի դեպքում և այլն: ՆԱՏՕ-ի ղեկավար ուժը ԱՄՆ-ն է, որին և պատկանում է վճռական խոսքը ՆԱՏՕ-ի քաղաքականության որոշման մեջ:

Խորհրդային Միությունը խիստ քննադատեց ՆԱՏՕ-ի ստեղծումը՝ այն որակելով որպես ագրեսիվ նպատակներ հետապնդող դաշինք: ԽՍՀՄ կառավարության հուշագրում ասված էր. «Այդ դաշինքն ունի ակնհայտ ագրեսիվ բնույթ և ուղղված է ԽՍՀՄ-ի դեմ»: Ելնելով դրանից՝ Խորհրդային Միությունը ձեռնարկեց մի շարք հակամիջոցառումներ՝ իր և իր դաշնակիցների անվտանգությունն ամրապնդելու համար: Այդ հանգամանքն էր հերթին նյարդայնացնում էր ԱՄՆ-ին և ընդհանրապես ՆԱՏՕ-ի անդամ բոլոր պետություններին: Այդ հակամիջոցառումների մեջ ամենակարևորը

Հյուսիսատլանտյան դաշինքի կազմավորվելը. Վաշինգտոն, 1949թ. ապրիլի 4

Արևելյան Եվրոպայի ութ սոցիալիստական երկրների ռազմական դաշինքի ստեղծումն էր՝ Խորհրդային Միության գլխավորությամբ:

1955թ. մայիսի 14 –ին Խորհրդային Միությունը, Ալբանիան, Բուլղարիան, Գերմանական Դեմոկրատական Հանրապետությունը, Լեհաստանը, Հունգարիան, Չեխոսլովակիան և Ռումինիան **Վարշավայում ստորագրեցին բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագիր, որով հիմք դրվեց Վարշավայի պայմանագրի երկրների ռազմական խմբավորմանը:**

Պայմանագրի հիմնական՝ չորրորդ հոդվածում ասված էր, որ եթե Պայմանագրի մասնակից պետությունը կամ պետությունների խումբը Եվրոպայում հարձակման ենթարկվի, ապա մյուս պետությունները նրան օգնություն ցույց կտան բոլոր միջոցներով, այդ թվում և ռազմական:

Այսպիսով՝ **ՆԱՏՕ–ի և Վարշավայի պայմանագրի կազմակերպության ստեղծումով ձևակերպվեց աշխարհի բաժանումը երկու հակադիր ռազմաքաղաքական խմբավորումների:** «Սառը պատերազմը» ստացավ նոր թափ, որն իր ոլորտի մեջ Հերգրավեց նաև Ասիան, Աֆրիկան և Լատինա՝յան Ամերիկան:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ինչո՞ւ անհրաժեշտ դարձավ միջազգային համապարփակ նոր կազմակերպության ստեղծումը: Որո՞նք են ՄԱԿ–ի գլխավոր մարմինները: Թվարկե՛ք նրա գործունեության հիմքում ընկած գլխավոր սկզբունքները:*
2. *Ձեր կարծիքով ինչո՞ւ սրվեցին հարաբերությունները նախկին դաշնակից երկրների՝ ԽՍՀՄ–ի և ԱՄՆ–ի միջև:*
3. *Որո՞նք էին «սառը պատերազմի» պատճառները: Տվե՛ք դրա բնորոշումը:*
4. *Ե՞րբ է ձևավորվել սոցիալիզմի համաշխարհային համակարգը: Ո՞ր երկրներն էին մտնում դրա մեջ:*
5. *Ի՞նչ նպատակներ էր հետապնդում ՆԱՏՕ–ի ստեղծումը: Ի՞նչ պատասխան քայլ իրականացրեց ԽՍՀՄ–ը: Երկու հակադիր խմբավորումների կազմն ինչպիսի՞ն էր ձևավորման պահին:*

Գլուխ 11 ԽՍՀՄ-Ը 1945-1991 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ: ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՓՈՒԼՈՒՄ

դաս 33

ԽՍՀՄ-Ը ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

ԵՐԿՐԻ ՆԵՐՔԻՆ ՎԻՃԱԿԸ

ԽՍՀՄ ժողովուրդների ծանր զրկանքների, անձնազոհության ու արյան գնով ձեռք բերվեց հաղթանակը Երկրորդ աշխարհամարտում: Երկիրը կրեց մարդկային և նյութական խոշոր կորուստներ: Մարդկային զոհերի թիվն անցավ 30 միլիոնից: Ավերակների էին վերածվել 1710 քաղաք (այդ թվում՝ Լենինգրադը, Կիևը, Ստալինգրադը, Սմոլենսկը, Մինսկը և այլն): Ավերվել էին 70 հազարից ավելի գյուղ և ավան: Գերմանական ֆաշիստները ոչնչացրին 30 850 գործարան ու ֆաբրիկա, 1175 հանքահոր, տասնյակ հազարավոր կիլոմետր երկարությամբ երկաթուղի և այլն: Գյուղատնտեսական ցանքատարածությունները կրճատվեցին մեկ քառորդով: Երկիրը կորցրեց իր **ազգային հարստության մոտ 30 տոկոսը**:

Ամենուր զգացվում էր սարքավորումների ու հաստոցների, ինչպես նաև մասնագետ աշխատողների կարիք: Խորհրդային ժողովուրդը հույս ուներ, որ պատերազմից հետո բարեփոխումներ կկատարվեն երկրի հասարակական ու տնտեսական կյանքում, կբարձրանա բանվոր–ծառայողների աշխատավարձը, ստեղծագործական ազատություն կստանան մտավորականները, կբարելավվի գյուղացիության վիճակը և այլն:

Սակայն էական փոփոխություններ չկատարվեցին: Շուտով վերացվեց պատերազմի սկզբում մտցված արտակարգ դրությունը, լուծարվեց Պաշտպանության պետական կոմիտեն, վերակառուցվեցին նախարարությունները ու պետական կոմիտեները:

Լարված աշխատանքի շնորհիվ սեղմ ժամկետում **վերականգնվեց ավերված քաղաքների ու ավանների մեծ մասը, կառուցվեցին** բազում **նոր ձեռնարկություններ**, և **կյանքը մտավ խաղաղ հունի մեջ**: Վարչահրամայական համակարգը բոլոր միջոցները գործադրում էր շինարարական պլանները ժամանակին կատարելու համար: Դրանց չկատարումը դիտվում էր որպես գործալքություն կամ վնասարարություն, որի համար դաժան պատիժ էր սպասվում: Այսպիսի պայմաններում ծաղկում էին աշքակապությունը, գրոհայնությունը, արտաժամյա աշխատանքը և այլն: Արդյունաբերական ձեռնարկությունների վերականգնման, ջրանցքների ու ջրամբարների կառուցման, ածխի ու փայտանյութի արտադրության բնագավառներում որոշակի դեր էր վերապահվում քաղաքական բանտարկյալների և բանակայինների ձրի աշխատանքին:

Հետպատերազմյան շրջանում ծանր էր հատկապես գյուղատնտեսության վիճակը: Վիճակն ավելի վատացավ 1946թ. երաշտի պատճառով: Սովից հազարավոր մարդիկ էին մահանում, սակայն նույնիսկ այդ պայմաններում ԽՍՀՄ–ը հացահատիկ էր արտահանում այլ երկրներ: Պետությունը գյուղից այնքան մթերքներ էր վերցնում, որքան անհրաժեշտ էր համարում՝ առանց հաշվի առնելու եղած հնարավորությունները: Գյուղացին ամրացված էր հողին և զրկված որևէ սոցիալական ապահովությունից: Կոլտնտեսային հարկադիր աշխատանքը չէր կարող արդյունավետ լինել: Գյուղի այս ծանր վիճակը շարունակվեց մինչև 50–ական թվականների կեսերը, երբ Ստալինի մահից հետո որոշ բարեփոխումներ կատարվեցին:

Պատերազմից հետո բավականաչափ ծանր էին մարդկանց կյանքի պայմանները: **1947թ. վերացվեց մթերքների բաշխման բարտային համակարգը և անցկացվեց դրամական ռեֆորմ**: Արհամարհելով բնակչության ծանր վիճակը՝ 1948թ. բարձրացվեցին մթերք-

ների ու ապրանքների գները. դրանք 3 անգամ բարձր էին 1940թ. համեմատությամբ:

ՎԱՐՉԱՀՐԱՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ ԵՎ ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ԱԼԻՔԸ

Անկախ հետպատերազմյան շրջանի դժվարություններից՝ տարեցտարի ամրապնդվում էին վարչահրամայական անձնակազմի և նրա սպասարկողների կաստայական հատկանիշները: Արագ տեմպերով ձևավորվում էր սոցիալիստական վերնախավի պարազիտային շերտը:

Խորհրդային Միության ժողովուրդների ծանր պայքարով ձեռք բերած հաղթանակը վերագրվեց կոմունիստական կուսակցությանը և նրա «հանճարեղ» առաջնորդ Ի. Ստալինին: Միակուսակցական բռնապետությունը հաղթանակի դափնիներով ծածկեց սեփական ժողովրդի կրած զրկանքները, արդարացրեց համակարգի գոյությունն ու գործունեությունը: Խորհրդային ժողովուրդը պատերազմից հետո թեկուզ դաժան փորձությունների մի նոր ժամանակաշրջան:

Հետպատերազմյան բռնությունների առաջին հարվածը հասցվեց զինվորական գործիչներին, որոնց հեղինակության բարձրացումը դուր չէր գալիս Ստալինին: Մարշալ **Ռոկոսովսկին** շուտով ուղարկվեց (աքսորվեց) Լեհաստան: Ձերբակալվեցին ավիացիայի մարշալներ **Նովիկովը և Խուդյակովը** (Խանփերյանցը): Հալածանքներ սկսվեցին մարշալ **Գ. Ժուկովի** դեմ:

Ողբերգական էր ֆաշիստական զնդաններից ազատագրված ռազմագերիների վիճակը: Պատերազմից հետո տուն վերադարձած գերիներին ենթարկում էին զանգվածային ստուգումների, խուսափում էին նրանց աշխատանքի ընդունել կամ որևէ տեղ գրանցել: Նրանց մեծ մասը դատապարտվեց բանտարկության կամ աքսորի:

Նոր թափով ծավալվեցին հարձակումները գիտության, գրականության, արվեստի առաջադեմ ներկայացուցիչների և ընդհանրապես մտավորականության վրա: Ի. Ստալինի և Կենտկոմի քարտուղար **Ա. Ժդանովի** նախաձեռնությամբ **1946թ.** ՀամԿ(բ)Կ Կենտկոմը հատուկ որոշում ընդունեց **«Զվեզդա»** և **«Լենինգրադ» ամսագրերի** մասին: Մի շարք որոշումներ եղան երաժշտության բնագավառում «ֆորմալիզմի» դեմ պայքարելու մասին (խիստ քննադատության ենթարկվեցին **Ա. Պրոկոֆիևը, Դ. Շոստակովիչը, Ա. Խաչատրյանը, Վ. Մուրադելին** և ուրիշներ): *Կոսմոպոլիտիզմի** դեմ պայքարելու պատրվակով հալածվեցին բոլոր նրանք, ովքեր հետաքրքրվում էին արևմտյան գրականությամբ և արվեստով:

Կուսակցության Կենտկոմի որոշումների լույսի տակ համանման որոշումներ էին ընդունում և «սխալներ» ու «թերություններ» բացահայտում բոլոր հանրապետություններում ու մարզերում: Պայքար ծավալվեց այն ամենի դեմ, ինչը նոր էր ու առաջավոր:

Բռնությունների ոլորտից դուրս չմնաց գիտությունը: Հենվելով հավաքագրված միջակությունների վրա՝ ստալինյան բյուրոկրատական վարչակարգը ծաղրուծանակի էր ենթարկում գիտության տարբեր բնագավառների ականավոր ներկայացուցիչներին: Ծանր էր հատկապես **հասարակական գիտությունների վիճակը**, որտեղ մարքս-լենինյան դոգմաներից ամենափոքր շեղումը դիտվում էր որպես հանցագործություն:

Ամենուր թմբկահարվում էին խորհրդային գիտության նվաճումները, իսկ համաշխարհային գիտական մտքի ձեռքբերումները թերագնահատվում, ծաղրի էին ենթարկվում: **Փաստորեն խզվել էր կապը համաշխարհային գիտության հետ**, որի պատճառով բազում բնագավառներում Խորհրդային Միությունը զգալիորեն հետ էր մնում միջազգային մակարդակից:

Հետագայում մեծ ջանքեր պահանջվեցին այդ սխալներն ուղղելու համար:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ի՞նչ կորուստների գնով նվաճվեց Մեծ հաղթանակը:*
2. *Ներկայացրե՛ք երկրի տնտեսության վիճակը պատերազմից հետո:*
3. *Ինչո՞ւ հետպատերազմյան շրջանում սկսվեց բռնությունների նոր ալիք: Ի՞նչ հետևանքներ ունեցավ այն քաղաքական, սոցիալական, մշակութային և գիտական ոլորտներում:*

դաս 34

ԽՍՀՄ-Ը 1953-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

«ԶՆՋԱԼԸ» ԵՎ ԽՐՈՒՇՉՈՎՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

1953թ. սկզբներին ԽՍՀՄ-ում կրկին շիկացավ նյարդայնության ու անվստահության մթնոլորտը: Բանտարկվեցին մի շարք ականավոր բժիշկներ, որոնք ստուգել էին Ստալինի առողջական վիճակը: Նախատեսվում էր լուրջ փոփոխություններ կատարել կուսակցական վերնաշերտերում: Հասունանում էր հալածանքների ու բռնությունների նոր ալիք, որը կանխվեց Ստալինի հանկարծակի մահով:

Ստալինը մահացավ **1953թ. մարտի 5-ին**: Դրանով ավարտվեց մի ամբողջ պատմական դարաշրջան: 1953թ. սեպտեմբերին **Նիկիտա Խրուշչովն** ընտրվեց ԽՄԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար: Նա կատարեց մի շարք բարեփոխումներ: Առաջին հերթին արդարացվեցին համակենտրոնացման ճամբարներում ու բանտերում տառապող հարյուր հազարավոր մարդիկ (մեծ մասը՝ հետմահու): Երկրի կյանքում սկսվեց *«ջնհալի»** ժամանակաշրջանը:

1956թ. գումարվեց ԽՄԿԿ XX համագումարը: Այն վերհանեց երկրի հասարակական-քաղաքական կյանքում տեղ գտած թերությունները, քննադատեց կամայականությունների ու բռնությունների քաղաքականությունը և **դատապարտեց անհատի՝ Ստալինի պաշտամունքը**: Այդ քննադատությունն, իհարկե, միանշանակ չընդունվեց ինչպես Խորհրդային Միությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Նիկիտա Խրուշչով (1894-1971) ԽՄԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար 1953-1964թթ., ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահ 1958-1964թթ.

Առաջին տիեզերագնաց Յուրի Գագարինը (աջից)

1950-ական թվականների տնտեսական բարեփոխումներն սկսվեցին գյուղատնտեսությունից: Որոշվեց ավելացնել գյուղատնտեսության զարգացմանն ուղղված հատկացումները, ամրապնդել նրա նյութատեխնիկական բազան, բարելավել գյուղացիության սոցիալ-կենցաղային պայմանները, վարձատրության ձևերը և այլն: Արդյունքում՝ աճեց գյուղատնտեսական արտադրանքն ու բարելավվեց բնակչության սպասարկումը:

1950-ական թվականների կեսերից մինչև 60-ական թվականների սկիզբը ԽՍՀՄ-ի համար նշանավորվեցին որպես **գիտական նվաճումների և գիտատեխնիկական վերափոխումների ժամանակաշրջան**:

1957թ. հոկտեմբերին տիեզերք արձակվեց առաջին արհեստական արբանյակը: Իսկ **1961թ. ապրիլի 12-ին Յուրի Գագարինը** բացեց տիեզերքի «մայրուղին»: Շուտով շահագործման հանձնվեց **«Լենին»** առաջին ատոմային սառցահատը: Բացվեց միջուկային հետազոտությունների ինստիտուտը և այլն:

Ներքաշվելով ատոմային մրցավազքի մեջ՝ Խորհրդային Միությունն իր հիմնական միջոցներն սկսեց ներդնել այդ բնագավառում, որի հետևանքով խախտվեց տնտեսության մյուս ճյուղերի զարգացման համաչափությունը: 1960-ական թվականների սկզբին երկիրը կրկին ճգնաժամային վիճակի մեջ ընկավ:

1964թ. հոկտեմբերին ԽՄԿԿ Կենտկոմի պլենումը Խրուշչովին ազատեց զբաղեցրած

պաշտոններից և ուղարկեց թոշակի: ԽՄԿԿ Կենտկոմի առաջին (հետո կոչվեց գլխավոր) քարտուղար ընտրվեց **Լեոնիդ Բրեժնևը**:

ԵՐԿՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1950-1960-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1950–ական թվականների կեսերին, երբ հրապարակայնորեն դատապարտվեց ստալինյան վարչակարգը, նոր միտումներ նկատվեցին ԽՍՀՄ արտաքին քաղաքականության մեջ: Խորհրդային դիվանագիտությունը դարձավ ավելի ճկուն: 1954թ. Խրուշչովն այցելեց Չինաստան: Խորհրդային Միությունը պարտավորվեց օգնել Չինաստանի արդյունաբերության զարգացմանը: Կարգավորվեցին հարաբերությունները նաև Հարավսլավիայի հետ, որոնք խզվել էին 1940–ականների վերջերին: Բարեկամական հարաբերություններ հաստատվեցին ԽՍՀՄ–ի և Հնդկաստանի միջև:

Սոցիալիստական երկրների միջև հարաբերությունների ամրապնդման և համատեղ պաշտպանական քաղաքականության մշակման գործում կարևոր էր 1955թ. կնքված **Վարշավայի պայմանագրի** դերը: Վարշավայի պայմանագրի շրջանակներում ստեղծվեց Զինված ուժերի միացյալ հրամանատարություն և Քաղաքական խորհրդատու կոմիտե:

Փոխվեցին ԽՍՀՄ–ի հարաբերությունները կապիտալիստական երկրների հետ: 1955թ.՝ Պոտսդամի խորհրդաժողովից 10 տարի անց, կրկին հանդիպեցին մեծ տերությունների ղեկավարները (ԽՍՀՄ, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա): Նրանք քննարկեցին Եվրոպայի կոլեկտիվ անվտանգության և այլ հարցեր: ԽՍՀՄ–ը 1955թ. դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության հետ: Նույն թվականին պայմանագիր ստորագրվեց նաև Ավստրիայի հետ: Փաստացիորեն ձևավորված երկու համակարգերի միջև ընթացող պայքարին փոխարինելու էր գալիս խաղաղ գոյակցության և փոխշահավետ համագործակցության քաղաքականությունը:

1959թ. աշնանը Ն. Խրուշչովը ժամանեց ԱՄՆ և հանդիպում ունեցավ նախագահ Էյզենհաուերի հետ: Նրանք քննարկեցին զինաթափման, խորհրդա–ամերիկյան հարաբերությունների և այլ հիմնահարցեր: Մեկ տարի անց Խրուշչովը կրկին այցելեց ԱՄՆ և ելույթ ունենալով ՄԱԿ–ում՝ առաջարկեց սեղմ ժամկետում ավարտել ապագաղութացման գործընթացը, հասնել համընդհանուր և լիակատար զինաթափման: Այս առաջարկներն արժանացան միջազգային հասարակայնության հավանությանը և մեծապես նպաստեցին Խորհրդային Միության հեղինակության աճին:

Խորհրդային դիվանագիտության ջանքերով **1963թ. Մոսկվայում ստորագրվեց պայմանագիր միջուկային զենքի՝ մթնոլորտում, տիեզերական տարածության մեջ և ստորջրյա փորձարկումներն արգելելու մասին**:

ԼՃԱՅՄԱՆ ՇՐՋԱՆ

1960–ական թվականների վերջից ԽՍՀՄ–ը թևակոխեց հասարակական կյանքի **լճացման փուլը**: Այդ ժամանակ փորձ էր արվում հրաժարվել նախորդ շրջանում ձեռք բերված ժողովրդավարական նվաճումներից: Լայն աշխատանք էր տարվում Լ. Բրեժնևի պաշտամունքը ստեղծելու ուղղությամբ: Բոլոր հասարակական–քաղաքական միջոցառումների ժամանակ գովաբանվում էր նրա անձն ու գործունեությունը:

Գաղափարական խեղաթյուրումներից ամեն մի դժգոհություն կամ քննադատություն հետապնդվում և դատապարտվում էր: Նման անձինք, հատկապես ճանաչված գործիչները, հաճախ արտաքսվում էին ԽՍՀՄ– ից:

Կուսակցական–տնտեսական վերնախավը, որը հիմնականում ձևավորվել էր ստալինյան դարաշրջանում, **չէր ցանկանում ձերբազատվել անցյալի ժառանգությունից**: Անբավարար էին օգտագործվում գիտա-

Լեոնիդ Բրեժնև
(1906–1982)
ԽՄԿԿ Կենտկոմի
գլխավոր քարտուղար
1964–1982թթ., ԽՍՀՄ
Գերագույն խորհրդի
նախագահ 1977–1982թթ.

տեխնիկական հեղափոխության նվաճումները: Դրությունն ավելի վատ էր գյուղատնտեսության բնագավառում: Սկսվեց գյուղացիության արտահոսքը գյուղերից: **1980–ական թվականներին գյուղի ճգնաժամային վիճակն ավելի ծանրացավ** և վատթարացավ բնակչությանը պարենամթերքով ապահովումը: Չնայած անընդհատ ավելանում էին արտասահմանից սննդամթերքի ներմուծումները՝ նորից երևան եկան նորմավորված մատակարարումները, բաշխման քարտային կարգը և հերթերը:

ԵՐԿՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼՃԱՑՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Արտաքին քաղաքականության բնագավառում շարունակվում էր **խաղաղ գոյակցության քաղաքականությունը**: Որոշակի հավասարակշռություն հաստատվեց Վարշավայի պայմանագրի և ՆԱՏՕ–ի միջև, ինչը հնարավորություն տվեց վարելու զինված ուժերի և սպառազինությունների կրճատման քաղաքականություն: ԽՍՀՄ–ը գործուն մասնակցություն ունեցավ Եվրոպայի անվտանգության և համագործակցության հարցերին նվիրված խորհրդակցությանը, որին մասնակցում էր 33 երկիր: 1975թ. օգոստոսին Հելսինկիում ստորագրվեց խորհրդակցության ամփոփիչ փաստաթուղթը:

Սակայն 1960–ական թվականների վերջերից հակասություններ հանդես եկան սոցիալիստական երկրների սոցիալ–տնտեսական հարաբերությունների ոլորտում: Դա զգալիորեն թուլացրեց նրանց համագործակցությունը: **1968թ.** Խորհրդային Միության գլխավորությամբ Վարշավայի պայմանագրի մասնակից երկրների զորքերը մտան **Չեխոսլովակիա** և դաժան հաշվեհարդար տեսան հայրենասիրական ուժերի հետ, որոնք փորձ էին կատարել շեղվել սոցիալիզմի ստալինյան մոդելից: Սրվեցին տարաձայնությունները ԽՍՀՄ–ի և Չինաստանի միջև, ինչը 1969թ. հասցրեց զինված ընդհարման: **1979թ. Խորհրդային Միությունն իր զորքերը մտցրեց Աֆղանստան**: Այդ չհայտարարված տասնամյա պատերազմում զոհվեց 15 հազար խորհրդային զինվորական:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ձեր կարծիքով ինչո՞ւ ԽՍԿԿ XX համագումարը դատապարտեց Ստալինի անձի պաշտամունքը:*
2. *Ինչպիսի՞ նվաճումներ ունեցավ ԽՍՀՄ–ը տնտեսության և գիտության բնագավառներում:*
3. *Ներկայացրե՛ք ԽՍՀՄ–ի արտաքին քաղաքականությունը 1950–1960–ական թվականներին:*
4. *Ինչո՞ւ ենք Բրեժնևի կառավարման տարիներն անվանում «լճացման շրջան»:*
5. *Որո՞նք էին լճացման տարիներին երկրի արտաքին քաղաքականության բնորոշ գծերը:*

դաս 35

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՃԳՆԱԺԱՄԻ ԽՈՐԱՑՈՒՄԸ ԵՐԿՐՈՒՄ

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԿՈՒՐՍԸ

1980–ական թվականների կեսերին պարզ դարձավ, որ ԽՍՀՄ–ում գոյություն ունեցող վարչակարգն ի վիճակի չէ լուծելու երկրի առջև ծառացած խնդիրները:

1985թ. ԽՍԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար ընտրվեց **Միխայիլ Գորբաչովը**: Նա մի շարք բարեփոխումներ կատարեց, որն ստացավ *«վերակառուցում»** անվանումը: Այդ կուրսի նպատակն էր պահպանել սոցիալիստական, միակուսակցական համակարգը: Սակայն բարեփոխումների հռչակված ծրագիրը և *հրապարակայնությունը** չնպաստեցին երկիրը տնտեսական ու քաղաքական ճգնաժամից դուրս բերելու գործին: Ընդհակառակը, այն ավելի խորացրեց լճացման երևույթները, առաջացան նոր, բարդ ու հա-

Մ. Գորբաչով
ԽՍԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար (1985-1991թթ.), ԽՍՀՄ առաջին (և վերջին) նախագահ (1990-1991թթ.)

կասական գործընթացներ, սրվեցին ազգամիջյան հարաբերությունները և հակասությունները ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների ու հանրապետությունների միջև:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ

1989թ. մայիսին բացվեց **ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարը**: Այստեղ առաջին անգամ կարծիքների բախում տեղի ունեցավ երկրի զարգացման հեռանկարների, վերակառուցման և այլ հարցերի շուրջ: Համագումարում ձևավորվեցին պատգամավորական խմբավորումներ, որոնք փաստորեն ապագա բազմակուսակցական համակարգի սաղմերն էին:

ԽՍՀՄ պատմության մեջ առաջին անգամ լայն նախընտրական պայքար ծավալվեց: Հատկապես մեծ հաջողությունների էին հասնում վարչահրամայական համակարգը քննադատողները: Այդպիսիներից էր **Բորիս Ելցինը**, որը կարողացավ Մոսկվայում ընտրվել ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր, իսկ Սվերդլովսկում՝ ՌԽՖՍՀ ժողովրդական պատգամավոր: ՌԽՖՍՀ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարում Բ. Ելցինն ընտրվեց **ՌԽՖՍՀ Գերագույն խորհրդի նախագահ**: Իսկ **1991թ. հունիսին նա ընտրվեց Ռուսաստանի նախագահ**:

1989–1991 թվականներին մի շարք հանրապետություններում ձևավորվեցին **Ազգային ճակատներ** (հատկապես՝ Մերձբալթիկայում), որոնք պայքարում էին իրենց տնտեսական ու մշակութային վերածննդի համար: Ընդդիմադիր ուժերն ավելի հաճախակի էին կազմակերպում միտինգներ, ցույցեր: **Հայաստանում** ընդդիմադիր հիմնական կազմակերպությունը «**Ղարաբաղ» կոմիտեն** էր, որի հիմնական նպատակը արցախահայության ազատագրական պայքարին սատար կանգնելն էր:

Ընդհանրապես, ԽՍՀՄ–ը համարվում էր «իրավահավասար» հանրապետությունների միություն, չնայած նրանց գործունեությունը կախված էր Կենտրոնի քմահաճույքներից: Այդ էր պատճառը, որ 90–ական թվականների սկզբներին, դեմոկրատական ուժերը պայքարի ելան անկախություն ձեռք բերելու համար: Լատվիայի, Էստոնիայի Ազգային ճակատները և Լիտվայի «Սաուդիսը» 1990թ. իրենց հանրապետություններում կայացած ընտրություններում ստացան ձայների մեծամասնությունը:

Բարդ և հակասական էր իրավիճակն Անդրկովկասում: Չնայած երկրաշարժի ու շրջափակման հետևանքով Հայաստանում խորացող տնտեսական ճգնաժամին՝ արցախյան ազատագրական պայքարն ավելի ու ավելի էր համաժողովրդական բնույթ ստանում: 1990թ. մայիսին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրությունների ժամանակ հաջողությունների հասավ Հայոց համազգային շարժումը (ՀՀՇ), որի վարչությունը գլխավորող **Լ. Տեր–Պետրոսյանն** ընտրվեց Գերագույն խորհրդի նախագահ: **1991թ. սեպտեմբերի 21–ին** Հայաստանում հանրաքվե անցկացվեց ԽՍՀՄ կազմից դուրս գալու և անկախության մասին: Բնակչության ճնշող մեծամասնությունը քվեարկեց դրա օգտին:

Ադրբեջանի ընդդիմությունը, ոգևորված հայկական ջարդերի ու թալանի անպատժելիությամբ, 1990 թ. հունվարին փորձեց Բաքվում զավթել իշխանությունը: Բաքվում արտակարգ դրություն մտցվեց: Այդ պայմաններում կատարված ընտրությունները պահպանեցին կոմունիստների իշխանությունը: Քիչ ավելի ուշ ընտրություններ տեղի ունեցան Վրաստանում: Այդտեղ հաղթեց ընդդիմությունը և հանրապետության նախագահ ընտրվեց **Զ. Գամսախուրդիան**:

1991թ. օգոստոսին 10 հանրապետությունների կողմից **ստորագրվեց միութենական նոր պայմանագիր**, որով նոր հարաբերություններ պետք է հաստատվեին նրանց միջև:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ձեր կարծիքով որո՞նք էին վերակառուցման քաղաքականության իրականացման պատճառները:*
2. *Ինչպիսի՞ զարգացում ունեցավ քաղաքական կյանքը ԽՍՀՄ–ում «վերակառուցման» շրջանում:*
3. *Փորձեք պարզել այդ տարիներին ԽՍՀՄ-ում ազգային հարցի սրման պատճառները:*

դաս 36

ԽՍՀՄ-Ի ՓԼՈՒՋՈՒՄԸ: ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐԸ 1991-2000 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

1990թ. արդեն պարզ էր, որ ԽՄԿԿ Կենտկոմն այլևս չէր կարողանում առաջվա պես թելադրել իր կամքը ու երկիրն առաջ տանել իր ցանկացած ուղիով: Կառավարության ներսում նկատվում էին պառակտումներ: Պահպանողական ուժերը նոր ուղիներ էին որոնում իրենց երբեմնի դիրքն ու փառքը վերականգնելու համար: Հակառակ դրան՝ ուժեղանում էր ժողովրդավարական *վերափոխումների** կողմնակիցների շարժումը, որի մասնակիցները հետագայում դուրս եկան կոմկուսի շարքերից և ստեղծեցին դեմոկրատական կուսակցություն: Ժողովրդավարներն ամենուր լայն պայքար սկսեցին միութենական կառույցների արմատական վերափոխումների համար: Նրանք հիմնականում պաշտպանում էին ազգային հանրապետությունների անկախության համար մղվող պայքարը:

1990թ. Մերձբալթիկայի ազգային ճակատներն առաջ քաշեցին իրենց հանրապետությունները **անկախ պետություններ հռչակելու հարցը: Շուտով նույնը տեղի ունեցավ Հայաստանում, Վրաստանում, Ուկրաինայում, Բելառուսում և Ռուսաստանում**: ԽՍՀՄ փլուզումը արդեն փաստ էր: Այն կանխելու նպատակով ԽՍՀՄ խորհուրդների առաջին համագումարը մշակեց միութենական նոր պայմանագիր ստորագրելու հարցը: Նախատեսվում էր ազգային հանրապետություններին ավելի շատ իրավունքներ տալ: Սակայն այդ նախագիծը չէր բավարարում անկախություն հռչակած հանրապետություններին, որոնք իրենց տարածքի արդյունաբերական ձեռնարկությունների, ընդերքի լիիրավ տերն էին: Այդ պայմաններում առաջ էր քաշվել նոր պայմանագիր կնքելու գաղափարը, որտեղ բոլոր հանրապետությունները հավասար իրավունքներ պետք է ունենային և պահպանեին իրենց անկախությունը: Նախատեսվում էր 1991 թ. օգոստոսի 20-ին ստորագրել նոր համագործակցություն հաստատող պայմանագիրը: Սակայն ԽՍՀՄ պահպանողական վերնախավը որոշեց վիժեցնել այդ պայմանագրի կնքումը: 1991թ. օգոստոսի 19-ին գորբաչովյան վերափոխումներից դժգոհ հետադիմական ուժերը պետական հեղաշրջման անհաջող փորձ ձեռնարկեցին: Ժողովրդավարական ուժերը Բ. Ելցինի գլխավորությամբ վճռական պայքարով ձախողեցին այդ խռովությունը: **Դա ավելի արագացրեց ԽՍՀՄ փլուզումը:**

ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ

1991թ. դեկտեմբերի 8-ին ՌԽՖՍՀ նախագահ Բ. Ելցինի նախաձեռնությամբ Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելառուսի միջև համաձայնագիր կնքվեց **Անկախ պետությունների համագործակցություն (ԱՊՀ)** ստեղծելու մասին: Այդ պայմանագրում նշվում էր, որ ԽՍՀՄ-ը որպես միջազգային իրավունքի սուբյեկտ դադարում է գոյություն ունենալուց: Բոլոր նախկին հանրապետությունները հրավիրվում էին մտնելու ԱՊՀ-ի մեջ: Առաջինը միջինասիական հանրապետությունները և Ղազախստանը միավորվելու պատրաստակամություն հայտնեցին: Շուտով ԱՊՀ մտնելու ցանկություն հայտնեց նաև Հայաստանի Հանրապետությունը: **1991թ. դեկտեմբերի 21-ին Ալմա-Աթայում** ԱՊՀ հանրապետությունների ներկայացուցիչների հանդիպում տեղի ունեցավ: **Այդտեղ վերջնականապես հայտարարվեց ԽՍՀՄ-ի գոյությունը դադարելու մասին**: Ավարտվեց նրա 70-ամյա պատմությունը:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ՈՐՈՆՈՒՄՆԵՐ

ԱՊՀ-ն պետությունների այնպիսի միություն է, որի մեջ մտնողները պահպանում են իրենց ներքին ու արտաքին ինքնուրույնությունը, և ցանկացած ժամանակ կարող են դադարեցնել իրենց մասնակցությունը: Այդ

համագործակցությունը միտում ունի վերածվելու *համադաշնության**, թեպետ հանրապետությունները զգուշանում են այն բանից, որ ԱՊՀ–ն չվերածվի մի նոր միասնական կենտրոնական պետության, որտեղ կանտեսվեն իրենց շահերը: **Այս համագործակցությունը դեռևս ձևավորման գործընթացի մեջ է** և չնայած 10 տարիների ընթացքում մի քանի տասնյակ որոշումներ են ընդունվել՝ դրանք շատ դանդաղ են կենսագործվում: ԱՊՀ երկրներն իրենց բնական հարստություններով, նյութական և մարդկային ռեսուրսներով շատ են տարբերվում իրարից: Անկախություն ձեռք բերելուց հետո նկատվում է ազգային առանձնահատկությունների զարգացման ընդգծված քաղաքականություն, իսկ դրանք միշտ չէ, որ համընկնում են մյուսների շահերին: Այստեղից էլ ներքին հակասություններն ու գործնական աշխատանքների դանդաղկոտությունը:

ԱՊՀ ամենամյա գագաթնաժողովները տարբեր կարգի հանձնաժողովներ են ստեղծում համատեղ աշխատանքներ տանելու համար: Սակայն դրանք քիչ են արդյունք տալիս: ԱՊՀ շրջանակներում արդյունավետ համագործակցություն է տարվում նախկին ԽՍՀՄ պետական սահմանների պահպանման հարցում: **2000թ. որոշվեց այդ նպատակով ստեղծել խաղաղարարական զորամիավորումներ:** Որոշակի աշխատանքներ են տարվում ԱՊՀ շրջանակներում թմրանյութերի տարածման, կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարի բնագավառներում: Փորձեր են արվում կարգավորելու մաքսային հարաբերությունները, ստեղծելու ազատ առևտրի գոտիներ և այլն: **ԱՊՀ շրջանակներում ավելի արդյունավետ են գործում երկկողմ պայմանագրերը,** որոնք կնքվում են առանձին հանրապետությունների միջև: Այդպիսի համագործակցությունը խրախուսվում է: Փաստորեն, ԱՊՀ գագաթնաժողովներում առաջին հերթին ուղիներ են որոնվում հետագա համագործակցությունը զարգացնելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐԸ

ԱՊՀ ձևավորման առաջին օրերից **Հայաստանի Հանրապետությունը** ճանաչեց այն և **անդամագրվեց նոր միությանը**: Դա կարևոր նշանակություն ունի հիմնականում ոչ բարյացակամ պետությունների շրջափակման մեջ գտնվող Հայաստանի համար: Առաջին հերթին այն կարևոր դեր է խաղում հանրապետության անվտանգության ապահովման գործում: ԱՊՀ երկրներից **Հայաստանի համար շատ կարևոր են Ռուսաստանի հետ ունեցած հարաբերությունները:** Այս բնագավառում սերտ ռազմաքաղաքական հարաբերություններ են հաստատվել, որոնք բխում են երկու երկրների շահերից: Հայաստանը փոխշահավետ պայմանագրեր է կնքել Թուրքմենստանի, Վրաստանի և մյուս հանրապետությունների հետ: Հայաստանն իր ակտիվ գործունեությամբ, տարբեր մակարդակների պայմանագրերով նպաստում է ԱՊՀ–ի գործնական կայացմանը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ի՞նչ նպատակ էին հետապնդում «օգոստոսյան խռովության» ղեկավարները: Ինչպիսի՞ հետևանքներ կարող էր ունենալ խռովության հաղթանակը ԽՍՀՄ–ում:*
2. *Արդյո՞ք անխուսափելի էր ԽՍՀՄ–ի փլուզումը: Հիմնավորեք ձեր պատասխանը:*
3. *Ի՞նչ ուղղություններով են զարգանում ԱՊՀ երկրների միջև հարաբերությունները: Ինչպիսի՞ դժվարություններ կան ԱՊՀ կայացման գործում:*
4. *Ի՞նչ նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության համար անդամակցությունը ԱՊՀ–ին:*

Գլուխ 12 ԳԵՐՄԱՆԻԱՆ, ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՆ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՆ

դաս 37

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԱՍՆԱՏՈՒՄԸ ԵՎ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

ՉՈՐՍ ՕԿՈՒՊԱՑԻՈՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Երկրորդ համաշխարհային պատերազմն աղետաբեր եղավ Գերմանիայի համար: Նա կրեց վիթխարի մարդկային կորուստներ, հարյուրավոր քաղաքներ և բնակավայրեր վերածվեցին ավերակների, փլուզվեց երկրի տնտեսությունը: Քանդվեցին սոցիալական ու քաղաքական կառույցները, և, վերջապես, կործանվեց գերմանական պետությունը:

Գերմանիան բաժանվեց չորս *օկուպացիոն** գոտիների՝ **խորհրդային**, որը ներառում էր հիմնականում Արևելյան Գերմանիան, **ամերիկյան**, **բրիտանական** և **ֆրանսիական**, որոնք ընդգրկում էին Արևմտյան Գերմանիան: Նույնպիսի բաժանման ենթարկվեց Բեռլինը, որը, սակայն, գտնվում էր խորհրդային օկուպացիոն գոտում:

Պատերազմի հանցագործների դատը Նյուրնբերգում

Խորհրդային Միությունը ձգտում էր Արևելյան Գերմանիայի զարգացումը տանել սոցիալիստական ուղիով, իսկ ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան Արևմտյան Գերմանիայի զարգացումը տանում էին կապիտալիստական ուղիով: **1946թ. միավորվեցին արևմտյան երեք գոտիները**, որտեղ կիրառվեցին միանման տնտեսական միջոցառումներ, մասնավորապես՝ դրամական ռեֆորմ: Արևմտյան երեք տերությունները ձեռնամուխ եղան Գերմանիայի տնտեսության վերականգնմանը: Մինչդեռ խորհրդային կառավարությունն իր օկուպացիոն գոտուց Խորհրդային Միություն տեղափոխեց գերմանական արդյունաբերական սարքավորումներ, տեխնիկա, անգամ՝ ամբողջ արտադրամասեր և գործարաններ:

Արևմտյան տերությունները միավորեցին իրենց բեռլինյան գոտիները և կազմավորեցին **Արևմտյան Բեռլինը**՝ որպես ինքնուրույն միավոր: Այն տնտեսապես ու քաղաքականապես կապված էր Արևմտյան Գերմանիայի հետ:

Ակնհայտ էր, որ ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան ձգտում էին իրենց ենթակա գոտիների հիման վրա ստեղծել գերմանական պետություն: Միաժամանակ այդ գոտիները մտցվեցին «Մարշալի պլանի» մեջ: Դրանով իսկ Արևմտյան Գերմանիան ավելի ամրագրվեց արևմտյան տնտեսական և քաղաքական համակարգում:

Խորհրդային Միության ղեկավարությունը և անձամբ Ստալինը դեմ էին Գերմանիայի մասնատմանը և նրա տարածքի մեծ մասի վրա նոր՝ արևմտյան քաղաքական համակարգին պատկանող գերմանական պետության կազմավորմանը:

Խորհրդային կառավարությունը 1948թ. հունիսին շրջափակման ենթարկեց Արևմտյան Բեռլինը, որի հետևանքով կտրվեց վերջինիս կապը Արևմտյան Գերմանիայի հետ: Արևմտյան Բեռլինի մոտ 2 մլն բնակիչ-

ներ, որոնք սնունդ, վառելիք, դեղորայք և կենսական այլ անհրաժեշտ ապրանքներ էին ստանում Արևմտյան Գերմանիայից, հայտնվեցին հուսահատական վիճակում:

ԱՄՆ–ը, Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան ստեղծեցին օդային կամուրջ և բեռլինցիներին ապահովեցին անհրաժեշտ սննդամթերքով և այլ ապրանքներով: Արևմտյան Բեռլինի բնակչության կենսունակությունն ապահովելու համար անհրաժեշտ էր օրական հասցնել 4 հազար տոննա մթերք և այլ ապրանքներ: Այս հարցն ԱՄՆ–ը, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան հաջողությամբ լուծեցին: Արևմտյան Բեռլինի երկու օդանավակայանում յուրաքանչյուր 3 րոպեն մեկ ինքնաթիռ էր վայրէջք կատարում: Բերվում էր օրական 13 հազար տոննա բեռ: Ի վերջո, 11 ամիս անց՝ 1949թ. մայիսին, խորհրդային կառավարությունը վերացրեց շրջափակումը, որն օդային կամրջի հետևանքով անիմաստ էր դարձել:

ԳՖՀ-Ի ԵՎ ԳԴՀ-Ի ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

ԱՄՆ–ը, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան արագ թափով առաջ էին տանում արևմտագերմանական պետության ստեղծման գործընթացը:

Ընդունվեց նոր Սահմանադրություն, որը նախատեսում էր դաշնային (ֆեդերատիվ) պետության ստեղծում՝ բաղկացած 10 մարզերից: 1949թ. օգոստոսին կայացան գերմանական **բունդեստագի** (պառլամենտի) ընտրություններ: Ձայների մեծամասնություն ստացավ Քրիստոնեադեմոկրատական կուսակցությունը: Նրա ղեկավար **Կոնրադ Ադենաուերը 1949թ. սեպտեմբերի 20–ին կազմեց Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության (ԳՖՀ)** առաջին կառավարությունը:

Իր գոտում գերմանական պետության կազմավորման քաղաքականություն էր վարում նաև Խորհրդային Միությունը: Այդ ճանապարհին կարևոր դեր խաղաց Գերմանիայի սոցիալ–դեմոկրատական և կոմունիստական կուսակցությունների միավորումը 1946թ. ապրիլին: Ստեղծվեց Գերմանական սոցիալիստական միասնական կուսակցությունը (ԳՍՄԿ): 1947թ. դեկտեմբերին գումարվեց գերմանական ժողովրդական առաջին կոնգրեսը, որն ընտրեց Ժողովրդական խորհուրդ: **1949թ. հոկտեմբերի 7–ին** Ժողովրդական խորհուրդը հռչակեց **Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության (ԳԴՀ)** ստեղծումը:

ԳՍՄԿ–ի ղեկավար, նախկին սոցիալ–դեմոկրատ **Օտտո Գրոտեվոլը** կազմեց ԳԴՀ–ի առաջին կառավարությունը: Իսկ ԳՍՄԿ–ի մեկ այլ առաջնորդ, նախկինում Գերմանիայի կոմունիստական կուսակցության ղեկավար **Վիլհելմ Պիկն** ընտրվեց ԳԴՀ–ի նախագահ:

Այսպիսով՝ Գերմանիայի մասնատումը և գերմանական երկու պետությունների կազմավորումը դարձավ պատմական իրողություն:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ձեր կարծիքով ինչո՞ւ մասնատվեց Գերմանիան: Պատասխանը հիմնավորեք փաստերով:*
2. *Ինչպե՞ս կազմավորվեցին գերմանական երկու պետությունները:*

Կ. Ադենաուեր
ԳՖՀ-ի առաջին կանցլերը

Թ. Հեիս
ԳՖՀ-ի առաջին նախագահը

Վ. Պիկ
ԳԴՀ-ի առաջին նախագահը

Օ. Գրոտեվոլ
ԳԴՀ-ի առաջին վարչապետը

դաս 38

ԳՖՀ-Ն ԵՎ ԳԴՀ-Ն 1949-1989 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՐԿՈՒ ՏԱՐԲԵՐ ՈՒՂԻՆԵՐ

Գերմանական երկու պետությունների ձևավորումից հետո նրանց զարգացումն ընթացավ միանգամայն տարբեր ուղիներով: ԳՖՀ-ն պատկանում էր արևմտյան, կապիտալիստական աշխարհին և զարգանում էր ըստ նրա օրինաչափությունների: Իսկ ԳԴՀ-ն պատկանում էր սոցիալիստական աշխարհին և ենթակա էր նրա օրինաչափություններին:

ԳՖՀ-ն խարսխված էր արևմտյան դեմոկրատական սկզբունքների վրա: Սկզբնական շրջանում նրա քաղաքական կյանքում մեծ դեր էր խաղում Քրիստոնեադեմոկրատական կուսակցությունը: Ուղիղ 20 տարի՝ 1949–1969թթ., կառավարման ղեկը պատկանում էր այդ կուսակցությանը: Կանցլեր **Կոնրադ Ադենաուերը** և 1963թ. նրան այդ պաշտոնում փոխարինած Լյուդվիգ Էրհարդը մեծ ծառայություններ ունեցան արևմտագերմանական պետության կայացման, նրա տնտեսական հզորության ստեղծման ու դեմոկրատական հասարակության կառուցման գործում:

ԳՖՀ-ն կարողացավ բավականին կարճ ժամանակամիջոցում վերականգնել իր ավերված տնտեսությունը և կատարել տնտեսական մեծ թռիչք: «Մարշալի պլանով» ԳՖՀ-ն ԱՄՆ-ից միլիոնավոր դոլարների հասնող ֆինանսական օգնություն ստացավ: Նրա տնտեսությունը տեխնիկապես վերազինվեց, ստեղծվեցին արդյունաբերության նոր ճյուղեր և այլն: Մոտ երկու տասնամյակ անց Գերմանիան դարձավ եվրոպական պետություններից տնտեսապես ամենահզորը: ԳՖՀ-ն դասվեց աշխարհի ամենազարգացած պետությունների շարքին: Աշխարհը սկսեց խոսել «**գերմանական հրաշքի**» մասին:

1969թ. իշխանությունն անցավ Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությանը: Նրա ղեկավար **Վիլլի Բրանդտը** դարձավ ԳՖՀ-ի կանցլեր: Վ. Բրանդտի և նրա հաջորդ **Հելմուտ Շմիդտի** ժամանակ շարունակվեց ԳՖՀ-ի տնտեսական վերելքը, որն ավելի ամրապնդեց երկրի դիրքերը Եվրոպայում: Լինելով տնտեսապես բարձր զարգացած երկիր՝ ԳՖՀ-ն ապահովեց բարձր կենսամակարդակ իր բնակչության համար: ԳՖՀ-ն այդ տարիներին ընդունեց 10 մլն փախստականներ ԳԴՀ-ից և 1 մլն մարդ՝ եվրոպական այլ երկրներից:

Սակայն 1980-ական թվականների սկզբներից դժվարություններ առաջացան ԳՖՀ-ի տնտեսության մեջ, մասնավորապես ավելացավ սղաճը և որոշ չափով ընկավ



ԱՄՆ-ի նախագահ Ջ. Քենեդին ելույթ է ունենում Բեռլինում. 26 հունիսի, 1963 թ.

Սառը պատերազմի խորհրդանիշ Բեռլինի պատը

բնակչության գնողունակությունը, մեծացավ գործազրկությունը: Դա հանգեցրեց սոցիալ-դեմոկրատների կառավարության անկմանը:

Կրկին իշխանության գլուխ եկան քրիստոնյա-դեմոկրատները՝ **Հելմուտ Կոլի** գլխավորությամբ: Կոլի կառավարությունը հասավ որոշ հաջողությունների տնտեսության զարգացման բնագավառում, բայց ունեցավ նաև ակնհայտ դժվարություններ: Մասնավորապես՝ աճեց գործազրկությունը, դանդաղեց բնակչության սոցիալական վիճակի բարելավումը: Ակտիվացան նեոնացիստները, որոնք գերմանական աջակողմյան այլ խավերի հետ միասին հանդես էին գալիս Թուրքիայից և Մերձավոր Արևելքի այլ երկրներից ներգաղթի դեմ: Այդ ճնշումների տակ գերմանական բունդեստագը որոշում ընդունեց օտարերկրացիների ներգաղթը սահմանափակելու վերաբերյալ:

Այլ կերպ ընթացավ **գերմանական մյուս պետության՝ ԳԴՀ-ի զարգացման ուղին**: Նրա տնտեսական վերականգնումը գնում էր ավելի դանդաղ: Թեև ԳԴՀ-ն սոցիալիստական երկրների շարքում ամենազարգացածն էր, բայց երբեք չհասավ ԳՖՀ-ի մակարդակին: Այստեղ անհամեմատ ցածր էր կենսամակարդակը, խիստ սահմանափակ էին դեմոկրատական ազատությունները, հաստատվել էր ԳՍՄԿ-ի և նրա ղեկավարության դիկտատուրան, որն առավել ուժեղացավ, երբ ԳԴՀ-ի նախագահ դարձավ **Վալտեր Ուլբրիխտը**:

Կուտակված սոցիալ-տնտեսական դժգոհությունը դուրս ժայթքեց 1953թ.: Երկրի աշխատավորների ելույթները ճնշվեցին բռնի ուժով՝ ԳԴՀ-ում գտնվող խորհրդային տանկերի և զինվորների օգնությամբ:

ԳԴՀ-ում սոցիալական լարվածությունն ուժեղանում էր նաև այն պատճառով, որ նրա բնակիչները իրենց սոցիալ-տնտեսական վիճակը համեմատում էին ԳՖՀ-ի բնակչության վիճակի հետ: Դա առաջ բերեց *արտագաղթի** հզոր ալիք: Այն կանխելու համար **1961թ. օգոստոսին Բեռլինում կառուցվեց 42 կմ երկարությամբ և 4,6 մետր բարձրությամբ պատ**՝ ամրացված էլեկտրական հոսանքալարերով: Այդ պատը, որը հանդիսանում էր «սառը պատերազմի» դարաշրջանի խորհրդանիշներից մեկը, անջրպետ ստեղծեց միևնույն ժողովրդի երկու հատվածների միջև:

1970-80-ական թվականներին ԳԴՀ-ում ակնհայտորեն դրսևորվեցին սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամի երևույթներ, որոնք բնորոշ էին Խորհրդային Միությանը և սոցիալիստական համակարգի մյուս երկրներին:

ՌԱԶՄԱԶԱՂԱԶԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ

Տարբեր էին նաև ԳՖՀ-ի և ԳԴՀ-ի արտաքին քաղաքական ուղղվածությունները:

ԳՖՀ-ն դարձավ եվրոպական քաղաքական, տնտեսական և ռազմական կառույցների անդամ: 1952թ. ԳՖՀ-ն, Իտալիան, Ֆրանսիան, Բելգիան, Նիդերլանդները և Լյուքսեմբուրգը միասին հիմնեցին Եվրոպական ածխի և պողպատի միավորումը: Այդ նույն վեց պետությունները **1957 թվականին Հռոմում** ստորագրեցին համաձայնագիր՝ Եվրոպական տնտեսական միության ստեղծման մասին: Այն հայտնի է նաև **Ընդհանուր շուկա** անվանումով: Դրանք կարևոր քայլեր էին եվրոպական *ինտեգրացման** ճանապարհին:

1955թ. ԳՖՀ-ն դարձավ Հյուսիսատլանտյան դաշինքի անդամ: Թե՛ Եվրոպական Միությունում և թե՛ ՆԱՏՕ-ում ԳՖՀ-ն կարևոր դեր էր կատարում և ուներ մեծ ազդեցություն:

Կարևոր նշանակություն ունեցավ Վիլլի Բրանդտի արևելյան նոր քաղաքականությունը: Գերմանական կանցլերը քայլեր ձեռնարկեց Խորհրդային Միության, ԳԴՀ-ի և սոցիալիստական մյուս երկրների հետ ունեցած լարվածությունը թուլացնելու համար: Այն դրական արձագանք գտավ: **1972թ.** ստորագրված պայմանագրերով կարգավորվեցին ԳՖՀ-ի հարաբերությունները ԽՍՀՄ-ի և Լեհաստանի հետ: **1973թ. դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին ԳՖՀ-ի և ԳԴՀ-ի միջև**, որը փաստում էր ԳՖՀ-ի հրաժարվելն ամբողջ Գերմանիան ներկայացնելու հավակնություններից:

Դառնալով ՄԱԿ-ի անդամ՝ ԳՖՀ-ն հնարավորություն ստացավ ավելի գործնական մասնակցություն ունենալու միջազգային հարաբերություններում:

Այդ նույն ժամանակ արագ թափով ընթանում էր ԳԴՀ-ի ինտեգրացիան սոցիալիստական երկրների համագործակցությունում: ԳԴՀ-ն դարձավ Տնտեսական փոխօգնության խորհրդի անդամ, իսկ 1955թ.՝ Վարշավայի պայմանագրի անդամ: ԳԴՀ-ն ակտիվորեն պաշտպանում էր Խորհրդային Միության քաղաքականությունը միջազգային ասպարեզում: ԳԴՀ-ի զորամիավորումները Վարշավայի պայմանագրի անդամ մյուս պետությունների զորքերի հետ միասին 1968թ. ներխուժեցին Չեխոսլովակիա և ճնշեցին չեխոսլովակների ազատագրական շարժումը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ի՞նչ ուղիով ընթացավ ԳՖՀ-ի և ԳԴՀ-ի զարգացումը:*
2. *Ե՞րբ կառուցվեց Բեռլինի պատը: Ինչի՞ խորհրդանիշ էր այն համարվում:*
3. *Ո՞ր ռազմաքաղաքական խմբավորումների մեջ էին ընդգրկված գերմանական պետությունները:*
4. *Համեմատեք գերմանական երկու պետությունների տնտեսական և քաղաքական զարգացման արդյունքները:*

դաս 39

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՎԵՐԱՄԻԱՎՈՐՈՒՄԸ

ՎԵՐԱԿԱՌՈՒՅՈՒՄԸ ԽՍՀՄ-ՈՒՄ ԵՎ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թե՛ արևելյան և թե՛ արևմտյան **գերմանացիները մշտապես փայփայել են միավորման գաղափարը**: Նրանց երազանքի իրականացման համար բարենպաստ պայմաններ ստեղծվեցին 1980-ական թվականների վերջերին, երբ Խորհրդային Միությունում սկսվեց գորբաչովյան վերակառուցումը: Այդ ընթացքում նոր մոտեցումներ դրսևորվեցին սուր հարցերի լուծման նկատմամբ, որին, անտարակույս, պատկանում էր նաև երկու գերմանական պետությունների միավորման հարցը: Դրական տեղաշարժեր եղան նաև ԽՍՀՄ-ի արտաքին քաղաքականության բնագավառում: Տեղի ունեցավ անցում առճակատումից դեպի համագործակցության քաղաքականություն: Դրա շնորհիվ միջազգային լարվածությունը մեղմացավ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԳԴՀ-ՈՒՄ: ԲԵՌԼԻՆԻ ՊԱՏԻ ԱՆԿՈՒՄԸ

Քաղաքական և սոցիալ-տնտեսական ճգնաժամը 1980-ական թվականների վերջին համակել էր նաև ԳԴՀ-ն:

Երկրում տեղի էին ունենում հզոր ցույցեր՝ ի պաշտպանություն ազատական վերափոխումների և գերմանական երկու պետությունների միջև սահմանների վերացման: 1989թ. կեսերին Հունգարիան իր սահմանները բացեց հարևան պետությունների առջև: Օգտվելով դրանից՝ տասնյակ հազարավոր գերմանացիներ ԳԴՀ-ից անցան Հունգարիա, իսկ այնտեղից՝ ԳՖՀ: ԳԴՀ-ի ղեկավար **Էրիկ Հոնեկերը**, որը կառավարման ստալինյան մեթոդների նվիրյալ ջատագով էր, 1989թ. հոկտեմբերին հարկադրված հեռացավ իր գրաված կուսակցական և պետական բարձրագույն պաշտոնն-

ից: Վերացավ ԳՍՄԿ-ի մենաշնորհն իշխանության հարցում:

Նոր կառավարությունը, թեև դարձյալ կոմունիստական էր, սակայն ավելի չափավոր էր և դիմեց մասնակի զիջումների: Հնարավորություն տրվեց ԳԴՀ-ից օրինական ձևով մեկնելու արևմտյան երկրներ: ԳԴՀ-ի կառավարությունը հույս ուներ դրանով կասեցնել արտագաղթը, որն ընդունել էր վիթխարի չափեր: Բայց այն արդյունք չտվեց: **1989թ. նոյեմբերի 9-ին** Բեռլինում բացվեցին Բրանդենբուրգյան դարպասները և հարյուր հազարավոր գերմանացիներ արևմտյան ու արևելյան հատվածներից միացան միմյանց: Բեռլինի պատը՝ Գերմանիայի մասնատման և «սառը պատերազմի» խորհրդանիշը, քանդվեց:

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՎԵՐԱՄԻԱՎՈՐՈՒՄԸ

1990թ. ԳԴՀ-ում տեղի ունեցած ընտրություններում հաղթեցին այն ուժերը, որոնք ժխտում էին սոցիալիզմը և կողմնակից էին ազատ, դեմոկրատական հասարակության կառուցմանը: Նրանք հստակորեն արտահայտվեցին հօգուտ միավորման:

Միավորման ճանապարհին կարևոր քայլ հանդիսացավ ԽՍՀՄ-ի, Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, ԳՖՀ-ի և ԳԴՀ-ի արտաքին գործերի նախարարների կողմից **1990թ. սեպտեմբերի 12-ին Մոսկվայում ստորագրված համաձայնագիրը՝ Գերմանիայի վերամիավորման** պայմանների մասին: Դա միաժամանակ նշանակում էր նրանց համաձայնությունն այդ հարցի վերաբերյալ:

1989 թ. նոյեմբերի 9-10-ի գիշերը Բեռլինում

1990թ. հոկտեմբերին տեղի ունեցավ ԳՖՀ-ի և ԳԴՀ-ի միավորումը, որն իրագործվեց Գերմանական Դեմոկրատական Հանրապետության՝ ԳՖՀ-ի կազմի մեջ մտնելու ձևով: Միացյալ պետությունը շարունակեց կոչվել **Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետություն**: Բեռլինին վերադարձվեց համագերմանական մայրաքաղաքի կարգավիճակը: Գերմանիայի կառավարությունն իր նստավայրը 1999թ. Բոննից տեղափոխեց Բեռլին:

1990թ. դեկտեմբերի 2-ին ԳՖՀ-ի կանցլեր **Հելմուտ Կոլն ընտրվեց միասնական Գերմանիայի առաջին կանցլեր**:

Միավորումից հետո Գերմանիայի առջև ծառացան նոր խնդիրներ: Դա կապված է այն փաստի հետ, որ ԳԴՀ-ն իր զարգացման մակարդակով զգալիորեն հետ էր մնում ԳՖՀ-ից: Անհրաժեշտ էր նրա տնտեսությունը, որը ձևավորվել էր սոցիալիստական սկզբունքների հիման վրա, վերակառուցել *շուկայական տնտեսության** սկզբունքներին համապատասխան և հաղթահարել տեխնիկական հետամնացությունը: Անհրաժեշտ էր նաև փակել բազմաթիվ տնտեսապես ոչ շահութաբեր ձեռնարկություններ, արևելյան գերմանացիներին ընձեռել նույնպիսի սոցիալական ապահովագրության համակարգ, ինչպիսին գործում էր ԳՖՀ-ում և այլն:

Այս բոլորը վիթխարի ծախսեր էին պահանջում: Դա ծանր բեռ էր ԳՖՀ-ի և նրա բնակչության համար, որոնք հարկադրված էին այդ ծախսերը փակելու համար ավելի բարձր հարկեր վճարել: Հետամնաց և ոչ շահութաբեր ձեռնարկությունները փակելու, ինչպես նաև տնտեսական մի շարք դժվարությունների հետևանքով աճեց գործազրկությունն ամբողջ Գերմանիայում: 1997թ. այն հասավ իր բարձրակետին: Գերմանիայի պատմության մեջ, սկսած 1930-ական թվականներից, այդ ծավալով գործազրկություն չէր եղել:

Սոցիալ–տնտեսական հողի վրա դժգոհություններ առաջացան: Աջ հետադիմական, այդ թվում նաև նեոնացիստական ուժերի աշխուժացումը, օտարատյացության զգացմունքների վերելքը և այլ հանգամանքներ հանգեցրին Հելմուտ Կոլի կառավարության հեղինակության անկմանն ու դիրքերի թուլացմանը: 1998թ. տեղի ունեցած պառլամենտական ընտրություններում հաղթեց սոցիալ–դեմոկրատական կուսակցությունը: Նրա ղեկավար **Շրյոդերը** ստանձնեց կառավարության ղեկավարի՝ կանցլերի պաշտոնը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ի՞նչ դեր խաղաց գորբաչովյան վերակառուցումը Գերմանիայի վերամիավորման գործում:*
2. *Ինչո՞ւ ԳԴՀ–ում տապալվեց ԳՍՄԿ իշխանությունը:*
3. *Ե՞րբ «փլվեց» Բեռլինի պատը: Գնահատե՛ք այդ պատմական իրադարձությունը:*
4. *Ներկայացրե՛ք Գերմանիայի միավորման գործընթացը:*
5. *Ի՞նչ խնդիրներ են ծառացել միավորված Գերմանիայի կառավարության առջև:*

դաս 40

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԹՈՒԼԱՑՈՒՄԸ

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԴԻՐՔԵՐԻ ԹՈՒԼԱՑՈՒՄԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Մեծ Բրիտանիան թեև պատերազմից դուրս եկավ հաղթանակած, սակայն բավականին թուլացել էր: Նա այլևս մեծ ազդեցություն ունեցող և այն ուժեղ տերությունը չէր, ինչպիսին էր մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը: Համաշխարհային ասպարեզում նա առաջնությունը զիջեց ԱՄՆ–ին: Մեծացավ նրա ֆինանսաքաղաքական կախումը ամերիկյան դաշնակցից:

Հետպատերազմյան տարիներին դանդաղ էր ընթանում Մեծ Բրիտանիայի տնտեսության վերականգնումը: Անգլիական ապրանքները մրցունակ չէին: Անգլիան համաշխարհային առևտրում իր դիրքերը զիջեց ոչ միայն ԱՄՆ–ին, այլ նաև ԳՖՀ–ին:

Կլեմենտ Էտլիի գլխավորած լեյբորիստական կառավարությունը փորձում էր աշխուժացնել երկրի տնտեսական զարգացումը: Նրա կառավարման տարիներին՝ 1945–1951թթ. ազգայնացվեցին տնտեսության մի շարք ճյուղեր՝ քարածխի արդյունահանումը, պողպատածուլությունը, երկաթուղային և ջրային տրանսպորտը, Անգլիական բանկը, էլեկտրակայանները և այլն: Դրանց տերերը մեծ փոխհատուցումներ ստացան:

Լեյբորիստական կառավարությունը ընդարձակեց սոցիալական ապահովության գործադրման ոլորտը: Մտցվեց անվճար բուժական սպասարկում, անվճար ուսուցում՝ մինչև 16 տարեկան երեխաների համար, զգալի հատկացումներ կատարվեցին բնակարանային շինարարության բնագավառում և այլն:

Սակայն լեյբորիստներին չհաջողվեց ամբողջությամբ և հետևողականորեն իրագործել իրենց սոցիալ–տնտեսական ծրագրերը: Դրա պատճառը անհրաժեշտ ֆինանսների բացակայությունն էր: Դեռ ավելին՝ նրանք ստիպված էին բարձրացնել հարկերը, ինչը հանգեցրեց նրանց պարտությանը պառլամենտական ընտրություններում:

1951թ. կրկին իշխանության գլուխ եկան պահպանողականները՝ **Ուինսթոն Չերչիլի** գլխավորությամբ: Պահպանողականների իշխանության տարիներին (1951–1964) Մեծ Բրիտանիան ներգրավվեց սպառազինությունների մրցավազքի մեջ, ստեղծեց իր միջուկային զենքը և այլն: Սպառազինությունների մրցավազքը բացասաբար էր անդրադառնում տնտեսության զարգացման և ժողովրդի բարեկեցության վրա: Այն առաջ բերեց ընտրողների հիասթափությունը, որոնք 1964թ. ընտրություններին նախապատվությունը տվեցին լեյբորիստներին:

Լեյբորիստներն իշխանության գլուխ մնացին մինչև 1970–ական թվականների վերջերը:

Մեծ Բրիտանիան ներգրավվեց «սառը

պատերազմի» -մեջ: Նա 1949թ. դարձավ ՆԱՏՕ-ի անդամ: Վատացան նրա հարաբերությունները ԽՍՀՄ-ի և սոցիալիստական համակարգի մյուս երկրների հետ, որոնք երբեմն սուր բնույթ էին կրում: Ստեղծված պայմաններում խորհրդային կառավարությունը ժամկետից շուտ՝ 1955թ., չեղյալ հայտարարեց 1942թ. ստորագրված անգլո-խորհրդային դաշնակցային պայմանագիրը (դրա ժամկետն ավարտվում էր 1962թ.):

Անգլիական զորքերը մասնակցեցին Կորեական պատերազմին (1953թ.)՝ պաշտպանելով ԱՄՆ-ին և արևմտյան մյուս պետություններին: Մեծ Բրիտանիան ԱՄՆ-ի կողքին էր նաև 1962թ. Կարիբյան կամ Կուբայական ճգնաժամի, Վիետնամական պատերազմի և այլն նմանատիպ իրադարձությունների ժամանակ:

Մյուս կողմից, Բրիտանիան, չնայած իր ամենասերտ հարաբերություններին արևմտյան երկրների հետ, երկար ժամանակ խուսափում էր անդամակցել եվրոպական տնտեսական կառույցներին: Սակայն վախենալով Եվրոպայում իր ազդեցության թուլացումից՝ Մեծ Բրիտանիան 1960-1970-ական թվականներին աստիճանաբար մտավ եվրոպական կառույցների մեջ: 1973թ. նա մտավ նաև Ընդհանուր շուկայի մեջ:

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՓԼՈՒՋՈՒՄԸ

Երկրորդ աշխարհամարտից հետո համաշխարհային պատմության մեջ տեղի ունեցած ամենակարևոր փոփոխություններից մեկը իմպերիալիզմի գաղութային համակարգի փլուզումն էր: Գաղութային համակարգի փլուզմանը նպաստեցին, նախ՝ պատերազմից հետո մեծ թափով ծավալված հակագաղութային ազգային-ազատագրական շարժումներն Ասիայի և Աֆրիկայի գաղութային երկրներում: Երկրորդ՝ Մեծ Բրիտանիան, որը աշխարհի ամենախոշոր գաղութատեր երկիրն էր, արդեն չուներ նախկին

Ուինսթոն Չերչիլ
(1874-1965)

Մեծ Բրիտանիայի պետական և քաղաքական գործիչ: 1940-1945 և 1951-1955 թթ. երկրի վարչապետ

ռազմական և տնտեսական հզորությունն ու ֆինանսական հնարավորություններն ազատագրական շարժումները ճնշելու համար:

Այսպիսով՝ անկախություն նվաճեցին **Հնդկաստանը, Ցեյլոնը (այժմ՝ Շրի Լանկա), Բիրման (այժմ՝ Մյանմա), Եգիպտոսը, Իրաքը, Հորդանանը, Սուդանը, Տոգոն, Կամերունը** և այլն: 1960-ական թվականների վերջերին բրիտանական գաղութային կայսրությունը դադարեց գոյություն ունենալուց:

Մեծ Բրիտանիան փորձեց հարմարվել նոր պայմաններին: Նա պաշտոնապես հրաժարվեց «Բրիտանական կայսրություն» անվանումից և ձևավորեց ***«Ազգերի Բրիտանական համագործակցությունը»****: Դրա մեջ մտան բրիտանական նախկին դոմինիոնների և գաղութների մեծ մասը: Սակայն վերջիններս դրան միացան որպես անկախ պետություններ՝ Մեծ Բրիտանիայի հետ հավասար իրավունքներով: Բրիտանական համագործակցությունը իր անդամ երկրներին տալիս է առավելություններ առևտրատնտեսական որոշ հարցերում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Որո՞նք էին հետպատերազմյան շրջանում Մեծ Բրիտանիայի համաշխարհային առաջատար դիրքերի թուլացման պատճառները:*
2. *Ինչո՞ւ Մեծ Բրիտանիան, որոշ ձգձգումներից հետո, համաձայնվեց մտնել եվրոպական կառույցների մեջ:*
3. *Փորձե՛ք պարզաբանել բրիտանական գաղութային կայսրության փլուզման պատճառները: Ինչո՞վ այն փոխարինվեց:*

դաս 41

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՆ 1970-1990-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

«ԵՐԿԱԹՅԱ ԼԵԴԻՒ» ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆԸ

Մեծ Բրիտանիայի ներքաղաքական և տնտեսական կյանքում 1970-ական թվականներն առանձնապես բեկում չմտցրեցին: Լեյբորիստները չկարողացան լուծել տնտեսական զարգացման և արդյունաբերության վերակառուցման խնդիրները: Տարբեր քաղաքներում և արդյունաբերական ձեռնարկություններում ծայր առան գործադուլներ:

Այս իրավիճակը պարարտ հող հանդիսացավ պահպանողականների իշխանության գլուխ վերադառնալու համար: Նրանք հաղթեցին 1979թ. պառլամենտական ընտրություններում: Նրանց առաջնորդ **Մարգարետ Թեթչերը** դարձավ Մեծ Բրիտանիայի վարչապետ: Նա անընդմեջ մնաց այդ պաշտոնում մինչև 1990թ.: Թեթչերը, որպես եռանդուն, շրջահայաց և հաստատակամ գործիչ, իր հայրենակիցներից ստացավ **«Երկաթյա լեդի»** անվանումը: Նա մշակեց Մեծ Բրիտանիայի տնտեսական և սոցիալական զարգացման իր ծրագիրը, որի իրագործմանն ուղղված քաղաքականությունն ստացավ «թեթչերիզմ» անվանումը:

Թեթչերը շուկայական հարաբերությունների մեծ ջատագովներից էր: Նա իրականացրեց երկրի արդյունաբերության պետական ճյուղերի *սեփականաշնորհում**, խրախուսեց և խիստ բարենպաստ պայմաններ ստեղծեց ազատ ձեռներեցության և շուկայական հարաբերությունների խորացման ու զարգացման համար: Նվազագույնի հասցվեց պետության միջամտությունը տնտեսական ոլորտում, կրճատվեցին սոցիալական ապահովության ծախսերը, սահմանափակվեցին արհմիությունների իրավունքները:

Այս միջոցառումների շնորհիվ զգալիորեն **աշխուժացավ տնտեսական կյանքը** և աճեց արդյունաբերությունը: **Սակայն ուժեղացավ սոցիալական բևեռացումը**, որի ժամանակ, սովորաբար, հարուստներն ավելի են հարստանում, իսկ աղքատներն՝ ավելի աղքատանում: Բևեռացումը լարվածություն ստեղծեց սոցիալական ոլորտում:

Երկրի տնտեսական վիճակի վրա բացասաբար էին անդրադառնում նաև ռազմական ծախսերը, որոնք տարեցտարի աճում էին:

Դժգոհությունը Թեթչերի քաղաքականությունից արդեն ակնհայտ էր: Տեղի ունեցան բողոքի բազմաթիվ գործադուլներ, ցույցեր և հանրահավաքներ: Շատ վայրերում, այդ թվում նաև Լոնդոնում, ընդհարումներ էին լինում ցուցարարների և ոստիկանների միջև: «Երկաթյա լեդին» անվարան ճնշում էր բողոքի ելույթները:

Դժգոհությունը համակել էր նաև պահպանողական կուսակցությանը, որի շատ ղեկավարներ համաձայն չէին կուսակցության և կառավարության ղեկավարի քաղաքականության հետ: Հանդիպելով ժողովրդական լայն զանգվածների բացահայտ դժգոհությանը և կորցնելով սեփական կուսակցության աջակցությունը՝ Մարգարետ Թեթչերը 1990թ. հրաժարական տվեց: Նրան փոխարինեց **Ջոն Մեյջերը**, որը շարունակեց իր նախորդի քաղաքականությունը:

Պահպանողականների կառավարման տարիներին Մեծ Բրիտանիան իր արտաքին քաղաքականության մեջ առաջնությունը տալիս էր ԱՄՆ-ի հետ իր հարաբերություններին: Դրանք բնութագրվում էին որպես **«հատուկ հարաբերություններ»**: Թեթչերը և Մեյջերը անվերապահորեն պաշտպանում էին ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը:

1982թ. Թեթչերն իր երկիրը պատերազմական գործողությունների մեջ ներգրավեց ընդդեմ Արգենտինայի՝ Մալվինյան (Ֆոլկլենդյան) կղզիներն իր տիրապետության տակ պահելու համար: Այդ պատերազմում Մեծ Բրիտանիան «փայլուն» ռազմական հաղթանակ տարավ, և Մալվինյան կղզիները մնացին նրա տիրապետության ներքո:

Թեթչերը խոշոր քաղաքական վրիպում թույլ տվեց Հարավ-Աֆրիկյան Հանրապետության հարցում: Բրիտանական համա-

գործակցության եթերները պահանջեցին պատժամիջոցներ կիրառել այդ երկրի նկատմամբ՝ ապարտեիդի ռասիստական քաղաքականությունն իրականացնելու համար: Սակայն Թեթչերի կառավարությունը դեմ դուրս եկավ և չպաշտպանեց այդ առաջարկությունը: Այդ քայլը զգալիորեն հարվածեց նրա հեղինակությանը:

ԵՐԿՐԻ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1990-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Ջոն Մեյջերի կառավարությունը, հավատարիմ մնալով ԱՄՆ–ի հետ «հատուկ հարաբերություններին», 1991թ. մասնակցեց Պարսից ծոցի պատերազմին՝ ուղղված Իրաքի դեմ:

Միաժամանակ նա որոշ փոփոխություններ մտցրեց բրիտանական քաղաքականության մեջ եվրոպական համագործակցության հարցում՝ ընդունելով եվրոպական ինտեգրացմանն Անգլիայի մասնակցության անհրաժեշտությունը:

Սակայն ընդհանուր դժգոհությունը պահպանողականների քաղաքականությունից աճում էր. 1997թ. կայացած պառլամենտական ընտրություններում նրանք պարտություն կրեցին: Նոր կառավարությունը գլխավորեց **լեյբորիստական կուսակցության անդամ**, երիտասարդ, եռանդուն և հիմնախնդիրների լուծման նկատմամբ թարմ մոտեցում ցուցաբերող **Թոնի Բլերը**: Նա փոփոխություններ մտցրեց իր կուսակցության ծրագրի մեջ՝ հրաժարվեց լեյբորիստական ավանդական սոցիալիստական գաղափարներից և ընդունեց ցածր հարկեր հաստատելու, ինչպես նաև սոցիալական ծախսումների վրա խիստ վերահսկողություն սահմանելու անհրաժեշտությունը: Նա նորություն մտցրեց նաև Մեծ Բրիտանիայի եվրոպական քաղաքականության մեջ, գտնելով, որ իր երկիրը պետք է հարաբերությունները սերտացնի եվրոպական երկրների հետ: Բլերը ջանում է կենսագործել իր հռչակած այս քաղաքականությունը:

Նորովի և անսպասելի էր լեյբորիստական կառավարության մոտեցումը Մեծ Բրիտանիայում սկսված ազգային յուրահատուկ շարժումների հանդեպ: Բլերը համարձակորեն ընդառաջ գնաց շոտլանդացիների և ուելսցիների ինքնավարական պահանջներին: **1997թ. Շոտլանդիայում** տեղի ունեցավ հանրաքվե՝ հօգուտ սեփական պառլամենտ ստեղծելուն: Շոտլանդական պառլամենտն օրենսդրական իրավունք ունի տեղական հարցերի նկատմամբ, ինքն է սահմանում հարկերը և այլն: **Նույնպիսի իրավունքներով օժտվեց նաև Ուելսը**, որտեղ ևս ստեղծվեց տեղական պառլամենտ: Նա է տնօրինում բրիտանական պառլամենտի կողմից Ուելսին հատկացված միջոցները, կարող է ընդունել տեղական բնույթի օրենսդրական ակտեր և այլն:

Սակայն Մեծ Բրիտանիայի համար ամենադժվար հարցը **Հյուսիսային Իռլանդիայի՝ Օլսթերի հարցն է**: Հյուսիսային Իռլանդիան բնակեցված է մեծամասնություն կազմող բողոքականներով ու փոքրամասնություն կազմող կաթոլիկներով: Նրանց միջև 1960-ական թվականներից արյունալի բախումներ են տեղի ունենում: Կաթոլիկները ձգտում են անջատվել Մեծ Բրիտանիայից և միանալ Իռլանդական Հանրապետությանը, մինչդեռ բողոքականները ցանկանում են մնալ Մեծ Բրիտանիայի կազմում: Բլերին հաջողվեց հասնել պատերազմող կողմերի միջև զինադադարի հաստատմանը և հարցի լուծումը տեղափոխել քաղաքական բանակցությունների դաշտ:

Ուշագրավ են նաև Բլերի ջանքերը՝ բրի-

Վարչապետ Մարգարետ Թեթչերը

տանական միապետության վերնախավի շփումները ժողովրդի հետ ակտիվացնելու ուղղությամբ: **Բրիտանական թագուհին՝ Եղիզավետա** (Եղիսաբեթ) **II–ը**, որը **գահակալում է 1952 թվականից**, որոշ չափով ընդառաջ է գնում իր երիտասարդ վարչապետի ջանքերին:

Մեծ Բրիտանիան 1991թ. դեկտեմբերի 12–ին ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը: Հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ, բացվեցին դեսպանություններ: Երկու երկրների միջև ձևավորվել են բարեկամական հարաբերություններ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ներկայացրե՛ք Մ. Թեթչերի գործունեությունը:*
2. *Ինչպիսի՞ արտաքին քաղաքականություն էր վարում Մեծ Բրիտանիան պահպանողականների կառավարման տարիներին (1979–1997թթ.):*
3. *Ի՞նչ նորություններ ի հայտ եկան Թ. Բլերի ներքին և արտաքին քաղաքականության մեջ:*

դաս 42

ՖՐԱՆՍԻԱՆ 1945-1970-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Ֆրանսիան պատերազմից դուրս եկավ բավականին թուլացած: Թեև Ֆրանսիան, ԱՄՆ–ի, ԽՍՀՄ–ի, Մեծ Բրիտանիայի և Չինաստանի հետ միասին, դասվեց աշխարհի հինգ մեծ պետությունների շարքը, բայց դա ձևական բնույթ էր կրում: Ֆրանսիայի գլխավոր խնդիրը դարձավ՝ վերականգնել քայքայված տնտեսությունը, վերակառուցել ռազմական ուժերը և կրկին առաջատար դեր խաղալ Եվրոպայում:

ՉՈՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (1946-1958)

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ կործանվեց Երրորդ հանրապետությունը, որը ստեղծվել էր դեռ 1870թ.: Պատերազմից հետո սկսեցին ձևավորվել Ֆրանսիայի պետական մարմինները: **1946թ. հոկտեմբերի 13–ին** ընդունվեց Ֆրանսիայի նոր Սահմանադրությունը, և երկրում հաստատվեց պառլամենտական կարգ: Ազգային ժողովի ընտրություններում հաղթեցին կոմունիստները, ժողովրդահանրապետական շարժումը և սոցիալիստները, որոնք կազմեցին կոալիցիոն կառավարություն: Դրանով ավարտվեց անցումային շրջանը և արդյունքում ծնունդ առավ **Չորրորդ հանրապետությունը**:

Չորրորդ հանրապետությունը հաղթահարեց հետպատերազմյան տնտեսական դժվարությունները և ապահովեց տնտեսական որոշ վերելք: Դրանում զգալի դեր խաղացին «Մարշալի պլանով» ստացված տնտեսական օգնությունը և վարկերը, որ կազմում էին մոտ 3,5 մլրդ դոլար:

ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ֆրանսիան Արևմտյան Եվրոպայի քաղաքական համակարգի անբաժան մասն էր: **1949թ. Ֆրանսիան դարձավ ՆԱՏՕ–ի 12 հիմնադիր անդամներից մեկը:**

Հետպատերազմյան շրջանում ծավալված ազգային–ազատագրական շարժումները համակեցին նաև Ֆրանսիայի ասիական և աֆրիկյան գաղութները: Չորրորդ հանրապետությունն անհեռանկար պատերազմի մեջ մտավ **Հնդկաչինում**, որը տևեց ութ տարի և ավարտվեց 1954թ.՝ ֆրանսիական գաղութարարների պարտությամբ: Նա պատերազմական գործողություններ ծավալեց նաև իր հյուսիսաֆրիկյան գաղութային տիրույթներում՝ **Ալժիրում, Թունիսում, Մարոկկոյում**: Հատկապես դաժան և երկարատև էր պատերազմն Ալժիրում: Այս բոլորը սասանեց Չորրորդ հանրապետության հիմքերը:

Անկայուն էր նաև ներքաղաքական կյանքը: Հետաղիմական ուժերի պահանջով 1947թ. Ֆրանսիայի կառավարությունից հեռացվեցին կոմունիստ նախարարները: Սակայն դրանով կայունություն չհաստատվեց: Կոալիցիոն կառավարություններն արագորեն փոխարինում էին մեկը մյուսին: 1951–1956 թթ. փոխվեց վեց կառավարու-

թյուն, որի պատճառով կառավարական ծրագրերը մնում էին անկատար:

Դժգոհությունը համակել էր ֆրանսիական ամբողջ հասարակությանը: **1958թ. Ֆրանսիան կանգնած էր քաղաքացիական պատերազմի վտանգի առջև:** Ավելի բարձր էին հնչում «ուժեղ ձեռքի» անհրաժեշտության կոչերը: Ֆրանսիացիներն իրենց հայացքն ուղղեցին դեպի գեներալ **Շարլ դը Գոլը**, որը մեծ հեղինակություն էր վայելում: **1958թ. հունիսի 1–ին Ազգային ժողովը նրան նշանակեց երկրի վարչապետ:** Ազգային ժողովից ստանալով արտակարգ լիազորություններ՝ դը Գոլը **ցրեց ֆրանսիական պառլամենտը:** Դրանով ավարտվեց Չորրորդ հանրապետության ժամանակաշրջանը:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀԸ

Հինգերորդ հանրապետությունը դարձավ նախագահական հանրապետություն, և **դը Գոլը** նրա առաջին նախագահն էր: **1958թ. սեպտեմբերի 28–ի** հանրաքվեով հաստատված Սահմանադրությունը նախագահին օժտեց մեծ լիազորություններով: Նա պետության ղեկավարն էր ու զինված ուժերի գլխավոր հրամանատարը. նշանակում էր կառավարության ղեկավարին, կարող էր ցրել պառլամենտը և նշանակել նոր ընտրություններ:

Դը Գոլը զգալի ուշադրություն դարձրեց երկրի տնտեսության զարգացմանը, տեխնիկական վերազինմանը և արդյունաբերության ժամանակակից ճյուղերի զարգացմանը: Եվ այդ բնագավառում Ֆրանսիան ունեցավ ակնառու առաջընթաց:

Լինելով սթափ և գործնական պետական գործիչ՝ դը Գոլը 1960թ. վերջ տվեց պատերազմական գործողություններին Ալժիրում և ճանաչեց նրա ու ֆրանսիական մյուս գաղութների անկախությունը: Ֆրանսիական գաղութային կայսրությունը փլուզվեց:

Դրանից հետո դը Գոլն իր ուշադրությունը սևեռեց եվրոպական խնդիրների վրա՝ ձգտելով թուլացնել Ֆրանսիայի կախվածությունը ԱՄՆ–ից և հզորացնել Ֆրանսիայի դիրքերը Եվրոպայում: **1966թ. Ֆրանսիան իր զորքերը դուրս բերեց ՆԱՏՕ–ի ռազմական կառույցներից:** Նա հասավ այն բանին, որ ՆԱՏՕ–ի գլխավոր զորակայանը և ռազմական բազաները Ֆրանսիայից տեղափոխվեցին Բելգիա: Ֆրանսիան ստեղծեց իր սեփական միջուկային զենքը:

Շարլ դը Գոլ
(1890–1970)

Քաղաքական գործիչ, գեներալ: 1940թ. հունիսին գլխավորեց «Ազատ Ֆրանսիա» կոմիտեն Լոնդոնում: 1944–1946թթ. վարչապետ, 1958–1969թթ. երկրի նախագահ:

Դը Գոլը բարելավեց հարաբերությունները սոցիալիստական երկրների հետ: Նա 1966թ. պաշտոնական այցով եղավ Խորհրդային Միությունում, բանակցություններ վարեց երկու երկրների միջև հարաբերությունները զարգացնելու և միջազգային լարվածությունը թուլացնելու շուրջ: Իսկ 1969թ. ճանաչեց Չինական Ժողովրդական Հանրապետությունը, լեհ–գերմանական սահմանները, պահանջեց ամերիկյան զորքերը դուրս բերել Հարավային Վիետնամից:

Ներքին քաղաքականության բնագավառում դը Գոլը առաջ քաշեց տեղական ինքնակառավարման մարմինների վերակառուցման հարցը՝ այն դնելով հանրաքվեի: Դը Գոլը նախազգուշացրեց, որ եթե իր ծրագիրը մերժվի, ապա ինքը հրաժարական կտա: **Հանրաքվեն, որ կայացավ 1969թ. ապրիլի 27–ին, մերժեց օրինագիծը** և **դը Գոլը, հավատարիմ իր խոստմանը, հրաժարական տվեց:**

* * *

Դը Գոլին փոխարինեց նրա մերձավոր համախոհ **Ժորժ Պոմպիդուն:** Նա առաջ քաշեց **«նոր հասարակություն»** կառուցելու գաղափարը՝ հիմնված դասակարգային համա-

գործակցության սկզբունքի վրա:

1974թ., Պոմպիդուի մահից հետո, Ֆրանսիայի նախագահ ընտրվեց դարձյալ դրգոլական **Ժիսկար դ'Էստենը**: Նա կողմնակից էր տնտեսական հարցերում պետության դերի և պետական միջամտության նվազեցմանը, ազատ ձեռներեցության ծավալմանը:

Ժիսկար դ'Էստենի տնտեսական ծրագրերի և քաղաքականության վրա բացասական ներգործություն ունեցավ 1970-ական թվականների վերջերին սկսված համաշխարհային տնտեսական անկումը:

Ֆրանսուա Միտերան (1916-1996)

Ֆրանսիայի պետական և քաղաքական գործիչ, երկրի առաջին սոցիալիստ նախագահը (1981–1995թթ.): 1972–1983թթ. Սոցիալիստական ինտերնացիոնալի նախագահ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ինչպիսի՞ խնդիրներ էին ծառացել Ֆրանսիայի առջև պատերազմից հետո:*
2. *Ինչո՞ւ 1946–1958 թթ. հանրապետությունը Ֆրանսիայում ստացավ Չորրորդ հանրապետություն անունը: Վերհիշե՛ք, թե երբ են եղել նախորդները:*
3. *Ինչո՞վ էր տարբերվում Հինգերորդ հանրապետությունը նախորդից:*
4. *Խոսե՛ք Շ. դը Գոլի նախագահական գործունեության մասին: Ինչո՞ւ նա հրաժարական տվեց: Գնահատե՛ք նրա այդ արարքը:*
5. *Նշե՛ք Ժ. Պոմպիդուի և Ժ. դ'Էստենի քաղաքականության բնորոշ կողմերը:*

դաս 43

ՖՐԱՆՍԻԱՆ 1980-1990-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Ֆ. ՄԻՏԵՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԸ

1981թ. մայիսին Ֆրանսիայում տեղի ունեցած նախագահական ընտրություններն ավարտվեցին սոցիալիստների, կոմունիստների և ձախ ռադիկալների դաշինքի միասնական թեկնածու **Ֆրանսուա Միտերանի** հաղթանակով: Նա դարձավ **Ֆրանսիայի առաջին սոցիալիստ նախագահը**: Դրանով ավարտվեց դրգոլականների 22-ամյա անընդմեջ կառավարման շրջանը:

Միտերանը մեծ ուշադրություն դարձրեց Ֆրանսիայի սոցիալ-տնտեսական խնդիրներին: Նա կողմնակից էր **տնտեսության մեջ պետության կարգավորիչ դերի մեծացմանը**: Նա ազգայնացրեց կարևոր արդյունաբերական ճյուղերը, մասնավոր բանկերը: Ստեղծվեցին նոր աշխատատեղեր, որի հետևանքով սկզբնական շրջանում կրճատվեց գործազրկությունը, բարձրացվեցին աշխատավարձերը, կենսաթոշակներն ու նպաստները և այլն: Այս բոլորը կայունացրեց ներքաղաքական իրադրությունը երկրում:

Սակայն շուտով ակնհայտ դարձավ, որ սոցիալական ծրագրերի իրագործումը կապված էր լուրջ ֆինանսական դժվարությունների հետ: Երկրում շեշտակի բարձրացավ սղաճը, որը հարվածեց տնտեսական առաջընթացին: Միտերանը հարկադրված էր նահանջել և անցնել խիստ խնայողության քաղաքականության: Դա առաջ բերեց աշխատավորների և ձախ ուժերի դժգոհությունը: Արդյունքը եղավ այն, որ աջ ուժերը հաղթեցին 1986թ. պառլամենտական ընտրություններում: Նրանց ղեկավար Ժակ Շիրակը ստանձնեց վարչապետի պաշտոնը:

Սակայն 1988թ. նախագահական ընտրություններում կրկին հաղթանակեց Միտերանը, և կառավարությունը ղեկավարեցին սոցիալիստները:

Այս շրջանում Միտերանը մեծ նշանակություն էր տալիս արևմտաեվրոպական ինտեգրացմանը և ակտիվորեն նպաստում այդ գործընթացին, մասնավորապես՝ **1992թ. Մաաստրիխտում** (Հոլանդիա) ընդունված որոշումների հաստատմանը և կենսագործ-

մանը, որով հիմնվեց **Եվրոպական Միությունը (ԵՄ)**: 1993թ. Ֆրանսիան ԵՄ մյուս անդամների հետ ստորագրեց համաձայնագիր՝ նրանց միջև եղած առևտրական խոչընդոտները վերացնելու մասին: 1995թ. ԵՄ յոթ երկրներ, այդ թվում Ֆրանսիան, որոշեցին թույլ տալ իրենց քաղաքացիներին ազատորեն ճանապարհորդել այդ երկրներում՝ առանց մուտքի վիզաների:

ԵՐԿԻՐԸ 1990-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ

1995թ. տեղի ունեցած նախագահական ընտրություններում հաղթեց Փարիզի քաղաքագլուխ **Ժակ Շիրակը**: Նա պահպանողական է և իր հայացքներով մոտ է ղղոլականներին:

Նրա փորձերը՝ վերացնել պետական բյուջեի բացը ի հաշիվ սոցիալական ոլորտի ծախսերի կրճատման, առիթ տվեց բանվորների և ուսանողների դժգոհությանը:

Ժակ Շիրակը դեմ է տնտեսության պետական կարգավորմանը և կողմնակից՝ ազատ ձեռներեցությանը: Նրա քաղաքականությունը հետամուտ էր այդ խնդրին: Բայց դա դժգոհություն առաջացրեց երկրում, և 1997թ. պառլամենտական ընտրություններում հաղթեցին ընդդիմադիր՝ սոցիալիստական ուժերը: Այս հանգամանքը որոշակի դժվարություններ է ստեղծում նախագահ–պառլամենտ–կառավարություն փոխհարաբերություններում: Սոցիալիստական ուժերը պահանջում են ստեղծել նոր աշխատատեղեր, կրճատել գործազրկությունը և պահպանել սոցիալական արտոնությունները: Իսկ Շիրակը կողմնակից է խնայողության խիստ ռեժիմի հաստատմանը, դեմ է սոցիալական ապահովության համար հատկացումների ավելացմանը և այլն:

Ժակ Շիրակը, ինչպես և իր նախորդները, կողմնակից է եվրոպական ինտեգրացմանը և ԵՄ ամրապնդմանը: 1999թ. ԵՄ անդամ երկրները, որոնց թվում նաև Ֆրանսիան, իրագործեցին միասնական դրամ ունենալու իրենց ծրագիրը: Այդ դրամը՝ **եվրոն**, արդեն մտել է շրջանառության մեջ:

Ֆրանսիան 1992թ. հունվարի 3–ին ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը, իսկ փետրվարի 24–ին դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Հայաստանի հետ: Հայ–ֆրանսիական միջպետական հարաբերությունները զարգանում են հաջողությամբ՝ ընդգրկելով պետական, քաղաքական, տնտեսական և մշակութային բնագավառները:

1998 թվականին Ֆրանսիայի Ազգային ժողովը, իսկ 2000 թվականին Սենատը ճանաչեցին Հայոց ցեղասպանությունը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ներկայացրե՛ք Ֆրանսիայի առաջին սոցիալիստ նախագահի քաղաքականությունը:*
2. *Ե՞րբ հիմնվեց Եվրոպական Միությունը:*
3. *Ո՞ր ուժերը հաղթեցին 1995թ. նախագահական ընտրություններում:*
4. *Ինչպիսի՞ քաղաքական կուրս է վարում Ֆրանսիան Եվրոպայում XXI դարի շեմին:*

Գլուխ 13 ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ

ԴԱՍ 44

ԱՄՆ-Ի ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1945-1960-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԵՐԿՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

ԱՄՆ-ը պատերազմի մասնակից միակ պետությունն էր, որի առջև չկանգնեց տնտեսության վերականգնման և նախապատերազմյան մակարդակին հասնելու խնդիրը: ԱՄՆ-ի տարածքում պատերազմական գործողություններ չընթացան, նրա քաղաքները և արդյունաբերական ձեռնարկությունները չքանդվեցին: Պատերազմի տարիներին թշնամուն հաղթելու և իր դաշնակիցների ռազմական և տնտեսական վիթխարի պահանջները բավարարելու համար ԱՄՆ-ը անհնարին չափերով ընդլայնեց իր արդյունաբերությունը: Այդ է պատճառը, որ **ԱՄՆ-ը պատերազմից դուրս եկավ և՛ ռազմական, և՛ տնտեսական առումով ավելի հզորացած**: Պատերազմում ծանր կորուստներ կրած երկրներից իրենց ավերված տնտեսությունները վերականգնելու համար պահանջվեց առնվազն 8-10 տարի: ԱՄՆ-ն այդ տարիներին ավելի էր զարգացնում և տեխնիկական առումով կատարելագործում իր տնտեսությունը: Արդյունքում աճեց նրա և աշխարհի մյուս պետությունների զարգացման մակարդակների միջև եղած տարբերությունը:

Ամրապնդվեց նաև ԱՄՆ-ի ֆինանսական հզորությունը, ընդլայնվեց բանկային համակարգը: Նյու Յորքի **Ուոլլ Սթրիթը**, որտեղ կենտրոնացված են երկրի գլխավոր բանկերը, ԱՄՆ-ի ֆինանսական հզորության խորհրդանիշն է: Դոլարը դարձավ կայուն արժույթ և ամրապնդվեցին նրա դիրքերն աշխարհում: Ֆինանսական աշխարհը սկսեց հաշվարկներ կատարել ամերիկյան դոլարի հիման վրա:

Սակայն, դրա հետ մեկտեղ, ամերիկյան տնտեսության առջև կանգնեցին մի շարք խնդիրներ: Պատերազմի ավարտից հետո կրճատվեց արտադրությունը, քանի որ չկար նախկին պահանջարկը: Կրճատվեցին նաև աշխատատեղերը, արդյունքում՝ սրվեց աշխատանքից ազատված մարդկանց, ինչպես նաև պատերազմից հետո զորացրված զինվորներին աշխատանքով ապահովելու հարցը: Կառավարության որոշումով զորացրվածների և աշխատանքից ազատվածների զգալի մասն ապահովվեց նպաստներով:

Ներքաղաքական կյանքի սուր հարցերից էին սոցիալական ապահովության համակարգի բացակայությունը, աշխատավարձերի ցածր լինելը, ռասայական *խտրականությունը** և այլ հարցեր:

1948թ. ԱՄՆ-ում տեղի ունեցան նախագահական ընտրություններ: Հաղթանակ տարավ **Հարրի Տրումենը**, որի կառավարման տարիներին երկիրն ավելի հզորացավ, բայց մի շարք սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներ և ռասայական խտրականության հարցեր մնացին չլուծված:

Թերևս դա եղավ գլխավոր պատճառներից մեկը, որ 1952թ. նախագահական ընտրություններում դեմոկրատները պարտվեցին: Հաղթանակեց հանրապետական կուսակցության թեկնածու, **գեներալ Դուայթ Էյզենհաուերը**: Նրա նախագահության շրջանում՝ 1952-1960թթ., ձևավորվեց **ԱՄՆ-ի ռազմաարդյունաբերական համալիրը**, որն սկսեց առաջատար դեր խաղալ ԱՄՆ-ի ներքին և արտաքին քաղաքականության մեջ:

«Սառը պատերազմն» իր բացասական ազդեցությունն ունեցավ երկրի ներքաղաքական կյանքի մի կարևոր կողմի վրա ևս: Առճակատումը ԽՍՀՄ-ի հետ ԱՄՆ-ում առաջ

բերեց **հակակոմունիստական հիստերիա**: Կոնգրեսի որոշումով ստեղծվեց «կոմունիստական» գործունեությունը հետաքննող հատուկ հանձնաժողով, որը գլխավորում էր **սենատոր Ժոզեֆ Մակկարտին**: Կոմունիզմի գաղափարներին հարելու մեջ կասկածյալները հեռացվում էին աշխատանքից, ենթարկվում հետապնդման և հալածանքների:

1960թ. նախագահական ընտրապայքարում հաղթանակեց **դեմոկրատ Ջոն Քենեդին**: Նա մեծ եռանդով ձեռնամուխ եղավ իր «**Նոր բնագծեր**» ծրագրի իրագործմանը: ԱՄՆ–ը պետք է, այդ ծրագրի համաձայն, իր տնտեսությունը վերակառուցեր նոր տեխնոլոգիաների և գիտության նվաճումների ամենալայն կիրառման հիմքի վրա և տեսանելի ապագայում ապահովեր ԱՄՆ–ի առաջատար դերը աշխարհում: Սակայն **1963թ. Քենեդու սպանությունը** կիսատ թողեց նրա ծրագրերը:

Ընդհանրապես, 60–ական թվականներին ԱՄՆ–ում ուժեղացավ ահաբեկչությունը, որի զոհը դարձան նաև սևամորթների ղեկավար և քաղաքացիական իրավունքների պաշտպան **Մարտին Լյութեր Քինգը**, Ջ. Քենեդու կրտսեր եղբայր **Ռոբերտ Քենեդին** և ուրիշներ:

Ջ. Քենեդուն փոխարինած **Լինդոն Ջոնսոնը** առաջ քաշեց «**Մեծ հասարակության**» կառուցման կարգախոսը: Նրա օրոք ԱՄՆ–ի պատմության մեջ առաջին անգամ ընդունվեց համակարգված օրենք սոցիալական ապահովության վերաբերյալ:

ԱՄՆ–ը մեծ նվաճումների հասավ տիեզերքի ուսումնասիրման բնագավառում: Ամերիկյան **տիեզերագնաց Նեյլ Արմսթրոնգը 1969թ. հուլիսի 20–ին**, առաջինը մարդկության պատմության մեջ, **ոտք դրեց Լուսնի վրա**:

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԱՄՆ–ի արտաքին քաղաքականության հիմնական նպատակը եղավ աշխարհում նրա առաջատար և ղեկավար դերի ապահովումը: **Հ. Տրումենը 1945թ.**, պատերազմի ավարտից շատ չանցած, հայտարարեց. «**Չեռք բերած հաղթանակը ամերիկյան ժողովրդի վրա դրել է մշտական պատասխանատվություն աշխարհի ղեկավարման համար**»: Հենվելով իր ռազմական և ֆինանսատնտեսական հզորության վրա՝ ԱՄՆ–ը ստանձնեց Արևմուտքի առաջնորդի դերը:

Նախագահ Տրումենը այն մտավախությունն ուներ, որ Եվրոպայի տնտեսական անելանելի վիճակը կարող է պարարտ հող հանդիսանալ կոմունիզմի հաղթարշավի և Խորհրդային Միության տիրապետության տարածման համար: Նա գտնում էր, որ դա կարելի է կանխել մի կողմից՝ ԽՍՀՄ–ի նկատմամբ կոշտ քաղաքականություն վարելու, իսկ մյուս կողմից՝ եվրոպական քայքայված տնտեսությունը վերականգնելու միջոցով: Այդպես 1947թ. լույս աշխարհ եկավ ԱՄՆ–ի տնտեսական օգնությամբ Եվրոպան վերականգնելու և զարգացնելու ծրագիրը: Այն ներկայացրեց **պետական քարտուղար Ջորջ Մարշալը** (այստեղից էլ՝ «Մարշալի պլան» անվանումը): Ըստ այդ պլանի՝ ԱՄՆ–ը 1947–1952թթ. արևմտաեվրոպական երկրներին տրամադրեց 13 միլիարդ դոլարի օգնություն, որի շնորհիվ արևմտաեվրոպական երկրների քայքայված տնտեսությունը ոտքի կանգնեց:

Ամերիկյան քաղաքականության մեջ կարևոր փուլ հանդիսացավ «**Տրումենի *դոկտրինան****»: **1947թ.** ամերիկյան նախագահն ուղերձով դիմեց Կոնգրեսին՝ պահանջելով «ի շահ ԱՄՆ–ի ազգային անվտանգության» անհապաղ տնտեսական օգնություն ցույց տալ Հունաստանի և Թուրքիայի կառավարություններին «կոմունիստական վտանգը» կանխելու համար: Կոնգրեսը հատկացրեց 400 միլիոն դոլար: ԱՄՆ–ը Հունաստանի և Թուրքիայի հետ կնքեց օգնության պայմանագրեր:

1957թ. լույս աշխարհ եկավ «**Էյզենհաուերի դոկտրինան**»: Կոնգրեսը լիազորեց նախագահին իր հայեցողությամբ օգտագործել ամերիկյան ռազմական ուժերը Մերձավոր և Միջին Արևելքում, օգնել այդ տարածաշրջանի պետություններին՝ «միջազգային կոմունիզմի վերահսկողության տակ գտնվող որևէ երկրի կողմից կատարվող ագրեսիայի» դեպքում:

«Սառը պատերազմի» դարաշրջանը հարուստ էր նաև «տաք պատերազմներով», որոնց մեջ հաճախ էր ներգրավվում ԱՄՆ–ը:

Դրանց թվին էր պատկանում **1950–1953թթ. կորեական պատերազմը**, որին ուղղակիորեն միջամտեց ԱՄՆ–ը:

Հակամարտության վտանգավոր օջախ էր Վիետնամը, որի ժողովուրդը հերոսաբար պայքարում էր իր ազգային անկախության համար: ԱՄՆ–ը ներգրավվեց վիետնամական պատերազմի մեջ Ջոնսոնի օրոք: Պատերազմում Միացյալ Նահանգները չկարողացավ հասնել որևէ հաջողության և 1973–1975թթ. ստիպված էր հեռանալ այդ երկրից: Պատերազմում զոհվեց 58 հազար և վիրավորվեց 300 հազար ամերիկյան զինվոր: **Վիետնամական պատերազմը ԱՄՆ–ի տնտեսության վրա նստեց 150 միլիարդ դոլար**:

1962թ. պայթեց **Կարիբյան ճգնաժամը:** Աշխարհը կանգնեց երրորդ համաշխարհային պատերազմի իրական վտանգի առջև: Խորհրդային կառավարությունը գաղտնի կերպով հրթիռներ տեղադրեց Կուբայում, որը հայտնի դարձավ ԱՄՆ–ին: Նախագահ Ջոն Քենեդին վերջնագրի ձևով պահանջեց խորհրդային կառավարությունից հրթիռները դուրս բերել Կուբայից: Շնորհիվ Ջոն Քենեդու, խորհրդային ղեկավար Նիկիտա Խրուշչովի ցուցաբերած զսպվածության և ԽՍՀՄ վարչապետի առաջին տեղակալ Անաստաս Միկոյանի դիվանագիտական մեծ հմտության, որ նա դրսևորեց բանակցությունների ընթացքում, ճգնաժամը քաղաքական լուծում ստացավ: **Խորհրդային Միությունը հրթիռները դուրս բերեց Կուբայից**, չնայած վերջինիս ղեկավար Ֆիդել Կաստրոյի դժկամությանը: Իսկ **ԱՄՆ–ն իր հրթիռները դուրս բերեց Թուրքիայից և պարտավորվեց չներխուժել Կուբա**:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Որո՞նք էին ԱՄՆ–ի ֆինանսատնտեսական և ռազմական հզորության ամրապնդման պատճառները:*
2. *Բնորոշեք ԱՄՆ–ի ներքին քաղաքականությունը 1945–1960–ական թվականներին: Ի՞նչ նոր երևույթներ ի հայտ եկան երկրի ներքաղաքական կյանքում:*
3. *Արտաքին քաղաքական ի՞նչ կուրս էր վարում ԱՄՆ–ը 1945–1960–ական թվականներին: Մեկնաբանեք Տրումենի և էյզենհաուերի դոկտրինների ու «Մարշալի պլանի» բովանդակությունը:*

դաս 45

ԱՄՆ-Ը 1970-1990-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՈՒՄԸ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

Հետպատերազմյան տարիներին, հատկապես 60–ական թվականների վերջերից և 70–ական թվականների սկզբներից, աշխարհում տեղի ունեցավ նոր ***գիտատեխնիկական հեղափոխություն****: Այն արմատական փոփոխություններ առաջ բերեց համաշխարհային տնտեսության մեջ:

Այդ վերափոխումների առջևից էր ընթանում ԱՄՆ–ը: Նրա առաջատար համալսարանները և լաբորատորիաները, որոնք հագեցված էին առաջնակարգ սարքավորումներով, բարձրորակ մասնագետներով և ֆինանսներով, մշակեցին բազմաթիվ նոր տեխնոլոգիաներ, որոնք, իրոք, հեղափոխություն էին տնտեսության մեջ: Իսկ ամերիկյան արդյունաբերությունը, շնորհիվ իր կառուցվածքի, ընկալունակ էր նոր տեխնոլոգիաների նկատմամբ: Դրան համապատասխան մշակվեց ԱՄՆ–ի տնտեսական զարգացման ռազմավարությունը: Շեշտը դրվեց **գիտության և տեխնոլոգիաների զարգացման վրա**: Առանձնահատուկ ուշադրություն հատկացվեց համակարգիչների, ռոբոտների, մանիպուլյատորների և ավտոմատ հարահոս գծերի ներդրման վրա, որոնք սկզբունքորեն նոր ուղղություններ էին: Արդյունաբերության նոր ուղղությունների զարգացման համար մեծ խթան հանդիսացան տիեզերքի յուրացման ամերիկյան ծրագրերը:

1970–1990–ական թվականներին փոփոխություններ տեղի ունեցան նաև ԱՄՆ–ի արդյունաբերական կենտրոնների աշխարհագրական տեղաբաշխման մեջ: **Տնտեսական խոշոր կենտրոնների վերածվեցին** ԱՄՆ–ի արևմտյան և հարավային շրջանները՝ **Կալիֆորնիան, Տեխասը** և այլն, որտեղ

զարգացան էլեկտրոնիկան, հաշվողական, ռազմական արդյունաբերությունը և այլն:

ՈՒՈԹԵՐԳԵՅԹ

Մոտ տասնամյա ընդմիջումից հետո, **1968թ.**, կրկին իշխանության գլուխ եկան հանրապետականները, երբ **Ռիչարդ Նիքսոնն** ընտրվեց ԱՄՆ–ի նախագահ:

Նիքսոնի նախագահությունը, ժամանակի առումով, համընկավ վիետնամական պատերազմի ամենածանր ժամանակաշրջանի հետ: Ամերիկացիների ճնշող մեծամասնությունը դեմ էր պատերազմին: Երկրում ծավալվել էր ուժեղ հակապատերազմական շարժում, տեղի էին ունենում ցույցեր, երիտասարդները հրաժարվում էին Վիետնամ՝ պատերազմ մեկնելուց: Պատերազմը դադարեցնելու հարցը դարձել էր ԱՄՆ–ի ներքաղաքական կյանքի ամենակենսական հարցը: Նիքսոնն իր մեջ ուժ գտավ վերջ տալու մոտ տասը տարի շարունակվող պատերազմին:

Այս շրջանում ուժեղացավ պայքարը քաղաքացիական իրավունքների ընդլայնման համար, որը համակել էր սևամորթներին, իսպանախոսներին, ինչպես նաև սպիտակամորթներին: Նրանք հանդես էին գալիս ընդդեմ գոյություն ունեցող խտրականության՝ կրթության, աշխատանքի, պետական պաշտոններ գրավելու և բազմաթիվ այլ հարցերում: Այս բոլորին ավելացան **քաղաքական սկանդալները**, որի **գագաթնակետը** հանդիսացավ այսպես կոչված **«Ուոթերգեյթը»**: Դրա էությունը հետևյալն էր:

1972թ. նախագահական ընտրությունների ժամանակ Նիքսոնի կողմնակիցները գաղտնաբար ունկնդրման սարքեր էին դրել իրենց մրցակից դեմոկրատական կուսակցության Ազգային կոմիտեի գրասենյակում, որը գտնվում էր Վաշինգտոնի «Ուոթերգեյթ» հյուրանոցում: Նիքսոնը հաղթանակեց ընտրություններում, սակայն դրանից հետո բացահայտվեց հանրապետականների կատարած անօրինականությունը: Դրա կազմակերպիչներից շատերը, այդ թվում և արդարադատության նախարարը, հայտնվեցին բանտում: Նիքսոնի հարցը մտցվեց Կոնգրես՝ նրան **իմփիչմենթի՝ պաշտոնանկ անելու**

ԱՄՆ–ի նախագահ Նիքսոնը հրաժարական է տալիս:

առաջարկությամբ: ԱՄՆ–ի 37–րդ նախագահ Ռիչարդ **Նիքսոնը 1974թ. օգոստոսի 8–ին** ստիպված **հրաժարական տվեց**:

ՆԱԽԱԳԱՀՆԵՐ Ռ.ՌԵՅԳԱՆԻ ԵՎ Ջ.ԲՈՒՇԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1970–ական թվականների կեսերին և 1980–ական թվականների սկզբներին ԱՄՆ–ի տնտեսության մեջ ի հայտ եկան լուրջ դժվարություններ, որոնք ճգնաժամային բնույթ էին կրում: Ճիշտ է, գիտատեխնիկական վերազինումը մեծապես նպաստում էր արդյունաբերության զարգացմանը, սակայն ԱՄՆ–ի տնտեսությունն ամբողջապես ենթակա էր մի շարք բացասական գործոնների ներգործությանը: Դրանց մեջ պետք է առանձնացնել երկու հանգամանք:

Առաջինը սպառազինությունների մրցավազքն էր, որը հարյուրավոր միլիարդներ էր խլում. դրանք այլ պարագաներում կարող էին ներդրվել քաղաքացիական տնտեսության ոլորտում և մեծապես նպաստել ընդհանուր տնտեսական վերելքին: Անգամ ԱՄՆ–ի զարգացած տնտեսությունն ի վիճակի չէր դիմանալ այդ մրցակցության ծանր բեռին:

Երկրորդը վիետնամական պատերազմի հետևանքներն էին: Այն վիթխարի գումարները, որ ծախսվեցին պատերազմի ժամանակ, նույնպես կարող էին օգտագործվել տնտեսության բնագավառում: Իր դերը խաղաց նաև այն պարագան, որ ՆԱՏՕ–ի մարտունակության ապահովման գլխավոր բեռը հիմնականում կրում էր ԱՄՆ–ը: Ահա այս բոլոր գործոնները միասին վերցրած բացասաբար անդրադարձան ԱՄՆ–ի տնտեսության վրա:

1970–ական թվականների կեսերից դանդաղեցին ԱՄՆ–ի տնտեսական զարգացման

տեմպերը, մեծացավ սղաճը, առաջացան ֆինանսական դժվարություններ, խիստ աճեց գործազրկությունը, կրճատվեց արտաքին առևտրի ծավալը և այլն:

Ճգնաժամային երևույթների վերացման և տնտեսական զարգացման նոր ռազմավարություն մշակելու խնդիրները ծառացան հանրապետական երկու նախագահների՝ **Ռոնալդ Ռեյգանի** (1980–1988թթ.) և **Ջորջ Բուշի** (1988–1992թթ.) առջև: Ռ. Ռեյգանը դրությունը շտկելու համար դիմեց եռանդուն քայլերի: Նա **ձեռներեցությունը խրախուսելու նպատակով պակասեցրեց շահույթից գանձվող հարկերը**: Դրա հետևանքով կրճատվեցին բյուջետային հասույթները և լուրջ վտանգ առաջացավ բյուջեի դեֆիցիտի (բացի) ավելի մեծացման համար: Այն կանխելու նպատակով Ռ. Ռեյգանը շեշտակիորեն կրճատեց սոցիալական ոլորտի համար կատարվող բյուջետային հատկացումները և սոցիալական ծրագրերի ֆինանսավորումը: **Կրճատվեցին նաև պետական ապարատը և նրա պահպանման ծախսերը:**

Երկրի տնտեսության առողջացման Ռեյգանի ծրագիրը, որը ստացավ «**Ռեյգանոմիկա**» անվանումը, խորացրեց հասարակության երկփեղկվածությունը: Նախագահի ծրագրերին հավանություն տվեցին խոշոր արդյունաբերողները, ձեռներեցները, ֆինանսիստները, բոլոր մեծահարուստները, քանի որ հարկերի կրճատումը բարձրացնում էր նրանց եկամուտները: Մյուս կողմից Ռեյգանը սոցիալական ծրագրերի, թեկուզ և կրճատված, իրագործման ամբողջ բեռը գցեց աշխատավորների ուսերին, որը մեծապես հարվածում էր նրանց գրպանին: **Ռեյգանի տնտեսական ծրագիրը հարուստներին դարձնում էր ավելի հարուստ, իսկ աղքատներին՝ ավելի աղքատ:**

Արմատական տեղաշարժեր չկատարվեցին նաև Ջ. Բուշի նախագահության օրոք, որը փորձում էր հետևողականորեն կիրառել իր նախորդի տնտեսական քաղաքականությունը: Բացի այդ, պետք է նշել, որ Ջ. Բուշը այնքան էլ մեծ ուշադրություն չէր հատկացնում տնտեսական հարցերին, և ավելի շատ զբաղված էր արտաքին քաղաքականության

Բիլ Քլինթոն (ծնվ. 1946թ.) Դեմոկրատական կուսակցության անդամ. ԱՄՆ-ի նախագահ 1992–2000թթ.

խնդիրներով: Հավանաբար՝ դա եղավ 1992թ. նախագահական ընտրություններում նրա պարտության պատճառներից մեկը:

ԲԻԼ ՔԼԻՆԹՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Արկանզասի նահանգապետ **Վիլյամ (Բիլ) Քլինթոնը** փայլուն կերպով օգտվեց Ջ.Բուշի այդ վրիպումից և հաղթականորեն մտավ Սպիտակ տուն:

Բիլ Քլինթոնն իր շուրջը հավաքեց ամերիկյան լավագույն տնտեսագետներին և ստեղծեց համերաշխ թիմ: Նրանք մշակեցին միանգամայն իրատեսական տնտեսական ծրագիր, որը հետևողականորեն սկսեց իրականացնել նորընտիր նախագահը: Եվ արդյունքներն իրենց երկար սպասեցնել չտվեցին: Տնտեսական իրավիճակը բարելավվեց, ապա սկսվեց տնտեսական աննախընթաց վերելք: Ստեղծվեցին մոտ 5 միլիոն նոր աշխատատեղեր, բարձրացան աշխատավարձերը և սոցիալական նպաստները: Տնտեսության առողջացումը և ծաղկումը հանգեցրին բյուջեի բացի վերացմանը: Դեռ ավելին, **երկրի նորագույն պատմության մեջ առաջին անգամ, 1997թ. սկսած, բյուջեն ունենում է ոչ թե բաց, այլ շոշափելի ավելցուկ**՝ յուրաքանչյուր տարի մոտավորապես **80– 90 միլիարդ դոլարի** սահմաններում:

Բ. Քլինթոնը, այդուհանդերձ, մի շարք լուրջ դժվարությունների հանդիպեց իր ներքին քաղաքականության կիրառման ճանապարհին: Նա պարտություն կրեց առողջապահության բնագավառում ապահովագրության համապարփակ համակարգ ստեղծելու գործում: Նրա բիլը (օրինագիծը) մերժվեց Կոնգրեսի կողմից: Նա ունեցավ նաև անձնական կարգի դժվարություններ: Քլինթոնին

մեղադրում էին անբարո վարքի, ճշմարտությունը ժողովրդից՝ու Կոնգրեսից թաքցնելու և ստախոսության մեջ: Գործը հասավ այնտեղ, որ ԱՄՆ–ի Կոնգրեսում **1999թ. քննարկվեց նրան պաշտոնանկ անելու՝ իմփիչմենթի հարցը**: Նա փրկվեց միայն հրաշքով, ընդամենը մի քանի ձայն չբավարարեց իմփիչմենթի վերաբերյալ որոշումն ընդունելու համար: Բայց, այդուհանդերձ, դա իր բացասական հետևանքներն ունեցավ Սպիտակ տան և դեմոկրատական կուսակցության հեղինակության վրա: 2000թ. նոյեմբերին կայացած նախագահական ընտրություններում հաղթեց հանրապետական Ջորջ Բուշ կրտսերը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Արմատական ի՞նչ փոփոխություններ տեղի ունեցան ԱՄՆ–ի տնտեսական զարգացման մեջ 1970–ական թվականներին:*
2. *Ի՞նչ էր «Ռոթերդեյթը»: Ձեր կարծիքն այդ առթիվ:*
3. *Ընդհանուր գծերով ներկայացրե՛ք Ռ. Ռեյգանի և Բ. Քլինթոնի տնտեսական քաղաքականությունը:*
4. *Ի՞նչ հաջողություններ և անհաջողություններ ունեցան Ջ. Բուշը և Բ. Քլինթոնը ներքին քաղաքականության ասպարեզում:*

դաս 46

ԵՐԿՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1970-1990-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԼԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՂՄԱՑՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

1970–ական թվականներին նկատվեց լարվածության թուլացում Արևելք–Արևմուտք փոխհարաբերություններում: Դա պայմանավորված էր հիմնականում երկու հանգամանքներով:

Առաջին՝ սպառազինությունների մրցավազքի արդյունքում Խորհրդային Միության և ԱՄՆ–ի կողմից ղեկավարվող ռազմաքաղաքական խմբավորումներում այնքան միջուկային զենք էր կուտակվել, որ լուրջ սպառնալիք էր ստեղծվել մեր մոլորակի գոյության համար: Հաշվարկները ցույց են տվել, որ առկա միջուկային զենքը միանգամայն բավարար է մարդկությունը երկրի երեսից մի քանի անգամ ջնջելու համար: Աշխարհի մեծ պետությունների առաջնորդները հասկացան, որ ապագա պատերազմում, որն անխուսափելիորեն լինելու էր միջուկային, չէին լինելու հաղթողներ և պարտվողներ: Բոլորը միասին էին կործանվելու: Հօդս ցնդեց Խորհրդային Միությունում և սոցիալիստական մյուս պետություններում տարածված այն վարկածը, որ ապագա պատերազմում, չնայած մարդկային վիթխարի զոհերին, կհաղթանակի սոցիալիզմը: Անլուրջ էր Չինաստանի առաջնորդ Մաո Ցզեդունի տեսակետը, թե «ատոմային ռումբը թղթե վագր է և դա այնքան էլ սարսափելի չէ»: Անհիմն էր նաև արևմտյան մի շարք պետությունների ղեկավարների վստահությունը, թե ապագա երրորդ համաշխարհային պատերազմում հաղթողներն իրենք են լինելու: **Աշխարհը եկավ այն գիտակցության, որ մարդկությունը կարող է կա՛մ միասին գոյատևել, կա՛մ միասին կործանվել:**

Երկրորդ՝ Խորհրդային Միությունը, գերագույն ջանքերի լարումով և մեծ զոհողությունների գնով ժամանակակից զինատեսակների, այդ թվում և միջուկային զենքի բնագավառում հասավ ԱՄՆ–ին: **Երկու հակադիր ռազմաքաղաքական խմբավորումների միջև** այդ ոլորտում **հաստատվեց հավասարակշռություն՝ պարիտետ**, և կողմերից ոչ մեկը չէր կարող մյուսին թելադրել իր կամքը:

Այս երկու հանգամանքները Խորհրդային Միության և ԱՄՆ–ի ղեկավարներին համոզեցին, որ պատերազմը ինքնաոչնչացման քաղաքականություն է: Միակ *այլընտրանքը** խաղաղության պահպանումը և ամրապնդումն է՝ բանակցությունների ճանապարհով:

Եվ իրոք, 70–ական թվականներին սկսվեցին բանակցություններ ԽՍՀՄ–ի և ԱՄՆ–ի պետական ղեկավարների միջև, որի արդյունքում տեղի ունեցավ լարվածության



մեղմացում և միջազգային հարաբերությունների առողջացում: Դրա սկիզբը դրվեց ԱՄՆ–ի նախագահ **Ռ. Նիքսոնի** և Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության Գլխավոր քարտուղար Լ. Բրեժնևի հանդիպումներով և բանակցություններով:

Երկու երկրների ղեկավարները 70–80–ական թվականներին ստորագրեցին ռազմավարական զենքերի կրճատման, զինաթափման և դրա վրա միջազգային վերահսկողության հաստատման մասին պայմանագրեր: Սպառնալիքների և վիրավորանքների լեզվից նրանք անցան փոխհասկացության լեզվին, ընդարձակվեցին շփումները պետական, քաղաքական և հասարակական մակարդակներում, լայն հնարավորություններ ստեղծվեցին գիտական, մշակութային կապերի և զբոսաշրջության զարգացման համար:

Սակայն լարվածության թուլացման ճանապարհին կային լուրջ դժվարություններ: Մարդիկ հեշտությամբ չէին հրաժարվում տարիների ընթացքում ձևավորված պատկերացումներից և գործելակերպից, դեռևս ուժեղ էր անվստահությունը միմյանց նկատմամբ:

Առճակատումից համագործակցության անցնելու գործընթացին լուրջ հարված հասցրեց **1979թ. խորհրդային զորքերի ներխուժումը Աֆղանստան**: Դա **Խորհրդային Միության խոշորագույն սխալներից մեկն** էր: ԱՄՆ–ը խստորեն դատապարտեց խորհրդային ագրեսիան և պահանջեց խորհրդային զորքերի դուրս բերումը Աֆղանստանից: Միաժամանակ ԱՄՆ–ը լայնածավալ ռազմական, տնտեսական և ֆինանսական օգնություն ցույց տվեց աֆղանական բոլոր այն ուժերին, որոնք պայքարում էին խորհրդային զորքերի դեմ: Դա հարցականի տակ դրեց ԱՄՆ–ի և ԽՍՀՄ–ի միջև հարաբերությունների մեղմացումը, լուրջ սպառնալիք ստեղծեց կրկին վերադառնալու առճակատման քա-

դաբականությանը և «սառը պատերազմին»: Սակայն ֆիդելական արկածախնդրությունը ամենամեծ վնասը հասցրեց հենց Խորհրդային Միությանը:

Ամերիկա–խորհրդային հարաբերությունների բարելավումը նոր թափ ստացավ 1980–ական թվականների կեսերից:

ԱՄՆ–ը կարգավորեց իր հարաբերությունները Չինաստանի հետ: Նա վճռորոշ դեր խաղաց արաբա–իսրայելական հակամարտության լուծման մեջ բեկում մտցնելու գործում՝ նպաստելով **1979թ. մարտին Քեմպ Դեյվիդում Իսրայելի և Եգիպտոսի** միջև հաշտության համաձայնագրի ստորագրմանը: ԱՄՆ–ն ակտիվացրեց իր քաղաքականությունը Կենտրոնական Ամերիկայում: Ռեյգանի նախագահության շրջանում, 80–ական թվականների սկզբներին, ԱՄՆ–ը ներխուժեց Գրենադա, ուժեղացավ երկրի միջամտությունը Նիկարագուայի, Պանամայի, Գվատեմալայի ներքին գործերին: ԱՄՆ–ը 1991թ. հունվարին գլխավորեց 29 պետությունների միացյալ զորամիավորման ներխուժումն Իրաք (որն օկուպացրել էր Քուվեյթը) և ստիպեց վերջինիս հետ քաշվելու արաբական այդ փոքր երկրից:

ԱՄՆ-Ի ԴԻՐՔԵՐԻ ՈՒԺԵՂԱՑՈՒՄՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Խորհրդային Միության լուծարումից հետո ԱՄՆ–ը մնաց աշխարհի միակ գերտերությունը: Բիլ Քլինթոնը երկրի արտաքին քաղաքականությունը վերակառուցեց՝ ելնելով այդ իրողությունից: Քլինթոնը լայնորեն կիրառում էր բազմազգ ռազմական ուժերը՝ քաղաքական կնճռոտ հարցերն ի նպաստ ԱՄՆ–ի լուծելու համար: Նա այդ քաղաքականությունը կիրառեց Սոմալիում, Հայիթիում, Պարսից ծոցում և Բալկաններում:

Ամերիկյան գրոհային ինքնաթիռ

ԱՄՆ–ի նախաձեռնությամբ և ճնշման ներքո ՆԱՏՕ–ն **1999թ. մարտին** իր զորքերը, որի միջուկը կազմում են ամերիկյան, անգլիական և ֆրանսիական ուժերը, մտցրեց **Հարավսլավիայի Կոսովոյի մարզ** ՝ ալբանացիներին սերբերից պաշտպանելու պատրվակով: Փաստորեն Հարավսլավիայի դեմ իսկական պատերազմական գործողություններ ծավալվեցին:

ԱՄՆ–ը լուրջ քայլեր ձեռնարկեց ՆԱՏՕ–ն դեպի արևելք ընդարձակելու ուղղությամբ և հասավ շոշափելի հաջողությունների: Վարշավայի պայմանագրի նախկին անդամներ Լեհաստանը, Հունգարիան և Չեխիան, հակառակ Ռուսաստանի դիմադրության, 1998թ. ընդունվեցին ՆԱՏՕ–ի կազմը: Դա անհանգստացնում է Ռուսաստանին, քանի որ նա ՆԱՏՕ–ի հետագա ընդարձակումը դեպի արևելք դիտում է որպես ԱՄՆ–ի դիրքերի հետագա ամրապնդում աշխարհում և սպառնալիք իր ազգային անվտանգությանը:

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՄՆ-Ի ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՎ

ԱՄՆ–ը 1991թ. դեկտեմբերի 27–ին ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը, իսկ 1992թ. հունվարի 7–ին երկու երկրների միջև հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ: Վաշինգտոնում բացվեց Հայաստանի, իսկ Երևանում՝ ԱՄՆ–ի դեսպանությունը: Հայաստանի անկախության ճանաչումը գերտերության կողմից նպաստեց Հայաստանի միջազգային դիրքերի ամրապնդմանը:

Հայաստանի և ԱՄՆ–ի միջև հաստատվել են բարեկամական հարաբերություններ, որոնք զարգանում են բնականոն ճանապարհով և ընդգրկում քաղաքական, տնտեսական, գիտատեխնիկական և մշակութային ոլորտները:

Երկու երկրների հարաբերությունների զարգացման գործում կարևոր են նրանց ղեկավարների պարբերական հանդիպումները: Դրանց ընթացքում քննարկվում են ԱՄՆ–ին

և Հայաստանին հուզող բոլոր սկզբունքային հարցերը, դրանց զարգացման հեռանկարները, ինչպես նաև միջազգային զանազան խնդիրներ: Պետք է ընդգծել նաև այն նշանակալի դերը, որ խաղում է մոտ մեկ միլիոնանոց ամերիկահայ համայնքը հայ–ամերիկյան բարեկամական միջպետական հարաբերությունների խթանման գործում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Միջազգային հարաբերություններում լարվածության թուլացումն ինչո՞վ էր պայմանավորված: Հիմնավորե՛ք, որ 1980–ական թվականների սկզբներին, իրոք, «սառը պատերազմի» նոր ալիք եղավ:*
2. *Ի՞նչ լոկալ (տեղական) պատերազմների մասնակցեց ԱՄՆ–ը 1970–1990–ական թվականներին և ինչպիսի՞ արդյունքներ ունեցավ:*
3. *Ո՞ր իրադարձությունից հետո ԱՄՆ–ը մնաց որպես աշխարհի միակ գերտերություն: Ի՞նչ փոփոխություններ տեղի ունեցան երկրի արտաքին քաղաքականության մեջ 1990–ական թվականներին:*
4. *Ի՞նչ բնույթ ունեն ԱՄՆ–Հայաստան հարաբերությունները:*

դաս 47

ԱՄՓՈՓՈՒՄ

- **Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո աշխարհում ձևավորվեց ուժերի նոր հարաբերակցություն: Նախկին դաշնակիցների միջև սրվեցին հարաբերությունները, կազմավորվեց սոցիալիզմի համաշխարհային համակարգը: Երկու գերհզոր պետությունների՝ ԽՍՀՄ–ի և ԱՄՆ–ի միջև պայքար ծավալվեց աշխարհում գերիշխանության հասնելու և ազդեցության նոր շրջանների համար, ինչն էլ 1945–1991 թվականներին կազմեց միջազգային հարաբերությունների գլխավոր բովանդակությունը:**

Ի՞նչ դեր է խաղում ՄԱԿ–ը միջազգային հարաբերություններում:

Որո՞նք են «սառը պատերազմի» պատճառները:

Ի՞նչ հակադիր ռազմաքաղաքական երկու խմբավորումներ ձևավորվեցին հետպատերազմյան շրջանում: Ինչպիսի՞ նպատակներ էին դրանք հետապնդում:

- **Հսկայական մարդկային ու նյութական զոհողությունների գնով ձեռք բերված հաղթանակից հետո թվում էր, թե Խորհրդային Միությունը, ամրապնդելով իր միջազգային դիրքերը, որոշակի փոփոխություններ կմտցնի նաև երկրի տնտեսական և քաղաքական կյանքում, կզարգանա ժողովրդավարացման ուղիով: Սակայն երկրի քաղաքական ղեկավարման մեջ ավելի ամրապնդվեց վարչահրամայական համակարգը և 1946-1953թթ. շարունակվեցին բռնությունները:**

Ձեր կարծիքով ի՞նչ նշանակություն ունեցավ ԽՄԿԿ XX համագումարի կողմից Ստալինի անձի պաշտամունքի դատապարտումը:

Արդյո՞ք խորհրդային քաղաքական վերնախավը հետևողական եղավ այդ հարցում:

- **Այնուհանդերձ, խորհրդային երկիրը կարողացավ ոչ միայն վերականգնել տնտեսությունը, այլ նաև համաշխարհային նվաճումների հասնել գիտության և արդյունաբերության որոշ ճյուղերի բնագավառում:**

Վերհիշե՛ք ԽՍՀՄ-ի ձեռքբերումները տիեզերքի յուրացման բնագավառում:

Ինչո՞ւ երկրի տնտեսությունը 1970-1980-ական թվականներին լճացում ապրեց:

- **1985թ. ԽՍՀՄ-ում հռչակվեց նոր քաղաքականության՝ վերակառուցման սկիզբը: Սակայն երկրի քաղաքական և սոցիալ-տնտեսական ճգնաժամը հնարավոր չեղավ հաղթահարել:**

Ինչո՞ւ ձախողվեց վերակառուցման քաղաքականությունը:

Ինչպե՞ս տեղի ունեցավ ԽՍՀՄ-ի փլուզումը: Անխուսափելի՞ էր արդյոք դա:

Ինչպե՞ս ձևավորվեց ՆՊԳ–ն: Ձեր կարծիքով ՍՊԳ–ն ապագա ունի՞, թե՞ այն սպառել է իրեն:

- **Գերմանիայի տարածքը Երկրորդ աշխարհամարտից հետո բաժանվեց չորս օկուպացիոն գոտիների:**

Ո՞ր գոտիներում առաջացան գերմանական երկու պետությունները:
Ընդհանուր գծերով ներկայացրե՛ք դրանց զարգացման արդյունքները 1949-1990 թվականներին:

- **Սոցիալիստական համագործակցության երկրների և, առաջին հերթին, աշխարհի երկրորդ գերտերության՝ ԽՍՀՄ-ի ներքին ճգնաժամի հետևանքով արմատապես փոխվեց միջազգային իրադրությունը 1980-ական թվականների վերջերին:**

Ներկայացրե՛ք գերմանական երկու պետությունների վերամիավորման նախադրյալները:
Գնահատե՛ք Գերմանիայի միավորման փաստը:

- **Մեծ Բրիտանիան Երկրորդ աշխարհամարտից հետո դադարեց համաշխարհային առաջատար տերություն լինելուց:**

Պարզաբանե՛ք դրա պատճառները:

- **Ֆրանսիան հետպատերազմյան շրջանում բավականին թուլացել էր, ահա թե ինչու նրա կառավարության գլխավոր խնդիրը դարձավ երկրի առաջատար դիրքերի վերականգնումը Եվրոպայում:**

Ո՞ր ռազմաքաղաքական խմբավորման անդամ էր Ֆրանսիան:
Գնահատե՛ք նախագահ Շ. դը Գոլի ներքին և արտաքին քաղաքականությունը:

- **1981թ. մայիսին Ֆ. Միտերանը դարձավ Ֆրանսիայի առաջին սոցիալիստ նախագահը: Նրան հաջորդեց պահպանողական Ժ. Շիրակը (1995թ. ընտրությունների արդյունքով), որը կողմնակից էր Եվրոպական երկրների ինտեգրացմանը և Եվրոպական Միության ամրապնդմանը:**

Փորձե՛ք ընդհանուր առմամբ գնահատել Միտերանի և Շիրակի նախագահական գործունեությունը:

- **ԱՄՆ-ը հետպատերազմյան շրջանում ամրապնդեց իր դիրքերն աշխարհում: Նա ստանձնեց Արևմուտքի ռազմաքաղաքական և տնտեսական առաջնորդի դերը:**

Ներկայացրե՛ք ԱՄՆ-ի 1970-90-ական թվականների տնտեսական կյանքի զարգացման ընդհանուր պատկերը:
Ի՞նչ արտաքին քաղաքականություն էր վարում ԱՄՆ–ը XX դարի երկրորդ կեսին: Նշե՛ք երկրի հաջողություններն ու անհաջողություններն այդ ասպարեզում:

Գլուխ 14 ԹՈՒՐՔԻԱՆ ԵՎ ԻՐԱՆԸ

դաս 48

ԹՈՒՐՔԻԱՆ 1945-1970-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԹՈՒՐՔԻԱՆ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Հետպատերազմյան առաջին տարիներին Թուրքիան գտնվում էր ծանր վիճակում: Կյանքի դժվարին պայմանները, *կոռուպցիան** և կամայականությունները դարձել էին սոցիալական դժգոհության, գործադուլների և ցույցերի պատճառ: 1946թ. վերջերին կառավարող Ժողովրդահանրապետական կուսակցությունը պառակտվեց: Նրանից անջատվեց և ձևավորվեց նոր, բուրժուական-վածատիրական **դեմոկրատական կուսակցությունը**:

1950թ. մայիսին Թուրքիայում տեղի ունեցած պառլամենտական ընտրություններում հաղթեց դեմոկրատական կուսակցությունը: Թուրքիայի նոր նախագահ ընտրվեց Դկ-ի առաջնորդ **Ջելալ Բայարը**: Իսկ կուսակցության մյուս ղեկավարը՝ **Ադնան Մենդերեսը** ստանձնեց վարչապետի պաշտոնը:

Մենդերեսի կառավարությունը խրախուսում էր մասնավոր *յեռնարկատիրությունը** և օտարերկրյա կապիտալ ներդրումները: Գյուղատնտեսության մեջ ավելի մեծ չափերով սկսեցին կիրառել կապիտալիստական մեթոդները:

Նորամուծություններից առավել շահեցին խոշոր դրամատերերը, առևտրականները և հողատերերը, իսկ ժողովրդի վիճակը մնում էր ծանր: Տնտեսական դրությունն այնքան վատթարացավ, որ Թուրքիան 1956թ. ստիպված եղավ հացահատիկ ներմուծել: Երկրում կրկին ծայր առան բողոքի շարժումները:

Չգտնելով շեղել պայքարի ուղղությունը՝ իշխանությունները փորձեցին դրան տալ ազգային գունավորում: Նրանց դրդմամբ 1956–1957թթ. Ստամբուլում, Իզմիրում և այլ վայրերում կազմակերպվեցին հակահունական ելույթներ: Սպանվեցին բազմաթիվ հույներ, հրդեհվեցին և ոչնչացվեցին նրանց պատկանող տները, խանութները, թալանվեց նրանց ունեցվածքը: Շարժումը տարածվեց նաև հայերի և ազգային մյուս փոքրամասնությունների վրա: Հայերը նույնպես զգալի կորուստներ կրեցին:

Դկ-ի կառավարման տարիներին ավելի ուժեղացավ ԱՄՆ-ի ազդեցությունը Թուրքիայում: **1952թ. Թուրքիան դարձավ Հյուսիսատլանտյան դաշինքի (ՆԱՏՕ) անդամ** և նրա հուսալի դաշնակիցը՝ Խորհրդային Միության հարավային սահմանների մոտ:

Ջանալով բարելավել հարաբերությունները Թուրքիայի հետ՝ խորհրդային կառավարությունը դիմեց մի շարք քայլերի: Մասնավորապես՝ ԽՍՀՄ արտաքին գործերի նախարար **Վ. Մոլոտովը 1953թ. մայիսին** հայտարարեց, որ **Խորհրդային Միությունը տարածքային ոչ մի պահանջ չունի Թուրքիայից**: Խոսքը հայկական հողերի մասին էր: Սակայն այդ զիջումն առանձնակի ազդեցություն չունեցավ խորհրդա-թուրքական հարաբերությունների բարելավման վրա:

Թուրքիան 1955թ. մտավ **Բաղդադի պակտի** մեջ, որի անդամներն էին նաև Անգլիան, Իրաքը, Իրանը և Պակիստանը:

Մենդերեսի կառավարությունը երկիրը հասցրել էր տնտեսական և քաղաքական ճգնաժամի: Դժգոհությունը համակել էր անգամ բուրժուազիայի և կալվածատերերի որոշ շրջանների:

1960Թ. ՋԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ

1960թ. մայիսի 27-ին թուրք զինվորականները գեներալ **Գյուրսելի** գլխավորությամբ, «երկիրը կործանումից փրկելու նպատակով», կատարեցին պետական հե-

դաշրջում: Պառլամենտը և կառավարությունը ցրվեցին, արգելվեցին քաղաքական կուսակցությունները: Վարչապետ Ադնան Մենդերեսը մահապատժի ենթարկվեց, իսկ նախագահ Ջ. Բայարը դատապարտվեց ցմահ բանտարկության:

Զինվորականները հայտարարեցին, որ իրենց քաղաքականության հիմքում դնելու են Աթաթուրքի պատգամները:

Նախկին դեմոկրատական կուսակցության հիմքի վրա ձևավորվեցին երկու նոր կուսակցություն՝ «**Արդարություն**» և «**Նոր Թուրքիա**»: **1961թ. մայիսի 27–ին** ընդունվեց նոր Սահմանադրություն, իսկ նոյեմբերին կայացան ընտրություններ: Գյուրսելն ընտրվեց նախագահ: Ժողովրդահանրապետական կուսակցության ղեկավար **Ինենյուն** կազմեց կոալիցիոն կառավարություն՝ Ժողովրդահանրապետական և Արդարության կուսակցությունների ներկայացուցիչներից: Սակայն կառավարությունը չկարողացավ արդյունավետ գործել:

Թուրքիայում կրկին առաջացավ քաղաքական ճգնաժամ: 1965թ. կայացան մեջլիսի հերթական ընտրություններ: Տեղերի բացարձակ մեծամասնությունը շահեց Արդարության կուսակցությունը, որի ղեկավար **Սուլեյման Դեմիրելը** կազմեց նոր կառավարություն: Նա իր քաղաքականության հիմքում դրեց էտատիզմի սահմանափակման, մասնավոր ձեռներեցության զարգացման և օտարերկրյա կապիտալի ներգրավման սկզբունքները:

ԹՈՒՐՔԻԱՆ 1970-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Կառավարությունն ի վիճակի չեղավ երկիրը դուրս բերելու տնտեսական և քաղաքական ճգնաժամից: Մեծ չափերի հասավ ահաբեկչությունը, իսկ ներքաղաքական վիճակը դարձել էր անկայուն: Կրկին միջամտեցին զինվորականները: **1971թ. մարտի 12–ին** նրանց պահանջով Սուլեյման Դեմիրելի կառավարությունը հրաժարական տվեց: Նոր վարչապետ նշանակվեց **Էրիմը**: Երկրի կարևոր նահանգներում նա մտցրեց արտակարգ դրություն:

1974թ. թուրքական զորքերը ներխուժեցին Կիպրոս և գրավելով կղզու տարածքի մոտ 40 տոկոսը՝ ստեղծեցին «**Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետություն**» խամաճիկային կազմավորումը: ՄԱԿ–ի Անվտանգության խորհուրդը պահանջեց թուրքական զորքերը դուրս բերել Կիպրոսից: Սակայն Թուրքիան, արհամարհելով այդ որոշումը, իր զորքերը մինչև օրս պահում է կղզու հյուսիսային մասում:

1970–ական թվականների երկրորդ կեսին կրկին սրվեց ներքաղաքական իրադրությունը Թուրքիայում: Սպառնալի չափեր ընդունեց ահաբեկչությունը: Անհանգիստ էր վիճակը նաև քրդաբնակ վայրերում, որտեղ զինված բախումները դարձել էին սովորական երևույթ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ինչպիսի՞ն էր Թուրքիայի հետպատերազմյան վիճակը: Դեմոկրատական կուսակցության կառավարման տարիներն ի՞նչ տվեցին Թուրքիային:*
2. *Ինչո՞ւ ԱՄՆ–ը պաշտպանեց և աջակցեց Թուրքիային:*
3. *Փորձե՛ք պարզել 1960 թ. զինվորական հեղաշրջման պատճառները:*
4. *Ինչպիսի՞ն էր երկրի դրությունը 1970–ական թվականներին:*
5. *Գնահատե՛ք Կիպրոսի հյուսիսային մասի՝ թուրքական բռնազավթման ակտը:*

դաս 49

ԹՈՒՐՔԻԱՆ 1980-1990-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1980Թ. ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ: ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄԸ

1980թ. սեպտեմբերի 12–ին զինվորականները կատարեցին նոր պետական հեղաշրջում և իշխանությունը վերցրին իրենց ձեռքը: Հեղաշրջումը ղեկավարեց թուրքական բանակի շտաբի պետ, գեներալ **Քենան Էվրենը**: Ստեղծվեց Ազգային անվտանգու-

թյան խորհուրդ (ԱԱԽ)՝ Էվրենի գլխավորությամբ: Այն դարձավ Թուրքիայի բարձրագույն պետական մարմինը: ԱԱԽ-ի որոշմամբ ցրվեցին մեջլիսը և կառավարությունը: Արգելվեցին բոլոր քաղաքական կուսակցությունները, իսկ նրանց ղեկավարները 10 տարի ժամանակով զրկվեցին քաղաքական գործունեությամբ զբաղվելու իրավունքից:

Պետական հեղաշրջումից հետո դիմելով ժողովրդին՝ Էվրենը շարադրեց իր ծրագիրը: Այն կազմված էր մի քանի կարևոր դրույթից՝ բարձրացնել պետության հեղինակությունը, երաշխավորել սոցիալական հաշտություն, իրագործել սոցիալական արդարություն, վերահաստատել քաղաքացիական կառավարում, երբ դրա հնարավորությունը ստեղծվի և այլն:

Նոր իշխանություններն ամենամեծ հաջողության հասան ահաբեկչության, բանդիտիզմի, մաքսանենգության և քրեական տարրերի դեմ մղվող պայքարում: 1983թ. Թուրքիայում վերականգնվեցին քաղաքացիական իշխանությունները: Գեներալ Էվրենը յոթ տարի ժամանակով զբաղեցրեց Թուրքիայի նախագահի պաշտոնը:

Թ. ՕԶԱԼԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1983թ. նոյեմբերին կայացան պառլամենտական ընտրություններ, որին թույլատրեցին մասնակցել միայն երեք նոր կուսակցությունների՝ «**Ազգային դեմոկրատական**», «**Մայր հայրենիք**» և «**Ժողովրդական**»:

Հաղթեց **Թուրգուտ Օզալի** գլխավորած «Մայր հայրենիք» կուսակցությունը: Օզալը դարձավ Թուրքիայի վարչապետը: Նա ձեռնամուխ եղավ իր տնտեսական ծրագրի իրականացմանը: Ծրագրի հիմքում դրված էին տնտեսության շուտափույթ արմատական ***ազատականացումը**** **(լիբերալացումը)** և շուկայական հարաբերություններին անցնելու խնդիրները: 1980-ական թվականներին տեղի ունեցան նշանակալի տեղաշարժեր Թուրքիայի սոցիալ-տնտեսական զարգացման բնագավառում:

1989թ. Օզալն ընտրվեց Թուրքիայի նախագահ: 1991թ. հոկտեմբերի 20-ին կայացած պառլամենտական ընտրություններում

Տեսարան Ստամբուլից

առավելության հասավ «**Ճշմարիտ ուղի**» կուսակցությունը: Դրա ղեկավար **Սուլեյման Դեմիրելը,** ստանալով Սոցիալ-դեմոկրատական ժողովրդական կուսակցության աջակցությունը, կազմեց կոալիցիոն կառավարություն:

Ս. ԴԵՄԻՐԵԼԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ

1993թ. մայիսին, Օզալի մահից հետո, Դեմիրելն ընտրվեց նախագահ: Վարչապետ դարձավ **Թանսու Չիլլերը**: Թուրքիայի պատմության մեջ առաջին անգամ կառավարության ղեկավարի պաշտոնը կին զբաղեցրեց:

Թուրքիան պաշտոնապես համարվում է աշխարհիկ պետություն: Սակայն 1990-ական թվականներին Թուրքիայում նկատվեց իսլամական ուժերի աշխուժացում և նրանց ազդեցության զգալի աճ: Դա կատարվում էր երկրում կուտակված բազմաթիվ լուրջ խնդիրների ընդհանուր ֆոնի վրա:

Թուրքիայի ներքաղաքական կյանքի ամենասուր խնդիրներից է **քրդական հարցը**: Մոտ 20 մլն կազմող քրդերը պայքարում են իրենց ազգային իրավունքների ճանաչման համար: Այդ պայքարն ուժեղացավ 1980-90-ական թվականներին, **Քրդական բանվորական կուսակցության** ստեղծումից հետո, որը գլխավորում էր **Աբդուլլահ Օջալանը (Ափոն)**: Թուրքական իշխանություններն իսկական պատերազմ են մղում քրդերի դեմ: 1999թ. փետրվարին հաջողվեց ձերբա-

կալել և մահվան դատապարտել Օջալանին՝ նրան մեղադրելով «դավաճանության» և թուրքական պետության մասնատման մեջ:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1991թ. դեկտեմբերի 16-ին Թուրքիան ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը: Սակայն նա հրաժարվում է Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատել: Դիվանագիտական հարաբերությունների հաստատման համար, որպես նախապայմաններ, Թուրքիան Հայաստանից պահանջում է հրաժարվել 1915թ. ցեղասպանության մեջ թուրքական իշխանություններին մեղադրելուց, չպաշտպանել Արցախի հայության արդարացի պայքարը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Իսկ Հայաստանը մերժում է այս բոլոր նախապայմանները:

Լիովին պաշտպանելով Ադրբեջանին՝ Թուրքիան վերջինիս հետ շրջափակման է ենթարկել Հայաստանը: Թուրքիայի այդ քայլերը հակասում են միջազգային իրավունքի և միջազգային համակեցության համընդհանուր նորմերին:

Ներկայումս Թուրքիան ակտիվացրել է իր քաղաքականությունն Անդրկովկասում և Միջին Ասիայում: **Պանթուրքիզմը կրկին բարձրացվել է պետական քաղաքականության մակարդակի**: Թուրքիան ձգտում է իր ազդեցությունը հաստատել Փոքր Ասիայից մինչև Սիբիր ու Չինաստան ընկած տարածքներում:

Պանթուրքիզմն իր սուր ծայրով ուղղված է Ռուսաստանի, Հայաստանի, Իրանի, ինչպես նաև արաբական երկրների դեմ և մեծ վտանգ է ներկայացնում նրանց համար: Թուրքիայի նման քաղաքականությունն Անդրկովկասում, Միջին Ասիայում և Մերձավոր Արևելքում ստեղծված լարված իրավիճակի գլխավոր պատճառներից մեկն է:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ի՞նչ դեր խաղաց գեներալ Ք. Էվրենը Թուրքիայում քաղաքացիական կառավարման վերահաստատման գործում:*
2. *Ներկայացրեք Թ. Օզալի գործունեությունը:*
3. *Ի՞նչ գիտեք քրդական հարցի մասին: Ի՞նչ տեղեկություններ կարող եք ներկայացնել Ա. Օջալանի մասին:*
4. *Ձեր կարծիքով ի՞նչն է խանգարում Թուրքիա–Հայաստան կապերի բարելավմանը: Կարո՞ղ եք ընդհանուր կողմերով բնորոշել «պանթուրքիզմ» հասկացությունը (օգտվեք նաև «Հայոց պատմություն» դասընթացից դրա վերաբերյալ ստացած ձեր գիտելիքներից):*

դաս 50

ԻՐԱՆԸ 1945-1970-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԻՆՔՆԱՎԱՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո Իրանում լայն ծավալ ստացան ինքնավարական շարժումները: **1945թ. Իրանական Ադրբեջանում** ձևավորվեց Ադրբեջանի դեմոկրատական կուսակցությունը: Դրա ղեկավար **Ջաֆար Փեշեվարին**, ոչ առանց Խորհրդային Միության օգնու-

թյան. նույն թվականի դեկտեմբերին կազմեց Իրանական Ադրբեջանի ազգային կառավարությունը:

Ինքնավարության համար շարժում ծավալվեց նաև **Իրանական Քրդստանում**: 1945թ. վերջերին Մեհաբադում կազմավորվեց քրդական կառավարություն՝ Ղազի Մուհամմադի գլխավորությամբ: Նրա քաղաքականության գլխավոր նպատակը քրդական ինքնավարության հաստատումն էր Իրանի սահմաններում:

Իրանի կառավարությունը հարկադրված էր սկզբնական շրջանում հաշտվել ադրբեջանական և քրդական ինքնավարությունների գոյության հետ: Սակայն **1946թ. դեկտեմբերին** կառավարական զորքերը ներխուժեցին Իրանական Ադրբեջան և վերջ տվեցին նրա ինքնավարությանը: Մինչև տարվա վերջ ջախջախվեց նաև քրդական ինքնավարական շարժումը: Նրա առաջնորդ Ղազի Մուհամմադն իր զինակիցների հետ կախաղան բարձրացվեց:

ԵՐԿԻՐԸ 1950-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ: Մ. ՄՈՍԱԴԵՂԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Իրանում ստեղծվել էր շատ ծանր իրադրություն: Երկրի տնտեսությունը խոր ճգնաժամ էր ապրում: Իրանի հիմնական ազգային հարստությունից՝ նավթից ստացվող շահույթի առյուծի բաժինը մտնում էր անգլիական և ամերիկյան նավթային ընկերությունների գրպանը:

1950-ական թվականներին Իրանում ուժեղացավ պայքարը նավթային արդյունաբերության ազգայնացման համար: Այդ շարժումը գլխավորեց **Ազգային ճակատը**, որը հիմնել էր դոկտոր **Մուհամմադ Մոսադեղը**:

1951թ. մարտի 15-ին Իրանի պառլամենտը (մեջլիս) ընդունեց օրենք Իրանի նավթարդյունաբերության ազգայնացման մասին: **Ապրիլի** 29-ին դոկտոր **Մոսադեղը կազմեց իր կառավարությունը** և ձեռնամուխ եղավ այդ օրենքի կենսագործմանը: Նա ցանկանում էր նավթից ստացվող եկամուտներն օգտագործել Իրանի տնտեսության զարգացման, ժողովրդի վիճակի բարելավման և սոցիալական բարեփոխումների համար: Սակայն դա այնքան էլ հեշտ գործ չէր:

Իրանի պետական և հասարակական գործիչ, կրթությամբ՝ իրավաբան, 1951–1953թթ. Իրանի վարչապետ: Զգում էր սահմանափակել շահի իշխանությունը:

Մ. Մոսադեղ (1879-1969)

Անգլիան և ԱՄՆ-ը տնտեսական շրջափակման ենթարկեցին Իրանը՝ խոչընդոտելով իրանական նավթի արտահանմանը և վաճառքին: 1952թ. աշնանը Մոսադեղի կառավարությունը խզեց դիվանագիտական հարաբերություններն Անգլիայի հետ: Միաժամանակ խիստ սրվեցին հարաբերությունները վարչապետ Մոսադեղի և երիտասարդ շահի՝ Մուհամմադ Ռեզա Փահլավիի միջև: Վերջինս դեմ էր կառավարության վարած քաղաքականությանը:

Մոսադեղը **1953թ. հուլիսին** ցրեց մեջլիսը և փորձեց ամբողջ իշխանությունը կենտրոնացնել իր ձեռքում: Սակայն շահին հավատարիմ զորամասերը, ԱՄՆ-ի աջակցությամբ, նույն տարվա օգոստոսի 19-ին կատարեցին պետական հեղաշրջում: Մոսադեղի կառավարությունը տապալվեց, իսկ Մոսադեղը ձերբակալվեց և բանտ նետվեց:

Հեղաշրջումից հետո սերտ հարաբերություններ հաստատվեցին Իրանի և ԱՄՆ-ի միջև: ԱՄՆ-ը դարձավ Իրանին զենքի գլխավոր մատակարարողը:

Վերականգնվեցին դիվանագիտական հարաբերություններն Անգլիայի հետ. Իրանը միացավ Բաղդադի պակտին:

Երկրի տնտեսությունը շարունակում էր մնալ անմխիթար վիճակում: Ցածր էր աշխատավարձը, մեծ թիվ էին կազմում գործազուրկները: Հողը հիմնականում կենտրոնացված էր խոշոր կալվածատերերի ձեռքում, իսկ գյուղացիության ճնշող մեծամասնությունը հողազուրկ էր և հարկադրված էր այն վարձակալել: Սակայն վարձակալման պայմանները ծանր էին, գյուղացիները ստիպված լքում էին գյուղերն ու ապրուստ ապահովելու հույսով մեկնում քաղաքներ:

«ՍՊԻՏԱԿ» ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Երկրում կուտակված դժգոհությունը պարարտ հող էր սոցիալական պայթյունի համար: Այն կանխելու նպատակով շահը և կառավարող վերնախավը որոշեցին կիրառել բարեփոխումների մի ամբողջ ծրագիր, որն ստացավ **«Սպիտակ» հեղափոխություն** անվանումը:

Բարենորոգումների սկիզբն ազդարարվեց **1961թ.**: Դրանց մեջ ամենակարևորը **հողային ռեֆորմն էր**: Շահն իր սեփականությունը հանդիսացող վիթխարի հողատարածությունները «վերադարձրեց» ժողովրդին: Վարձակալվող և ավելցուկ հողատարածությունները վերցրեցին կալվածատերերից և բաժանեցին գյուղացիներին: 1971թ. սեպտեմբերին պաշտոնապես հայտարարվեց հողային բարեփոխումների ավարտի մասին: Բարեփոխումների արդյունքում **հող ստացան մոտ 4,3 մլն գյուղացիներ**:

Ավելի ակնառու էին հաջողությունները կրթության ոլորտում: Մի քանի անգամ ավելացավ գրագետ մարդկանց թիվը: Զգալի վերելք ապրեց բարձրագույն դպրոցը: 1974թ. Իրանում գործում էր մոտ 150 բարձրագույն ուսումնական հաստատություն՝ 123 հազար ուսանողով (1961թ. կար 21 հազար ուսանող):

Իրագործվեց նաև ջրային պաշարների ազգայնացում և զարգացում: Ընդունվեցին քաղաքների ու գյուղական վայրերի վերակառուցման ծրագրեր և այլն:

«Սպիտակ» հեղափոխությունը նախատեսում էր նաև մի շարք այլ բարեփոխումներ: Թեև բարեփոխումներն ամբողջ ծավալով չիրականացվեցին, այնուամենայնիվ, որոշակի տեղաշարժեր կատարվեցին Իրանի տնտեսության մեջ և քաղաքական համակարգում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ինքնավարական շարժումներն ի՞նչ վախճան ունեցան Իրանում:*
2. *Ձեր կարծիքով ինչո՞ւ տապալվեց Մ. Մոսադեղի կառավարությունը:*
3. *1961–1970-ական թվականների բարեփոխումներն Իրանում ինչո՞ւ ստացան «Սպիտակ» հեղափոխություն անունը:*
4. *Ներկայացրեք «Սպիտակ» հեղափոխության արդյունքները:*

դաս 51

ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

1978-1979թթ. ԻՐԱՆԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՈՒՄԸ

1970-ական թվականների վերջերին ակնհայտ դարձավ, որ բարենորոգումները չեն տվել սպասված արդյունքները: Սոցիալական չափազանց լարված իրավիճակ էր ստեղծվել: Աջակողմյան ուժերը դժգոհ էին շահից այն պատճառով, որ նա չափազանց շատ զիջումներ արեց բարեփոխումների ընթացքում: Ձախակողմյան ուժերը քննադատում էին շահին, որ բարեփոխումներն արմատական և լիակատար չէին, իսկ ժողովուրդը դժգոհ էր, որովհետև նրա վիճակը մնում էր ծանր:

Այդ շրջանում ինչպես Արևելքի մյուս երկրներում, այնպես էլ Իրանում ակտիվացել էին մուսուլմանական ուժերը: Նրանք իրենց երկրի դժբախտությունը տեսնում էին **իսլամից հեռանալու, արևմտյան արժեքներ ընդունելու մեջ և պահանջում էին կրկին վերադառնալ ավանդական իսլամական արժեքներին**: Համընդհանուր դժգոհության մյուս պատճառն ԱՄՆ-ի ազդեցության խիստ աճն էր Իրանում, ինչպես նաև իրանական գաղտնի ոստիկանության (ՍԱՎԱԿ) սարսափազդու դերը:

Ահա այսպիսի պայմաններում Իրանում ամենաազդեցիկ ուժը դարձավ մուսուլմանական հոգևորականությունը՝ հայտնի կրոնական գործիչ այաթոլլահ **Ռ. Խոմեյնիի** գլխավորությամբ:

1978թ. հունվարի 9-ին Կում քաղաքում, որն Իրանի կարևոր կրոնական կենտրոններից մեկն էր, տեղի ունեցավ առաջին հակակառավարական ցույցը: Այնուհետև պայքարը ծավալվեց ու ընդգրկեց ամբողջ երկիրը: 1979թ. հունվարի 16-ին շահն իր ընտանիքով ընդմիշտ հեռացավ Իրանից: **Փետրվարի**

1–ին Փարիզից հաղթականորեն Թեհրան վերադարձավ այաթոլլան Խոմեյնին, որին բազմամիլիոնանոց ժողովուրդը ցնծությամբ դիմավորեց: Հոգևոր առաջնորդը կոչ արեց իր հայրենակիցներին տապալել միապետությունը:

Իրանական հեղափոխությունը հաղթանակեց: **1979թ. ապրիլի 1–ին հռչակվեց Իրանի Իսլամական Հանրապետությունը (ԻԻՀ)**: Քաղաքական իշխանությունը երկրում անցավ բարձրագույն հոգևորականության ձեռքը: Իրանում հաստատվեց **մուլլոկրատիա՝ մուլլաների** իշխանություն:

1979թ. դեկտեմբերին անցկացված հանրաքվեն հավանություն տվեց Իրանի Սահմանադրությանը: Դրա առաջին հոդվածով Իրանը համարվում էր իսլամական հանրապետություն: Գերագույն իշխանությունը պատկանում է **ֆակիհիին՝** Ղուրանի և **մուսուլմանական օրենսդրության՝ շարիաթի** լավագույն գիտակ և մեկնաբան հոգևոր առաջնորդին, որպիսին այդ ժամանակ այաթոլլան Խոմեյնին էր: Իրանը վերածվեց ***թեոկրատական պետության**** (աստվածապետություն):

Հեղափոխությունից հետո սրվեցին հարաբերությունները ԱՄՆ–ի հետ: Իրանական իշխանությունները չեղյալ հայտարարեցին ԱՄՆ–ի հետ կնքած բոլոր ռազմական պայմանագրերը: ԱՄՆ–ը հռչակվեց **«սև չեյթան»** (սատանա): 1979թ. փետրվարի 4–ին Թեհրանում արմատական ուղղության ուսանողությունը գրոհեց ԱՄՆ–ի դեսպանատան

Այաթոլլան Ռուհոլլան Խոմեյնի

վրա և դեսպանության աշխատակիցներին պատանդ վերցրեց: Պատանդները ազատ արձակվեցին միայն 1981թ. հունվարին:

Հարթ չէին ընթանում նաև իրանա–խորհրդային հարաբերությունները: Իրանի հոգևոր առաջնորդները Խորհրդային Միությունը համարեցին **«կարմիր չեյթան»**: Իրանի կառավարությունը 1979թ. հուլիսին դադարեցրեց դեպի Խորհրդային Միություն գազամուղի կառուցումը: Նույն թվականի նոյեմբերին նա **չեղյալ հայտարարեց 1921թ. խորհրդա–իրանական պայմանագիրը**:

ԻՐԱՆԱ-ԻՐԱՔՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ (1980-1988)

Իրանա–իրաքյան հարաբերություններն ընդունեցին դրամատիկ բնույթ: 1980թ. աշնանն Իրանը և Իրաքը ներգրավվեցին երկարատև ու արյունալի պատերազմի մեջ:

Պատերազմը սկսվեց **1980թ. սեպտեմբերի 22–ին**: Իրաքյան բանակն անցավ հարձակման, գրավեց երկու երկրների միջև վաղուց վեճի առարկա հանդիսացող **Շատ ալ–Արաբի** շրջանի որոշ տարածքներ և ներխուժեց Իրան: Իրաքի նպատակն էր նաև կանխել Իրանի իսլամական հեղափոխության ներթափանցումն Իրաք:

Պատերազմի սկզբնական փուլում հաջողությունն ուղեկցում էր իրաքյան բանակին, որը գրավեց զգալի տարածքներ: Սակայն 1981թ. Իրանը կարողացավ անցնել հարձակման և իրաքյան զորքերը դուրս մղել Իրանից, իսկ այնուհետև պատերազմական գործողությունները տեղափոխեց Իրաքի տարածք:

1980–ական թվականների կեսերից պարզ դարձավ, որ կողմերից ոչ մեկն ի վիճակի չէ հասնելու վճռական հաղթանակի: Պատերազմն ընդունեց դիրքային բնույթ, և երկու կողմերն էլ արյունաքամ էին լինում՝ կրելով մարդկային ու նյութական հսկայական կորուստներ:

Ստեղծված պայմաններում իր գործունեությունն ակտիվացրեց Միավորված ազգերի կազմակերպությունը: 1987թ. հուլիսի 20–ին ՄԱԿ–ի Անվտանգության խորհուրդը միաձայն ընդունեց Իրանի և Իրաքի միջև կրակը դադարեցնելու մասին թիվ 598 բանաձևը: Կողմերն ընդունեցին այդ բանաձևը

միայն մեկ տարի անց՝ 1988թ. հուլիսի 18–ին:

Մոտ ութ տարի տևած պատերազմն ավարտվեց: Կողմերից ոչ մեկն էլ չհասավ իր առջև դրված քաղաքական նպատակներին:

ԻՐԱՆԸ 1990-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1989թ. հունիսի 3–ին մահացավ այաթոլլահ Խոմեյնին: **Ալի Խամենեին** դարձավ Իրանի հոգևոր առաջնորդ, իսկ նախագահ՝ **Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանին**: Վերջինս 1993թ. երկրորդ անգամ վերընտրվեց այդ պաշտոնում: Նա մեծ ջանքեր գործադրեց պատերազմից տուժած Իրանի տնտեսությունը վերականգնելու և զարգացնելու, ինչպես նաև, թեև զգուշությամբ, հոգևորականության իշխանությունը որոշ չափով սահմանափակելու ուղղությամբ: Այդ գիծն ավելի հետևողականորեն է անցկացնում 1997թ. Իրանի նախագահ ընտրված **Մոհամմադ Խաթամին**, որը չափավոր հայացքների տեր պետական գործիչ է: Սակայն նրա այդ քաղաքականությունը հանդիպում է հոգևորականության սուր դիմադրությանը:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Իրանա–հայկական հարաբերություններն ունեն բազմադարյան պատմություն: Իրանը և Հայաստանը, որոնք որպես պետություն քաղաքական ասպարեզ են իջել դեռևս մեր թվարկությունից առաջ, անցել են երկար պատմական ուղի, որի ընթացքում հաճախ համագործակցել են միմյանց հետ:

Հայաստանի անկախության հռչակումով նոր էջ բացվեց իրանա–հայկական միջպետական հարաբերությունների ոլորտում: Իրանը **1991թ. դեկտեմբերի 25–ին** պաշտոնապես ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը: Իսկ 1992թ. փետրվարին դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին նրանց միջև:

Իրանա–հայկական համագործակցությունն ընդգրկում է քաղաքական, առևտրատնտեսական և մշակութային հարաբերությունների ոլորտը: Դրանք շատ կարևոր են, եթե նկատի ունենանք Հայաստանի շրջափակումը Թուրքիայի և Ադրբեջանի կողմից:

Զարգանում են նաև մշակութային ու մարզական կապերը:

Իրանի և Հայաստանի շահերը համընկնում են նաև պանթուրքիզմի հարցում, որը սպառնալիք է երկու պետությունների համար: Թուրքիայի ձգտումը՝ իրագործել իր պանթուրանական ծրագրերը և ստեղծել ընդհանուր թուրանական տարածք Փոքր Ասիայից մինչև Միջին Ասիա և Ալթայ, հավասարապես մեծ վտանգ է ներկայացնում Իրանի ու Հայաստանի համար:

Իրանա–հայկական հարաբերությունները բարիդրացիական են, ունեն ռազմավարական նշանակություն և հիմնված են միմյանց ներքին գործերին չմիջամտելու, անկախությունն ու ինքնիշխանությունը հարգելու սկզբունքի վրա: Դրանք անդրկովկասյան–մերձավորարևելյան տարածաշրջանի կայունացման կարևոր գործոն են:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Պարզաբանե՛ք Իրանի 1978-1979թթ. հեղափոխության պատճառները: Ո՞վ գլխավորեց հեղափոխությունը:*
2. *Ե՞րբ հռչակվեց Իրանի Իսլամական Հանրապետությունը:*
3. *Բացատրե՛ք մուլլոկրատիա և թեոկրատական պետություն հասկացությունները:*
4. *Ինչո՞վ ավարտվեց իրանա–իրաքյան պատերազմը:*
5. *Բնութագրե՛ք հայ–իրանական միջպետական հարաբերությունները:*

Գլուխ 15 ՉԻՆԱՍՏԱՆԸ

դաս 52

ՉԻՆԱՍՏԱՆԸ 1945-1950-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ՉԻՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

Կոմունիստների և գոմինդանականների միջև պայքարը, որ ժամանակավորապես դադարել էր Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, նոր ուժով վերսկսվեց հետպատերազմյան շրջանում:

Կոմունիստները՝ կուսակցության նախագահ Մաո Ցզեդունի գլխավորությամբ, ունեին իրենց ռազմական ուժերը՝ **Ժողովրդական ազատագրական բանակը** (ԺԱԲ): Նրանք վերահսկում էին **Հյուսիսային Չինաստանը**, զենք և ռազմամթերք էին ստանում Խորհրդային Միությունից:

Մաո Ցզեդուն

Գոմինդանական ուժերը, Չան Կայշիի գլխավորությամբ, վերահսկում էին Չինաստանի մեծ մասը՝ ռազմաքաղաքական աջակցություն ստանալով Արևմուտքից և առաջին հերթին ԱՄՆ-ից:

1948թ. վերսկսվեցին պատերազմական գործողությունները նրանց միջև: ԺԱԲ-ը տանում էր հաղթանակ հաղթանակի հետևից: Նա գրավեց Չինաստանի կարևոր կենտրոնները՝ Շանհայը, Չանչունը, Շենյանը, իսկ **1949թ. հունվարի 31-ին մտավ Պեկին**: Չան Կայշին և գոմինդանականները փախան Թայվան կղզի:

1949թ. հոկտեմբերի 1-ին Պեկինի Տյանանմին հրապարակում հռչակվեց Չինական Ժողովրդական Հանրապետությունը:

ՉԺՀ-ում իշխանությունն իր ձեռքում կենտրոնացրեց կոմունիստական կուսակցությունը: Նրա ղեկավար Մաո Ցզեդունը համարվում էր Չինաստանի հանճարեղ առաջնորդը և անսխալ նավավարը: ՉԺՀ-ի նախագահ ընտրվեց **Լյու Շաոցին**:

ՉԺՀ-Ի ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Չինաստանում հաստատվեց սոցիալիստական երկրներին բնորոշ ամբողջատիրական (տոտալիտար) համակարգ:

Նոր ղեկավարությունն իր առջև խնդիր էր դրել Չինաստանը կարճ ժամանակամիջոցում դարձնել ժամանակակից զարգացած արդյունաբերական երկիր: Դրա համար նախատեսվում էր հաստատել արտադրության հիմնական միջոցների հանրային սեփականություն, վերացնել մասնավոր սեփականությունը գյուղում և քաղաքում, բարձրացնել մարդկանց կենսամակարդակը, զարգացնել մշակույթը, կրթությունը և այլն:

Սկսվեց կալվածատիրական հողերի բռնագրավումը և հանձնումը հողազուրկ գյուղացիներին: Մեծ Ուշադրություն տրվեց *կոոպերացիայի** զարգացմանը: Գյուղացիները պետք է միավորվեին կոլեկտիվ տնտե-

սությունների մեջ: Բայց դա հեշտությամբ չիրականացվեց: Շատ վայրերում հողատերերի դիմադրությունը վերածվում էր արյունալի բախումների: Գյուղացիության զգալի մասը պատրաստ չէր կոլեկտիվ տնտեսությունների մեջ միավորվելու և նույնիսկ դեմ էր այդ քաղաքականությանը:

Հավասարությունը հռչակվեց որպես երկրի սոցիալական քաղաքականության հիմք: Կանայք ստացան տղամարդկանց հավասար իրավունքներ, մտցվեց նպաստների համակարգ, բարելավվեց բուժական սպասարկումը և կրթական գործը: Իրագործվեց առաջին հնգամյա պլանը, որը կարևոր քայլ հանդիսացավ ՉԺՀ-ի ինդուստրացման և տնտեսության զարգացման ճանապարհին:

Չինական ղեկավարությունը, հաշվի չառնելով երկրի իրական հնարավորությունները և անտեսելով տնտեսական զարգացման օրինաչափությունները, 1958թ. կեսերից անցավ **«մեծ թռիչքի»** քաղաքականության իրականացմանը:

Չինաստանը պետք է կարճ ժամանակամիջոցում վերածվեր զարգացած արդյունաբերական երկրի: Բայց այդ ծրագիրը տապալվեց, իսկ նրա արդյունքները աղետաբեր եղան: Քաղցից և թերսնումից մահացավ մոտ 20 մլն մարդ: Իշխանությունները ստիպված էին հրաժարվել «մեծ թռիչքի» քաղաքականությունից:

ՉԺՀ-ում արմատավորվում էին կառավարման դիկտատորական մեթոդները, հաստատվել էր Մաո Ցզեդունի անձի պաշտամունքը:

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՉԺՀ-ն կազմում էր սոցիալիստական համագործակցության բաղկացուցիչ մասը: Սկզբնական շրջանում սերտ հարաբերություններ հաստատվեցին Խորհրդային Միության հետ: ԽՍՀՄ-ից Չինաստանը ստանում էր անհրաժեշտ տնտեսական, տեխնիկական ու ֆինանսական օգնություն և լայն ռազմաքաղաքական աջակցություն: **1950թ. փետրվարի 14-ին** ԽՍՀՄ-ը և ՉԺՀ-ն Մոսկվայում ստորագրեցին **բարեկամության և փոխադարձ օգնության պայմանագիր:**

1950–1953թթ. ՉԺՀ-ն կորեական պատերազմի ժամանակ մեծ օգնություն ցույց տվեց Հյուսիսային Կորեային: Նրա զորքերն ուղղակի մասնակցեցին պատերազմական գործողություններին: 1954թ. ՉԺՀ-ի ակտիվ մասնակցությամբ համաձայնություն ձեռք բերվեց Վիետնամի վերաբերյալ՝ վերջ տրվեց ֆրանսիական տիրապետությանը Վիետնամում:

1950-ական թվականների վերջերից լարվածություն առաջացավ չին-խորհրդային հարաբերություններում: Չինաստանը տարածքային հավակնություններ ուներ խորհրդային Հեռավոր Արևելքի որոշ մասերի նկատմամբ: ՉԺՀ-ն չէր ընդունում անհատի պաշտամունքի դատապարտման և որոշ ազատականացման քաղաքականությունը, որ վարում էր ԽՍՀՄ-ի այդ ժամանակվա ղեկավար Նիկիտա Խրուշչովը: ՉԺՀ-ն հավակնում էր առաջնորդի դեր խաղալու միջազգային բանվորական և կոմունիստական շարժման մեջ: **1960թ. Խորհրդային Միությունը Չինաստանից հետ կանչեց իր խորհրդականներին:**

Խիստ լարված էին չին-ամերիկյան հարաբերությունները: ԱՄՆ-ը չճանաչեց ՉԺՀ-ն: Նա շարունակում էր հարաբերություններ պահպանել Թայվանում ապաստան գտած Չան Կայշիի հետ՝ նրան համարելով Չինաստանի միակ օրինական ներկայացուցիչը: Չան Կայշին Թայվանում հռչակեց Չինական Դեմոկրատական Հանրապետություն, որը սկիզբ դրեց **«երկու Չինաստանների»** տեսությանը: Դա աջակցություն էր գտնում ԱՄՆ-ի կողմից, ինչը բոլորովին դուր չէր գալիս Պեկինի ղեկավարությանը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ե՞րբ հռչակվեց Չինական Ժողովրդական Հանրապետությունը: Ինչպիսի՞ հասարակարգ հաստատվեց երկրում:*
2. *Ի՞նչ ձեռնարկումներ իրականացվեցին Չինաստանի ներքին կյանքում 1949–1957 թթ.: Պարզաբանեք «մեծ թռիչքի» նպատակը:*
3. *Ինչպիսի՞ զարգացում ունեցան խորհրդա-չինական հարաբերությունները 1949–1960 թթ.:*

դաս 53

ՉԺՀ-Ն 1960-1990-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

«Մեծ թռիչքի» քաղաքականության ձախողումը, ինչպես նաև արտաքին քաղաքականության բնագավառում ունեցած անհաջողությունները, խոր դժգոհություն առաջացրին Չինաստանում:

Կոմունիստական կուսակցության ղեկավարության մեջ ձևավորվեց ընդդիմադիրների թևը, որը իրական, սթափ և հավասարակշռված քաղաքականության կողմնակից էր: Իսկ Մաո Ցզեդունը և նրա համախոհները, ցուցաբերելով *դոգմատիկ մոտեցում**, գտնում էին, որ պետք է շարունակել կոշտ հեղափոխական քաղաքականությունը:

Մաո Ցզեդունը 1966թ. սկսեց **«Կուլտուրական հեղափոխությունը»**: Դրա ձևական հիմնավորումն այն էր, որ մի շարք բարձրաստիճան կուսակցական, պետական ու ռազմական գործիչներ իբր կտրվել են զանգվածներից և նրանց անհրաժեշտ է վերադաստիարակել: Կիրառվում էր նաև նրանց գյուղական վայրեր տեղափոխելու և «հասարակ ժողովրդի հսկողության տակ» աշխատեցնելու մեթոդը:

Այդ գործում Մաո Ցզեդունը լայնորեն ներգրավեց երիտասարդությանը: Նրանց խմբերը՝ այսպես կոչված **«հունվեյբինները»**, դարձան **«մեծ նավավարի»** հենարանը:

Սկսվեց հալածանքը ղեկավար գործիչների, այդ թվում՝ ՉԺՀ-ի նախագահ **Լյու Շաոցիի**, կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղար **Դեն Սյաոպինի** և շատ ուրիշների դեմ: Նրանք, մեղադրվելով Մաոյին դավաճանելու մեջ, զրկվեցին իրենց զբաղեցրած պաշտոններից: Վերացվեցին տեղական կառավարման և կուսակցական մարմինները, փակվեցին դպրոցները, խիստ անկում ապրեց արտադրությունը: Երկրում առաջացավ խառնաշփոթ վիճակ:

Այն շարունակվեց ընդհուպ մինչև Մաո Ցզեդունի մահը (1976թ. սեպտեմբերի 9): Դրանից հետո Չինաստանում սրվեց պայքարն իշխանության համար: Այդ պայքարից, ի վերջո, հաղթանակով դուրս եկավ Չինաստանի կոմունիստական կուսակցության նախկին գլխավոր քարտուղար Դեն Սյաոպինը:

ԵՐԿՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1970-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

«Կուլտուրական հեղափոխության» շրջանում մեծացավ Չինաստանի մեկուսացումը միջազգային ասպարեզում: Մաո Ցզեդունի դոգմատիկ և կոշտ քաղաքականությունն արգելք էր հանդիսանում Չինաստանի նորմալ հարաբերությունների զարգացմանը շատ երկրների, այդ թվում և իր հարևանների հետ: Մասնավորապես, սրվեցին չին-հնդկական հարաբերությունները: Չինաստանը մերձեցավ Պակիստանի հետ, որը շատ հարցերում՝ գլխավորապես Քաշմիրի և Ջամուի հարցում, թշնամական դիրք էր գրավել Հնդկաստանի հանդեպ:

Չինաստանը ստեղծեց ու **1964թ. փորձարկեց իր առաջին ատոմային ռումբը:** Չինաստանը դարձավ **միջուկային չորրորդ տերությունը** ԱՄՆ-ից, Խորհրդային Միությունից և Մեծ Բրիտանիայից հետո:

1960-ական թվականներին որոշ չափով մեղմացավ լարվածությունը չին-ամերիկյան հարաբերություններում: Դա կապված էր չին-խորհրդային հարաբերությունների վատացման հետ, որից օգտվեց ԱՄՆ-ը: Չինական ղեկավարությունը ձգտում էր ԱՄՆ-ի հետ մերձենալով՝ դուրս գալ քաղաքական

Դեն Սյաոպին
(1916-1996)

ՉԺՀ-ի քաղաքական գործիչ, քաղաքական վերափոխումների նախաձեռնող: 1956-1960թթ. ՉԿԿ-ի գլխավոր քարտուղար: 1977-1990թթ. զբաղեցրել է մի շարք պատասխանատու պաշտոններ: 1980-1990-թվականներին, չզբաղեցնելով պետական բարձրագույն որևէ պաշտոն, հանդիսանում էր ՉԺՀ-ի փաստական ղեկավարը:

մեկուսացումից և ամրացնել իր միջազգային դիրքերը: Սակայն միայն **1979թ. երկու երկրների միջև հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ:**

ԴԵՆ ՍՅԱՈՊԻՆԸ ԵՎ ՉՈՐՍ ՃՅՈՒՂԵՐՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԾՐԱԳԻՐԸ

Դեն Սյաոպինը ձերբակալեց, այսպես կոչված, «**Չորսի հրոսակախումբը**»՝ Մաոյի կնոջ գլխավորությամբ: Նրանք Մաոյի գծի անշեղ կենսագործման կողմնակիցներ էին և դեմ էին որևէ բարեփոխման: Կուսակցության, պետության և բանակի ղեկավարության մեջ մեծ թիվ էին կազմում տարեց գործիչները, որոնք նույնպես հին գծի կողմնակիցներ էին: Նրանցից ձերբազատվելու համար Դենը ստեղծեց «**խորհրդականների ինստիտուտ**», տվեց նրանց արտոնություններ՝ զրկելով, սակայն, փաստացի իշխանությունից:

Դեն Սյաոպինն ու նրա համախոհները որդեգրեցին իրատեսական քաղաքականություն՝ Չինաստանը ծանր տնտեսական վիճակից և քաղաքական մեկուսացումից դուրս բերելու համար: Առաջ քաշվեց մի ծրագիր, որն ստացավ «***Չորս մոդեռնիզացիա****» անվանումը: Նախատեսվում էր ժամանակակից գիտության և տեխնիկայի նվաճումների հիման վրա **արդիականացնել երկրի արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, գիտությունը և պաշտպանությունը:**

Հակակառավարական ցույց Չինաստանում, հունիսի 4, 1989 թ.

Չինաստանում, ըստ էության, վերացվեցին իրենց չարդարացրած կոմունաները: Դրանք փոխարինվեցին գյուղացիական «պատասխանատվության համակարգով»: Գյուղացին ունեցավ իր հողակտորը, որից ստացված արտադրանքի մի մասը նա հանձնում էր պետությանը, իսկ մյուսը կարող էր ինքը տնօրինել կամ վաճառել:

Արդյունաբերության բնագավառում զգալի ազատություն տրվեց պետական ձեռնարկություններին: Խրախուսվեցին նաև ազատ ձեռներեցությունն ու փոքր ծավալի մասնավոր սեփականությունը: Արտասահմանյան կապիտալ ներդրումները խրախուսելու նպատակով Չինաստանում ստեղծվեցին *ազատ տնտեսական գոտիներ**:

Այս բոլորի շնորհիվ տեղի ունեցավ Չինաստանի տնտեսության վերելք, բարձրացավ մարդկանց կենսամակարդակը: Ի վերջո, Չինաստանը լուծեց սեփական պարենով իրեն ապահովելու դժվարագույն խնդիրը:

Սակայն Չինաստանի պետական կառուցվածքում ու քաղաքական կյանքում բարեփոխումներ տեղի չունեցան: Կոմունիստական կուսակցությունը պահպանում էր իր առաջատար և վերահսկիչ դերը: Երկրում լայն շարժում ծավալվեց քաղաքական ազատությունների և մարդու իրավունքների համար:

Շարժման գագաթնակետը հանդիսացավ **1989թ. հունիսյան ցույցը Պեկինի գլխավոր՝ Տյանանմին հրապարակում**, որին մասնակցում էր հարյուր հազար մարդ: Ցուցարարների դեմ նետվեցին զորքեր՝ տանկերի ուղեկցությամբ, որոնք գնդակոծեցին ցույցը: Զոհվեցին և վիրավորվեցին հազարավոր մարդիկ, շատերը ձերբակալվեցին ու բանտ նետվեցին:

ՉԺՀ-Ն XX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ

1997թ., Դեն Սյաոպինի մահից հետո, **Ձյան Ձզեմինը** Չինաստանի նախագահի և կոմունիստական կուսակցության ղեկավարի պաշտոնները կենտրոնացրեց իր ձեռքում:

Ներքին քաղաքականության բնագավառում **նա պահպանեց** կոմունիստական կուսակցության՝ որպես **կառավարող կուսակցության կարգավիճակը**: Շարունակվում է

նաև իրեն արդարացրած տնտեսական քաղաքականությունը: Ընդլայնվում է մասնավոր հողօգտագործումը և մասնավոր ձեռներեցությունը (հատկապես մանր և փոքր բիզնեսի բնագավառում): Չինաստանը ոչ միայն իրեն բավարարում է պարենով և հիմնական սննդամթերքներով, այլև սկսել է արտահանել գյուղատնտեսական մթերքների որոշ տեսակներ:

Վերջին տարիներին ներքին կյանքում դրսևորվել են որոշ լուրջ խնդիրներ, ինչպես, օրինակ, կոռուպցիայի մեծ չափերը: Չինաստանում հրապարակավ պայքար է մղվում սոցիալական այդ չարիքի դեմ: Կաշառակերության մեջ մեղադրանքով պաշտոններից ազատվել, ձերբակալվել և բանտարկվել են մեծ թվով կուսակցական և պետական պաշտոնյաներ:

Չինաստանի ղեկավարությանը մեծապես անհանգստացնում է երկրի արևմտյան շրջաններում բնակվող մի քանի տասնյակ միլիոն էթնիկ թուրքերի՝ **ույղուրների հարցը**: Այստեղ ծավալվել է այսպես կոչված Արևելյան Թուրքեստանի անկախության շարժումը (ԱԹԱՇ): Այդ շարժման գլխավոր հրահրողը և ամենալայն աջակցություն ցույց տվողը պանթուրքիստական նպատակներ հետապնդող Թուրքիան է, որտեղ և տեղակայված է ԱԹԱՇ-ի շտաբ-կայանը: Չինաստանը, բնականաբար, անհրաժեշտ քայլերի է դիմում կասեցնելու օտար ուժերի միջամտությունն իր ներքին գործերին:

1997–2000թթ. զգալիորեն ամրապնդվեցին Չինաստանի միջազգային դիրքերը, ընդլայնվեցին առևտրատնտեսական հարաբերությունները արևմտյան պետությունների հետ, որոնք շահագրգռված են չինական շուկայով և ապրանքներով:

1998–1999թթ. տեղի ունեցան ԱՄՆ-ի և Չինաստանի նախագահների փոխայցելությունները: Սակայն երկու երկրների միջև դեռ պահպանվում են տարաձայնություններ մի շարք հարցերի վերաբերյալ: Չինաստանը հանդես է գալիս **միակենտրոն աշխարհի** և ԱՄՆ-ի գերիշխանական հավակնություններ դեմ, իսկ ԱՄՆ-ը քննադատում է Չինաստանին մարդու իրավունքները ոտնահարելու և դեմոկրատական ազատությունները չհարգելու մեջ:

Մեծ հաջողություններ արձանագրվեցին չին-ռուսական հարաբերությունների բնագավառում: Այստեղ կարևոր դեր խաղացին չինական ղեկավարների՝ **Ձյան Ձեմինի, Լի Պենի** և մյուսների այցելությունները Մոսկվա, և **Ռուսաստանի նախկին նախագահ Բորիս Ելցինի** և **2000թ. ընտրված նոր նախագահ Վլադիմիր Պուտինի** այցելությունները Պեկին: Այսօր Չինաստանի և Ռուսաստանի միջև չկան տարածքային-սահմանային վիճելի հարցեր: **Կողմերը համամիտ են**, որ իրենց և աշխարհի բոլոր ժողովուրդների շահերին համապատասխանում է **բազմակենտրոն աշխարհի** ստեղծումը:

2000թ. կեսերին ձևավորվեց **Չինաստանի ռազմաքաղաքական դոկտրինան**: Չինաստանը դեմ է ԱՄՆ-ի «հեգեմոնիզմի և ուժի քաղաքականությանը»: Չինական դոկտրինայի էական մասն է կազմում **Թայվանի հարցը**: Այդ խնդրի վերաբերյալ ասված է, որ եթե Թայվանն անորոշ ժամանակով հապաղի «մեկ Չինաստանի» հարցում, ապա դա կարող է հանգեցնել ուժի օգտագործմանը Չինաստանի կողմից:

Ամենայն հավանականությամբ այս դրույթներն ընկած կլինեն Չինաստանի արտաքին քաղաքականության հիմքում XXI դարի սկզբներին:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Պարզաբանե՛ք Մաո Ցզեդունի հռչակած «կուլտուրական հեղափոխության» բովանդակությունը: Ի՞նչ արդյունքներ տվեց այն:*
2. *Ինչպե՞ս կբնութագրեք ՉԺՀ-ի արտաքին քաղաքական կուրսը 1960–1970-ական թվականներին:*
3. *Ի՞նչ դեր խաղաց Չինաստանի կյանքում «Չորս մոդեռնիզացիա» ծրագիրը:*
4. *Որո՞նք են ժամանակակից Չինաստանի քաղաքական կարգի և տնտեսության յուրահատկությունները: Բնութագրե՛ք Չինաստանի ներքին և արտաքին քաղաքականությունը XX դարի վերջին:*

Գլուխ 16 ԱՍԻԱՅԻ, ԱՖՐԻԿԱՅԻ ԵՎ ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՐԿՐՆԵՐԸ 1945-2000 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

դաս 54

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓԼՈՒՋՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ: ԱՍԻԱՅԻ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՆԿԱԽԱՑՈՒՄԸ

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԿԱԽՎԱԾՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Գաղութային համակարգը ստեղծվել էր XV–XX դդ. ընթացքում՝ աշխարհի ուժեղ պետությունների նվաճողական քաղաքականության հետևանքով: Համակարգի մեջ մտնող երկրները բաժանվում էին երեք խմբի:

Առաջին խումբը բուն **գաղութներն** էին, որոնք անմիջականորեն ենթակա էին **մետրոպոլիային**՝ գաղութատեր մայր երկրին: Դրանք կառավարվում էին նրա կողմից նշանակված փոխարքայի, նահանգապետի կամ այլ աստիճանակարգ ունեցող պաշտոնյայի կողմից:

Աշխարհի ամենամեծ գաղութային կայսրությունը Մեծ Բրիտանիան էր:

Անգլիական գաղութներ էին՝ Հնդկաստանը, Բիրման, Քենիան, Նիգերիան, Ոսկե Ափը և այլն: **Ֆրանսիական** գաղութներ էին՝ Վիետնամը, Լաոսը, Կամբոջան, Ալժիրը, Չադը, Մադագասկարը և այլն, **հոլանդական**՝ Ինդոնեզիան, **բելգիական**՝ Կոնգոն, **պորտուգալական**՝ Անգոլան և Մոզամբիկը, **իտալական**՝ Էրիտրեան և Սոմալին, **ճապոնական**՝ Կորեան, **իսպանական**՝ Սահարայի մի մասը և այլն:

Երկրորդ խումբը կազմում էին **ենթամանդատային տարածքները: Մանդատային կառավարման ձևը**, ինչպես արդեն նշվել է, սահմանվել էր Ազգերի լիգայի կողմից:

Գաղութային կախվածության **երրորդ խումբը** կազմում էին **ենթահովանավորյալ պետությունները՝ պրոտեկտորատները**: Ենթահովանավորյալ պետությունը պահպանում էր տվյալ պահին գոյություն ունեցող իր պետական կառույցները, սակայն ընդունում էր **հովանավորող պետության** «խորհուրդները» և ղեկավարվում դրանցով: Հովանավորող պետությունն իր վրա էր վերցնում ենթահովանավորյալ պետության պաշտպանության և ապահովության «հոգսը»:

Անգլիական պրոտեկտորատի կարգավիճակ ունեին Քուվեյթը, Եգիպտոսը (1914–1922թթ.), Հյուսիսային Ռոդեզիան, Ուգանդան և այլն: **Ֆրանսիական** պրոտեկտորատներ էին Թունիսը և Մարոկկոն:

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓԼՈՒՋՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Գաղութների ժողովուրդները երկարատև ու համառ պայքար են մղել օտարերկրյա տիրապետության տապալման և ազգային անկախության նվաճման համար: Մինչև XX դարի առաջին քսանամյակն այդ պայքարը կազմակերպված բնույթ չի կրել: Գաղութային համակարգը փլուզվեց միայն XX դարի երկրորդ կեսին: Դրան նպաստեցին՝

– մի շարք գաղութային և կախյալ երկրներում ազատագրական ուժերի հասունացումը,

– ֆաշիստական խմբավորման երկրների պարտությունը Երկրորդ աշխարհամարտում,

– Ֆրանսիայի ռազմական պարտությու-

Ամերիկյան հետևակը Վիետնամում

Նը և կապիտուլյացիան Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբում.

– ամենահզոր գաղութային պետության՝ Բրիտանական կայսրության թուլացումը պատերազմի ընթացքում.

– ԱՄՆ–ի և ԽՍՀՄ–ի արտաքին քաղաքականությունը: Այս երկու պետություններն էլ հանդես էին գալիս գաղութային համակարգը վերացնելու պահանջով:

Այս բարենպաստ գործոնների շնորհիվ XX դարի 40–70–ական թվականներին վերջնականապես փլվեց գաղութային համաշխարհային համակարգը:

ԻՆԴՈՆԵԶԻԱՅԻ, ԲԻՐՄԱՅԻ, ՎԻԵՏՆԱՄԻ ԵՎ ԿՈՐԵԱՅԻ ԱՆԿԱԽԱՅՈՒՄԸ

Ինդոնեզիան հոլանդական գաղութի էր վերածվել XVII դ. կեսերին: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Ինդոնեզիայում ակտիվացան հայրենասիրական ուժերը, որոնք **1945թ.** հռչակեցին Ինդոնեզիայի անկախությունը: Ինդոնեզիան հայտարարվեց միասնական հանրապետություն և ազատագրական պայքարի ճանաչված ղեկավար **Սուկարնոն** դարձավ նրա առաջին նախագահը:

1949թ. Հոլանդիան ճանաչեց **Ինդոնեզիայի Միացյալ Նահանգներ** ինքնիշխան պետությունը:

Բիրման անգլիական գաղութի էր վերածվել XIX դարում: **1948թ. Բիրմական Միությունը** պաշտոնապես հայտարարվեց որպես անկախ պետություն: 1989թ. Բիրման կոչվեց **Մյանմա**, իսկ մայրաքաղաք Ռանգունը վերանվանվեց **Յանգոն**:

Կորեան բռնակցվել էր Ճապոնիային դեռևս XX դ. սկզբին: 1945թ. օգոստոսին խորհրդային զորքերը մտան Հյուսիսային Կորեա, իսկ սեպտեմբերին ամերիկյան զորքերը՝ Հարավային Կորեա: Երկու շրջանների միջև սահմանաբաժան ընդունվեց 38–րդ զուգահեռականը: Դրանով դրվեց միասնական Կորեայի բաժանման հիմքը: **1948թ. օգոստոսին** Հարավային Կորեան հռչակվեց **Կորեական Հանրապետություն**: Իսկ մոտ մեկ ամիս անց՝ **սեպտեմբերին**, Հյուսիսային Կորեայում ձևավորվեց **Կորեական Ժողովրդա–Դեմոկրատական Հանրապետությունը**: Այստեղ իշխանությունն իր ձեռքում կենտրոնացրեց Կորեայի աշխատանքային (կոմունիստական) կուսակցությունը՝ **Կիմ Իր Սենի** ղեկավարությամբ:

Հյուսիսային և Հարավային Կորեայի զարգացումն ընթացավ միանգամայն հակադիր ուղիներով: ԿԺԴՀ–ն ընտրեց զարգացման սոցիալիստական ուղին, իսկ Կորեայի Հանրապետությունը նախընտրեց արևմտյան մոդելը:

Ֆրանսիական գաղութարարները **Վիետնամը** գրավեցին XIX դարի երկրորդ կեսին, որը Լաոսի և Կամբոջայի հետ միասին մտցվեց Հնդկաչինի Միության մեջ:

Վիետնամն ազատագրվեց և անկախության հասավ Երկրորդ համաշխարհային պատերազմի վերջում՝ Ճապոնիայի ռազմական պարտությունից հետո: **1945թ.** օգոստոսին ապստամբեց Հանոյը: **Ապստամբությունը գլխավորում էր Վիետնամի ազատագրության ազգային կոմիտեն**, որտեղ գլխավոր դերը պատկանում էր կոմունիստներին՝ **Հո Շի Մինի** գլխավորությամբ: Կազմվեց ժամանակավոր կառավարություն, որը **1945թ. սեպտեմբերի 2–ին** ընդունեց **Վիետնամի անկախության** և **Վիետնամի Դեմոկրատական Հանրապետության (ՎԴՀ)** ստեղծման մասին հռչակագիր:

Ֆրանսիական գաղութարարները չհաշտվեցին Վիետնամը կորցնելու մտքի հետ և ագրեսիա սկսեցին նրա դեմ: ՎԴՀ–ին հաջողվեց դաժան մարտերում պահպանել իր անկախությունը: Ֆրանսիական զորքերը ծանր պարտություն կրեցին: 1954թ. հուլիսին Ժենևում ստորագրված փաստաթղթերով վերջ տրվեց

Հո Շի Մինը հետևում է կռվի ընթացքին:

պատերազմական գործողություններին, ճանաչվեց ՎԴՀ-ի անկախությունը և տարածքային ամբողջականությունը:

Սակայն դրանից հետո էլ խաղաղություն չհաստատվեց Վիետնամում: 1964թ. օգոստոսին ԱՄՆ-ը լայնածավալ ռազմական գործողություններ ձեռնարկեց Հյուսիսային Վիետնամի դեմ: Վիետնամում կենտրոնացվեցին 500 հազար ամերիկյան զինվորներ, մեծաքանակ ռազմական տեխնիկա և այլն:

ՎԴՀ-ին ռազմական օգնություն էին ցույց տալիս ԽՍՀՄ-ը, Չինաստանը և մյուս սոցիալիստական երկրները:

ԱՄՆ-ին չհաջողվեց հասնել հաղթանակի: Տասը տարի տևած պատերազմի ընթացքում զոհվեց 1 մլն մարդ, այդ թվում՝ 58 հազար ամերիկացի: Ի վերջո, 1975թ. ԱՄՆ-ը ստիպված էր իր զորքերը դուրս բերել Վիետնամից: **1976թ. իրագործվեց Հյուսիսային և Հարավային Վիետնամի միավորումը:**

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ե՞րբ է ձևավորվել գաղութային համակարգը: Թվարկե՛ք գաղութատեր պետությունները:*
2. *Գաղութային կախվածության ի՞նչ տարատեսակներ են գոյություն ունեցել:*
3. *Որո՞նք են գաղութային համակարգի փլուզման պատճառները:*
4. *Քարտեզի վրա ցո՛ւյց տվեք Ասիայում և Աֆրիկայում գոյություն ունեցած գաղութային երկրներ:*
5. *Ե՞րբ են անկախացել Ինդոնեզիան, Բիրման, Կորեան և Վիետնամը:*

ԴԱՍ 55

ՀՆԴԿԱՍՏԱՆԸ 1945-2000 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ՀԱԿԱԱՆԳԼԻԱԿԱՆ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ԱԿՏԻՎԱՑՈՒՄԸ

Պատերազմի ավարտից անմիջապես հետո Հնդկաստանում սկսվեցին հակաանգլիական ցույցերը: Ցուցարարները հիմնականում բանվորների, ուսանողության, գյուղացիության և մանր ու միջին խավերի ներկայացուցիչներ էին: Շուտով հուզումները տարածվեցին նաև բանակի ու ռազմածովային նավատորմի հնդիկ ծառայողների մեջ:

1946թ. փետրվարին ապստամբեցին **Բոմբեյի** ռազմածովային բազայի նավաստիները: Բոմբեյի ապստամբությունը ճնշելու համար անգլիական գաղութային իշխանությունները փորձեցին օգտագործել ռազմական ուժեր: Սակայն հնդիկ զինվորները ոչ միայն հրաժարվեցին կրակել ապստամբների վրա, այլև զենքն ուղղեցին անգլիացիների դեմ:

Հնդկաստանի բնակչության և քաղաքական ուժերի համար գլխավոր խնդիրը դարձավ անկախության պահանջը: **Ազգային Կոնգրեսը՝ Ջավահարլալ Ներուի** գլխավորությամբ, պահանջում էր Հնդկաստանի անկախություն և երկրի ամբողջականության պահպանում: Մինչդեռ Մուսուլմանական լիգան հանդես էր գալիս հանուն Հնդկաստանի բաժանման և մուսուլմանների առանձին պետության՝ Պակիստանի կազմավորման:

ՀՆԴԿԱՍՏԱՆ ԵՎ ՊԱԿԻՍՏԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Անգլիան այլևս չէր կարող պահպանել իր տիրապետությունը Հնդկաստանում և հարկադրված էր նահանջել ու ճանաչել նրա անկախությունը: Սակայն նախքան այդ քայլն անելը նա որոշեց Հնդկաստանը բաժանել երկու մասի: Հնդկաստանի բրիտանական վերջին փոխարքան գծեց ապագա երկու պետությունների սահմանները: Սահմանազատման հիմքում դրվեց կրոնական հատկանիշը: Հնդիկներով բնակեցված տարածքները կազմեցին **Հնդկաստանը**: Գլխավորապես մուսուլմաններով բնակեցված Հնդկաստանի արևելյան և արևմտյան նահանգները միավորվեցին **Պակիստան** պետության մեջ:

1947թ. օգոստոսի 15-ին հռչակվեց Հնդկաստան և Պակիստան պետությունների ստեղծումը՝ դոմինիոնի կարգավիճակով: **Դելին** դարձավ Հնդկաստանի մայրաքաղաքը: **1950թ.** Հնդկաստանը դոմինիոնի կարգավիճակից անցավ լրիվ անկախության:

Անկախ Հնդկաստանի հանդես գալն աշխարհի քաղաքական քարտեզի վրա կարևոր

իրադարձություն էր:

Սակայն Հնդկական ենթամայրցամաքի՝ ըստ կրոնական հատկանիշի բաժանումն առաջացրեց մեծ բարդություններ: Կատարվեց բնակչության տեղափոխություն Հնդկաստանից Պակիստան և հակառակը: Սկսվեցին արյունահեղ ընդհարումներ հնդիկների և մուսուլմանների միջև, որին զոհ դարձան միլիոնավոր մարդիկ:

Խաղաղության ու հաշտության կոչով հանդես եկավ **Մահաթմա Գանդին**: Սակայն 1948թ. հունվարին նա զոհվեց մոլեռանդ մի հնդիկի դանակահարումից, որը դեմ էր հաշտության ու համաձայնության նրա քարոզներին: Բաժանումից հետո Հնդկաստանում մնացին մոտ 60 մլն մուսուլմաններ, որոնք լարվածության մշտական աղբյուր են Հնդկաստանի ներքաղաքական կյանքում:

Ջ. ՆԵՐՈՒՆ՝ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ

Հնդկաստանի առաջին վարչապետ դարձավ Ազգային Կոնգրես կուսակցության ղեկավար, Հնդկաստանի ականավոր քաղաքական գործիչ, Մահաթմա Գանդիի համախոհ և զինակից, երկրում մեծ հեղինակություն վայելող **Ջավահարլալ Ներուն**: Նա Հնդկաստանի կառավարությունը ղեկավարեց 17 տարի:

Անկախ Հնդկաստանը գաղութային շրջանից ժառանգել էր թույլ զարգացած և հետամնաց տնտեսություն: Ներուն ձգտում էր կառուցել ժամանակակից հասարակություն և Հնդկաստանը վերածել բարձր զարգացած արդյունաբերական երկրի:

Ներուն կողմնակից էր, այսպես կոչված, **խառը տնտեսության**, որի շրջանակներում կարող էին գոյություն ունենալ և ներդաշնակորեն համագործակցել **մասնավոր սեփականատիրական** ու **պետական սեկտորները**: Տնտեսության պետական սեկտորի մեջ մտան երկաթուղիները, ավիառուղիները, նավահանգիստները, պաշտպանական նշանակության որոշ ձեռնարկություններ, էլեկտրակայաններ և այլն:

Ջավահարլալ Ներուն աշխարհիկ հասարակության կառուցման ջատագովն էր: Նա վարում էր կրոնական տարբեր համայնքների միջև համերաշխության հաստատման քաղաքականություն և ձգտում էր վերացնել տարբերությունները կաստաների միջև:

Հնդկաստանը, որպես անկախ պետություն, հանդես եկավ մի այնպիսի ժամանակ, երբ աշխարհը բաժանվել էր երկու հակադիր խմբավորումների, և սկսվել էր «սառը պատերազմը»: **Ներուն Ինդոնեզիայի նախագահ Սուկարնոյի և Եգիպտոսի նախագահ Գամալ Աբդել Նասերի** հետ հիմք դրեց *Չմիավորված երկրների շարժմանը**, որը դրականորեն էր ազդում միջազգային քաղաքական մթնոլորտի վրա:

Ջավահարլալ Ներուն մահացավ 1964թ.: Նա իր հետնորդներին թողեց ավելի լավ ժառանգություն, քան ինքն էր ստացել:

ՔԱՇՄԻՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Քաշմիրի շրջանը 1947թ. ի վեր վեճի առարկա է երկու հարևանների միջև: Այն մտնում է Հնդկաստանի կազմի մեջ, սակայն դա վիճարկվում է Պակիստանի կողմից: 1965թ. օգոստոսին պատերազմական գործողություններ սկսվեցին Հնդկաստանի և Պակիստանի միջև՝ վերջինիս նախահարձակ լինելու պատճառով: Խորհրդային Միությունը հանդես եկավ միջնորդությամբ և 1966թ. հաջողվեց հասնել համաձայնության ու պատերազմական գործողությունների դադարեցման: **1971թ.** Արևելյան Պակիստանն ան-

Ջ. Ներու (1889–1964)
Հնդկաստանի պետական և քաղաքական գործիչ, 1912 թվականից Ազգային Կոնգրեսի անդամ, 1947-1950թթ. Հնդկաստան դոմինիոնի, իսկ 1950-1964թթ. անկախ Հնդկաստանի վարչապետ:

ջատվեց և հռչակվեց որպես **Բանգլադեշ** անկախ պետություն:

ԳԱՆԴԻՆԵՐԻ ՎԱՐՉԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԸ

1966թ. վարչապետ դարձավ Ջավահարլալ Ներուի դուստրը՝ **Ինդիրա Գանդին**: Նա շարունակեց իր հոր ներքին և արտաքին քաղաքականությունը: Նրա օրոք ընդլայնվեցին և խորացան սոցիալ-տնտեսական բարեփոխումները:

Ինդիրա Գանդին որոշ ընդմիջումից հետո (1977–80թթ.) **1980թ.** կրկին զբաղեցրեց վարչապետի պաշտոնը:

Այս շրջանում խիստ սրվեցին կրոնաէթնիկական հարցերը: Իրենց ուրույն դավանանքն ունեցող **սիկխերը,** հանդես գալով *անջատողականության** դիրքերից, պահանջում էին ստեղծել ինքնուրույն պետություն՝ **Խալիստան**:

Սիկխ ծայրահեղականները 1984թ. գրավեցին սիկխերի սրբակենտրոն **Ոսկյա** տաճարը, որը գտնվում է **Ամրիտսարում**: Նրանք հայտարարեցին, որ տաճարից դուրս չեն գա, մինչև չբավարարվի անկախ պետություն ստեղծելու իրենց պահանջը: Ինդիրա Գանդին զենքի՝ այդ թվում և տանկերի օգնությամբ սիկխ ապստամբներին դուրս հանեց տաճարից:

Զենքի օգտագործումը խոր զայրույթ առաջացրեց սիկխերի շրջանում: **1984թ. օգոստոսի 31-ին** Ինդիրա Գանդին սպանվեց իր երկու սիկխ թիկնապահների ձեռքով:

Դա ցնցեց ողջ Հնդկաստանը: Միլիոնավոր մարդիկ հանդես էին գալիս ազգային համերաշխության կառավարություն ստեղծելու պահանջով:

Այդ խնդիրները փորձեց լուծել **1984–1989թթ.** վարչապետի պաշտոնում իր սպանված մորը փոխարինած **Ռաջիվ Գանդին:** 1991թ. նա զոհվեց՝ կրկին սիկխերի վրեժխնդրությունից: Դրանով ավարտվեց մոտ 40 տարի տևած Ներուի «դինաստիայի» կառավարման շրջանը, որն առանձնահատուկ տեղ է գրավում անկախ Հնդկաստանի պատմության մեջ:

ՀՆԴԿԱՍՏԱՆԸ 1990-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1990-ական թվականներին Հնդկաստանը զգալի հաջողությունների հասավ տնտեսության զարգացման և արդիականացման, սոցիալական բարեփոխումների խորացման և դեմոկրատիայի ընդլայնման բնագավառում:

Հնդկաստանի առջև կանգնած են մի շարք սոցիալական, մասնավորապես աղքատության, հիվանդությունների և անգրագիտության վերացման խնդիրներ: Հնդկաստանի համար սոցիալ-տնտեսական լուրջ խնդիրներ են հարուցում ազգաբնակչության արագ աճը և դրա հետ կապված մարդկանց աշխատանքով ապահովելու, կրթական համալիրը և առողջապահական համակարգը զարգացնելու ու կատարելագործելու հարցերը: Սակայն Հնդկաստանը չունի բավարար միջոցներ դրանց լուծման համար:

Նախկինի պես սուր են մնում կրոնահամայնքային հարցերը, որոնք թունավորում են ներքաղաքական մթնոլորտը: Լարված են մնում հնդկա-պակիստանյան հարաբերությունները Քաշմիրի պատճառով:

1990-ական թվականներին Հնդկաստանի ներքաղաքական կյանքի բնորոշ գծերից մեկը լարված պայքարն էր հնդկական տարբեր քաղաքական կուսակցությունների և խմբավորումների միջև իշխանության համար: Ազգային Կոնգրես կուսակցությանը, որը վերածվել է ընդդիմության, ոչ մի կերպ չի հա-

Ներուն ընթերցում է անկախության հռչակագիրը. 15 օգոստոսի, 1947 թ.

Ինդիրա Գանդին և Ռաջիվ Գանդին

ջողվում կրկին երկրի կառավարումը վերցնել իր ձեռքը: Նրա նոր ղեկավարը՝ ազգությամբ իտալուհի Սոնյա Գանդին (Ռաջիվ Գանդիի այրին), առայժմ չի կարողանում իր շուրջը համախմբել կուսակցության բոլոր թևերը և վերականգնել կուսակցության խախտված դիրքերը և երբեմնի բարձր հեղինակությունը:

Հնդկաստանը կարողացավ ստեղծել սեփական միջուկային զենքը, որի առաջին փորձարկումը տեղի ունեցավ 1998թ.: Երկար ժամանակ հնդկական կառավարությունը հրաժարվում էր միանալ միջուկային զենքի փորձարկումն արգելող միջազգային պայմանագրին: Սակայն միջազգային հանրության ճնշման տակ ու բազմաթիվ պետությունների պահանջով, ի վերջո, նա տեղի տվեց և 2000թ. հայտարարեց, որ միանում է այդ պայմանագրին և դադարեցնում միջուկային զենքի փորձարկումները:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ի՞նչ անկախ պետություններ ստեղծվեցին Հնդկաստանի տարածքում:*
2. *Ներկայացրեք Զ. Ներուի վարչապետության շրջանը: Ի՞նչ արտաքին քաղաքական կուրս էր վարում Ներուն:*
3. *Ե՞րբ առաջ եկավ Քաշմիրի հիմնախնդիրը: Լուծվե՞լ է այն, թե՞ ոչ:*
4. *Ի՞նչ քաղաքականություն էր վարում Ինդիրա Գանդին: Ե՞րբ ավարտվեց Ներուի «դինաստիայի» կառավարման շրջանը:*
5. *Ներկայացրեք Հնդկաստանի ներքին և արտաքին դրությունը 1990-ական թվականներին:*

դաս 56

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՆԿԱԽԱՅՈՒՄԸ

Արաբական Արևելքի երկրները ավելի քան 400 տարի գտնվում էին օսմանյան գերիշխանության տակ: 1918թ. ազատագրվելով թուրքական լծից՝ նրանք ընկան Անգլիայի և Ֆրանսիայի տիրապետության տակ: Նրանք անկախություն նվաճեցին Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո միայն: Կազմավորվեց 21 անկախ արաբական պետություն՝ Պարսից ծոցից մինչև Ատլանտյան օվկիանոսն ընկած տարածքի վրա:

ՍԻՐԻԱ

Առաջին համաշխարհային պատերազմից հետո Սիրիան ընկավ ֆրանսիական տիրապետության տակ:

Համառ պայքարից հետո Ֆրանսիան ճանաչեց Սիրիայի անկախությունը: **1946թ. ապրիլին** օտարերկրյա վերջին զինվորը հեռացավ Սիրիայից:

Անկախ Սիրիայի զարգացումն ընթացավ բարդ ճանապարհով: 1970թ. նոյեմբերին երկրի ղեկավարությունն իր ձեռքը վերցրեց Սիրիայի պաշտպանության նախարար **Հաֆեզ Ասադը,** որն այնուհետև ընտրվեց Սիրիայի նախագահ: Երկրում հաստատվեց կայուն վարչակարգ: Սիրիան դարձել է արաբական ամենաազդեցիկ պետություններից մեկը: 2000թ. մարտին վախճանվեց Հաֆեզ Ասադը, իսկ հունիսին Սիրիայի նախագահ ընտրվեց նրա որդի Բաշար Ասադը:

ԼԻԲԱՆԱՆ

Ֆրանսիան 1920թ. Ազգերի լիգայից ստացավ Լիբանանի կառավարման մանդատը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ «Ազատ Ֆրանսիան» հայտարարեց Լիբանանի անկախության ճանաչ-

ման մասին: **1943թ. սեպտեմբերի 21–ին** նորընտիր պառլամենտը **Բիշարա ալ–Խուրիին** ընտրեց Լիբանանի նախագահ:

Լիբանանի պետական կառուցվածքի հիմքում դրվեց կրոնահամայնքային սկզբունքը:

1975թ. քաղաքացիական պատերազմ սկսվեց, որն անդրադարձավ նաև տեղի հայ համայնքի դրության վրա: Լիբանանի հայ համայնքը, որը հաշվվում է մոտ 250 հազար մարդ, կարևոր դեր է խաղում Լիբանանի քաղաքական և տնտեսական կյանքում: Քաղաքացիական պատերազմի ընթացքում լիբանանահայ համայնքը պաշտոնապես հռչակեց դրական չեզոքության քաղաքականություն, որը ճիշտ և հեռատես որոշում էր:

1980–ական թվականների վերջերին արաբական պետությունների ջանքերով լիբանանյան հակամարտող կողմերը համաձայնվեցին քաղաքական միջոցներով հակամարտության լուծմանը: Լիբանանը, բուժելով քաղաքացիական պատերազմի վերքերը, աստիճանաբար մտնում է բնականոն հունի մեջ:

ԵԳԻՊՏՈՍ

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբում Անգլիան Եգիպտոսի վրա հաստատեց իր պրոտեկտորատը: Նա 1922թ. հայտարարեց, որ հրաժարվում է պրոտեկտորատից, սակայն դա ձևական բնույթ էր կրում:

1952թ. **«Ազատ սպաներ»** զաղտնի կազմակերպությունը, փոխգնդապետ **Գամալ Աբդել Նասերի** գլխավորությամբ, իրագործեց հակաիմպերիալիստական, ազատագրական հեղափոխություն: **1953թ. հունիսի 18–ին Եգիպտոսը հռչակվեց հանրապետություն:** 1956թ. Գամալ Աբդել Նասերը դարձավ Եգիպտոսի նախագահ: 1970թ. սեպտեմբերին Նասերին (նրա մահվանից հետո) փոխարինեց **Անվար Սադաթը**: Սադաթի վարած քաղաքականության նկատմամբ խոր դժգոհություն էր կուտակվել երկրի ներսում, և 1981թ. հոկտեմբերի 6–ին նա սպանվեց:

Եգիպտոսի նախագահ դարձավ օդային ուժերի գեներալ **Հոսնի Մուբարաքը**: Նա իրատես պետական գործիչ է և վարում է հավասարակշռված քաղաքականություն:

ԻՐԱՔ

Անգլիան 1920թ. Ազգերի լիգայից ստացավ Իրաքի կառավարման մանդատը: Սակայն Իրաքում չդադարեց ազգային–ազատագրական պայքարն անգլիական մանդատի վերացման և Իրաքի անկախության համար: **1958թ. հուլիսի 14–ի հեղափոխության շնորհիվ**, որը ղեկավարեց **«Ազատ սպաներ»** կազմակերպությունը, Իրաքը հռչակվեց հանրապետություն:

1968թ. հուլիսի 17–ին Իրաքում տեղի ունեցավ պետական հեղաշրջում, և բանակի օգնությամբ իշխանությունն իր ձեռքը վերցրեց **Արաբական վերածննդի (Բաաս)** կուսակցությունը: Երկրի նախագահ դարձավ **Ահմադ Հասան Բաքրը**, որին 1979թ. փոխարինեց **Սադդամ Հուսեյնը**: Իրանա–իրաքյան պատերազմի ավարտից շատ ժամանակ չէր անցել, երբ Իրաքի կառավարությունը դիմեց նոր արկածախնդրության: **1990թ. օգոստոսի 2–ին** իրաքյան զորքերը *անեքսիայի** ենթարկեցին Քուվեյթը և այն բռնակցեցին Իրաքին: Բոլոր հոիդորները, այդ թվում ՄԱԿ–ի, որ Իրաքը դուրս բերի իր զորքերը Քուվեյթից, անցան ապարդյուն: 1991թ. հունվարին բազմազգ ուժերի կոալիցիան, ԱՄՆ–ի գլխավորությամբ, պատերազմական գործողություններ սկսեց Իրաքի դեմ: Իրաքը պարտվեց և իր զորքերը դուրս բերեց Քուվեյթից:

Իրաքի ներքաղաքական ամենասուր խնդիրը մնում է քրդական հարցը:

ԻՍՐԱՅԵԼ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ: ՊԱՂԵՍՏԻՆԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

1948թ. Մերձավոր Արևելքում հայտնվեց մի նոր պետություն՝ **Իսրայելը**: Նրա ստեղծման նախադրյալները դրվել էին դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի վերջերին: **1917թ. նոյեմբերի 2–ին** Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար լորդ Բալֆուրը հայտարարեց, որ Մեծ Բրիտանիան բարեհաճ է Պաղեստինում ստեղծելու «հրեական ազգային օջախ»:

Մեծ Բրիտանիան 1920թ. Ազգերի լիգայից ստացավ Պաղեստինի կառավարման մանդատը: Սկսվեց աշխարհի տարբեր երկրնե-

րից հրեաների հոսքը դեպի Պաղեստին:

Պաղեստինի արաբները բարեհաճ չընդունեցին թե՛ Բալֆուրի հայտարարությունը և թե՛ հրեաների մուտքը Պաղեստին: Ակնհայտ դարձավ, որ արաբները և հրեաները չեն կարող գոյակցել միևնույն պետական միավորման շրջանակներում:

1947թ. նոյեմբերի 29-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունեց որոշում **Պաղեստինի բաժանման և հրեական ու արաբական պետությունների կազմավորման մասին**: Երուսաղեմը և Բեթղեհեմը հայտարարվեցին միջազգային գոտի:

Հրեաներն արտահայտեցին իրենց համաձայնությունը ՄԱԿ-ի որոշմանը: Ինչ վերաբերում է արաբական կողմին, ապա նա մերժեց այդ որոշումը: **1948թ. մայիսի 14-ին** պաշտոնապես հռչակվեց անկախ հրեական պետության՝ Իսրայելի ստեղծումը: Այդ պահին հրեաների թիվը Իսրայելում հասնում էր 650 հազարի: Արաբական երկրները պատերազմական գործողություններ սկսեցին Իսրայելի դեմ:

Այսպես առաջացավ Պաղեստինի հիմնախնդիրը, որը դարձավ արաբա-իսրայելական առճակատման և պատերազմների պատճառը:

ԱՐԱԲԱ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

1948թ. մայիսի 15-ին սկսվեց արաբա-իսրայելական առաջին պատերազմը: Անդրհորդանանի, Եգիպտոսի, Սիրիայի, Իրաքի, Լիբանանի և Սաուդյան Արաբիայի բանակները ներխուժեցին Իսրայել: Իսրայելին հաջողվեց ոչ միայն պահպանել իր անկախությունը, այլև գրավել լրացուցիչ տարածքներ:

1967թ. հունիսին բռնկվեց արաբա-իսրայելական **երրորդ պատերազմը** (մինչ այդ, 1956թ. Իսրայելը Անգլիայի և Ֆրանսիայի հետ մասնակցել էր Եգիպտոսի դեմ ուղղված ագրեսիային): Սա թերևս ամենաարյունահեղ և իր հետևանքներով ամենածանր պատերազմն էր: Պատերազմին մասնակից արաբական երեք երկրները՝ Եգիպտոսը, Սիրիան և Հորդանանը, պարտություն կրեցին: Իսրայելը գրավեց Սինայի թերակղզին, Գոլանի բարձունքները և Հորդանան գետի արևմտյան ափը:

Ծանր փորձությունները ստիպեցին պաղեստինցիներին զենքը ձեռքին պայքարել իրենց իրավունքների համար: 1960-ական թվականներին ստեղծվեց **Պաղեստինի ազատագրության կազմակերպությունը** (ՊԱԿ): Նրա հեղինակավոր ղեկավարն է **Յասիր Արաֆաթը**: 1974թ. ՄԱԿ-ը ճանաչեց ՊԱԿ-ը՝ որպես պաղեստինցի արաբների օրինական ներկայացուցիչ:

1967թ. պատերազմից հետո արաբա-իսրայելյան հակամարտության հիմնական էությունը կազմեցին հետևյալ պահանջները՝ գրաված տարածքների ազատագրում, 1,5 մլն արաբ փախստականների վերադարձն իրենց բնակավայրը, Պաղեստին պետության ստեղծում և Իսրայելի անվտանգ գոյության ապահովում:

Այդ խնդրի իրագործման ճանապարհին եղան ևս երկու պատերազմներ՝ 1973թ. և 1982թ.:

Հակամարտությանը մասնակից բոլոր կողմերն էլ գիտակցում են, որ հիմնախնդիրը հնարավոր է լուծել միայն բանակցությունների միջոցով: Սակայն պաղեստինա-իսրայելական հարաբերությունների կարգավորման ճանապարհին կան լուրջ դժվարություններ:

1999թ. Իսրայելի պառլամենտական ընտրություններում հաղթանակել էր Աշխատավորական կուսակցությունը, որի ղեկավար Եհուդ Բարակը ընտրարշավի ժամանակ խոստացել էր վերջնական ավարտի հասցնել իսրայելա-պաղեստինյան առճակատման խաղաղ կարգավորումը՝ **«հող՝ անվտանգության դիմաց» սկզբունքով**: Եվ պետք է նշել, որ սկզբնական շրջանում կայացան որոշ տեղաշարժեր: Ղազայի շրջանը և Հորդանան գետի արևմտյան ափի զգալի մասը դրվեցին պաղեստինցիների հսկողության տակ: Իսրայելը 2000թ. իր զորքերը դուրս բերեց Հարավային Լիբանանից, որտեղ նրանք գտնվում էին ավելի քան քսան տարի: Սակայն Երուսաղեմի պատկանելության հարցի կապակցությամբ Իսրայելը և ՊԱԿ-ը չեն կարողանում համաձայնության գալ: 2000թ. աշնանը ռազմական արյունալի

բախումներ սկսվեցին նրանց միջև Երուսաղեմում և այլ շրջաններում:

Չնայած գործադրած ջանքերին՝ որևէ առաջադիմություն չարձանագրվեց նաև Իսրայելի և Սիրիայի հարաբերություններում: Սիրիան պահանջում է իսրայելական զորքերի լրիվ դուրս բերում Գոլանի բարձունքներից, իսկ Իսրայելը պատրաստ է հեռանալ միայն այդ տարածքի մի մասից՝ պատճառաբանելով դա իր անվտանգության խնդիրներով:

Այսպիսով՝ ավելի քան կես դար առաջ սկսված արաբա–իսրայելական հակամարտությունը չի լուծվել: Արաբները ու իսրայելցիները XXI դար մտան այդ ծանր բեռն իրենց ուսերին:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ինչպե՞ս ընթացավ Սիրիայի, Լիբանանի, Եգիպտոսի և Իրաքի անկախացումը:*
2. *Ներկայացրե՛ք հայ համայնքի դերը Լիբանանի ներքին կյանքում:*
3. *Ինչպե՞ս ստեղծվեց Իսրայել պետությունը:*
4. *Բացատրե՛ք Պաղեստինի հիմնախնդրի էությունը: Հիմնախնդրի լուծման ի՞նչ ուղիներ գոյություն ունեն: Ձեր կարծիքով ո՞րն է ընդունելի տարբերակը:*

դաս 57

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓԼՈՒՋՈՒՄՆ ԱՖՐԻԿԱՅՈՒՄ

ԱՖՐԻԿԱՅԻ ԵՐԿՐՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կենտրոնական և Հարավային Աֆրիկան բնակեցված է գլխավորապես սևամորթ բնակչությամբ: Այդ պատճառով էլ այն հաճախ անվանում են **«Մև Աֆրիկա»** կամ **«Մև մայրցամաք»**:

Այս մայրցամաքը համարյա ամբողջովին գաղութացված էր: XX դարի սկզբներին այնտեղ գտնվում էին մոտ 50 գաղութներ ու պրոտեկտորատներ և ընդամենը երկու անկախ պետություն՝ Եթովպիան և Լիբերիան:

Ազգային–ազատագրական պայքարը Կենտրոնական և Հարավային Աֆրիկայում ծավալվեց համեմատաբար ավելի ուշ՝ XX դարի 50–ական թվականների երկրորդ կեսին և մեծ թափ ստացավ 60–ական թվականներին: Աֆրիկյան երկրների համար առավել արդյունավետ եղավ 1960 թվականը, երբ միայն մեկ տարվա ընթացքում քաղաքականապես անկախ դարձավ 17 երկիր: Այդ պատճառով էլ **1960թ. համարվում է «Աֆրիկայի տարի»**: Մնացած աֆրիկյան երկրներն ազատագրվեցին 1960–80–ական թվականներին: Դրանով ավարտվեց գաղութային համակարգի վերացումը:

ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄՆ ԱՖՐԻԿԱՅՈՒՄ

Գանան (Ոսկե Ափը) առաջինն էր Կենտրոնական Աֆրիկայի երկրներից, որ ազատագրվեց գաղութային տիրապետությունից:

Ոսկե Ափում Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սկիզբ առած ազատագրական շարժումը գլխավորեց Կոնվենտի ժողովրդական կուսակցությունը, որը կազմավորվեց 1949թ.: Նրա ղեկավարն էր 40–ամյա **Քվամե Նկրուման**:

1954թ. անգլիացիները Ոսկե Ափին շնորհեցին դոմինիոնի կարգավիճակ, և այն կոչվեց Գանա: **1957թ. Գանան** պաշտոնապես հռչակվեց անկախ պետություն և երեք տարի անց դարձավ հանրապետություն:

Բրիտանական տիրապետությունից ձերբազատվեցին և անկախ պետություններ դարձան նաև Կամերունը և Նիգերիան (1960), Սիերա Լիոնեն և Տանզանիան (1961), Ուգանդան (1962), Քենիան (1963), Զամբիան և Մալավին (1964), Գամբիան (1965), Բոտսվանան և Լեսոտոն (1966), Մավրիկիան և Սվազիլենդը (1968), Սեյշելյան կղզիները (1976):

Գվինեան առաջինն էր Կենտրոնական Աֆրիկայի՝ Ֆրանսիային պատկանող գաղութներից, որ դարձավ անկախ պետություն: Այստեղ ազատագրական պայքարի կազմակերպման գործում նշանակալի էր 1947թ. ստեղծված Գվինեայի դեմոկրատական կու-



սակցության և նրա ղեկավար Սեկու Տուրեի դերը:

1958թ. սեպտեմբերի 28–ին անցկացված հանրաքվեի ժամանակ գվինեացիների բացարձակ մեծամասնությունը քվեարկեց հօգուտ անկախության: Հոկտեմբերի 2–ին պաշտոնապես հռչակվեց Գվինեայի անկախությունը: Երկիրը կոչվեց **Գվինեական Հանրապետություն**: Նրա նախագահ դարձավ **Սեկու Տուրեն**:

1960թ. անկախ դարձան նաև նախկին ֆրանսիական գաղութներ Բենինը, Գաբոնը, Կոնգոն, Մադագասկարը, Մալին, Նիգերը, Սենեգալը, Չադը և այլն: Հետագայում իրենց անկախությունը հռչակեցին նաև Կոմորյան կղզիները (1975) և Ջիբուտին (1977):

Բելգիային էին պատկանում բնական հանածոներով և հազվագյուտ մետաղներով հարուստ Կոնգոն, Բուրունդին և Ռուանդան: Սակայն դրանց մեջ առավել հայտնի էր **Կոնգոն**՝ ապագա **Զաիրը**: **1960թ. հունիսի 30–ին**

Կոնգոն հռչակվեց անկախ պետություն, որի կառավարությունը գլխավորեց **Պատրիս Լումումբան**:

1971թ. Կոնգոն կոչվեց Զաիր, իսկ մայրաքաղաք **Լեոպոլդվիլը՝ Կինշասա**:

Բելգիան զրկվեց նաև իր մյուս գաղութներից: **1962թ.** անկախ պետություններ հռչակվեցին Բուրունդին և Ռուանդան: Դրանով իսկ քաղաքական քարտեզից անհետացավ մի գաղութային կայսրություն ևս:

Անգոլան ներգրավվեց Աֆրիկայում ծավալված ազատագրական շարժումների մեջ: Դրանում շատ մեծ էր Անգոլայի ազատագրության ժողովրդական շարժման (ՄՊԼԱ) դերը: Այն հանդես էր գալիս պորտուգալական գաղութատիրության վերացման ու Անգոլայի պետական անկախության պահանջով: Եվ ՄՊԼԱ-ն, **Ագոստինո Նետոյի** ղեկավարությամբ, 1961 թվականից գլխավորեց Անգոլայի ժողովրդի զինված պայքարը:

1975թ. նոյեմբերի 11-ին Անգոլան պաշտոնապես հռչակվեց անկախ պետություն: Ագոստինո Նետոն դարձավ անկախ Անգոլայի առաջին նախագահը:

Թվում էր, թե Անգոլայի առջև բացվում են խաղաղ զարգացման հնարավորություններ: Դժբախտաբար, այդպես չեղավ: Ընդդիմադիր ուժերը զինված պայքար սկսեցին: Այդ պայքարում նրանց մեծ օգնություն էին ցույց տալիս Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունը, Զաիրը և արևմտյան որոշ տերություններ:

Նախագահ Նետոն դիմեց աֆրիկյան մի շարք երկրների, ինչպես նաև սոցիալիստական երկրների օգնությանը: Անգոլայում տեղադրվեցին կուբայական զորամիավորումներ, իսկ Խորհրդային Միությունը սկսեց ցույց տալ ռազմական և նյութական օգնություն: Երկարատև պայքարից հետո կողմերը համաձայնության եկան և ռազմական գործողությունները դադարեցվեցին: Հարավաֆրիկյան զորքերը մինչև 1988թ. սեպտեմբերի 1-ը դուրս բերվեցին Անգոլայից: Կուբան իր 50 հազարանոց բանակի դուրս բերումն Անգոլայից ավարտեց 1991թ. ամռանը:

Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունն իր զորքերը դուրս բերեց նաև Նամիբիայից: Դա հնարավորություն ստեղծեց **Նամիբիան** հայտարարելու անկախ պետություն:

1970-ական թվականներին անկախություն նվաճեցին նաև պորտուգալական մյուս գաղութներ Գվինեա-Բիսաուն (1973), Մոզամբիկը, Կանաչ Հրվանդանի կղզիները և Սաո Թոմեն ու Պրինսիպին (1975): **Աֆրիկայում վերջին՝ պորտուգալական գաղութային կայսրությունը վերացավ:**

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՈՒՂԻՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Անկախության նվաճումից հետո աֆրիկյան երկրների առջև կանգնեց զարգացման ուղու ընտրության հարցը: Մի խումբ պետություններ՝ Բենինը, Գանան, Գվինեան, Մալին, Տանզանիան և ուրիշներ, մինչև 1990-ական թվականների սկզբները, համարվում էին սոցիալիստական կողմնորոշման երկրներ: Աֆրիկյան երկրների ճնշող մեծամասնությունը կողմնորոշվում է դեպի արևմտյան տնտեսական և քաղաքական համակարգի մոդելը: Աֆրիկյան որոշ ղեկավարներ ժխտում էին թե՛ սոցիալիստական և թե՛ կապիտալիստական ուղիները: Նրանք պաշտպանում էին զարգացման «աֆրիկյան յուրահատուկ ուղու» թեզը՝ հիմնված ազգային ավանդույթների և սովորույթների հաշվառման վրա: Սակայն ինչպես ցույց է տալիս փորձը, այդ երեք ուղիներն էլ առայժմ չեն կարողացել լուծել աֆրիկյան երկրների քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները: Նրանք մնում են տնտեսապես հետամնաց կամ թույլ զարգացած երկրներ:

Աֆրիկյան երկրների սոցիալական կառուցվածքում մեծ է ցեղային համակարգի դերը: Թշնամությունը տարբեր ցեղային խմբավորումների միջև հանդիսանում է անվերջ բախումների և քաղաքական անկայունության մշտական աղբյուր: Երբեմն դրանք վերածվում են իսկական ցեղասպանության, օրինակ՝ տուցիների և հուտուների ցեղասպանությունը Բուրունդիում և Ռուանդայում 1993-1994 և 1999-2000 թվականներին:

Աֆրիկյան երկրների զգալի մասը որպես պետություն դեռևս չի կայացել, իսկ մի մասն էլ իրենից ներկայացնում է թույլ պետական կառույց: Աֆրիկյան մայրցամաքը բավակա-

նին հարուստ է քաղաքացիական պատերազմներով: Օրինակ՝ երկարատև արյունահեղ և հյուծիչ պատերազմը եթովպացիների և էրիտրեացիների միջև **1998թ.** ավարտվեց նրանով, որ **Էրիտրեան** անջատվեց Եթովպիայից և հռչակվեց անկախ պետություն:

Աֆրիկայի առջև կանգնած են շատ լուրջ քաղաքական, տնտեսական և սոցիալական խնդիրներ: Առանց դրանց լուծման անհնար է այդ մայրցամաքի երկրների և ժողովուրդների վերածումը ժամանակակից զարգացած երկրների:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ինչո՞ւ է 1960 թվականը կոչվում Աֆրիկայի տարի:*
2. *Ապացուցեք, որ Աֆրիկայի գաղութային երկրների անկախացումով վերացավ համաշխարհային գաղութային համակարգը:*
3. *Ե՞րբ են անկախացել Գանա, Գվինեա, Չադ, Անգոլա պետությունները՝ 1975թ., 1960թ., 1957թ., 1958թ. (գտեք համապատասխան ճիշտ տարեթվերը):*
4. *Ի՞նչ նշանակություն և հետևանքներ ունեցավ գաղութային համակարգի փլուզումը Ասիայում և Աֆրիկայում:*
5. *Զարգացման ինչպիսի՞ ուղիներ են ընտրել աֆրիկյան երկրները:*

դաս 58

ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՐԿՐՆԵՐԸ

ԻՐԱՎԻՃԱԿԸ ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո Լատինական Ամերիկայի երկրները կանգնեցին լուրջ քաղաքական և սոցիալ-տնտեսական խնդիրների առջև: Այստեղ հաստատվել էին բռնապետական կարգեր և իշխանությունը գտնվում էր զինվորական խմբավորումների՝ *խունտաների** ձեռքում: Նրանք տնտեսապես թույլ զարգացած երկրներ էին և կախման մեջ էին գտնվում ԱՄՆ-ից:

Լատինական Ամերիկան ներգրավվեց «սառը պատերազմի» և «կոմունիզմը զսպելու» ամերիկյան քաղաքականության ոլորտը: ԱՄՆ-ը, «արտամայրցամաքային վտանգից» պաշտպանվելու պատրվակի տակ, 1947թ. Բրազիլիայի մայրաքաղաք Ռիո դե Ժանեյրոյում հրավիրեց Միջամերիկյան խորհրդաժողով: Նրա մասնակիցները սեպտեմբերի 2-ին ստորագրեցին «Միջամերիկյան փոխադարձ օգնության պայմանագիր»: Այնտեղ արձանագրված էր, որ «զինված հարձակումը որևէ երկրի կողմից ամերիկյան որևէ պետության վրա, կդիտվի որպես հարձակում ամերիկյան բոլոր պետությունների վրա»: ԱՄՆ-ը Լատինական Ամերիկայի երկրների հետ կնքեց նաև փոխադարձ օգնության առանձին պայմանագրեր:

Լատինաամերիկյան երկրներին իր շուրջը համախմբելու՝ ԱՄՆ-ի քաղաքականության կարևոր քայլերից մեկը հանդիսացավ **1948թ. Ամերիկյան պետությունների կազմակերպության** (ԱՊԿ) ստեղծումը: Դրան անդամակցեցին ԱՄՆ-ը, Արգենտինան, Բրազիլիան, Մեքսիկան, Ուրուգվայը, Կուբան, Չիլին, Գվատեմալան, Կոլումբիան և այլն, ընդամենը 21 պետություն: Դա տարածաշրջանային միջազգային կազմակերպություն է, որտեղ տիրապետող դիրք ունի, բնականաբար, ԱՄՆ-ը: ԱՊԿ-ի գլխավոր նպատակներն են համարվում մայրցամաքում «խաղաղության և անվտանգության» պահպանումը, անդամ երկրների միջև ծագող վեճերի հարթումը, տնտեսական, սոցիալական և քաղաքական խնդիրների կարգավորումը և այլն:

Հետպատերազմյան շրջանում լատինաամերիկյան մի շարք երկրներում պետական հեղաշրջումների և բռնազմական դիկտատուրայի հաստատման մի նոր ալիք բարձրացավ: 1947թ. զինվորական հեղաշրջումներ կատարվեցին Չիլիում և Նիկարագուայում, 1948թ.՝ Պերուում և Վենեսուելայում, իսկ 1949թ.՝ Կոլումբիայում:

1950–ական թվականների սկզբներին դիկտատորական կամ զինվորական վարչակարգեր էին հաստատվել մայրցամաքի երկրների մեծ մասում:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ: ՊԱՅՔԱՐ ԲՌՆԱՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԵՐԻ ԴԵՄ

Բռնապետական կարգերը չէին կարող մարել լատինաամերիկյան ժողովուրդների՝ հանուն սոցիալ–տնտեսական վիճակի բարելավման, բռնապետական վարչակարգերի վերացման և դեմոկրատական համակարգերի հաստատման պայքարի ոգին: Լատինական Ամերիկայի երկրների **հետպատերազմյան ավելի քան կեսդարյա պատմությունը առաջադիմական և հետադիմական ուժերի պայքարի պատմությունն է:**

Դրա փայլուն օրինակներից մեկն է **Արգենտինան**: Այստեղ դեռևս 1930թ. հաստատվել էր զինվորական դիկտատուրա: Արգենտինայի դեմոկրատական ուժերին միայն 1946թ. կայացած ընտրությունների ժամանակ հաջողվեց իշխանությունից հեռացնել զինվորականներին: Հաղթեց **Խուստիսիալիստական** (Արդարություն) շարժումը, որի **ղեկավար Խուան Պերոնը** դարձավ Արգենտինայի նախագահ: Նա ձգտում էր համախմբել սոցիալական տարբեր խավերին, հասնել սոցիալական հաշտության և կառուցել վերդասակարգային պետություն: 1955թ. Պերոնի կառավարությունը տապալվեց և զինվորականները իշխանությունը վերցրին իրենց ձեռքը: Սակայն Պերոնը 1973թ. կրկին դարձավ Արգենտինայի նախագահ: Նրա մահից հետո՝ նույն 1973թ., տեղի ունեցավ հերթական պետական հեղաշրջումը: Այս անգամ զինվորականները կառավարման ղեկը պահեցին իրենց ձեռքում ութ տասը տարի՝ երկիրը հասցնելով կործանման եզրին: Ի վերջո, 1983թ. նրանք հարկադրված իրենց տեղը զիջեցին քաղաքացիական ուժերին, որոնք մեծ ճիգեր են գործադրում Արգենտինայում դեմոկրատական բարեփոխումներ իրականացնելու համար:

1950թ. մեծ հաղթանակ տարան **Գվատեմալայի** դեմոկրատական ուժերը և նրանց ղեկավար Արբենսն ընտրվեց երկրի նախագահ: Նա կիրառեց առաջադիմական ագրարային և սոցիալական այլ բարեփոխումներ: Սակայն նրա դեմ միասնական ճակատով հանդես եկան ներքին և արտաքին հետադիմական ուժերը: Նա 1954թ. հարկադրված հրաժարական տվեց: Իշխանությունը զավթեցին զինվորականները: Այդ նույն թվականին պետական հեղաշրջում կատարվեց նաև Բրազիլիայում: Զինվորական խունտան տապալեց երկրի օրինական նախագահ Վարգասին, որն ինքնասպանությամբ վերջ տվեց իր կյանքին:

Լատինական Ամերիկայում մեծ իրադարձություն հանդիսացավ կուբայական ապստամբների հաղթանակը **1959թ.՝ Ֆիդել Կաստրոյի** գլխավորությամբ: Նրանք տապալեցին կուբացիների համար ատելի Բատիստայի դիկտատուրան և հայտարարեցին **սոցիալիստական Կուբա** կառուցելու իրենց մտադրության մասին: Դա սարսափ առաջացրեց ԱՄՆ–ի և նրա դաշնակիցների մոտ: Նրանք դիմեցին Կուբայի դեմ ուղղված մի շարք քայլերի: ԱՄՆ–ի նախագահ Էյզենհաուերը տնտեսական շրջափակման ենթարկեց Կուբային, իսկ 1961թ. հունվարին ԱՄՆ–ը խզեց դիվանագիտական հարաբերությունները Կուբայի հետ: Նրա գլխին կախվել էր ռազմական միջամտության լուրջ վտանգ: Դա փորձեց իրագործել Ջ. Քենեդին: 1961թ. ապրիլի 17–ին հակակաստրոյական ուժերը ԱՄՆ–ի աջակցությամբ ափ իջան Կոչինոսի ծովածոցում: Բայց երեք օրվա ընթացքում նրանք ջախջախվեցին և դուրս շպրտվեցին Կուբայից: Երկու երկրների միջև հարաբերությունները մինչ օրս մնում են չկարգավորված և լարված: Թեև 2000թ. ԱՄՆ–ը մասնակիորեն մեղմեց Կուբայի դեմ ուղղված տնտեսական պատժամիջոցները, սակայն Կուբայի կառավարությունը դա բավարար չի համարում և պահանջում է Կուբայի շրջափակման լրիվ վերացում:

Ողբերգական բնույթ կրեցին իրադարձությունները **Չիլիում** 1970–ական թվականների առաջին կեսին: Պառլամենտական ընտրություններում հաղթանակեցին երկրի ձախ ու-

ժերը և նրանց ներկայացուցիչ, **սոցիալիստ Սալվադոր Ալյենդեն** ընտրվեց նախագահ: Նրա դեմ հանդես եկավ Չիլիի հետադիմությունը և զինվորականությունը՝ **գեներալ Պինոչետի** գլխավորությամբ: Այդ ուժերը գրոհով վերցրին նախագահական պալատը: Զոհվեց նախագահ Ալյենդեն: Չիլիում հաստատվեց Պինոչետի ռազմական դիկտատուրան, որը գոյատևեց քառորդ դար: Միայն **1998թ. երկրում կրկին վերահաստատվեց քաղաքացիական կառավարությունը**:

Լատինական Ամերիկայում նշանակալի է **Բրազիլիայի** և **Մեքսիկայի** դերը: Նրանք վերջին երկու–երեք տասնամյակներում զգալի հաջողությունների են հասել տնտեսության զարգացման և քաղաքացիական հասարակության կառուցման գործում: Բրազիլիայում զինվորականներն անընդմեջ 21 տարի կառավարելուց հետո, երբ նրանց չհաջողվեց լուծել որևէ կարևոր սոցիալ–քաղաքական խնդիր, ստիպված էին հեռանալ ասպարեզից: **1985 թվականից Բրազիլիայում հաստատված է քաղաքացիական իշխանություն:** 1988թ. ընդունվեց նոր, դեմոկրատական Սահմանադրություն: Երկրում ընդլայնվում են դեմոկրատական ազատությունները, կիրառվում են ագրարային բարեփոխումներ, նկատվում է սոցիալ–տնտեսական վիճակի բարելավում: Այժմ պայքար է տարվում կառավարման համակարգի ամրապնդման և բարեփոխումների խորացման համար:

Մեքսիկայի Միացյալ Նահանգներում 1929թ. ի վեր կառավարում էր **Ինստիտուցիոնալ հեղափոխական կուսակցությունը** (ԻՀԿ), որը զգալի դեր է խաղացել Մեքսիկայի պետության կայացման գործում: Շնորհիվ նրա՝ Մեքսիկայում չի եղել պետական հեղաշրջումների այնպիսի «խրախճանք», ինչպես հարևան մյուս երկրներում: Մեքսիկայի կառավարությունը մեծ ուշադրություն է դարձնում երկրի զարգացման հարցերին: Նախագահ Լուիս Պորտիլյոյի կառավարությունը (1976–1982թթ.) կիրառում էր **«Դաշինք հանուն արտադրության»** ծրագիրը: Շարունակելով նրա քաղաքականությունը՝ նախագահ Մ.Դելա Մադրիդի կառավարությունը (1982–1988թթ.) սկսեց իրագործել **«Հասարակության բարոյական նորացման»** ծրագիրը:

2000թ. մայիսին կայացան նոր ընտրություններ: ԻՀԿ–ը, որի ձեռքում 70 տարի գտնվում էր երկրի կառավարման դեկը, պարտություն կրեց: Մեքսիկայի նախագահ ընտրվեց աջակողմյան, կենտրոնամետ Ազգային գործողության կուսակցության ղեկավար Վիսենտ Ֆոքս Քվեսադան:

Արտաքին քաղաքականության բնագավառում Մեքսիկան խիստ նախանձախնդիր է իր անկախությունը պահպանելու հարցում և կանգնած է մայրցամաքում հակամարտությունները քաղաքական ուղիներով լուծելու դիրքերում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ինչպիսի՞ն էր լատինամերիկյան երկրների քաղաքական–տնտեսական դրությունը հետպատերազմյան առաջին տասնամյակում: Ի՞նչ դեր է խաղում ԱՄՆ–ը նրանց քաղաքական կյանքում:*
2. *Փորձե՛ք պարզաբանել, թե ինչու են Լատինական Ամերիկայի երկրներում հաճախակի եղել զինվորական հեղաշրջումներ:*
3. *Ի՞նչ ուղիով է ընթանում Կուբայի քաղաքական և տնտեսական զարգացումը 1959թ. ի վեր: Ինչո՞ւ ԱՄՆ–ը անհաջողություն ունեցավ Կուբայում սոցիալիստական վարչակարգը տապալելու իր քաղաքականության մեջ:*
4. *Զարգացման ինչպիսի՞ հեռանկարներ ունեն Լատինական Ամերիկայի երկրները XXI դարում:*

Գլուխ 17 ՈՒԺԵՐԻ ՆՈՐ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ 1991-2000 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

դաս 59

ՆՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

ՈՒԺԵՐԻ ՆՈՐ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Խորհրդային Միության փլուզումը, Վարշավայի պայմանագրի ռազմաքաղաքական խմբավորման կազմալուծումը և սոցիալիստական համագործակցության քայքայումը ստեղծեցին նոր իրադրություն համաշխարհային քաղաքականության մեջ:

Սառը պատերազմն ավարտվեց Արևմուտքի հաղթանակով: 1991թ. ընթացքում իրենց անկախությունը հռչակեցին ԽՍՀՄ-ի կազմի մեջ մտնող բոլոր 15 հանրապետությունները: **1991թ. դեկտեմբերին** Խորհրդային Միությունը դադարեց միջազգային իրավունքի սուբյեկտ լինելուց: Ստեղծվեց **Անկախ Պետությունների Համագործակցությունը (ԱՊՀ)**, որի անդամ դարձան նախկին բոլոր խորհրդային հանրապետությունները, բացառությամբ Լատվիայի, Լիտվայի և Էստոնիայի: ԱՊՀ-ն կուռ կազմակերպություն չէ, անդամ-պետությունները ոչ բոլոր հարցերում ունեն միատեսակ մոտեցում և շատ հաճախ հետապնդում են տրամագծորեն միմյանց հակադիր քաղաքական նպատակներ: Ուստի՝ ԱՊՀ-ն չի կարելի դիտել որպես ԽՍՀՄ-ին փոխարինող սուբյեկտ միջազգային ասպարեզում:

ԱՄՆ-Ը՝ ՄԻԱԿ ԳԵՐՏԵՐՈՒԹՅՈՒՆ: ՄԻԱԿԵՆՏՐՈՆ, ԹԵ՞ ԲԱԶՄԱԿԵՆՏՐՈՆ ԱՇԽԱՐՀ

ԽՍՀՄ-ի իրավահաջորդ Ռուսաստանը 1990-ական թվականների սկզբներին խիստ թուլացավ և հայտնվեց խոր ճգնաժամի մեջ: Աշխարհի միակ **գերտերությունը** մնաց ԱՄՆ-ը: Այդ պատճառով ընդունված է ասել, որ աշխարհը 1990-ական թվականներին դարձավ միակենտրոն կամ միաբևեռ: ԱՄՆ-ը բացեիբաց հայտարարում է ժամանակակից աշխարհի ռազմաքաղաքական և ֆինանսատնտեսական առաջնորդի՝ իր հավակնության մասին:

Օգտվելով նոր իրադրությունից և ուժերի նոր հարաբերակցությունից՝ ՆԱՏՕ-ն ընդարձակեց իր գործունեության ոլորտը և իր սահմանները շարժեց դեպի Արևելք, դեպի Ռուսաստան: Ռուսաստանի բոլոր ջանքերը՝ կասեցնել արևմտյան ռազմական կազմակերպության առաջխաղացումը դեպի արևելք, ավարտվում են ապարդյուն: **1998թ. ՆԱՏՕ-ի** անդամ դարձան նախկին սոցիալիստական երկրներ ու Վարշավայի պայմանագրի անդամներ **Լեհաստանը, Հունգարիան** և **Չեխիան**: Դա փոխեց ստրատեգիական իրադրությունն ի վնաս Ռուսաստանի:

ՆԱՏՕ-ի անդամ դառնալու իրենց ցանկության մասին են հայտնել և հերթագրվել նաև Ռումինիան, Բուլղարիան, Սլովակիան, Լատվիան, Լիտվան, Էստոնիան և այլ երկրներ:

Հյուսիսատլանտյան դաշինքը հաստատել է նախկին սոցիալիստական ու խորհրդային հանրապետությունների հետ համագործակցության մի նոր ձև, որն ստացել է «**Համագործակցություն հանուն խաղաղության**» անվանումը: ՆԱՏՕ-ն նման համագործակցության վերաբերյալ պայմանագրեր է ստորագրել նաև անդրկովկասյան երեք հանրապետությունների՝ Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի հետ:

Ստեղծված պայմաններում ԱՄՆ-ը ավելի ու ավելի է դառնում թելադրող կենտրոն: Նա աշխարհի հիմնական և կարևոր գոտիները՝ Արևմտյան Եվրոպան, Անդրկովկասը, Միջին Ասիան, Մերձավոր Արևելքը, արևմտյան ռդջ կիսագունդը և այլ շրջաններ, հայտարարել է

իր համար կենսական նշանակություն ունեցող տարածքներ, որտեղ չի հանդուրժում այլ պետությունների շահերի գերակայությունը: Նա ձգտում է համաշխարհային զարգացմանն այնպիսի ընթացք տալ, որն առավելագույնս համապատասխանի իր ազգային-պետական շահերին:

Նոր պայմաններում սկսել է նվազել ՄԱԿ-ի դերը: ԱՄՆ-ը և արևմտյան նրա որոշ դաշնակիցներ փորձում են շրջանցել միջազգային այդ կազմակերպությունը, գործել առանց նրա մանդատի մի շարք կարևոր հարցերում, ինչպես օրինակ, պատերազմի, խաղաղության և զենքի կիրառման: Դրա փայլուն վկայությունն է հանդիսանում Հարավսլավիայի ռմբակոծումը ՆԱՏՕ-ի կողմից 1999թ. գարնանը՝ կապված Կոսովոյում ծագած էթնոքաղաքական հակամարտության հետ: Այն իրագործվեց առանց ՄԱԿ-ի և նրա Անվտանգության խորհրդի որոշման ու համաձայնության:

Ուժերի նոր հավասարակշռությունը և դրա հետ կապված նոր միջազգային իրադրությունը լուրջ անհանգստություն են առաջացնում աշխարհի տարբեր երկրներում: Շատ ժողովուրդներ և երկրներ մտահոգված են, որ ԱՄՆ-ը և նրա ղեկավարության ներքո գտնվող ՆԱՏՕ-ն կարող են իրենց վրա վերցնել միջազգային ժանդարմի ֆունկցիաներ, միջամտել իրենց ներքին գործերին ու զանազան հակամարտությունների լուծմանը:

Արդեն լսվում են վճռական ձայներ **բազմակենտրոն աշխարհակարգի** վերականգնման անհրաժեշտության մասին, որի հավանական թեկնածուները XXI դարում կարող են լինել Չինաստանը, ճգնաժամը հաղթահարող Ռուսաստանը, միացյալ Արևմտյան Եվրոպան, ինչպես նաև Ճապոնիան:

Բազմակենտրոն աշխարհակարգի դեպքում պայմաններ կստեղծվեն փոխադարձաբար հավասարակշռված քաղաքականության և մարդկության առջև կանգնած տարաբնույթ հիմնախնդիրների այլընտրանքային լուծումների համար:

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԼՈԲԱԼԱՑՈՒՄԸ

Նոր ժամանակների կարևոր հատկանիշներից մեկը երկրների փոխկախվածության անանխադեպ ուժեղացումն է: Դա առանձնապես ցայտունորեն է դրսևորվում առևտրա-տնտեսական և ֆինանսական ոլորտներում: Տեղի է ունենում տնտեսության միջազգային մասշտաբով ***գլոբալացում****:

Սոցիալիզմի համակարգի փլուզումից հետո նախկին Խորհրդային Միության ու Հարավսլավիայի մեջ մտնող բոլոր հանրապետությունները և Արևելյան Եվրոպայի երկրներն ընդգրկվեցին շուկայական հարաբերությունների ոլորտը: XXI դ. սկզբին տնտեսական հարաբերությունների այդ ձևը հանդիսանում է տիրապետող ամբողջ աշխարհում: Շուկայական հարաբերությունների բնույթին համապատասխան՝ նույնատիպ փոփոխություններ են տեղի ունենում տարբեր երկրների պետական և հասարակական կառուցվածքներում: Հասարակությունները դառնում են ավելի բաց ու դեմոկրատական, միատիպ:

Առաջնային կարևորություն են ձեռք բերում **մարդու իրավունքների հարգման, բազմակուսակցականության** և ***բազմակարծության**** հաստատման, ***զանգվածային լրատվության միջոցները****՝ **որպես չորրորդ իշխանություն ճանաչելու հարցերը**: Դրանք դարձել են միջազգային կարևոր չափանիշներ այս կամ այն երկիրը դեմոկրատական ճանաչելու տեսանկյունից: Դրանով է պայմանավորվում նրա տեղը համաշխարհային համակարգում:

Գլոբալացման, երկրների տնտեսական փոխկախվածության ուժեղացումը կապված է համաշխարհային ազատ առևտրի զարգացման, մաքսային և այլ արգելքների վերացման հետ: Աննախընթաց չափերի է հասել ապրանքների և ծառայությունների գլոբալ փոխանակությունը, աշխատուժի և կապիտալների հոսքն աշխարհի մի ծայրից դեպի մյուսը: Ազատ առևտրի ծավալներն այսօր կազմում են տարեկան 8 տրիլիոն ամերիկյան դոլար: Ձևավորվում են ազատ

առևտրի գոտիներ և ընդհանուր շուկաներ, որտեղ չկան տնտեսական սահմանափակումներ և արգելքներ, կամ դրանք հասցվել են նվազագույնի: Այդ ամենի շնորհիվ արագացել է տնտեսության գլոբալ ինտեգրացման գործընթացն աշխարհում:

Կազմավորվել են նաև միջազգային ֆինանսական–վարկատու կենտրոններ, ինչպես, օրինակ, Համաշխարհային բանկը, Միջազգային արժութային հիմնադրամը և այլն: Դրանք ֆինանսավորում են միայն այն երկրներին, որոնք զարգանում են ազատ շուկայական հարաբերությունների, բարեփոխումների և դեմոկրատացման ուղիով:

Մեր մոլորակի տարբեր շրջանների միջև հաստատված կապերի հետևանքով աշխարհի մի շրջանում տեղի ունեցող վերելքը կամ ճգնաժամն անմիջապես ներազդում է աշխարհի մնացած բոլոր շրջանների տնտեսական վիճակի վրա: 1997–1998թթ. Հոնկոնգում, Բրազիլիայում ու Ռուսաստանում բռնկված ֆինանսատնտեսական ճգնաժամը ցնցեց ամբողջ աշխարհի բանկային և ֆինանսական համակարգը: Այս փաստը տնտեսության գլոբալացման, երկրների տնտեսական փոխկապվածության ակնառու դրսևորումներից մեկն է:

Տնտեսական գլոբալացման էական բաղադրամասն է կազմում կապի և հաղորդակցման գլոբալացումը: Դա մեծ թափ ստացավ տեխնիկական վերազինումից և առաջին հերթին համակարգչային (կոմպյուտերային) համակարգի ձևավորումից հետո: Իսկ **ինտերնետի** կազմավորումը՝ համակարգիչների համաշխարհային ցանցի ստեղծումը, 1990–ական թվականների երկրորդ կեսին ուղղակի հեղափոխություն էր տեղեկատվության և հաղորդակցության զարգացման ու գլոբալացման բնագավառում:

Այսօր մարդկությունը կանգնած է մի շարք գլոբալ խնդիրների առջև, որոնք շոշափում են համայն մարդկության շահերը: Դրանք շրջակա միջավայրի պահպանման, ջրի, սննդամթերքի ապահովման, էներգակիրների և էներգիայի նոր աղբյուրների հայտնաբերման, թմրադեղերի օգտագործման, հիվանդությունների, հանցագործությունների, ահաբեկչության դեմ պայքարի և այլ հիմնախնդիրներն են: **Մարդկության ապագան և գոյատևումը մեծապես կախված են այս գլոբալ խնդիրների լուծումից**, որը պահանջում է համընդհանուր ջանքեր:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Բնորոշե՛ք ուժերի հարաբերակցությունն աշխարհում XXI դ. սկզբին:*
2. *Ձեր կարծիքով ինչո՞ւ նախկին սոցիալիստական երկրների մի մասը մտավ, իսկ մի քանիսը ևս ցանկանում են մտնել ՆԱՏՕ–ի կազմի մեջ:*
3. *Կարո՞ղ եք ապացուցել, որ նոր պայմաններում նվազել է ՄԱԿ–ի դերն աշխարհում: Բերե՛ք դրա օրինակը:*
4. *Ձեր կարծիքով ինչպիսի՞ն կլինի աշխարհը XXI դարում՝ միակենտրո՞ն, թե՞ բազմակենտրոն:*
5. *Փաստերով պարզաբանե՛ք, որ XXI դ. սկզբին ուժեղացել է տարբեր երկրների և աշխարհամասերի փոխկախվածությունը:*

դաս 60

ԷԹՆՈԲԱՂԱԲԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԷԹՆՈԲԱՂԱԲԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻԲՐԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱԿԱՅՈՒՆԱՑՆՈՂ ԳՈՐԾՈՆ

Աշխարհում ուժերի նոր հարաբերակցության ձևավորումից հետո նվազեց նոր՝ երրորդ համաշխարհային պատերազմի վտանգը: Բայց դրանից աշխարհը չդարձավ ապահով և առանց հիմնախնդիրների: Հրապարակ եկան նոր մարտահրավերներ, որոնց մեջ, թերևս, ամենավտանգավորը **էթնոքաղաքական հակամարտություններն** են: Դրանք զանգվածային բնույթ կրեցին սկսած XX դ. 80–ական թվականների վերջերից և 90–ական թվականների սկզբներից, հատկապես Խորհրդային Միության և Հարավսլավիայի լուծարումից հետո: Սակայն մի շարք հակամարտություններ, ինչպես՝ արաբ–իսրայե-

լական, քրդական, հնդկա–պակիստանյան և այլն, ավելի հին պատմություն ունեն:

Էթնոքաղաքական հակամարտություններ ծագեցին համարյա բոլոր մայրցամաքներում: Նրանք այսօր առկա են աշխարհի տարբեր երկրներում, ինչպես՝ Իրաքում, Իրանում և Թուրքիայում (քրդական հարցը), Իսպանիայում (բասկերը), Անգլիայում (իռլանդացիները), Բալկաններում (Բոսնիա, Հերցեգովինա, Խորվաթիա, Կոսովո), Ինդոնեզիայում, Ֆիլիպիններում, Հնդկաստանում, Աֆղանստանում, Եթովպիայում, Նիգերիայում, Հարավային Աֆրիկայում, Մեքսիկայում և այլ երկրներում:

ԷԹՆՈՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՏԻՆԵՐԸ

Մոտավոր հաշվարկով՝ էթնոքաղաքական հակամարտությունների թիվը աշխարհի 45 երկրներում անցնում է 200–ից:

Էթնոքաղաքական հակամարտությունների վտանգավոր գոտի է Անդրկովկասը, որտեղ առկա են **ղարաբաղյան, հարավ–օսական և աբխազական** հակամարտությունները:

Ղարաբաղյան հակամարտությունը, որն սկիզբ առավ **1988թ., առաջին էթնոքաղաքական** հակամարտությունն էր նախկին Խորհրդային Միության տարածքում: Այն մեծ ազդեցություն ունեցավ Խորհրդային Միության և Արևելյան Եվրոպայի շատ ժողովուրդների ազգային զարթոնքի վրա: Լեռնային Ղարաբաղը 1921 թվականին հանիրավի անջատվել էր Հայաստանից ու բռնակցվել Ադրբեջանին: 1988թ. նա ոտքի ելավ Ադրբեջանի տիրապետությունից ազատվելու և Հայաստանին միանալու համար: Լեռնային Ղարաբաղը հաղթող դուրս եկավ մոտ վեց տարի տևած զինված պայքարից և այսօր *դի ֆակտո** անկախ է:

Էթնոքաղաքական հակամարտությունները շոշափում են շատ երկրների, այդ թվում և մեծ տերությունների ստրատեգիական շահերը: Նրանք, այս կամ այն չափով ներգրավված լինելով այդ հակամարտությունների մեջ, ջանում են դրանց այնպիսի լուծումներ գտնել, որն առավել կհամապատասխանի իրենց շահերին: Այստեղ գլխավոր դերակատարներն են՝ ԱՄՆ–ը, Ռուսաստանը, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան և այլ երկրներ:

Էթնոքաղաքական հակամարտությունները կարող են վերածվել ցեղասպանության, ինչպես դա տեղի ունեցավ Ռուանդայում և Բուրունդիում, կամ էթնիկական մաքրման՝ բնիկների արտաքսմանը իրենց հողերից: Այս վերջին երևույթը համարյա բոլոր էթնոքաղաքական հակամարտությունների մշտական ուղեկիցն է:

Դրանք վտանգ են ներկայացնում նաև այն առումով, որ մեծ տերություններին ակամայից կարող են ներգրավել ռազմական բախումների մեջ և ավելի մեծ պատերազմների առիթ հանդիսանալ:

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Էթնոքաղաքական հակամարտությունները հնարավոր է և պետք է լուծվեն քաղաքական մեթոդներով: Դրա համար անհրա-

ժեշտ են նոր մոտեցումներ:

Ներկայումս փորձ է արվում այդ հակամարտությունները լուծել **տարածքային ամբողջականության և սահմանների անխախտելիության սկզբունքի հիման վրա**: Գոյություն ունի նաև **ազգերի ինքնորոշման իրավունքը**, որ փորձ է արվում կա՛մ անտեսել կա՛մ ստորադասել ու հակադրել այն տարածքային ամբողջականության սկզբունքին:

Մինչդեռ դա սխալ է: **Այդ երկու սկզբունքներից և ոչ մեկը չունի գերակայություն մյուսի նկատմամբ**: Դրանք պետք է դիտարկել մեկ ամբողջության մեջ և կոնկրետ մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուր հակամարտության նկատմամբ: Դրանցից յուրաքանչյուրն ունի իր պատմական, էթնիկական, կրոնական, լեզվական, մշակութային և քաղաքական առանձնահատկությունները:

Այդ առանձնահատկություններն անտեսելու և տարածքային ամբողջականության սկզբունքին նախապատվություն տալու պատճառով էթնոքաղաքական հակամարտությունների լուծումը մտել է փակուղի: Իսկ ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի՝ ռազմական մեթոդներով հիմնահարցերը լուծելու փորձերը անհեռանկար են և դատապարտված ձախողման:

Մինչդեռ էթնոքաղաքական հակամարտություններից յուրաքանչյուրին կոնկրետ մոտեցում ցուցաբերելու դեպքում կարելի է մի դեպքում՝ ընդունել ինքնավարության սկզբունքը տվյալ պետության շրջանակներում, մեկ այլ դեպքում՝ ընդունել ընդհանուր պետության մողելը կամ անջատման և անկախ պետության հռչակման սկզբունքը: Բարդ հարցերը պահանջում են լուծման ձևերի բազմազանություն, լայնախոհ մոտեցում և քաղաքական ճկունություն:

XX դարը, քաղաքական և տնտեսական առումով, պատերազմների առատությամբ և հիմնախնդիրների բազմազանությամբ, եղավ մի փոթորկոտ դար: Եվ մարդկությունը թևակոխել է XXI դար՝ բեռնավորված անցնող դարի կուտակած խնդիրներով և այն հույսով, որ երրորդ հազարամյակն ավելի երջանկաբեր կլինի համայն մարդկության համար:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ձեր կարծիքով ի՞նչ հանգամանքներ նպաստեցին XX դարի վերջին էթնոքաղաքական հին հակամարտությունների սրվելուն և նորերի ի հայտ գալուն:*
2. *Մոտավորապես որքա՞ն էթնոքաղաքական հակամարտություն է հաշվվում աշխարհում: Թվարկե՛ք 6–7 նման հակամարտություններ:*
3. *Քարտեզի վրա գտե՛ք էթնոքաղաքական հակամարտությունների հիմնական գոտիները:*
4. *Հակամարտությունների կարգավորման ի՞նչ սկզբունքներ գիտեք: Փորձե՛ք բացատրել այդ սկզբունքների էությունը:*

Գլուխ 18 ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ

դաս 61

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ XX ԴԱՐՈՒՄ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

XX դարը գիտության և տեխնիկայի անընախընթաց զարգացման դարաշրջան էր:

Մեծ զարգացում ստացան բոլոր բնական գիտությունները: Սակայն նրանց մեջ առաջատարը դարձավ **ատոմային և միջուկային ֆիզիկան**, որի բնագավառում տեղի ունեցան հեղափոխական բնույթի հայտնագործություններ: Հենվելով **Ալբերտ Էյնշտեյնի** հարաբերականության տեսության վրա՝ գիտնականները ուսումնասիրեցին միկրոաշխարհը և ատոմի միջուկում հայտնաբերեցին մի շարք տարրական մասնիկներ (ինչպես՝ ֆոտոնը, էլեկտրոնը, պրոտոնը, պոզիտրոնը և նեյտրոնը): Հարաբերականության տեսությունը հնարավոր եղավ կիրառել միկրոաշխարհում՝ շնորհիվ քվանտային մեխանիկայի, որը թերևս ամենախոշոր ուղղությունը եղավ XX դ. տեսական ֆիզիկայի բնագավառում:

1930-ական թվականների վերջերին գիտնականները հայտնագործեցին էներգիայի ստացման նոր եղանակ՝ ուրանի ատոմը ճեղքելու ճանապարհով, ինչպես նաև շղթայական ռեակցիան: Դա հնարավորություն տվեց ատոմը և նրանից ստացվող էներգիան օգտագործել ինչպես խաղաղ, այնպես էլ ռազմական նպատակներով:

Այս գիտական կարևոր հայտնագործությունը հնարավոր եղավ մեծանուն գիտնականներ Ն. Բորի, Մ. Պլանկի, Ժ. Կյուրիի, Լ. դը Բրոյլի, Է. Շրեդինգերի, Է. Ֆերմիի, Ի. Կուրչատովի, Աբ. Ալիխանյանի և այլոց շնորհիվ:

Մեծ զարգացում ստացավ մաթեմատիկան, որը հիմք հանդիսացավ բնական մյուս գիտությունների բուռն զարգացման համար: Ձևավորվեցին ինքնատիպ մաթեմատիկական դպրոցներ ԱՄՆ-ում, Գերմանիայում, ԽՍՀՄ-ում, Ֆրանսիայում և այլուր: Մաթեմատիկոսներից աշխարհին լայնորեն հայտնի են XX դարի մեծագույն գիտնականներ Ջ. Բերգկոֆի, Ն. Վիների (ԱՄՆ), Դ. Գիլբերտի (Գերմանիա), Ժ. Ադամարի, Ա. Լեբեգի (Ֆրանսիա), Մ. Կելդիշի, Մ. Լավրենտևի (ԽՍՀՄ) անունները:

Համբավավոր մաթեմատիկական դպրոց ձևավորվեց նաև Հայաստանում՝ Արտաշես Շահինյանի գլխավորությամբ:

Մեծագույն նվաճումներ արձանագրվեցին աստղագիտության բնագավառում: Աստղագիտական դիտարկումները և հետազոտությունները հաստատեցին Տիեզերքի քիմիական միասեռության թեզը և այն տեսակետը, որ աստղերը բաղկացած են Երկրի վրա առկա նույն տարրերից: **1930թ. հայտնագործվեց** արեգակնային համակարգի **իններորդ մոլորակը՝ Պլուտոնը**:

Աստղագիտության բնագավառում ձևավորվեց նոր ուղղություն՝ **աստղաֆիզիկան**, որի **հիմնադիրներից է Վիկտոր Համբարձումյանը**: Նա առաջ քաշեց ու հիմնավորեց աստղասփյուռների և գերխիտ միջուկի տեսությունները: Այդ ուղղությամբ լուրջ աշխատանքներ են տարվում նրա կողմից հիմնադրված Բյուրականի աստղադիտարանում:

Ժամանակակից աստղագիտության զարգացման գործում մեծ ավանդ ունեն նաև Կ. Լունդմարկը, Բ. Լիոն, Ու. Ադամսը, Բ. Մարգարյանը և ուրիշներ:

Զգալի հաջողությունների հասավ նաև քիմիական գիտությունը՝ հատկապես սինթետիկ նյութերի ստացման գործում: Ձևավորվեց նոր ուղղություն՝ քիմիական ֆիզիկան, կատարվեցին լուրջ աշխատանքներ պոլի-

մերների բնագավառում: Այս ասպարեզում մեծ են Ն. Սեմյոնովի, Ս. Հինշելվուդի, Ն. Կուրնակովի, Ն. Ենիկոլոպյանի և այլոց ծառայությունները:

Հարկ է նշել գիտության այնպիսի ճյուղերի զարգացումը, ինչպիսիք են կենսաբանությունը, կենսաքիմիան, բիոֆիզիկան և ֆիզիոլոգիան: Այս վերջինի զարգացման մեջ առաջնային դերը պատկանում է Ի. Պավլովին, Լ. Օրբելուն, Խ. Կոշտոյանցին և այլ գիտնականների:

Գիտական վերոհիշյալ ուղղությունների հաջողությունները բարենպաստ նախադրյալներ ստեղծեցին բժշկագիտության զարգացման համար: Հատկապես ուշագրավ են հաջողությունները քիմիական ճանապարհով վիտամինների (A, B, C, D) սինթեզման, հակաբիոտիկների ուսումնասիրության, վիրուսաբանության և այլ բնագավառներում: Այժմ բժշկագիտությունը մեծ ճիգեր է գործադրում հայտնագործելու դեղամիջոցներ և բուժման մեթոդներ՝ ամենալայն տարածում գտած սրտանոթային հիվանդությունների և քաղցկեղի բուժման համար: Իսկ վերջին տարիներին մարդկությանը սպառնում է ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ (ՁԻԱՀ) կոչվող հիվանդությունը:

ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՈՒԺ

Ժամանակակից հասարակության առաջընթացը, արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացումն անհնար է պատկերացնել առանց գիտության զարգացման ու նրա նվաճումների կենսագործման: Դրա շնորհիվ **գիտությունն առանձին անհատների մենաշնորհից և անձուկ կաբինետային աշխատանքից վերածվեց գիտական հզոր կենտրոնների՝ ինստիտուտների և լաբորատորիաների գործունեության**: Այն դարձավ **արտադրողական ուժ**:

Գիտության համակողմանի զարգացումը և գիտական նոր հայտնագործություններն իսկական հեղափոխություն առաջացրին տեխնիկայի բնագավառում, որի շնորհիվ կատարվեց **նոր արդյունաբերական հեղաշրջում**: Այն այլ կերպ անվանում են ***գիտատեխնիկական հեղափոխություն*** (ԳՏՀ):

Շոգու էներգիային փոխարինելու եկավ **էլեկտրաէներգիան**, որը լայնորեն սկսեց կիրառվել տեխնիկայի, արդյունաբերության, տրանսպորտի, գյուղատնտեսության բնագավառներում և կենցաղում: Կառուցվեցին հզոր հիդրոկայաններ աշխարհի տարբեր երկրներում, ինչպես Բոուլդեր Դամը՝ ԱՄՆ-ում, Դնեպրի ՀԷԿ-ը՝ ԽՍՀՄ-ում և այլն: ԱՄՆ-ում սկսեց կիրառվել էլեկտրակայանների ավտոմատ կառավարման համակարգ: 1930-ական թվականների վերջերին նման համակարգ սկսեցին ներդնել նաև ԽՍՀՄ-ում: Ավտոմատ կառավարման համակարգն առաջին անգամ կիրառվեց Երևանի և Իվանկոյի ՀԷԿ-երում:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սկսվեց ատոմակայանների կառուցումն ԱՄՆ-ում, ԽՍՀՄ-ում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Կանադայում և աշխարհի այլ երկրներում: Ատոմային էլեկտրակայան կառուցվեց նաև Հայաստանում՝ միակն Անդրկովկասում և ամբողջ Մերձավոր ու Միջին Արևելքում:

Տեխնիկայի բնագավառում մյուս կարևոր, հեղափոխական բնույթի նորությունը **ներքին այրման շարժիչների** լայնամասշտաբ կիրառումն էր ավտոմոբիլային, տրակտորային, ավիացիոն և արդյունաբերական այլ ճյուղերում: Այն լայն կիրառում գտավ նաև ջրային տրանսպորտում և ռազմական տեխնիկայում:

Գիտական հայտնագործություններն արտադրության ոլորտում ներդնելու շնորհիվ աննախընթաց զարգացում ապրեցին **մեքենաշինությունը, սև և գունավոր մետալուրգիան** և արդյունաբերության այլ ճյուղեր: Ստեղծվեցին նոր մեքենաներ, գերճշգրիտ հաստոցներ, ներդրվեցին հարահոս գծեր, ավտոմատ սարքեր և համալիրներ, այդ թվում՝ ռոբոտներ, մանիպուլյատորներ և նոր առաջավոր տեխնոլոգիաներ:

Արդյունաբերության զարգացմանը մեծապես խթանեց տիեզերագնացության զարգացումը 1960-90-ական թվականներին:

ԳՏՀ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Գիտատեխնիկական հեղափոխությունը փոխեց ժամանակակից հասարակության բնույթը: Այն դարձավ *ինդուստրիալ հասարակություն**՝ հիմնված ժամանակակից ինֆորմատիկայի նվաճումների վրա: Խիստ աճեց բանվոր դասակարգի և արդյունաբերության տեսակարար կշիռը արտադրության ոլորտում և նվազեց գյուղացիության մասնաբաժինը տնտեսության մեջ: Ձևավորվեց **ինժեներատեխնիկական** հզոր **հրամանատարական խումբ**, որի դերը շատ կարևոր է ժամանակակից արդյունաբերության կազմակերպման և զարգացման մեջ: Եվ վերջապես, ձևավորվեց ևս մի նոր սոցիալական խավ՝ **օժանդակ–սպասարկողների** լայնահոծ զանգված, որը նշանակալի դեր է խաղում արդյունաբերության կազմակերպման և արդյունաբերական արտադրանքի իրացման ոլորտում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ընդհանուր գծերով ներկայացրե՛ք գիտության տարբեր բնագավառների նվաճումները XX դարում:*
2. *Օրինակներով ցույց տվե՛ք հայ գիտնականների ներդրումը համաշխարհային գիտության մեջ:*
3. *Բացատրե՛ք «գիտատեխնիկական հեղափոխություն» հասկացությունը:*
4. *Ի՞նչ սոցիալական հետևանքներ ունեցավ ԳՏՀ–ն:*

դաս 62-63

ՀՈԳԵՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԸ XX ԴԱՐՈՒՄ

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՎԵՐԵԼՔԻ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

XX դարում մշակույթը, հենվելով նախորդ դարաշրջանի դասական նվաճումների վրա, բուռն վերելք ապրեց: Դրան զգալիորեն նպաստեց ժողովուրդների կրթական մակարդակի բարձրացումը: Համընդհանուր գրագիտության տարածման գլոբալ գործընթացը, որ վաղուց էր սկսվել ԽՍՀՄ–ում, Հյուսիսային Ամերիկայում և Եվրոպայում, տարածվեց նաև անկախություն նվաճած Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրների վրա: Այս ժողովուրդների մշակութային զարթոնքը նրանց ազգային ինքնության հաստատման առհավատչյան է և մի կարևոր շիթ՝ համաշխարհային մշակութային անդաստանում:

Եվրոպայի և Ամերիկայի զարգացած երկրները շարունակում են պահպանել առաջնությունը գրականության, գեղանկարչության, երաժշտության, թատրոնի, կինոյի և արվեստի այլ բնագավառներում: Նրանք հանդիսանում են նոր ուղղությունների, ոճերի և գաղափարների առաջացման ու ձևավորման բնօրրան:

Շնորհիվ գրագիտության և կրթական ընդհանուր մակարդակի բարձրացման՝ **մշակույթը առանձին անհատների մենաշնորհից դարձավ ամենալայն զանգվածների սեփականությունը**:

ՏԱՐԲՆԹԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՈՐ ՈՒՂԻՆԵՐԻ ՈՒ ՈՃԵՐԻ ՈՐՈՆՈՒՄՆԵՐԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Առաջին համաշխարհային պատերազմի արհավիրքները, վիթխարի մարդկային զոհերը և հետպատերազմյան շրջանի տնտեսական անկումը, սոցիալական ծանր վիճակը մեծապես ազդեցին միլիոնավոր մարդկանց հոգեվիճակի և մտածելակերպի վրա: Նախկին արժեքները, կորցրեցին իրենց գրավչությունն ու նշանակությունը մարդկանց աչքերում: Մարդիկ խոր հիասթափություն էին ապրում և նրանց մոտ առաջացել էր հոգեկան դատարկություն: Այս հոգեվիճակի և մտայնության արտացոլումը հանդիսացավ Օ. Շպենգլերի «Եվրոպայի մայրամուտը» աշխատությունը:

Արևմտյան գրականության մեջ երկար ժամանակ տիրապետող դարձավ պատերազմի և այսպես կոչված **«կորուսյալ սերնդի» թեման**: Այն իր գեղարվեստական արտացոլումը գտավ Էրիխ Ռեմարկի «Արևմտյան ճակատում անփոփոխ է»,

Ջեյմս Օլդինգտոնի «Հերոսի մահը», Էռնստ Հեմինգուեյի «Հրաժեշտ քեզ, զե՛նք», Դոս Պասոսի «1919», Ռոբերտ Գրեյվսի «Հրաժեշտ այն ամենին, ինչ որ եղել է» և այլ գեղարվեստական գործերում:

Նոր ձևավորվող խորհրդային գրականության հիմնական թեման իշխանափոխության և քաղաքացիական պատերազմի հարցերն էին: Դրանց էին նվիրված Միխայիլ Շոլոխովի «Խաղաղ Դոն», Ալեքսեյ Տոլստոյի «Տառապանքի ուղիներով», Ալեքսանդր Ֆադեևի «Ջախջախում», Իսահակ Բաբելի «Հեծյալ բանակը» և այլ գեղարվեստական գործեր: Իսկ պոեզիայում (Վլադիմիր Մայակովսկի, Եղիշե Չարենց և այլն) տիրապետող էր հեղափոխական պաթոսը:

Մեծ որոնումների մեջ էին նկարիչները, քանդակագործները և երաժիշտները: Նրանց չէին բավարարում հին, դասական արվեստի ձևերը և ոճերը: Սկիզբ են առնում նոր, ավանգարդիստական ուղղություններ (ընդհանուր անվանումով՝ *ավանգարդիզմ**), ինչպես նաև զարգանում նախորդ շրջաններից եկող ուղղություններ:

1920-ական թվականներին մեծ տարածում և ժողովրդականություն է ձեռք բերում երաժշտության մեջ նոր ուղղություն հանդիսացող ջազը (այն ձևավորվել էր դեռևս 1900թ. ամերիկյան Նոր Օռլեան քաղաքում): Հետագա տարիներին տեղի ունեցավ ջազի հաղթարշավը աշխարհով մեկ, տալով այնպիսի դեմքեր, ինչպիսիք են՝ Բենի Գուդմանը, Լուի Արմսթրոնգը, Էլլա Ֆիտցջերալդը և շատ ուրիշներ: Իսկ ԽՍՀՄ-ում մեծ հեղինակություն էին վայելում Լեոնիդ Ուտյոսովի, Օլեգ Լունդստրեմի, Արտեմի Այվազյանի և Էդի Ռոզների ջազային նվագախմբերը:

Հաստատուն քայլերով կյանք է մտնում **կինոարվեստը**, որն աննկարագրելի ժողովրդականություն է վայելում: Համր կինոյին, որի անգերազանցելի բարձունքը մնաց **Չարլի Չապլինը**, փոխարինելու եկավ հնչյունային կինոն: Դրա առաջնեկի՝ «**Ջազային երգիչը**» ժապավենի ցուցադրումը կայացավ **1927թ.**: Այդ նույն թվականին Բերտոլդ Բրեխտը Գերմանիայում իրականացրեց «Երեքգրոշանոց օպերայի» բեմադրությունը:

Այս բոլորին զուգահեռ՝ փոփոխություն է կատարվում մարդկանց հոգեբանության և տրամադրությունների մեջ: Նրանց հոգնածությունն աստիճանաբար անցնում է, և նրանք կարոտ են ուրախանալու, վայելքի և հաճելի ժամանցի: Նրանք լցնում են կաբարեները, սրճարանները, կինոթատրոնները, համերգային դահլիճները, անգամ՝ մարզահրապարակները: Նրանք հրապուրվում են ջազով և ռիթմիկ պարերով, ծարավ են նորույթի: 20-ական թվականներին սկսվում է եվրոպացիների իսկական ծանոթությունը

Արշիլ Գորկի (Ոստանիկ Ադոյան). «Նշանագրեր II»

Պաբլո Պիկասո. «Ավինյոնյան օրիորդներ»



Սալվադոր Դալի. «Սուրբ Անտոնիոսի գայթակղումը»

ամերիկյան կենսաձևին և արվեստին: Այդ պահից սկսվում է ամերիկանիզմի թափանցումը Եվրոպա և աշխարհի մյուս երկրներ:

1930-ական թվականներին առաջնային է դառնում պայքարը ֆաշիզմի և ֆաշիստական գաղափարախոսության դեմ: Ֆաշիստական Գերմանիայում տիրապետող է դառնում մյուս ժողովուրդների նկատմամբ գերմանացիների մտավոր և ստեղծագործական գերազանցության «տեսությունը», մարդկանց գիտակցության մեջ բոլոր միջոցներով ներդրվում է ուժի և բռնության պաշտամունքը: Ֆաշիզմի դեմ ուղղված պայքարին, այլ ուժերի հետ միասին, ակտիվորեն մասնակցում են, անկախ իրենց քաղաքական հայացքներից, աշխարհի տարբեր ազգությունների առաջադեմ մտավորականները: Դրանց մեջ են գրողներ Մաքսիմ Գորկին, Իլյա Էրենբուրգը և Ավետիք Իսահակյանը (ԽՍՀՄ), Ռոմեն Ռոլանը և Անրի Բարբյուսը (Ֆրանսիա), Լիոն Ֆեյխտվանգերը և Թոմաս Մանը (Գերմանիա), արվեստի տարբեր բնագավառների ներկայացուցիչներ՝ կինոդերասան Չարլի Չապլինը, նկարիչ Պաբլո Պիկասոն, կինոռեժիսոր Սերգեյ Էյզենշտեյնը, կոմպոզիտոր Սերգեյ Ռախմանինովը և ուրիշներ:

Այս շրջանում գրականությունը և արվեստը գաղափարական-կուսակցական հողի վրա բաժանվում են **սոցիալիստական** և **արևմտյան** կամ բուրժուական արվեստի ու հակադրվում միմյանց:

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

XX դարի երկրորդ կեսին աշխարհը բաժանված էր երկու միմյանց հակադիր ռազմաքաղաքական խմբավորումների՝ սոցիալիստական և կապիտալիստական: Այդ հանգամանքն իր խոր կնիքն էր դրել նաև մշակույթի բոլոր ճյուղերի վրա: Ուստի, անհնար է այդ ժամանակահատվածի համար խոսել մեկ ընդհանուր մշակույթի մասին, քանի որ այն երկփեղկված էր երկու՝ սոցիալիստական և արևմտյան մշակույթի: Դրանցից յուրաքանչյուրը կատարում էր իրեն հատկացված դերը հասարակական-մշակութային կյանքում:

Սոցիալիստական մշակույթը խարսխված էր **սոցիալիստական ռեալիզմի** սկզբունքի վրա, որը ձևավորվեց դեռևս 1930-ական թվականների կեսերին և որի ակունքների մոտ կանգնած էր **Մաքսիմ Գորկին**: Այս սկզբունքը տիրապետող դարձավ սկզբում ԽՍՀՄ-ում, իսկ հետագայում՝ նաև Արևելյան Եվրոպայի (Լեհաստան, ԳԴՀ, Հունգարիա, Չեխոսլովակիա, Ռումինիա, Բուլղարիա) և Ասիայի (Չինաստան, Վիետնամ, Լաոս, Կամբոջա, Կորեայի Ժողովրդա-Դեմոկրատական Հանրապետություն) սոցիալիստական երկրներում, ինչպես նաև Կուբայում:

Սոցիալիստական ռեալիզմը **գաղափարայնացված տեսություն էր**՝ հիմնված կոմունիստական կուսակցության գաղափարախոսության վրա: Այն կոչված էր գունազարդելու սոցիալիստական իրականությունը, փառաբանելու սոցիալիզմի «համաշխարհային պատմական նվաճումները» և կոմունիստական առաջնորդների «հանճարեղությունն ու անսխալականությունը»: Այդ մեթոդի հետևորդներին արգելված էր արտացոլել կյանքի ստվերոտ կողմերը, սոցիալ-քաղաքական և ազգային-էթնիկական առկա խոր հակասությունները: Սոցիալիստական ռեալիզմը պարտադրում էր որպես հակառակորդ դիտել արևմտյան մշակույթը, չտեսնել որևէ լուսավոր շող նրանում, բացառությամբ այն արվեստագետների, որոնք կա՛մ արևմտյան կոմունիստական կուսակցությունների անդամ էին, կա՛մ նրանց համակիրներ (Լուի Արագոն, Թեոդոր Դրայզեր և այլն): Սոցիալիստական ռեալիզմը մեծ հարված հասցրեց

արվեստի և գրականության զարգացմանը սոցիալիստական երկրներում՝ կաշկանդելով տաղանդների դրսևորմանը:

Եվ, այնուհանդերձ, մշտապես մի ներքին դժգոհություն է եղել արվեստագետների հոգում, որոնք ձգտել են ազատ ստեղծագործության և պարտադրված արհեստական կաղապարների վերացման: Սակայն զգոն իշխանությունները միշտ ճնշել են նման դրսևորումները: Այդպես վարվեցին խորհրդային իշխանությունները գրողների և կոմպոզիտորների հետ 1940-ական թվականների վերջերին և նկարիչների հետ՝ 1960-ական թվականներին: Իսկ ավելի համառները, որոնք ստացան «*այլախոհ**» **(դիսիդենտ)** մականունը, կա՛մ արտաքսվում էին երկրից (Ի. Բրոդսկի, Ա. Սոլժենիցին, Ա. Գալիչ և այլն), կա՛մ որպես «հոգեկան» հիվանդներ բռնի ուղարկվում փակ հոգեբուժարաններ՝ «բուժման»:

Չնայած այս իրավիճակին, այնուամենայնիվ, զարգանում էր մշակույթը: Տաղանդավորները կարողանում էին, թեկուզ և սոցիալիստական ռեալիզմի շղարշի ներքո, ստեղծել արվեստի ուշագրավ գործեր, որոնցում արտացոլվում էր գոյություն ունեցող իրականությունը:

Գրականության մեջ ավագ սերնդի՝ Մ. Շոլոխովի, Մ. Շահինյանի, Ա. Ֆադեևի, Ի. Էրենբուրգի, Ա. Իսահակյանի, Ա. Ախմատովայի, Կ. Գամսախուրդիայի, Պ. Տիչինայի և այլոց կողքին ստեղծագործում էին Կ. Սիմոնովը, Ա. Տվարդովսկին, Վ. Կավերինը, Դ. Գրանինը, Յու. Գերմանը և շատ ուրիշներ:

1960-ական թվականներին, ձնհալի շրջանում հայտնվեց երիտասարդ գրողների, հատկապես բանաստեղծների մի բույլ՝ Ե. Եվտուշենկո, Յու. Վոզնեսենսկի, Բ. Օկուջավա, Ռ. Ռոժդեստվենսկի, Բ. Ախմադուլինա, Պ. Սևակ և ուրիշներ: Նրանք համարձակորեն առաջ էին քաշում սոցիալ-քաղաքական հարցեր և շատ հաճախ հակասության մեջ մտնում տիրապետող քաղաքական գծի հետ:

XX դարի երաժշտական կյանքի վրա իրենց անջնջելի կնիքն են դրել այնպիսի հանճարեղ կոմպոզիտորներ, ինչպիսիք են Ս. Պրոկոֆիևը, Դ. Շոստակովիչը և Ա. Խաչատրյանը: Կերպարվեստի բնագավառում Մ. Սարյանի, Դեյնեկայի, Կոնենկովի, Ե. Քոչարի, Է. Նեիզվեստնու և այլ մեծերի կողքին հայտնվեց շնորհաշատ նկարիչների և քանդակագործների մի ամբողջ սերունդ: Թատերական արվեստում իր թարմությամբ և նորույթով փայլատակեց Բ. Բրեխտի թատերական դպրոցը (ԳԴՀ), իր ինքնատիպ որոնումներն էր շարունակում Մոսկվայի Ե. Վախթանգովի անվան թատրոնը: Շնորհիվ Ս. Փարաջանովի, Ա. Տարկովսկու՝ նոր բարձունքների հասավ կինոարվեստը:

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Տիրապետող էին զանազան «իզմեր» և ուղղություններ, որոնք գալիս էին դեռևս XX դ. 10-20-ական թվականներից: Արևմտյան արվեստում շատ ուժեղ էին աբստրակցիոնիզմի (վերացականության) դիրքերը՝ իր տարատեսակներով, օրինակ՝ կուբիզմը: Կուբիզմի կարկառուն ներկայացուցիչն էր **Պաբլո Պիկասոն**: Իսկ սյուրռեալիզմի անմրցելի հեղինակությունն էր իսպանացի **Սալվադոր Դալին**: XX դ. կեսերին մեծ տարածում գտավ ֆրանսիացի գրող և փիլիսոփա **Ժան Պոլ Սարտրի** հիմնած ուղղությունը, որը ստացավ էքզիստենցիալիզմ անվանումը: Ըստ այդ տեսության՝ մարդն իր էությամբ միայնակ է և ազատ՝ ընտրելու իր կյանքի ուղին:

Արևմտյան արվեստի մեջ կենտրոնական դարձավ **անհատի ազատության և իրավունքների** թեման:

Այս շրջանում եվրոպական գրողների (Բազեն, Բյոլ, Դյուրեման և այլն) կողքին հայտնվեցին մի շարք փայլուն գրողներ ամերիկյան մայրցամաքում, ինչպես՝ Ֆոլկները, Հեմինգուեյը, Սարոյանը, Ստեյնբեկը՝ ԱՄՆ-ում, Ներուդան՝ Չիլիում, Ամադուն՝ Բրազիլիայում, Մարկեսը՝ Կոլումբիայում և այլն:

Մեծ տարածում ստացավ ջազային, ապա նաև **ռոք երաժշտությունը**, որը ԱՄՆ-ից հեղեղի նման տարածվեց ամբողջ աշխարհով մեկ: **Հոլիվուդը** դարձավ կինոինդուստրիայի համաշխարհային կենտրոն: Միջազգային մեծ ճանաչում ստացան կինոռեժիսորներ Ս. Կուբրիկը, Ռ. Մամուլյանը, Ս. Կրամերը, Ս. Սպիլբերգը, Ֆ. Կոպպոլան և ուրիշներ:

Մեծ հռչակ ձեռք բերեց իտալական կինոռպրոցը՝ Չ. Չավատինի, Ռ. Ռոսսելինի, Դե Սիկա, Լ. Վիսկոնտի, Մ. Անտոնիոնի, Ֆ. Ֆելլինի, Բ. Բերտոլուչի և այլն: Ճապոնական կինոյին մեծ հռչակ բերեցին Ակիրո Կուրոսավայի, իսկ շվեդականին՝ Ի. Բերգմանի գեղարվեստական ֆիլմերը:

Կինոարվեստի երկնակամարում փայլատակեցին այնպիսի աստղեր, ինչպիսիք էին՝ Գրետա Գարբոն, Մերիլին Մոնրոն, Մառլոն Բրանդոն, Շերը (Շերիլին Սարգսյան) (ԱՄՆ), Աննա Մանյանին, Սոֆի Լորենը, Մարչելլո Մաստրոյանին (Իտալիա), Ժան Գաբենը, Բրիջիտ Բարդոն (Ֆրանսիա), Վիվիան Լին, Չարլ Լաֆտոն (Անգլիա) և այլն:

XX դարում ձևավորվեց երգարվեստի նոր ոճ, որի ամենափայլուն ներկայացուցիչները հանդիսացան Էդիտ Պիաֆը, Շառլ Ազնավուրը, Իվ Մոնտանը՝ Ֆրանսիայում, Ֆրենկ Սինատրան, Էլվիս Փրեսլին՝ ԱՄՆ–ում, Էլթոն Ջոնը՝ Անգլիայում և այլն:

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ XXI ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

XX դարի վերջերից ակնհայտ դարձավ ոչ միայն տնտեսության, այլև **մշակույթի գլոբալացումը**: Դա պայմանավորված էր կապի նոր միջոցների, հեռուստատեսության ստեղծման և զարգացման, պետությունների միջև անհաղթահարելի թվացող պատնեշների խորտակման, ճանապարհորդությունների և շփումների ակտիվացման հետ: Դրա շնորհիվ աշխարհի որևէ կետում առաջացած գաղափարները, արվեստի նորույթները, ձևերը և ոճերն արագորեն հասանելի են դառնում աշխարհի մյուս մասերի ժողովուրդներին: Մեծացել են տարբեր մշակույթների փոխազդեցության հնարավորությունները և սահմանները: Աճել են բոլոր քաղաքակիրթ ժողովուրդների ստեղծած մշակութային արժեքները մշակույթի համաշխարհային գանձարանում ներդնելու հնարավորությունները:

Գլոբալ մշակույթի ձևավորման և զարգացման այս միտումներն, ամենայն հավանականությամբ, տիրապետող կլինեն XXI դարում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Պարզաբանե՛ք մշակույթի վերելքի պայմանները նորագույն շրջանում:*
2. *Ինչպե՞ս կբնութագրեք սոցիալիստական մշակույթը: Ո՞ր երկրներում այն գոյություն ուներ կամ ունի:*
3. *Արևմտյան մշակույթը ինչո՞վ էր առանձնանում սոցիալիստական մշակույթից:*
4. *Թվարկե՛ք XX դարի մշակույթի նշանավոր ներկայացուցիչների:*
5. *Համաշխարհային ճանաչում ունեցող ի՞նչ հայ արվեստագետներ գիտեք՝ ա) գրականության, բ) նկարչության, գ) երաժշտության, դ) կինոյի բնագավառում:*
6. *Որո՞նք են մշակույթի զարգացման նոր միտումները XXI դարի սկզբին:*

դաս 64

ԱՄՓՈՓՈՒՄ

- **Հետպատերազմյան շրջանում Թուրքիան մերձեցավ Արևմուտքի երկրների՝ հատկապես ԱՄՆ-ի հետ: Թուրքիայի ներքաղաքական կյանքում մեծ դեր են խաղում զինվորականությունն ու բանակը:**

Վերհիշե՛ք, թե երբ են տեղի ունեցել զինվորական պետական հեղաշրջումներ Թուրքիայում:

Ինչպիսի՞ իշխանություն է այսօր հաստատված թուրքական հանրապետությունում:

Ընդհանուր գծերով բնութագրե՛ք Թուրքիայի վերաբերմունքը Կիպրոսի և Հայաստանի (Հայկական հարցի), ինչպես նաև՝ քրդերի ազատագրական շարժման հանդեպ:

- **Իրանը Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո քաղաքական և տնտեսական դժվարին վիճակում էր գտնվում: 1961-1970–ական թվականներին երկրում բարեփոխումներ իրականացվեցին:**

Ձեր կարծիքով ինչ՞ի «Սպիտակ» հեղափոխությանը հաջորդեց իսլամական հեղաշրջումը 1978-79 թթ.:

Ինչո՞վ կբացատրեք հայ-իրանական աշխույժ միջպետական հարաբերությունները:

- **Երկարամյա ազգային–ազատագրական պայքարի արդյունքում Չինաստանը ոչ միայն հասավ լիակատար անկախության, այլ նաև բռնեց զարգացման սոցիալիստական ուղին:**

Վերհիշե՛ք ՉԺՀ-ում կիրառված քաղաքական երեք կուրսերի անվանումներն ու բովանդակությունը:

Որո՞նք էին խորհրդա–չինական լարված հարաբերությունների պատճառները 1960-80-ական թվականներին:

Ինչպիսի՞ հասարակական–քաղաքական համակարգ է գործում ՉԺՀ-ում, և ի՞նչ քաղաքականություն է վարում երկրի ղեկավարությունը տնտեսության ոլորտում:

- **XX դ. երկրորդ կեսին ծավալված ազգային–ազատագրական և հակաիմպերիալիստական հզոր շարժումների արդյունքում կործանվեց գաղութային համակարգը:**

Ձեր կարծիքով ինչո՞ւ մի քանի տասնամյակի ընթացքում արագորեն փլուզվեց դարերով գոյատևած գաղութային համակարգը:

Ի՞նչ երկրներ անկախացան Ասիայում և Աֆրիկայում (թվարկե՛ք 10-12 պետություն):

Ինչպե՞ս ստեղծվեց Իսրայել պետությունը: Ո՞րն է արաբա–իսրայելական հակամարտության գլխավոր պատճառը:

- **Բրիտանական նախկին գաղութ Հնդկաստանը 1950թ. հասավ լրիվ անկախության: Երկրի տարածքի վրա ձևավորվեցին Հնդկաստան և Պակիստան պետությունները, իսկ 1971թ. Արևելյան Պակիստանը, անջատվելով Պակիստանից, դարձավ անկախ պետություն՝ Բանգլադեշ անունով:**

Ի՞նչ դեր խաղացին Հնդկաստանի անկախության համար մղված պայքարում Մ. Գանդին և Ջ. Ներուն:

Ինչպիսի՞ արտաքին քաղաքական կուրս է վարում Հնդկաստանը:

Ո՞ր հիմնախնդրի հետ է կապված Հնդկաստանի և Պակիստանի միջև հարաբերությունների լարվածությունը:

- **Լատինական Ամերիկայի երկրները XXդ. երկրորդ կեսին զարգացման ուրույն ուղիով ընթացան՝ քաղաքացիական և զինվորական իշխանությունների հաճախակի հերթագայություն, ազգային–ազատագրական, սոցիալական և քաղաքական շարժումների աշխուժացում և այլն: Այդ ընդհանուր ֆոնի վրա առանձնանում է Կուբան, որը 1959թ. ի վեր ընթանում է սոցիալիզմի ուղիով:**

Ինչպիսի քաղաքականություն է վարում ԱՄՆ–ը Լատինական Ամերիկայի երկրներին իր գերազդեցության ոլորտից դուրս չթողնելու համար:

Լատինաամերիկյան ո՞ր երկրներում են հաճախակի տեղի ունեցել զինվորական հեղաշրջումներ:

Ձեր կարծիքով ի՞նչ հեռանկար ունի սոցիալիզմը Կուբայում: Համեմատե՛ք այն ԽՍՀՄ–ի և Արևելյան Եվրոպայի սոցերկրների պատմության հետ:

- **Երկրորդ հազարամյակի վերջում աշխարհում ձևավորվեց ուժերի նոր հարաբերակցություն: ԱՄՆ-ը մնաց որպես աշխարհի միակ գերտերություն և փորձում է իր ռազմաքաղաքական ու տնտեսական շահերն ամրապնդել երկրագնդի ցանկացած վայրում: «Սառը պատերազմի» ավարտից հետո խախտվեց ուժերի հավասարակշռությունն աշխարհում, սրվեցին էթնոքաղաքական հակամարտությունները տարբեր տարածաշրջաններում:**

Վերհիշե՛ք, թե ինչ քաղաքական փոփոխությունների արդյունքում ԱՄՆ-ը մնաց որպես աշխարհի միակ գերհզոր պետություն:

Տնտեսության և հասարակության գլոբալացման պայմաններում, ձեր կարծիքով, XXI դարում ինչպիսի՞ն կլինի ուժերի հարաբերակցությունը մեր մոլորակի վրա:

Ի՞նչ վտանգ են իրենց մեջ պարունակում էթնոքաղաքական հակամարտությունները: Բերե՛ք էթնոքաղաքական հակամարտությունների օրինակներ:

- **XX դարի ընթացքում գիտությունն ու մշակույթը աննախադեպ զարգացում ապրեցին, հատկապես՝ երկրորդ դարակեսին:**

Փորձե՛ք մեկնաբանել «գիտությունն արտադրողական ուժ է դարձել» արտահայտությունը:

Նշե՛ք սոցիալիստական և արևմտյան մշակույթների տարբերություններն ու նմանությունները:

Ձեր կարծիքով ինչպիսի՞ն կլինի մշակույթը XXI դարում:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1943	Լիբանանի անկախության հաստատումը
1945	Ինդոնեզիայի, ՎԴՀ-ի անկախության հռչակումը
1945թ. հոկտեմբերի 24	Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) պաշտոնական գործունեության սկիզբը
1946-1953	Բռնությունների նոր ալիքը ԽՍՀՄ-ում
1946-1958	Չորրորդ հանրապետությունը Ֆրանսիայում
1946	Սիրիայի անկախության հաստատումը
1947թ. մարտի 12	Տրումենի (ԱՄՆ-ի նախագահ) դոկտրինայի ընդունումը. «Սառը պատերազմի» սկիզբը
1947թ. հունիս	«Մարշալի պլանի» ընդունումը
1947-1964	Ջ. Ներուն՝ Հնդկաստանի վարչապետ
1948	Բիրմայի անկախանալը, Իսրայել, Հարավային և Հյուսիսային Կորեա պետությունների կազմավորումը
1949թ. ապրիլի 4	ՆԱՏՕ-ի ստեղծումը
1949	Գերմանական երկու պետությունների՝ ԳՖՀ-ի և ԳԴՀ-ի ստեղծումը
1949թ. հոկտեմբերի 1	ՉԺՀ-ի հռչակումը
1950	Հնդկաստանի լիակատար անկախության հռչակումը
1952	Թուրքիայի անդամագրվելը ՆԱՏՕ-ին
1953	Եգիպտոսի իրական անկախության հռչակումը
1955թ. մայիսի 14	Վարշավայի պայմանագրի ստորագրումը. սոցիալիստական երկրների ռազմաքաղաքական խմբավորման ստեղծումը
1956	ԽՄԿԿ XX համագումարը. անհատի պաշտամունքի դատապարտումը
1957թ. հոկտեմբեր	Երկրի առաջին արհեստական արբանյակի արձակումը ԽՍՀՄ-ում
1958	Հինգերորդ հանրապետության կազմավորումը Ֆրանսիայում
1958-1969	Շ. դը Գոլի նախագահության շրջանը
1958	Իրաքի և Գվինեայի անկախության հռչակումը
1960	Կոնգոյի (Զաիր) անկախացումը: Աֆրիկյան 17 երկրների անկախանալը
1961թ. ապրիլի 12	Խորհրդային տիեզերագնաց-օդաչու Յուրի Գագարինի՝ տիեզերական առաջին շուրջերկրյա թռիչքը՝
1961	Բեռլինի պատի կառուցումը
1961	«Սպիտակ հեղափոխության» սկիզբն Իրանում

1962	Կարիբյան ճգնաժամը
1963թ. նոյեմբեր	ԱՄՆ-ի նախագահ Ջ. Քենեդու սպանությունը
1966-1976	«Կուլտուրական հեղափոխությունը» Չինաստանում
1966-1977, 1980-1984	Ինդիրա Գանդիի վարչապետության տարիները
1969թ. հուլիսի 20	Առաջին մարդը՝ ամերիկացի տիեզերագնաց Նեյլ Արմսթրոնգը Լուսնի վրա
1973	Վիետնամական պատերազմի ավարտը
1974	Հյուսիսային Կիպրոսի բռնազավթումը Թուրքիայի կողմից
1975թ. օգոստոսի 1	Հելսինկյան խորհրդակցության եզրափակիչ ակտի ստորագրումը
1977	«Չորս ճյուղերն արդիականացնելու ծրագրի» իրագործման սկիզբը ՉԺՀ-ում
1979թ. ապրիլի 1	Իրանի Իսլամական Հանրապետության հռչակումը
1979-1990	Մ. Թեթչերի կառավարման շրջանը
1979	Խորհրդային զորքերի ներխուժումը Աֆղանստան
1981-1995	Ֆ. Միտերանը Ֆրանսիայի նախագահ
1983	Քաղաքացիական իշխանության վերականգնումը Թուրքիայում
1985թ. մարտ	Վերակառուցման քաղաքականության սկիզբը Խորհրդային Միությունում
1988թ. փետրվար	Ղարաբաղի (Արցախ) հիմնախնդրի լուծման նորագույն փուլի սկիզբը
1989	Բեռլինի պատի անկումը
1990թ. հոկտեմբեր	Գերմանիայի վերամիավորումը
1991թ. օգոստոսի 19-21	Պահպանողական ուժերի խռովությունը Մոսկվայում
1991թ. սեպտեմբերի 21	Հայաստանի անկախության հանրաքվեի անցկացումը
1991թ. դեկտեմբերի 21	ԱՊՀ-ի կազմավորումը. ԽՍՀՄ-ի փլուզումը
1991թ. դեկտեմբեր - 1992թ. փետրվար	Դիվանագիտական հարաբերությունների հաստատումը Հայաստանի և Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Իրանի միջև
1992	Մաաստրիխտի որոշումները Եվրոպական Միության ստեղծման վերաբերյալ
1994-1996, 1999-2000	Չեչենական պատերազմները Ռուսաստանում
1998	Հնդկաստանի և Պակիստանի կողմից սեփական միջուկային զենքի առաջին փորձարկումները
1999թ. մարտ-մայիս	ՆԱՏՕ-ի երկրների ագրեսիան Հարավսլավիայի դեմ և տեղակայումը Կոսովոյի երկրամասում

դաս 65-66

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՄՓՈՓՈՒՄ

- Ե՞րբ են տեղի ունեցել համաշխարհային երկու պատերազմները: Վերհիշե՛ք դրանց արդյունքները, համեմատե՛ք հակադիր խմբավորումների կազմը:
- Պատմության նորագույն շրջանում ո՞ր պետություններն են առաջատար դեր խաղացել կամ խաղում համաշխարհային տնտեսության և քաղաքականության մեջ: Թվարկե՛ք այդ տերությունների աչքի ընկած ղեկավարներից մի քանիսին:
- Ի՞նչ ուղիով զարգացան նախկին Ռուսական կայսրության ժողովուրդները 1917-1991 թվականներին:
- Ե՞րբ է տեղի ունեցել Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմը: Ի՞նչ մասնակցություն ունեցավ հայ ժողովուրդը Երկրորդ աշխարհամարտին:
- Ինչո՞ւ փլուզվեց ԽՍՀՄ-ը: Քանի՞ անկախ պետություն առաջացավ նախկին ԽՍՀՄ-ից, և դրանցից որո՞նք են մտնում ԱՊՀ-ի մեջ:
- Հայաստանի հարևան պետությունները՝ Թուրքիան և Իրանը, զարգացման ի՞նչ ուղիով են ընթանում: Ինչպիսի՞ հարաբերություններ կան Հայաստանի և նրանց միջև:
- Մշակույթը և գիտությունը ի՞նչ նվաճումներ ունեցան XX դարի երկրորդ կեսին: Խոսե՛ք դրանց հասարակական դերի և նշանակության մասին: Ներկայացրե՛ք ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի հաջողությունները տիեզերքի յուրացման բնագավառում:
- Ե՞րբ ձևավորվեցին երկու հակամարտ խմբավորումները՝ Հյուսիսատլանտյան դաշինքը և Վարշավայի պայմանագրի մասնակից երկրների դաշինքը:
- Աշխարհում այժմ կա՞ն սոցիալիստական պետություններ. որո՞նք են:
- Ձեր կարծիքով ի՞նչ հանգամանքներ նպաստեցին գաղութային համակարգի փլուզմանը XX դ. երկրորդ կեսին: Նշե՛ք մի քանի նախկին գաղութային երկրներ՝ ա) Ասիայում, բ) Աֆրիկայում, գ) Լատինական Ամերիկայում:
- Ուժերի ինչպիսի՞ հարաբերակցություն է ձևավորվել աշխարհում XXI դարի սկզբին: Ինչպիսի՞ն կլինի աշխարհը XXI դարում՝ միակենտրո՞ն, թե՞ բազմակենտրոն. փորձե՛ք հիմնավորել:
- Էթնոքաղաքական հակամարտությունների ի՞նչ հայտնի օրինակներ կարող եք բերել: Ե՞րբ է սկսվել Արցախի (Ղարաբաղ) ազատագրական պայքարի նորագույն փուլը:
- Էթնոքաղաքական հակամարտությունների կարգավորման ի՞նչ սկզբունքների հետ եք ծանոթացել: Արցախի հիմնախնդրի լուծման համար ո՞ր սկզբունքն է ընդունելի և պատմականորեն արդարացի:
- Վերհիշե՛ք, թե որ երկրների պատմության հետ են կապված ստորև տրված հասկացությունները, փորձե՛ք համառոտ պարզաբանել դրանց իմաստը կամ բովանդակությունը և վերհիշել տարեթվերը (ուսուցչի հայեցողությամբ ցանկը կարող է ընդլայնվել).

Վերսալ-վաշինգտոնյան համակարգ, Ազգերի լիգա, Հայկական օջախ, Միավորված ազգերի կազմակերպություն: Ֆաշիստական վարչակարգ, ռևանշիզմ, անվերապահ կապիտուլյացիա, ագրեսորներին խաղաղեցնելու և չմիջամտելու քաղաքականություն, Մյունխենի գործարք: Համաշխարհային տնտեսական ճգնաժամ, «Նոր կուրսի» քաղաքականություն, Դաուեսի պլան: Մարշալի պլան, Տրումենի դոկտրինա, «սառը պատերազմ», Բեռլինի պատ: Սաբյագրահա, էպատիզմ, Աֆրիկայի տարի: Գիտատեխնիկական հեղափոխություն: Մեծ թռիչք, Կուլտուրական հեղափոխություն, Չորս մոդեռնիզացիա: Ժողկոմխորհ, քաղաքացիական պատերազմ, Կարմիր բանակ, ռազմական կոմունիզմ, ՆԷՊ, ինդուստրացում, կոլեկտիվացում, անհատի պաշտամունք, ցնհալի ժամանակաշրջան, լճացման տարիներ, վերակառուցման քաղաքականություն, ԱՊՀ:

ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Ագրեսիա *(լատ.՝ հարձակում)* — Միջազգային իրավունքի տեսակետից՝ մի պետության կողմից ուժի անօրինական գործադրումը մեկ այլ պետության ինքնիշխանության, տարածքային ամբողջականության կամ անկախության դեմ:

Ազատականացում *(լիբերալացում, լատ.՝ ազատ բառից)* — Այստեղ՝ պետական վերահսկողության թուլացում կամ վերացում տնտեսական գործունեության տարբեր ձևերի, գների, աշխատավարձի, տարադրամի արժեքի, տոկոսադրույքի չափերի նկատմամբ և այլն:

Ազատ տնտեսական գոտի — Որևէ պետության մեջ առանձնացված տարածք, որտեղ այդ պետության և օտարերկրյա ձեռնարկատերերին ու ներդրողներին թույլատրվում է ազատորեն տնտեսական (արտադրություն, առևտուր, գույքի ձեռքբերում և այլն) գործունեություն ծավալել: Դրա համար ստեղծվում են բարենպաստ պայմաններ՝ օրենսդրական, հարկային, վարձակալման և այլն: Օրինակ՝ Չինաստանում Շանհայը և այլ քաղաքներ դարձել են ա. տ. գոտի:

Ազգային հարց — Քաղաքական, իրավական, մշակութային, տնտեսական, պատմական և այլ հիմնախնդիրների ամբողջություն, որն առաջանում է պետության ներսում տարբեր ազգերի, ազգությունների և էթնիկական խմբերի փոխհարաբերությունների արդյունքում:

Ազգայնամոլություն (շովինիզմ) — Ազգայնականության ծայրահեղ դրսևորումը: Բնորոշ է՝ ազգային բացառիկության, անհանդուրժողականության և գերազանցության քարոզը, ազգամիջյան թշնամանք և գժտություններ հրահրելը, մեկ ազգի շահերը մյուս ազգերի շահերին հակադրելը: Շովինիզմ բառի ծագումը կապված է նապոլեոնյան պատերազմների վետերան Ն. Շովենի անվան հետ:

Ազգայնացում — Տնտեսության որոշ ճյուղերի, մասնավոր ձեռնարկությունների, հողի և այլ մասնավոր սեփականության վերածումը պետական սեփականության: Դա կարող է կատարվել ունեզրկման, ինչպես նաև լրիվ կամ մասնակի փոխհատուցման ճանապարհով:

«Ազգերի Բրիտանական համագործակցություն» — Մեծ Բրիտանիայից և նրա նախկին տիրույթներից՝ բրիտանական գաղութային կայսրության փլուզման արդյունքում կազմված միջպետական միավորում: Սկսել է ձևավորվել 1947 թվականից: Դրա մեջ են մտել նաև նախկին *դոմինիոնները*: Այժմ ընդգրկում է 54 երկիր:

Ամբողջատիրություն *(տոտալիտարիզմ, լատ.՝ ամբողջ, լիակատար բառից)* — Ավտորիտար իշխանության ձև. բնորոշ կողմերն են՝ սահմանադրական իրավունքների և ազատությունների փաստացի վերացումը, հասարակական կյանքի լիակատար ենթարկումը իշխանության շահերին և համատարած (տոտալ) վերահսկողության հաստատումը հասարակության նկատմամբ, քաղաքական ընդդիմության և *այլախոհների* հանդեպ բռնարարքների լայնածավալ կիրառումը:

Այլախոհ *(դիսիդենտ, լատ.՝ չհամաձայնվող)* — Այստեղ՝ մարդ, որը համաձայն չէ և պայքարում է իր երկրում տիրապետող գաղափարախոսության դեմ: XX դ. 60-80-ական թվականներին այդպես էին անվանում սոցիալիստական երկրների այն քաղաքացիներին, ովքեր բացեիբաց քննադատում էին պետական գաղափարախոսությունը:

Այլընտրանք *(ալտերնատիվ, լատ.՝ այլ, ուրիշ բառից)* — Միմյանց բացառող հնարավորություններից յուրաքանչյուրը:

Անեքսիա *(լատ.՝ միացում)* — Ագրեսիայի տարատեսակ. մի պետության կողմից մյուս պետության ամբողջ տարածքի (կամ դրա մի մասի) բռնի միավորում կամ զավթում: Անեքսիա է կոչվում նաև որևէ ժողովրդի բռնի պահելը օտար պետության սահմաններում:

Անհատի պաշտամունք — Մեկ մարդու դերի բարձրացումը, փառաբանումը, կենդանության օրոք նրան պատմական զարգացման ընթացքի վրա որոշակի (չափազանցված) ազդեցություն վերագրելը:

Անջատողականություն *(սեպարատիզմ - լատ.՝ անջատ բառից)* — Երկրի ներսում գտնվող որևէ շրջանի, ժողովրդի ծգտումը անջատվելու, մեկուսանալու:

Աշխարհաքաղաքացիություն *(կոսմոպոլիտիզմ, հուն.՝ աշխարհ և քաղաքացի բառերից)* — Գաղափարաքաղաքական հոսանք, որ քարոզում է՝ անտարբեր վերաբերմունք հայրենիքի և իր ժողովրդի հանդեպ, հրաժարում ազգային ավանդույթներից, մշակույթից, ազգային պետությունից կամ *ազգային ինքնիշխանության* համար պայքարից՝ հանուն ինչ-որ «համաշխարհային պետության» ստեղծման և «համաշխարհային քաղաքացիության» հաստատման:

Ավանգարդիզմ *(ֆր.՝ առջևից գնացող բառից)* — XX դ. արվեստի մի շարք ուղղությունների (կուբիզմ, սյուրռեալիզմ, ֆուտուրիզմ և այլն) պայմանական անվանումը: Դրանք ձգտում էին բովանդակային և ձևի առումով արմատականորեն նորացնել արվեստը: Այս ուղղության ներկայացուցիչները հաճախ թերագնահատում էին իրենց նախորդների պատմամշակութային ժառանգությունը:

Ավտորիտարիզմ *(լատ.՝ իշխանություն, ազդեցություն)* — Քաղաքական համակարգ, որին բնորոշ է իշխանության որևէ մարմնի (սովորաբար՝ գործադիր) ձեռքում: Դրա ձևերն են՝ բացարձակ միապետությունը, *բռնապետությունը, ամբողջատիրության* ձևերը (ֆաշիստական վարչակարգերը, «զորանոցային սոցիալիզմի» տարատեսակները):

Արտագաղթ — Հայրենիքից հարկադիր կամ կամավոր հեռանալը մեկ ուրիշ երկիր մշտական կամ ժամանակավոր բնակության նպատակով՝ քաղաքական, տնտեսական և այլ շարժառիթներով:

Բազմակարծություն *(պլյուրալիզմ, լատ.՝ բազմաքանակ բառից)* — Հասարակության քաղաքական համակարգի բնորոշում. սոցիալական տարբեր խմբերի օրինական հնարավորությունը՝ արտահայտելու իրենց շահերը սեփական ներկայացուցիչների (քաղաքական կուսակցություններ, արհմիություններ և այլ կազմակերպություններ) միջոցով:

Բռնապետություն *(դիկտատուրա, լատ.՝ անսահմանափակ իշխանություն)* — Քաղաքական համակարգ, որին բնորոշ են կառավարման ոչ դեմոկրատական (բռնի, ուժային) մեթոդները: Դրա մի տարատեսակն է *պրոլետարիատի դիկտատուրան*: Ըստ մարքսիստական ուսմունքի՝ բանվոր դասակարգի քաղաքական իշխանությունը, որը հաստատվում է սոցիալիստական հեղափոխության հաղթանակի արդյունքում:

Գաղափարախոսություն — Գաղափարների և հայացքների համակարգ. արտացոլում է հասարակության տարբեր խավերի, խմբերի վերաբերմունքը իրականության հանդեպ, արտահայտում նրանց արմատական շահերը, մտայնությունը և պահանջները:

Գաղութ — Այստեղ՝ պատմության նոր և նորագույն շրջանում որևէ օտար պետության իշխանության ներքո գտնվող երկիր կամ տարածք, որը զրկված էր քաղաքական ու տնտեսական ինքնուրույնությունից: Այն կառավարվում էր գաղութատեր պետության (**մետրոպոլիա**, *հուն.՝ մայր և քաղաք բառերից*) կողմից պարտադրված հատուկ վարչածևի հիման վրա:

Գերիշխանություն *(հեգեմոնիա, հուն.՝ առաջնորդություն, ղեկավարություն)* — Որևէ պետության, քաղաքական ուժի կամ միության ղեկավար դերը մյուսների նկատմամբ:

Գիտատեխնիկական հեղափոխություն (ԳՏՀ) — Գիտության և տեխնիկայի առավել էական, լայնածավալ առաջընթաց թռիչքը, որի արդյունքում գիտությունը և արտադրությունը որակական մեծ զարգացում են ապրում:

Գլոբալացում *(ֆր. գլոբալ՝ համընդհանուր բառից)* — Արդի աշխարհի ամբողջական, համակարգված միասնականացում: Դա պայմանավորված է համընդհանուր հիմնախնդիրների (բնապահպանական, ժողովրդագրական, տնտեսական, մշակութային և այլն) համատեղ լուծման անհրաժեշտությամբ:

Գործադուլ — Բանվորների և ծառայողների կողմից աշխատանքի կոլեկտիվ դադարեցումը: Գործադուլավորները ձեռնարկության ղեկավարությանը կամ երկրի կառավարությանը ներկայացնում են իրենց շահերից բխող տնտեսական, քաղաքական, սոցիալական պահանջներ:

Դեկրետ *(լատ.՝ որոշում, կարգադրություն)* — Այստեղ՝ Խորհրդային Ռուսաստանի օրենսդիր և գործադիր իշխանության բարձրագույն մարմինների ընդունած օրենքների անվանումը (դեկրետ հաշտության մասին և այլն):

Դե յուրե *(լատ.)* — Իրավաբանորեն, օրենքով ճանաչելը, ընդունելը. օրինակ՝ Հայաստանի Հանրապետության ճանաչումը ուրիշ պետությունների կողմից:

Դե ֆակտո *(լատ.)* — Փաստացիորեն, գործնականում գոյություն ունեցող կապեր, հարաբերություններ, իրողություն, որոնք դեռ իրավաբանորեն (*դե յուրե*) ձևակերպված չեն:

Դիմադրության շարժում — Երկրորդ աշխարհամարտի տարիներին ծավալված ազգային-ազատագրական, հակաֆաշիստական շարժում: Ծագել է ֆաշիստների կողմից զավթված եվրոպական երկրների տարածքում, ընդգրկել բնակչության բոլոր խավերը, քաղաքական տարբեր հայացքներ ունեցող մարդկանց:

Դոգմատիկ մոտեցում *(դոգմատիզմ, հուն.՝ ուսմունք, կարծիք բառից)* — Միակողմանի, քարացած մտածողություն, որի դեպքում որոշակի դրույթներ (դոգմաներ) վերածվում են անփոփոխ, հնացած եզրակացությունների, առանց կյանքի կոնկրետ՝ փոփոխվող, զարգացող պայմանները հաշվի առնելու: Այս մոտեցման (մտածողության) հիմքում ընկած են հեղինակությունների հանդեպ կույր հավատը, հնացած դրույթների պաշտպանությունը, դրանց բացարձակացումը:

Դոկտրինա *(լատ.՝ ուսմունք, սկզբունք)* — Այստեղ՝ քաղաքական կամ տեսական ղեկավար սկզբունք, հայեցակարգ (օրինակ՝ Տրումենի դոկտրինա, ռազմական դոկտրինա):

Դոմինիոն *(անգլ.՝ տիրույթ)* — Այդպես էին կոչվում «*Ազգերի Բրիտանական համագործակցության*» անդամ երկրները մինչև 1947 թվականը: Դոմինիոններ են եղել նախկին Բրիտանական կայսրության ինքնակառավարվող որոշ տարածքներ և նախկին գաղութներ: Օրինակ՝ Կանադան (1867 թվականից), Ավստրալիական Միությունը (1901թ.), Իռլանդիան (1921թ.) և այլն: Դրանցում պետության ղեկավար է համարվել Անգլիայի թագավորը, իսկ անմիջական կառավարումն իրականացրել է թագավորի նշանակած գեներալ-նահանգապետը: 1931թ. հռչակվել է դոմինիոնների անկախությունը

Զանգվածային լրատվության միջոցներ (ԶԼՄ) — Ազգաբնակչությանը ամենատարբեր տեղեկատվության հաղորդումն իրականացվում է տպագրական, էլեկտրոնային, տեխնիկական, պատկերային (մամուլ, հեռուստատեսություն, ռադիո, էլեկտրոնային փոստ, կինո) և այլ միջոցներով:

Էտատիզմ — Այստեղ՝ երկրի տնտեսական կյանքին պետության ակտիվ մասնակցության քաղաքականությունը: Օրինակ՝ գործադրվել է Թուրքիայում 1920-1930-ական թվականներին:

Թեոկրատական պետություն *(հուն.՝ աստված և իշխանություն բառերից)* — Պետություն, որտեղ քաղաքական իշխանությունը գտնվում է հոգևորականության և նրա առաջնորդի ձեռքում:

Ինդուստրացում — Արդյունաբերության մեջ և տնտեսության մյուս ճյուղերում խոշոր մեքենայական արտադրության ստեղծման ու հաստատման գործընթացը:

Ինտեգրացում *(լատ.՝ վերականգնում)* — Տնտեսական կյանքի միջազգայնացման նոր, բարձրագույն ձև. առաջացել է երկրորդ աշխարհամարտից հետո: Ազգային տնտեսությունների միահյուսման և համաձայնեցված միջպետական տնտեսական քաղաքականության իրականացման օբյեկտիվ գործընթաց է: Ինտեգրացիայի օրինակ է նաև համագործակցության այլ ձևերի հաստատումը (ԱՄՏՕ, ԱՊՀ, եվրամիություն և այլն):

Ինտերվենցիա *(լատ.՝ միջամտություն)* — Մեկ կամ մի քանի պետությունների բռնի միջամտությունը մեկ այլ պետության ներքին գործերին: Այն կարող է լինել ինչպես ռազմական, այնպես էլ տնտեսական, գաղափարախոսական, դիվանագիտական: Նշված բոլոր ձևերը արգելված են միջազգային իրավունքով:

Ինքնիշխանություն (սուվերենություն) — Պետության անկախ, ինքնուրույն լինելը արտաքին և ներքին գործերում: **Ազգային ի.** նշանակում է՝ սոցիալ-քաղաքական կարգի ազատ ընտրության իրավունք,

տնտեսական անկախություն, տարածքային ամբողջականություն և այլն:

Իրավական պետություն — Պետություն, որտեղ գոյություն ունի իշխանությունների իրական տարանջատում, օրենքի գերակայություն, բոլորի իրավահավասարություն: Պետության յուրաքանչյուր քաղաքացի գործնականում օգտվում է սահմանադրությամբ երաշխավորված իրավունքներից և ազատություններից: Իրավական պետության մեջ գործում է պետության և անհատի փոխադարձ պատասխանատվության սկզբունքը:

Խտրականություն — Քաղաքացիների իրավունքների սահմանափակում, պակասեցում՝ ազգային, ռասայական, կրոնական կամ այլ հատկանիշներից կախված:

Խունտա *(իսպ.՝ ժողով, միավորում)* — Այստեղ՝ իսպանախոս երկրներում դավադիրների խումբ, որն անօրինական ճանապարհով զավթել է իշխանությունը և կառավարում է բռնապետական մեթոդներով:

Ծայրահեղական — Այստեղ՝ քաղաքականության մեջ ծայրահեղ, բացառիկ հայացքների և միջոցների կիրառման կողմնակից:

Կապիտուլյացիա *(լատ.՝ պայմանավորվել բառից)* — Զինված ուժերի դիմադրության դադարեցում: **Անվերապահ կ.** կնքվում է պատերազմում լիակատար պարտություն կրած հակառակորդի հետ այն պայմաններով, որ թելադրում է հաղթող կողմը: Պատերազմում պարտված կողմի ռազմական տեխնիկան, ունեցվածքը, ամրությունները, հենակայանները անցնում են հակառակորդի ձեռքը, իսկ զինվորական անձնակազմը հանձնվում է որպես ռազմագերի: Օրինակ՝ Գերմանիայի և Ճապոնիայի ա.կ. 1945թ.:

Կապիտուլյացիաների ռեժիմ — Օսմանյան կայսրության և Իրանի տարածքում եվրոպական երկրների հպատակներին սուլթանի և շահի կողմից տրված առանձնաշնորհումների համակարգ:

Կարմիրներ — Այստեղ՝ Խորհրդային Ռուսաստանում 1918-1920 թթ. քաղաքացիական պատերազմի ժամանակ խորհրդային իշխանության կողմնակիցների ընդհանրացված անվանումը (կարմիր դրոշի գույնի հետ կապված):

Կենսամակարդակ — Երկրի բնակչության բարեկեցության աստիճանը: Դրա ցուցանիշներ են՝ աշխատավարձի, հարկերի չափը, նվազագույն սպառողական զամբյուղը, սոցիալական ապահովության ծախսերի չափը և այլն:

Կոալիցիոն կառավարություն *(լատ.՝ միանալ բառից)* — Տարբեր կուսակցությունների միջև կայացած համաձայնության արդյունքում նրանց ներկայացուցիչներից կազմված միացյալ կառավարություն:

Կոլեկտիվացում — Այստեղ՝ ԽՍՀՄ-ում XX դ. 20-30-ական թվականներին իրականացված գյուղատնտեսության բռնի վերափոխումը՝ տնտեսության կոլեկտիվ ձևերի արմատավորման և կուլակաթափության միջոցով:

Կոմունիստական ինտերնացիոնալ (Կոմինտերն) — Տարբեր երկրների կոմունիստական կուսակցությունների միջազգային կազմակերպություն. գործել է 1919-1943 թվականներին: Գործունեության գլխավոր նպատակն էր իրականացնել համաշխարհային սոցիալիստական հեղափոխություն:

Կոոպերացիա *(լատ.՝ համագործակցություն)* — ա. Արտադրության և աշխատանքի կազմակերպման ձև, որը հիմնվում է խմբային սեփականության վրա: բ. Կամավոր ընկերություն, որն օգնում է իր անդամներին տնտեսության վարման, վարկ ձեռք բերելու և այլ հարցերում:

Կոռուպցիա *(լատ.՝ կաշառք)*— Պաշտոնատար անձանց կողմից անձնական հարստացման նպատակով, իրենց ծառայողական իրավունքների և հնարավորությունների ուղղակի օգտագործմամբ կատարված հանցավոր գործունեություն:

Կուլտուրական հեղափոխություն — Այս հասկացությունը ներմուծվել է Վ. Ի. Լենինի կողմից՝ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Ռուսաստանի մշակույթի (կուլտուրայի) զարգացման նոր փուլը նշելու համար: Այն սոցիալիստական վերափոխումների լենինյան ծրագրի բաղկացուցիչ մասերից էր: Դրա նպատակն էր՝ ժողովրդական լուսավորության նոր համակարգի ստեղծումը, սոցիալիստական մտավորականության ձևավորումը, մարքսիստական գաղափարախոսության հաստատումը, սոցիալիստական մշակույթի ստեղծումը, կենցաղի վերափոխումը: Իրականում այն ծառայեց ղեկավարող բոլշևիկյան կուսակցության շահերին, մշակույթը քաղաքականացվեց, սակայն տվեց նաև անժխտելի նվաճումներ:

Հակահիտլերյան կոալիցիա — Պետությունների և ժողովուրդների միություն, որոնք երկրորդ աշխարհամարտի տարիներին պայքարում էին Գերմանիայի ու նրա դաշնակիցների դեմ: Պատերազմի ավարտին դրա կազմում կար 50-ից ավելի պետություն: Կոալիցիայի միջուկը «Մեծ եռյակն» էր՝ ԽՍՀՄ-ը, ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան:

«Հակակոմինտերնյան պակտ» — Գերմանիայի և Ճապոնիայի միջև 1936 թ. նոյեմբերի 25-ին Բեռլինում կնքված պայմանագիր (պակտ): Պաշտոնապես պայմանագրի նպատակ էր հռչակվել *կոմինտերնի* դեմ համատեղ պայքարը: Հետագայում պակտին միացան Իտալիան, Հունգարիան, Իսպանիան և այլ պետություններ: Արդյունքում՝ վերջնականապես ձևավորվեց ֆաշիստական և ռազմամոլ երկրների ագրեսիվ խմբավորումը, որը ձգտում էր հասնել համաշխարհային գերիշխանության:

Համադաշնություն *(կոնֆեդերացիա, լատ.՝ միություն, միավորում)* — Միջպետական միություն, որի անդամ յուրաքանչյուր պետություն պահպանում է իր անկախությունը, ինքնիշխանությունը և ունի իշխանության սեփական մարմինները: Համադաշնությունը, որպես կանոն, չի ունենում ընդհանուր սահմանադրություն և միասնական քաղաքացիություն: Քաղաքական, ռազմական և տնտեսական նպատակների հասնելու համար ստեղծվում են միացյալ համակարգող մարմիններ: Համադաշնությունները կարող են վերածվել դաշնության (ֆեդերացիա) կամ լուծարվել: Մեր օրերում համադաշնություն դառնալու միտում ունեն ԱՊՀ-ն, Եվրոպական Միությունը և այլն:

Հեղափոխություն *(լատ.՝ բեկում, հեղաշրջում)* — Հասարակության քաղաքական, սոցիալ–տնտեսական կառուցվածքի և մշակութային կյանքի արմատական, որակական հեղաշրջում: Որպես կանոն՝ հեղափոխություններն ուղեկցվում են փոփոխություններ իրակա-

նացնողների կողմից գործադրվող բռնությամբ և բնակչության զանգվածային ելույթներով:

Հռենոսի ապառազմականացված գոտի — Վերսալյան պայմանագրով որոշված գոտի Գերմանիայի տարածքում: Հռենոս գետից արևմուտք ընկած տարածքը 15 տարով օկուպացրեցին Անտանտի տերությունների զորքերը, իսկ գետի արևելյան ափին ընկած տարածքը, 50 կմ լայնությամբ, հայտարարվեց ապառազմականացված գոտի: Այսինքն՝ Գերմանիան իրավունք չուներ այդտեղ կառուցել ամրություններ, պահել զորքեր, զինավարժություններ անցկացնել և այլն:

Հրապարակայնություն — Այստեղ՝ ԽՍՀՄ-ում վերակառուցման տարիներին առաջ քաշված կարգախոս: Այն պետք է նպաստեր խորհրդային հասարակության հոգևոր-մշակութային կյանքի, երկրում տիրապետող գաղափարական թելադրանքի, կաղապարվածության և սահմանափակության մթնոլորտի վերափոխմանը: Հրապարակայնությանը բնորոշ են հասարակության բոլոր խավերի համար տեղեկատվության բաց և մատչելի լինելը, ազատ քննարկումը, հաստատությունների, կազմակերպությունների և պաշտոնատար անձանց գործունեության վերահսկելի լինելը:

Ձեռնարկատիրություն — Գործունեության տեսակ, որի դեպքում անհատը (ձեռնարկատերը) միջոցներ, կապիտալ է ներդնում որևէ գործի մեջ (արտադրություն, առևտուր և այլն) շահույթ ստանալու նպատակով:

«Ձնհալ» — Խորհրդային Միության պատմության կարճատև մի շրջան (1954-1964 թթ.), որն սկսվեց Ի. Ստալինի մահվանից հետո: Տեղի ունեցավ կոմկուսի գաղափարական թելադրանքի որոշ թուլացում, քաղաքականության մեջ որոշակի ազատականացում:

Մանդատ *(լատ.՝ հանձնարարություն)* — Այստեղ՝ կառավարման ձև, գաղութային կախվածության տարատեսակ. առաջացել է Առաջին աշխարհամարտից հետո: Ազգերի լիգան մանդատ էր տալիս արևմտյան որևէ զարգացած երկրի՝ Գերմանիայի և Օսմանյան կայսրության նախկին գաղութները կամ ենթակա երկրները կառավարելու համար:

Մոդեռնիզացիա *(արդիականացում, ֆրանս.՝ արդի, ժամանակակից բառից)* — Փոփոխություն, կատարելագործում, որը համապատասխանում է ժամանակի արդիական պահանջներին:

Նախագահ *(պրեզիդենտ, լատ.՝ առջևում նստածը)* — Պետության ընտրովի ղեկավարը (գլուխը):

«Նանսենյան անձնագիր» — Ֆ. Նանսենի նախաձեռնությամբ՝ Ազգերի լիգայի կողմից գաղթականներին և քաղաքացիություն չունեցող անձանց տրվող ժամանակավոր վկայագիր: Սնձը հաստատող այդ փաստաթուղթը գաղթականներին տալիս էր որոշակի կարգավիճակ և զերծ պահում իշխանությունների կամայականություններից:

Նեպ (նոր տնտեսական քաղաքականության ռուսերեն հապավումը) — 1921 թ. ՌԿ(բ)Կ X համագումարում ընդունված քաղաքականություն, որը փոխարինեց *«ռազմական կոմունիզմի»* քաղաքականությանը: Մտցվեց *պարենային հարկ*, թույլատրվեց ապրանք-քաղաքական հարաբերությունների, շուկայի, սեփականության տարբեր ձևերի գոյությունը, օտարերկրյա կապիտալի մուտքը տնտեսության մեջ և այլն:

Շուկայական տնտեսություն — Տնտեսություն, որը զարգանում է շուկայի, ապրանքային տնտեսության, ապրանքների ու ծառայությունների հանդեպ պահանջարկի և առաջարկի օրենքների հիման վրա:

ՀՄիավորված երկրների շարժում — Երկրների միավորում, որի մասնակիցները իրենց արտաքին քաղաքականության գլխավոր սկզբունքներ են հռչակել՝ ռազմաքաղաքական միավորումներին միանալուց հրաժարումը, հավասարության և արդարության վրա հիմնված նոր համաշխարհային տնտեսակարգի ստեղծումը: Շարժումը ձևավորվել է 1961 թ., այժմ միավորում է ավելի քան 100 պետություն:

Պարենհարկ (պարենային հարկ) — Հարկ, որը գանձվում էր գյուղացիական տնտեսություններից 1921-1923 թթ., խորհրդային Ռուսաստանում և մյուս խորհրդային հանրապետություններում: Այն փոխարինեց *պարենմասնատրմանը* և իր չափերով զգալիորեն քիչ էր վերջինից:

Պարենմասնատրում — Գյուղատնտեսական արտադրանքի մթերման համակարգ խորհրդային պետությունում 1919-1921 թթ., *«ռազմական կոմունիզմի»* քաղաքականության տարրերից մեկը: Գյուղացիները պարտավոր էին հացի և այլ մթերքների ավելցուկը (անձնական և տնտեսական կարիքների համար սահմանված չափաբաժնից ավել եղածը) հաստատված կայուն գներով հանձնել պետությանը:

Պրոլետարիատի դիկտատուրա — Տե՛ս *բռնապետություն* բառի տակ:

Պրոլետկուլտ (պրոլետարական կուլտուրա) — Գրական-գեղարվեստական և լուսավորական կազմակերպություն: գործել է Խորհրդային Ռուսաստանում (ապա՝ ԽՍՀՄ-ում) 1917-1932 թվականներին: Դրա ներկայացուցիչները, լիովին ժխտելով «մինչպրոլետարական» մշակութային ողջ ժառանգությունը, փորձում էին ստեղծել նոր, «մաքուր» պրոլետարական մշակույթ:

Ռադիկալիզմ *(լատ.՝ արմատականություն)* — Քաղաքական հոսանք, որի ներկայացուցիչները (**ռադիկալները**) տիրող հասարակարգի արմատական փոփոխությունների, պայքարի վճռական միջոցների, անհաշտելի, ծայրահեղ հայացքների կողմնակիցներ են:

«Ռազմական կոմունիզմ» — Խորհրդային Ռուսաստանում քաղաքացիական պատերազմի տարիներին (1918-1920 թթ.) բոլշևիկների կողմից իրականացված սոցիալ-տնտեսական և քաղաքական կուրս: Դրա հիմքում դրված էին այսպիսի միջոցառումներ՝ արդյունաբերական ձեռնարկությունների *ազգայնացում*, արտադրության և ապրանքների բաշխման առավելագույն կենտրոնացում պետության ձեռքում, *պարենմասնատրում*, մասնավոր առևտրի արգելում և այլն:

Ռազմամոլություն *(միլիտարիզմ, լատ.՝ ռազմական բառից)* — Այստեղ՝ սպառազինությունների աճի և նվաճողական պատերազմի նախապատրաստմանն ուղղված քաղաքականություն: Ռազմամոլ երկրների տնտեսակա՛ն, քաղաքական և գաղափարախոսական կյանքը ծառայեցվում է այդ նպատակներին:

Ռազմատուգանք *(կոնտրիբուցիա, լատ.՝ հավաքել բառից)* — Պատերազմում պարտված երկրի կողմից կատարվող դրամական վճարում հաղթող երկրին: Ժամանակակից միջազգային իրավունքով արգել-

ված է **n.** գանձելը:

Ռևանշիզմ *(ֆր.՝ հատուցել, վրեժխնդիր լինել բառից)* — Հետադիմական գաղափարախոսություն և քաղաքականություն, որն ուղղված է նոր պատերազմի նախապատրաստմանը՝ նպատակ ունենալով փոխհատուցել նախորդ պատերազմում կրած պարտության համար և հետ վերադարձնել կորցրած տարածքները, տնտեսական ու քաղաքական դիրքերը:

Սեփականաշնորհում — Պետական կամ մունիցիպալ (տեղական ինքնակառավարման մարմինների) սեփականության (հողամասեր, արդյունաբերական ձեռնարկություններ, բանկեր, տրանսպորտի, կապի, զանգվածային լրատվության միջոցներ, շենքեր, բնակարաններ և այլն) վերածվելը մասնավոր սեփականության՝ անհատույց կամ վճարի դիմաց:

Սղած *(ինֆլյացիա, լատ.՝ փքում)* — Թղթադրամի գնողունակության անկում, արժեզրկում: Դա կապված է շրջանառության մեջ գտնվող թղթադրամների զանգվածի ավելցուկի և սպառողական ապրանքների անբավարարության հետ:

Սպիտակներ — Այստեղ՝ Խորհրդային Ռուսաստանում քաղաքացիական պատերազմի (1918-1920 թթ.) տարիներին բոլշևիկյան վարչակարգի հակառակորդների ընդհանրացված անվանումը (դրոշի գույնի անունից):

Ստատուս-քվո *(լատ.)* — Միջազգային իրավունքում ընդունված տերմին, որն օգտագործվում է որոշակի պահին գոյություն ունեցող կամ ունեցած փաստական կամ իրավական դրությունը նշելու համար: Վերանայելիս **ս. ք.**՝ նշանակում է վերադառնալ մինչև փոփոխությունները գոյություն ունեցած իրավիճակին:

Ստվերային տնտեսություն — Տնտեսական գործունեության այն ոլորտը, որը շատ հաճախ գործում է ընդհատակյա կարգով և հաշվառված չէ պաշտոնական վիճակագրության կողմից (դրանով իսկ **ս. տ.** վարողները խուսափում են հարկեր վճարելուց):

Սուվերենություն *(ֆր.՝ գերագույն իշխանություն)* — Նույնն է՝ *ինքնիշխանություն*:

Վերակառուցում *(ռուս.՝ պերեստրոյկա)* — ԽՍՀՄ-ում 1985-1991 թթ. իրականացված բարեփոխումների ընդհանրացված անվանումը: Վերակառուցման քաղաքականության հիմնական ուղղություններն էին՝ խորհրդային հասարակության կյանքի համակողմանի դեմոկրատացումը (այդ թվում՝ *հրապարակայնության* ընդլայնումը), արմատական տնտեսական վերափոխումը, արտաքին-քաղաքական ոլորտում՝ միջազգային անվտանգության համապարփակ համակարգի ստեղծումը:

Վերափոխում *(ռեֆորմ, լատ.՝ վերափոխել բառից)* — Հասարակական կյանքի վերափոխություն, փոփոխություն, վերադասավորություն: Որպես կանոն՝ ռեֆորմներն ունեն քիչ թե շատ առաջադիմական, բարեփոխման բնույթ:

«Տարօրինակ պատերազմ» — Այս տերմինով բնութագրվում է Երկրորդ աշխարհամարտի Արևմտյան ճակատում 1939 թ. սեպտեմբերի 3-ից–1940 թ. մայիսի 10-ը տիրող իրավիճակը: Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան, պատերազմ հայտարարելով Գերմանիային, ակտիվ ռազմական գործողություններ չմղեցին նրա դեմ, թեև ունեին թվական գերակշռություն:

Քաղաքակրթություն *(լատ.՝ քաղաքացիական, պետական բառից)* — ա. Հասարակության նյութական և հոգևոր մշակույթի զարգացման մակարդակ, աստիճան: բ. Մարդկության պատմության այն շրջանը, որը հաջորդել է նախնադարին և շարունակվում է մինչև օրս: գ. Հասարակության քաղաքական-սոցիալական կառուցվածքի, տնտեսության, մշակույթի, մարդկանց փոխհարաբերությունների, վարքագծի, կենցաղի յուրահատուկ դրսևորումների ամբողջությունը, որը բնութագրական է որոշակի պատմական ժամանակաշրջանի (օրինակ՝ անտիկ **ք.**), ժողովրդի (հնդկական **ք.**, հայկական **ք.**) կամ պատմաաշխարհագրական տարածաշրջանի (արևմտյան **ք.**, արևելյան **ք.**):

Քաղաքացիական հասարակություն — Տերմին, որով բնորոշվում է հասարակության զարգացման որոշակի մակարդակը: Համաքաղաքացիների միջև գոյություն ունեցող տնտեսական, մշակութային, իրավական և քաղաքական զարգացած փոխհարաբերություններով ժողովրդավարական հասարակություն է: Այդ փոխհարաբերությունները, որպես կանոն, օրենքներով պաշտպանված են պետական իշխանության մարմինների ուղղակի միջամտությունից:

Քաղաքացիական պատերազմ — Երկրի ներսում տարբեր քաղաքական ուժերի, սոցիալական խմբերի միջև զինված պայքարը պետական իշխանության համար:

Քաղաքական վարկանիշ (ռեյտինգ) — Քաղաքական առաջնորդների և կուսակցությունների հեղինակության ու հանրահայտության, ինչպես նաև կոնկրետ քաղաքական իրավիճակում նրանց գործունեության գնահատման անհատական թվային ցուցանիշ:

Օկուպացիա *(լատ՝ զավթում)* — Պատերազմում պարտված երկրի տարածքի ժամանակավոր գրավումը հաղթող երկրի զինված ուժերի կողմից:

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ,
ԳՈՒՐԳԵՆ ՄԻԽԱՅԻԼԻ ԳԵՂԱՄՅԱՆ
ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

НИКОЛАЙ ОГАНЕСОВИЧ ОГАНЕСЯН
ГУРГЕН МИХАИЛОВИЧ ГЕГАМЯН
НОВЕЙШАЯ ИСТОРИЯ
Учебник для 8-го класса средней школы
Изд. "Зангак-97", Ереван, 2001г.

Մեթոդիստներ՝
պատմ. գիտ. թեկնածու
ԱՐԱՄ ՍՐԱՊԻՈՆԻ ՆԱԶԱՐՅԱՆ
պատմաբան, պատմ. ուսուցիչ
ՍՈՍԹԵԼ ՎԱԶԳԵՆԻ ԳՅՈՒԼԲՈՒԴԱՂՅԱՆ

Հրատարակչության գլխ. տնօրեն՝
ՍՈԿՐԱՏ ՇԱՀՈՒՄԻ ՄԿՐՏՉՅԱՆ
Տնօրեն՝
ՍԱՇԱ ՎԱՐԴԳԵՍԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Նկարիչ և գեղարվեստական խմբագիր՝
ԱՐԱ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Համակարգչային ձևավորող՝
ԳԱՐԵԳԻՆ ՆՈՐԱՅՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ
Սրբագրիչ՝
ՆՎԱՐԴ ՆԻԿՈԼԱՅԻ ՓԱՐՍԱՂԱՆՅԱՆ
Կազմի համակարգչային ձևավորումը՝
ՆՈՒՆԵ ՄԱՐԱՏԻ ԱՐԱԶՅԱՆԻ

Տպագրությունը՝ օֆսեթ
Թուղթը՝ օֆսեթ
Չափը՝ 70x100 1/16
Ծավալը՝ 10 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 69000
Պատվեր՝ 67

«Զանգակ-97» հրատարակչություն
Երևան 375010, Վարդանանց փակուղի 8
Հեռ. 54-89-32; E-mail: zangak@arminco.com

«Երևանի առաջին տպարան» ՓԲԸ
Երևան - 10, Հանրապետության 65


ՄԱՍՇՏԱԲ
1:140 000 000
ԱՇԽԱՐՀԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԸ (2000 թ.)
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՍԱՌԱՄԱՍԻ ՕՎԿԻՈՍ
ՍԱՌ
ԿԱՆԱԴԱ
ՄԵՔԻՆԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՖԵԴԵՐԱզԻԱ
ՂԱԶԱԽՍՏԱՆ
ՄՈՆԳՈԼԻԱ
ՉԻՆԱՍՏԱՆ
ԱԼՋԻՐ
ԼԻԲԻԱ
ԻՐԱՆ
ԱՖՂԱՆՍՏԱՆ
ՊԱԿԻՍՏԱՆ
ՀՆԴԿԱՍՏԱՆ
ՄԱՍՏԱԿ
ՍԱՀԱՐԱ
ՍԱՀԵԼ
ՆԻԳԵՐ
ՉԱԴ
ՍՈՒԴԱՆ
ԿՈՆԳՈ
ԲՐԱԶԻԼԻԱ
ԱՎՍՏՐԱԼԻԱ
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՍԱՌԱՄԱՍԻ ՕՎԿԻՈՍ
ՀՆԴԿԱԿԱՆ ՕՎԿԻՈՍ
ՀԱՐԱՎԱՅԻՆ ՕՎԿԻՈՍ
ՄԵՂՄԱՅԻՆ ՕՎԿԻՈՍ
ՄԱՍՇՏԱԲ
1:13 000 000
ՔԱՐՏԵԶՈՒՄ ԹՎԵՐՈՎ ՆԵԼԱԾ ԵՆ.
1 - Բելգիա
2 - Լիտվայական
3 - Լյուքսեմբուրգ
4 - Տիրաքաար (Դեստ.)
5 - Անդորրա
6 - Շվեյցարիա
7 - Լիխտենշտայն
8 - Ավստրիա
9 - Չեխիա
10 - Սլովակիա
11 - Հունգարիա
12 - Սլովենիա
13 - Սան Մարինո
14 - Խորվաթիա
15 - Բոսնիա և Հերցեգովինա
16 - Հարավսլավիա
17 - Պլանիա
18 - Մակեդոնիա
19 - Հունաստան
20 - Բուլգարիա
21 - Էստոնիա
22 - Լատվիա
23 - Լիտվա
24 - Մոլդովա
25 - Վրաստան
26 - Հայաստան
27 - Լեռնային Ղարաբաղ
28 - Նորթեքան
29 - Իսրայել
30 - Հորդանան
31 - Թուրքիա
32 - Բահրեյն
33 - Կատար
34 - Արաբական Միացյալ Էմիրություններ
35 - Դրոզդստան
36 - Տաջիկստան
37 - Բանգլադեշ
38 - Կամբոջա
39 - Սինգապուր
40 - Ճուճիա
41 - Սենեգալ
42 - Գամբիա
43 - Գվինեա Բիսաու
44 - Սիերա Լեոնե
45 - Լիբերիա
46 - Կոտ դ'Իվուար
47 - Բուրկինա Ֆասո
48 - Տոգո
49 - Բենին
50 - Հասարակածային Գվինեա
51 - Էրիտրեա
52 - Մերոթի
53 - Ռուանդա
54 - Բուրունդի
55 - Ուգանդա
56 - Մալավի
57 - Զիմբաբվե
58 - Նյամիբիա
59 - Լեսոտո
60 - Դոմինիկյան Հանրապետ.
Պետական սահմանները
Գաղութներ և յենթակված պետություններ
Մայրաքաղաքներ
Այլ քաղաքներ
Պետական սահմանները
Վարչական սահմանները
1 - Լեռնային Ղարաբաղ
2 - Նախիջևան (Ադրբ.)
3 - Աբխազիա (Վրաստան)
4 - Աբխազիա (Վր.)
5 - Հարավ. Օսեթիա (Վր.)
6 - Կարաչայ-Չերքեզիա (ՌՖ)
7 - Կաբարդինո-Բալկարիա (ՌՖ)
8 - Հյուսիս. Օսեթիա-Ալանիա (ՌՖ)
9 - Ինգուշեթիա (ՌՖ)
10 - Չեչնիա-Իչկերիա (ՌՖ)
11 - Դաղստան (ՌՖ)
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԸ
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՖԵԴԵՐԱզԻԱ
ՎՐԱՍՏԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆ
ԱԶԵՐԲԱՅՋԱՆ
ՄՈՍԿՎԱ
ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
ՄՈՍԿՎԱ
ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
ՄԱՍՇՏԱԲ
1:13 000 000

9(075) Հ.Հ.
Հ-84

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈ